

**ՎԱՐԴՈՒՏ
ԳԱՎԱՌԻ
ԲԱՌ ՈՒ ԲԱՆԸ**

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
1000 S. MICHIGAN AVE.
CHICAGO, ILL. 60607

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
1000 S. MICHIGAN AVE.
CHICAGO, ILL. 60607

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
1000 S. MICHIGAN AVE.
CHICAGO, ILL. 60607



**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ**

ФОЛЬКЛОР ОБЛАСТИ ВАРДУТ

**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

THE SPEECH AND TALK OF VARDUT REGION

**ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
PUBLISHING HOUSE "GITUTYUN" NAS RA
ЕРЕВАН 2011 YEREVAN**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՎԱՐԴՈՒՏ ԳԱՎԱՌԻ
ԲԱՌ ՈՒ ԲԱՆԸ**

Կազմող՝ պ.գ.դ. Կիմ Ղափրամանյան



ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՍ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2011

A 96856

ՀՏԴ 391/395=919.81:809.198.1:398=919.81

ԳՄԴ 63.5(23)+81.23+82.33

Վ 307

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Պ. Ս. Ավետիսյան, Ս. Բ. Հարությունյան,

Լ. Ջ. Աբրահամյան, Ա. Ս. Ղազիյան, Ս. Գ. Հոբոսյան

Կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց՝ պ. գ. դ.

Կիմ Ղահրամանյանը

Պատասխանատու խմբագիր՝ Բ. Գ. Ք.

Թամար Հայրապետյան

Վ 307 Վարդուտ Գավառի բառ ու բանը/ՀՀ ԳԱԱ, հնագիտ. և
ազգագր. ին-տ; Կազմեց, առաջաբանը գրեց և ծա-
նոթագրեց Կ. Ղահրամանյանը; Պատ. խմբ.՝ Թ. Հայ-
րապետյան.- Եր.: Գիտություն, 2011.- 278 էջ:

ՀՏԴ 391/395=919.81:809.198.1:398=919.81

ԳՄԴ 63.5(23)+81.23+82.33

ISBN 978-5-8080-0889-2

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2011

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2011

*Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն ահա փռած տիրաբար՝
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն...*

Հովհ. Թումանյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Կատակը, զվարճախոսությունը, մականունը, հանելուկները, խաղիկները և ժողովրդական բանահյուսության այլևայլ ժանրեր լայն տարածում են ունեցել Արցախ աշխարհի պատմական Վարդուտ գավառում (հետագայում՝ Գյուլիստան), իսկ նոր ժամանակներում՝ ԼՂՀ Շահումյանի շրջան: 1992 թ. Շահումյանի շրջանը դաժանորեն հայաթափվեց Ադրբեջանի կողմից: Անթիվ կորուստներով փրկված շահումյանցիները սփռվեցին աշխարհով մեկ, նրանց հետ էլ սփռվեցին ու մոռացության վտանգի առջև կանգնեցին այդ հողի վրա ստեղծված բանահյուսական հոգևոր արժեքները: Սույն ժողովածուն այդ արժեքները կորստից փրկելու մի փորձ է:

Շահումյանի շրջանի բանահյուսական ու ազգագրական որոշ նյութեր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երաշխավորությամբ 2002 թ. մեր կողմից հրապարակվել են «Օջախի գիրք. նշխարներ» վերնագրով, նույն գիրքը՝ լրամշակված, թարգմանված ռուսերեն՝ 2003 թ.: 2004 և 2006 թթ. Շահումյանի շրջանի բանահյուսական բառ ու բանի, տարբեր բանահյուսական նյութերի երկու ժողովածուներ լույս են ընծայվել մեր կողմից՝ «Արցունքոտ ժպիտներ» խորագրով: Սակայն նյութն անսպառ է, և ահա ընթերցողին է ներկայացվում երրորդ ժողովածուն՝ այդ լեռնաշխարհի խոսվածքի բացատրական բառարանով, որը ոչ միայն օգնում է ընդգրկված նյութը ճիշտ հասկանալուն, այլև իր հերթին, կարծում ենք, մշակութային որոշակի արժեք է ներկայացնում:

...Շրջանի կործանման ամենածանր օրերին, երբ մարդկային արյուն էր հեղվում, «Մոավի դողանջներ» թերթի էջերում արտացոլում էինք պարտիզանական ջոկատի հերոսական առօրյան, գրում մեր

խիզախ ազատամարտիկների սխրանքների մասին: Մարդիկ կարդում էին, հոգեկան բավականություն ստանում: Կատակների և բանահյուսական այլ նյութերի մասին չէինք կարող նույնիսկ մտածել, բայց... Երևանում՝ փախստականների հարցերով զբաղվող վարչության շենքում ու բակում, տարբեր հավաքատեղիներում տարազիր շահումյանցիները հաճախ միասին կարդում էին քերթի նյութերն ու խմբով քննարկում: Հաճախ էլ այդ ընթացքում հիշում էին որևէ մեկի հետ կապված զվարճալի դեպք ու ծիծաղում: Այդ միջավայրը կարծես ամոքում էր մարդկանց վիշտը: Ու մենք աստիճանաբար սկսեցինք նաև առանձին զվարճալի դեպքեր, կատակներ պատմել քերթի էջերում: Դրանք հետաքրքրություն չարժեցին ընդհանրապես մեր անցյալի բանահյուսական հոգևոր արժեքների նկատմամբ:

Նախկին շահումյանցիները՝ տարբեր տարիքի, կրթական տարբեր մակարդակի մարդիկ, սկսեցին վերհիշել, պատմել, գրի առնել և աշխարհի տարբեր ծայրերից ուղարկել այդ բնույթի բազմապիսի նյութեր: Հազար ու մի կորուստ ու զրկանք ապրած, գերյալ հայրենի հողի կարոտով տապակվող շահումյանցիների համար այդ գործը մի յուրատեսակ սպեղանու դեր էր կատարում: Աշխարհի տարբեր ծայրերից նրանք ոչ միայն գրում և ուղարկում են, այլև հրավիրում են իրենց մոտ, հավաքներ կազմակերպում, որպեսզի մենք անձամբ գրի առնենք այդ նյութերը:

Մեր անձնական արխիվում կուտակված նյութերը՝ թե՛ խառը կերպով հավաքված, թե՛ բարեխղճորեն գրի առնված ու խմբավորված, նույնիսկ իրենց նախնական տեսքով պատմաագագազրական որոշակի արժեքավոր տեղեկատվություն են պարունակում:

Գրի առնված բոլոր նյութերը, մեր խոսվածքի ամեն մի բառը տարազիր ժողովրդի համար այսօր առավել քան հոգեհարազատ են: Դրանք պահպանվում ու փոխանցվում են սիրով՝ որպես մեր անցյալի մի իրական մասնիկ: Իսկ դեպի աշխարհասփյուռ հայրենակիցների համայնքներ կատարած մեր շրջագայությունների ընթացքում ամեն մեկը ջանում էր իր իմացածը հայտնել մեզ, որը վերածվում էր մի անկրկնելի հանդիպման:

Շահումյանցիների նախնիները անհիշելի ժամանակներից Ղա-րաբաղի լեռնաշխարհում ձևավորվել են հայ ժողովրդի կազմավորման ընդհանուր հունի մեջ, այդ հողի վրա բազում դարեր ապրել

անխառը կերպով՝ պահպանելով իրենց բարբառը, սովորույթներն ու բարքերը: Նրանց լեզվի մեջ պահպանվել են գրաբարյան շատ բառեր, որոնք վաղուց անհետացել են բարբառներից, չկան նաև գրական հայերենի մեջ: Նշենք՝ կեռիք (ատամ), այդտեղից՝ արոան, ածել (լցնել), զիրավ հնցնել, զիրավ տալ, զիրավ անել, մոկոն (գրաբարում՝ մոկն), ծյուկուն (գրաբարում՝ ձուկն), կենալ (հագնել), որից նաև՝ կեսկ (հագուստ), կալել (փակել), հարել, զինք և այլն, և այլն: Ունկը, օրինակ, գրաբարում ականջ էր նշանակում: Այն պահպանվել է մեր խոսվածքում՝ բռնակ իմաստով: Կաթսայի կամ այլ անոթի՝ ականջի նմանվող բռնակին ունկն են ասում՝ օնգը:

Հետաքրքիր լեզվամտածողական երևույթ է արձանագրվել՝ կապված այսպես կոչված աղբբեջաներենի (թուրքերենի) հետ: Բացասական շատ իմաստներ, գռեհիկ մտքեր մեր խոսվածքի մեջ արտահայտվում են նրանց լեզվով: չնայած այդ բառերի բնիկ հայերենը կա մեր լեզվում: Օրինակ՝ շիբիլ, մաթահ, շոհլաթ (շոհրաթ), դիշ, դուլադ, աղլիկ, խաստա, եսիր... Սրանք մեր հարևանների համար սովորական բառեր են, բայց շահումյանցին միայն տգեղ, չսիրված դեմքն է շիբիլ ասում, իսկ գեղեցիկ դեմքի մասին ասում է՝ ոնց որ պատկեր լինի: Մաթահը ընտիր հյուսվածքեղեն է նշանակում, իսկ մեր խոսվածքի մեջ արհամարհական իմաստ ունի և այլն:

Ուշագրավ է, որ շահումյանցիները միանգամայն հակառակ վերաբերմունք են դրսևորում, օրինակ՝ անգլերենի կամ ռուսերենի նկատմամբ: Բարձրորակ գործիքին (նաև որակյալ ապրանքին) մերոնք ինգլիզ են ասում՝ «անգլիական»: Գոսպոդին ռուսերեն բառը մեր խոսվածքի մեջ ձեռք է բերել ավելի լայն դրական իմաստ: Կա այսպիսի արտահայտություն՝ «հացին զասպաղին ա ասում»:

Լեզվական այս կարգի բազմաթիվ հետաքրքիր երևույթներ կան մեր խոսվածքի մեջ, և այդ առումով ներկայացվող զվարճախոսությունները, հուշապատումները, անձնանունները, մականունները, խաղիկները պարզապես զանձարան են հանդիսանում: Անցյալից պահպանված զվարճախոսությունները նաև մեկ այլ արժեքավոր կոդն ունեն: Ալկադեմիկոս Հր. Աճառյանը հավաստում է, որ Մագադաթ անունը միայն մեր կողմերում է եղել (հենց միայն Ներքին Շենում ու Գյուլիստանում քանի՜-քանի՜ Մագադաթ-այա կար): Ավա՜ղ,

շրջանի կործանումից հետո այդ բոլոր արժեքներն անհետացման վտանգի տակ են:

Տարագիր շահումյանցիների հետ հանդիպումների ընթացքում, նրանց գրած նամակների միջոցով բազմիցս համոզվել ենք, որ մեր գյուղերի անցյալին վերաբերող ամեն ինչ հարկավոր է գրի առնել, հրապարակել, ուսումնասիրել: Հայրենաբաղձ այդ մարդիկ մույնիսկ զառամյալ տարիքում վերադարձի հույս են վախժայում, ձգտում են հնարավորինս ամբողջական պատկերացում պահպանել մեր չքնաղ, բազմահարուստ ու հերոսական, բայց, ավա՜ղ, գերյալ հայրենիքի մասին: Ամոռանալի են Տաշիր քաղաքից Մելինե Նասիբյանի տողերը: Նա մանուկ հասակում է հեռացել հայրենի շրջանից, բայց մեծերի շնորհիվ անվերջ հիշում, սիրում ու կարոտում է: Դիմելով հայրենակիցներին՝ նա ասում է. «Չմոռանա՞ք մեր հողը, սիրենք, մեր սիրո շնորհիվ կազատագրվի մեր գերյալ հայրենիքը»:

1. ԶՎԱՐՈՒՄՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղարաչինարցի Գոգոն Գյուլիստանում «քենենից» կոշիկ էր կարում՝ շուտ: Ավագ դային գալիս է, թե՛ ինձ համար մի գույգ չուշտ կարի 42 ռազմերի: Գոգոն հարցնում է՝ որի՞ց կարեն: Ավագը զարմանում է. «Խէ, քանի՞ տեսակ չուշտ ա ինում»: Գոգոն բացատրում է. «Երկու տեսակ, մինը՝ գանգրենա, էն մինը՝ ռևատիզմ»: Ավագը չի ջոկում, թե որն ինչ է նշանակում, մտածելով, թե կատակ է, ասում է. «Բե՛զ մատաղ, տավարած մարդ եմ, մի ճոխտ գանգրենա կարի, կենամ, քինամ հանդը»: Գոգոն ասում է. «Առավոտյան կգաս, 3 մանեք կտաս, կհագնես, կգնաս»: Առավոտյան Ավագ դային գնում է, փողը տալիս, կոշիկները հագնում, գնում հանդ: Մի քիչ հետո ուժեղ անձրև է սկսվում: Ոտքերը քրջվում են, կոշիկները ցեխոտվում: Հետո արևը բացվում է, կոշիկները չորանում են, կուչ գալիս, 42 ռազմերը դառնում է 38: Ոտքերը սեղմում են, մոկտացնում: Մի կերպ կաղալով վերադառնում է գյուղ, մտնում Գոգոյի «բուդկան», ջղայնացած ասում. «Ա՛լ քյոփօղլի, սա չուշտ ա՞, վար կարել ես, ինվալիդ եմ դառել»: Գոգոն ժպտալով ասում է. «Բա գանգրենան տհենց ա ինում, լի՞: Եթե տա դուր չի կյալիս, էն միման կարեն, բայց նրան պետք ա 4 մանեք տաս, նա մենակ ռևատիզմ ա քիցում»...

2. 1970 -ական թվականներին տղաների մոտ նորածն էր դարձել երկար մազեր պահելը: Գյուղից Երևան գնացողն առաջին հերթին այդ էր սովորում: Հրայրը Երևանից գյուղ է վերադառնում՝ մազերը մինչև ուտերը երկարացրած: Մի օր բակում նստած մարդի էր խաղում ընկերների հետ: Նկատում է, որ օղը սառն է, մորը ձայն է ալիս, թե՛ մի շոր բեր, վրաս գցեմ: Մայրը հենց իր վրայի ժակետը հանում է, տանում, գցում տղայի ուտերին, որ չմրսի: Հրայրի տատ Մերին գալիս է, տեսնում և, չճանաչելով, կարծում է, թե հարսն է մարդի խաղացողը, դժգոհ, քթի տակ ինքն իր հետ կռիվ տալով՝ տուն է մտնում, ասելով. «Ախճի՛, պա սա պյան ա՞, մեր տոնը գործավ լիքը, իմ հարսը քինացել ա, տղամարդուցը նհետ նստել, մարդի ա հաղ անում, ինձ էլ փասամիշ չի անում»:

3. Բարինագը ծեր ու միայնակ կին էր, բայց՝ շատ կենսուրախ և կատակասեր: Սովորություն ուներ զրույցի ընթացքում ռուսերեն բառեր գործածելու: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ մի խնջույքի

Ժամանակ սեղանակիցներից մեկն ասում է. «Բարինա՛գ, խլեր կուշայ»։ Բարինագն ասում է. «Իմ ախպոր արևը՝ նետ կուշայ. սաղ օրն էնքան կուշայ, փորս տոգած պալուչայ»։ Ընդհանուր ծիծաղ է բարձրանում, և երկար տարիներ շատերն էին կրկնում։

4. ... Ասում են՝ դարաչինարցի Սևունց Գարոն պատերազմի ժամանակ գերի է ընկել, պահել են Հունգարիայում։ Ազատվելով ու գյուղ վերադառնալով՝ նա պատմում է, որ այնտեղ ձիեր է պահելիս եղել։ Եվ ի միջի այլոց ասում է, որ նրանք ձիուն դիտալան էին ասում։ Այդ անսովոր բառը դառնում է Գարոյի փոքր...

5. Արթուրը 2 - 3 տարեկան երեխա էր՝ շատ չարաճճի, ու հաճախ անտեղի լացում էր։ Մի առավոտ սկսում է երկար ու ծանձրալի լացել։ Հայրը՝ Հրաչիկը, ուշադրությունը շեղելու, լռեցնելու համար նայում է դեպի առաստաղը ու ասում. «Պա՛, մի տես է, Հրանտիկենց էծերը պիցրացել են մեր կտերը, քանդել, հրեն, ոտքերն երևում են»։ Պապը, որ կողքի սենյակում պառկած էր, լսում է, հավատում, ջղայնանում, բայց մի կերպ իրեն զսպում է, ծայն չի հանում։ Հրանտիկը, որ հայրական տան կողքն էր ապրում, օրվա վերջում գործից գալով՝ սովորության համաձայն առաջին հերթին մտնում է հոր մոտ, որ տեսնի՝ ինչպես է։ Չի հասցնում «բարի երեկո» ասել, հայրը ջղայնացած ասում է. «Իրես օնես, հալա խոսում էլ ե՞ս, հմանչում չե՞ս, ձեր էծերը պիցրացել են մեր կտերը, քանդել»։

6. Ռաֆիկի թոռ Լուսինեին սեպտեմբերի 1 -ին ուրախ-ուրախ տանում են դպրոց։ Չեն ընդունում, ասում են՝ երեխան սեպտեմբերի 7-ին է ծնվել, 7 տարեկանը դեռ չի լրացել։ Տխուր հետ են դառնում տուն, պապին ասում՝ չընդունեցին, ասացին՝ մի շաբաթով փոքր ա։ Պապն ասում է. «Պա տրա հետի կտխրե՞մ, պրիեցեք, մի շեփտանը ետը կտանեք»։

7. Պետունց Հակոբին գյուղում Աբադա էին ասում։ Սարին չորքան էր։ Խոսելիս էլ ամեն բանի հետ ասում էր՝ զատը, զատը... Մոտ է կանչում մի երեխայի, հարցնում. «Ա՛յ վերքի, շենան այյան ա պետը, զատը, կքինա՞ս, պիրես»։ Երեխան ասում է՝ իհարկե։ Նա ասում է. «Դե, թոխտն ու մատիտը յեր կալ, հինչը ասեմ, զատը, լոխ կկիրես, վար մտադ քիցես վէչ»։ Եվ սկսում է թելադրել՝ էն զատը, կզնաս գյուղը, էն զատը... Երեխան բառ առ բառ գրում է։ Վերջում Աբադան ասում է. «Դե, մի կարդա, տեսնամ՝ հինչ ես կիրել»։ Երեխան նույն

ձեռով կարդում է: Արաղան զայրացած ծեծում է երեխային ու ասում.
«Բյուփօղլի՛, ինձանալ տնագ ես ըրե՞լ»...

8. Մեղրյան Շահենը գյուղում նոր շենք էր սարքում: Դարա-
չինարից մի խումբ լավ վարպետներ էր կանչել, եռանդով աշխատում
էին: Հայրը՝ Ջինավոր դային, տարիքն առած փորձառու մարդ էր:
Ամբողջ օրը կանգնում էր վարպետների մոտ, ուշադիր նայում, թե
ինչպես են աշխատում: Ձեռնափայտը մեկնում էր, մտցնում պատի
արանքը, վարպետներին ասում՝ էստեղ ցեխ չեք լցրել, քարը չոր
քարի վրա չեն դնի: Ուղղում էին «սխալը»: Հետո մեկ ուրիշ սխալ էր
գտնում, ու այդպես՝ անվերջ: Մի անգամ օրվա վերջում երբ Շահենը
տուն է գալիս, վարպետն ասում է. «Շահեն Ջինավորովիչ, էս գործին
հետի մեզ հինչքա՞ն ես փող տլական»: Շահենը, որ ճանաչված էր իր
առատաձեռնությամբ, այդ անսպասելի հարցից զարմացած ասում է.
«Հինչը վար պետք ինի, տլական եմ»: Վարպետն ասում է. «Չէ՛, է,
հինչքա՞ն ես նախատեսել»: Շահենն ասում է. «Ա՛յ մարդ, մտքինդ
հի՞նչ ա, պարզ ասա»: Վարպետն ասում է. «Հինչքան վար փող ես
նախատեսել, տրա մի մասը տուր, Ջինավոր դային մի ամսով քինա
կուրորտ, մենք կլխըներս դինջ գործ անենք»...

9. Դավիթի թոռը Ռուսաստանում կոռպեռատիվ համալսա-
րանում է սովորում, բայց պապը գիտե, որ նա գիրք չի բացում,
դպրոցն էլ մի կերպ է ավարտել: Մի օր թոռանն ստուգելու համար
հարցնում է. «Հո՞ւնց ես սըվերում»: Թոռը, որին պապի անունով էին
կոչել, բայց կարճ Դավո էին ասում, հպարտ պատասխանում է՝ գե-
րազանցիկ եմ: Պապն ասում է. «Դե մի սլյան եմ հըրցընում, տեսնամ՝
կգիդա՞ս. Ֆրանսիան ա մե՞ծ, քա՞ Պարիժը»: Դավոն մի քիչ մտածում
է, ասում. «Պարիժը մեծ կինի»: Պապը քմծիծաղ է տալիս. «Հը՛մն,
միեկ գիդացի, քա քու գերազանցիկոթինը քանի դոլարանոց կինի»...

10. Մի անգամ Մանաշիդի ակումբում հնդկական կինո էր: Ամ-
բողջ գյուղը լցվել էր դահլիճը: Շատերը նույնիսկ բեմի շուրջն էին
նստոտել: Ներկա էր նաև «Մըռեղը»: Կինոյի լարված պահին չա-
րաճճիներից մեկը, որ նստած էր հենց էկրանի կողքը, մթության մեջ
բարձրաձայն գոռում է. «Մըռե՛ղ, չարվու դըռեխ»... Մըռեղը նստած
տեղից վեր է բռնում, բարձրաձայն հայեղում, ձեռնափայտը
շարժում է էկրանի վրա ու ասում. «Ա՛, պա սիհանք վերդա՞ն եմ
գյուղում իմ փոթը, էտ վե՞ր շան տղա ա սիհանց ասել»...

11. 1-ին դասարանում ընկեր Լաուրան հարցնում է աշակերտներին. «Երեխաներ, ո՞վ կարող է մի ընտանի կենդանի ասել»: Փոքրիկ Խաչիկը ձեռք է բարձրացնում, ասում՝ «ղազ»: Ուսուցչուհին բացատրում է, որ ղազը «կենդանի» չէ, նա թռչուն է, թևեր ունի: Խաչիկը ոգևորված շարունակում է՝ «թեփռած ղազ»...

12. Փոքրիկ Մարինան առաջին դասարանում է, առաջին դասին: Լարված և ուշադիր նստած է: Ձանգը հնչում է: Ընկեր Համեստն ասում է՝ դե, երեխաներ, դասամիջոց արեք: Մարինան չի հասկանում, թե դա ինչ է նշանակում, կարծում է, թե ասաց՝ դասամիջոց բերեք: Բոլորն աղմուկով վազում են բակ, սկսում խաղալ, վազվզել: Հաջորդ զանգի հետ երեխաները վազվզելով գնում են դասարան, իսկ Մարինան մնում է բակում մենակ ու լացելով գնում է տուն: Տատը զարմացած հարցնում է. «Խե՞ղ լաց ես ինում, քեզ մատաղ»: Երեխան ասում է. «Ինկեր Համեստն ասել ա՝ քինացեք, դասամիջոց պիտեք, քիթել չեմ, վար տանեմ»...

13. Ընկեր Ժենիկն 1-ին դասարանում դասի էր: Մի երեխա ուշացած ներս է մտնում, դռան մոտ կանգնած սկսում է կոտրատվել, ծռմուկել անհանգիստ: Դասատուն հարցնում է՝ ի՞նչ է պատահել: Երեխան ասում է. «Ինկեր, մեշկս քոր ա կյալիս, պատառ քորի, լի»: Դասատուն ժպտալով մոտենում է, մեջքը տրորում, իսկ նա ասում է. «Խուվա՛, պատառ էլ տիյեք, պատառ տվեք»...

14. Արշակ վարժապետը ռուսաց լեզվի հին դասատուներից էր: Կատակասեր մարդ էր և սովորություն ուներ երկար-բարակ գրուցելու: Մի օր գնում է իր բարեկամ Համայակի տուն՝ ինչ-որ բան ասելու: Համայակը տանը չէր, կինն էլ խմոր էր հունցում: Կնոջը երկար բացատրում է, թե Համայակին ինչ պիտի ասի: Կինն զբաղված էր իր գործով, չի ուզում գրույցը երկարացնել և վարժապետի ամեն մի խոսքի հետ ասում է՝ հա, հա: Վարժապետը նկատում է, որ նա ուշադիր չի լսում, վերջում հարցնում է. «Իսկուհի՛, հասկացա՞ր հինչ պետք ա ասես»: Նա նորից ասում՝ հա, հա: Վարժապետն ասում է. «Դե՛ պավտարի»...

15. Անցած-գնացած տարիներին էր: Գյուղացիներից հազարից մեկն էր պաղպաղակ կերել քաղաքում: Համայակը, որ կոլտնտեսության նախագահն էր, բեռնատարի խցիկում նստած, կոլտնտեսականներն էլ «կուզովը» լցված գնում էին դաշտ: Ամառվա շոգ օր էր:

Նա նկատում է, որ «Կեստին դրադին» (Ներքին շենի գլխավոր հավաքատեղիում) պաղպաղակ են վաճառում: Մեքենան կանգնեցնում է, բոլորի համար մի-մի հատ առնում, բաժանում, ինքը նստում մեքենան, շարժվում: Բոլորն իրենց բաժինն ուտում են, իսկ ...-ը չի ուտում. մի անգամ կծում է, տեսնում, որ շատ համով է, դնում է գրպանում՝ մտածելով, թե երեկոյան կտանի տուն երեխաների համար: Դե, գյուղական խորդուբորդ ճանապարհ էր, հին բեռնատարի մեջ էլ լիքը ժողովուրդ: Այդ մարդն սկզբում ոչինչ գլխի չի ընկնում, հետո զգում է, որ շալվարը քացացել է, փողքով ինչ-որ կաթնաման հեղուկ է քափվում ոտքերի տակ: Մեքենայի խցիկի գլխին արագ-արագ քիսկքիսկացնում է, հարայ տալիս. «Համայակ, կանգնիր, քեզ մատաղ, հալս խարաք ա, հիվանդ եմ, մի կերպ ինձ հասցրու մեր տուն»: Համայակն իսկույն կանգնեցնում է մեքենան, բարձրանում «կուզովը», մտածելով, որ կարող է թունավորված լինել անծանոթ ուտելիքից: Երբ տեսնում է, թե ինչ վիճակ է, ծիծաղելով խփում է այդ մարդու գլխին, ասում. «Ա քեզ քաղեմ, մարտնիդ կերել չե՞ս»...

16. Հնում գյուղերն իրենց տավարածն ունեին, բայց հետո դժվարացավ տավարած գտնելը, շատ տեղերում ապրանք ունեցողներն իրենք էին հեքթով պահում գյուղի տավարը: Հայ Պարիսում հարցը լուծելու համար մեկին ուղարկում են Վերին Շեն, թե՛ գնա, մեկին համոզիր, որ գա, մեր տավարը պահի: Նա գնում է, գյուղամիջում հավաքվածներին հարցնում, թե ով կհամաձայնի Հայ Պարիսի տավարածը դառնալ: Հավաքվածներն ասում են՝ դա իսկական Վալոդի ուզած գործն է: Կանչում են նրան, որը ոչ ապրանք ուներ, ոչ էլ ապրանք պահած էր: Գլխի է ընկնում, որ համագյուղացիները կատակել են, ինքն էլ լրջորեն ասում է. «Շատ շունրհակալ եմ, տա իսկական իմ օգած գործն ա, ամա խամ գյուղ ա, խամ ապրանք, ես կարա՞մ գիդամ, քա հուր կովը վերն ա. պետք ա էդ ժողովուրդը աման մինն իր կովին նհետ նկարվի, նկարներն ու ցուցակը ինձ տա, վար ես ճնանչեմ»: Պրսեցին ասում է. «Արա՛, պա հենց մարդ կա՛ երկու կով օնի, կկարա՞՞ երկու հետ նկարվի, խեյլախ ծախս ա տյառնում»: Իսկ նա բացատրում է. «Դե, հուրը երկու կով օնի, թող մեշտեղը կադնի, ուրուր նհետ նկարվեն: Տյու արխային քինա, վար նկարները պատրաստ ինեն, կը կյամ»...

17. Համայակը ուտող-խմող մարդ էր, աշխատած վտղը գյուղի ճաշարանում էր բողմում: Կինն էլ միշտ դժգոհում էր, որ վտղը տուն չի բերում: Մի անգամ խմած տուն է գալիս ուշ երեկոյան, կնոջն ասում. «10 մանեք են պիրել, պպգիր, դիքա պատը հիտրված, աշկերտ հով կալած կացի, մինչև տասը հաշվեն: Եթե կրացիր էդքան կենաս, փողը քեզ են տլական»: Կինը շրջվում է դեպի պատը, պպգում ու սպասում: Համայակն արագ-արագ հանվում է, մտնում տեղաշորը՝ հաշվելով՝ 1,2,3...9: Կինը երկար սպասելով հարցնում է. «Համայակ, պա 10-ը՞»: Համայակը ծիծաղելով պատասխանում է. «Տասը ռավետը կասեն»...

18. Հնում համարյա բոլորն էլ շատ երեխաներ էին ունենում: Եվ սովորություն էր դարձել՝ երբ գնում էին մեկի աղջկան հարս տանելու, խնամախոսները կատակով ասում էին. «Պակաս տարի ա, եկել ենք՝ մի բողազը (մի ուտող) պակասեցնենք»: Վերինշենացի Ասատուրը շատ երեխաներ ուներ: Մի անգամ գալիս են՝ մեծ աղջկան ուզելու: Խնամախոսները սովորականի մման կատակում են, քե՛ եկել ենք՝ մի բողազ պակասեցնենք: Ասատուրն ասում է. «Եթե տիրա հետի եք եկել, մեր տանն ամենաշատ օտողն Արշակն ա, նրան տարեք»...

19. Մեկը ոտքով գնում է հարևան գյուղ: Գյուղի ծայրին հոգնած պառկում է խոտերի մեջ, որ մի քիչ հանգստանա, հետո մտնի գյուղ: Այդ գյուղից երկու երիտասարդ անցնելիս նկատում են քնածին: Մեկը մյուսին ասում է. «Շան տղան հենց մրափել ա, հենց ա գերեզմանու քար ինի»: Քնածն աչքերը բացում է, ասում. «Հա՛, գերեզմանու քար են, տար, քո նանին վրա քիցի»...

20. Մոսկվայում շահումյանցու հարսանիք է: Ջահել տղաներ ու աղջիկներ ոգևորված պարում են: Աղջիկներից մեկի հագուստը շատ է բաց: Քվենտիկը նայում է ու դժգոհ տոնով հարցնում. «Էս դեպորտե կեցածը հո՞վ ա»: Կինն ուղղում է նրան, ասելով. «Արա՛, տհենց չեն ասում է, դրա անունը դեկլոտե ա»: Քվենտիկը ջղայնանում է, քե՛ «Ես դեկլոտե տեսած չե՞մ, սա դե-պորտե ա»...

21. Աբոյի տատիկը Մոսկվայից պիտի գա: Ընտանիքով բոլորը գնացել են օդանավակայան՝ նրան դիմավորելու: Թռիչքը շատ է ուշանում: Վերջապես մի ինքնաթիռ է իջնում: Ուղևորները հենց որ

* Վերին Շենի և Հայ Պարիսի միջև մշտական կատակներ էին լինում. այս պատմությունը ամեն մեկը պատմում է ուզած ձևով (ծ.կ.):

երևում են սպասասրահում, Արոյի հայրը մոտենում է մեկին, հարցնում. «Էդ ո՞ր ռեյսն էր»: Ասում են՝ 509: Արոն հորը հարցնում է. «Սեզ ո՞րն ա պետք»: Հայրն ասում է՝ 905-ը: Երեխան տրտմանում է. «Պա՛, հալա էդքան պետք ա սպասե՞մք»...

22. Մի խումբ կանայք՝ արևից խանձված, հոգնած, երեկոյան վերադառնում էին Գյուլիստան գյուղի դաշտից: Մի տեղ մտնում են, որ մի քիչ հանգստանան: Փիրուզան, որ ամբողջ տարին աշխատում էր կոլխոզում, բայց չէր հասցնում նորմալ հագնվել ու սնվել, պառկում է խոտերի մեջ, ինքն իրեն ասում. «Տեսնաս՝ վար ես մեռնեմ, հի՞՞նչ են ըսկական լաց ինողները»: Նվարդն սկսում է կատակով լացել ու «երգել». «Վու՛յ, այ մի կակուղ հալավու հասրաք Փիրուզա՛»...

23. Սաշիկը Գյուլիստանում ամենակարճահասակ, փոքրամարմին մարդն էր: Նույնիսկ բոլր չէր հասնում, որ էշին մտնի: Բակում մի քոթուկ կար: Մի կերպ բարձրանում էր, վրան կանգնում, այնտեղից էլ բարձրանում, մտնում էշին: Գյուղի չոբանն էր, էշով ամեն առավոտ գնում էր հանդ, երեկոյան վերադառնում: Մի օր ասում են՝ մի հարմար աղջիկ ճարենք, քեզ պսակենք: Դե, հասկանալի պատճառով գյուղում նրան «հարմար» աղջիկ չէր լինի: Ասում են՝ զմանք, հարևան Թալիշից կամ Վերին Շենից ճարենք: Սաշիկն ասում է. «Ա՛, ես կյալիս եմ՝ հի՞՞նչ անեմ. դուք քինացեք, ճարեցեք, կալոշի քայն ինձ համար բերեք, տեսնեմ՝ կհավանե՞մ, քե՞ չէ»: Գնում են, հաջորդ օրը մի քայ պզտիկ կալոշ վերցրած հետ գալիս: Սաշիկը նայում է այդ կալոշին, ասում. «Հենց ա 34 ռազմեր ա՞ վետը, իսկական իմ օգածն ա, քինացեք, պիտեք»: Եվ բերում են, պսակում, ու լավ ընտանիք են կազմում...

24. Շահումյանցի փախստականներից երկու մարդ ու կին, տարիքն առած, Կալինինգրադից ուզում են գնալ Երևան՝ հարազատներին տեսնելու: Դանապարհին զրուցում են: Կինը հարցնում է՝ մեր պրեզիդենտ Պուտինը տեսնաս վե՞րդեղ ա մտնում: Ամուսինը բացատրում է՝ Մոսկվայում՝ Կրեմլում: Կինն ասում է. «Ես էլ եմ տեսնց սկացել, ամա գյուղում չեմ՝ ետ Կրեմլը հի՞՞նչ ա»: Ամուսինն ասում է. «Ես տեսել եմ, մի պյացքու տեղ ա՝ վիշկայի նման սարքած»... Հասնում են Մոսկվա: Հետո պետք է գնային մյուս օդանավակայան՝ Երևան քոչելու համար: Դանապարհին մի բարձր «վիշկա» է հանդիպում, որի վերևում ինչ-որ մեկը լարեր էր միացնում: Կինն ավտոբուսի պատուհանից նայում է ու զարմացած ասում. «Ա՛ տղա, Պու-

տինն ընդտեղ ա՞նստում, պա վեր չի՞ ինգնիլ»... Ամուսինը դժգոհ ասում է. «Ըմ՛մ, ա՛ կնիկ, սկի թելծամ չես է՛»...

25. Հայրենական պատերազմի ժամանակ տղամարդկանց մեծ մասը ֆրոնտում էր, կոլխոզի աշխատանքներն ընկած էին կանանց ու երեխաների ուսերին: Օղակների էին բաժանված 10 - 15 հոգով: Կոլխոզն ամեն մի օղակին տալիս էր օրական 1 - 1,5 կգ ալյուր, որ կեսօրին դաշտում փթրոկ եփեն, ուտեն: Եփողը Օլինկա տատս էր: Գարուն էր, կարտոֆիլ տնկելու ժամանակը: Մի օր տատս ասաց՝ էսօրվա ալյուրը պըիկական եմ, էքուծվա նիետ մի լավ բոլ-բոլ փթրոկ եփենք, իսկ էսօր ճաշին կարտոֆիլ եմ իփլական: Բայց այն ժամանակ կարտոֆիլի խնդիրը շատ լուրջ էր. եթե մեկի ձեռքին մույնիսկ մեկ կարտոֆիլ տեսնեին, դատի էին տալիս: Տատս կեսօրին բոլ-բոլ կարտոֆիլ լցրեց դազանի մեջ, դրեց կրակին: Կարտոֆիլն արդեն ուզում էր եփել, հեռվից երևացին գյուղի ղեկավարները: Տատս արագ հոդի մեջ փոս արեց, դազանը դրեց մեջը: Այդ պահին արդեն ղեկավարները մոտեցան, և տատս նստեց դազանի վրա, որ չերևա: Դե, դազանից ուժեղ գոլորշի էր բարձրանում, գոլորշին էլ փխ վառող է լինում: Տատս մի կերպ էր դիմանում. կամաց ասում է ընկերներին. «Էդ շներին շատ խոսացնիլ միք, թողեք շուտ կորչեն, էլ տիմանում չեն»... Դեկավարները մի քիչ զրուցեցին, հեռացան, դազանը հոդից հանեցինք, ծիծաղելով կերանք կարտոֆիլը:

26. Ռուսական մի քաղաքում մի պրսեցի կին ուզում էր լվացք անել: Լվանալու շորերը գրկած բերում է, լցնում ավտոմատ մեքենայի մեջ, բայց այդ պահին հեռախոսը զնգում է: Մեքենայի դուռը թողնում է բաց, վազում, լսափողը վերցնում է և մի քանի րոպե զրուցում: Վերջացնելուց հետո հետ է գալիս խոհանոց, լվացքի մեքենայի դուռը փակում: Մեքենան սկսում է պտտվել: Հանկարծ լվացքի մեքենայի պատուհանի մեջ երևում է տան կատուն՝ Սոյոպան, որը կիսաբաց դռնից մտել էր ներս, փաթաթվել ծանոթ շորերի մեջ: Կատուն զլուխը ապակում կպցրած արագ պտտվում է: Կինը մնում է շվարած, որովհետև լվացքը մինչև չավարտվեր, ավտոմատը կանգ չէր առնի և դուռը չէր բացվի, իսկ կատուն մոկտալի ծվծվում էր...

27. Դպրոցի տնօրեն ընկեր Շախյանը Նազիկին դպրոցից ուղարկում է, քե՛զնա, հորաքրոջդ՝ ընկեր Գեղեցիկին կանչիր, թող

գա դայրոց: Նազիկը վազելով գնում է, մի քիչ հետո հեալով հետ գալիս, ասում. «Գեղեցիկ տոտան ասեց՝ քինա ասա՝ տանը չի»...

28. Դայրոցի տնօրեն ընկեր Աշոտը հանդիպում է համազյուղացի Հրանտին և նախատում, քե՛ կինդ (ընկեր Սիրուհին) դասից ուշանում է: Հաջորդ օրն ընկեր Սիրուհին դայրոց է գնում և նեղացած տոնով ասում. «Ա՛յ ընկեր Աշոտ, ուրիշ ղեկավարները ընտանիք են սարքում, դու սարքին ընտանիքը քանդում ե՞ս»...

29. Ընկեր Ներսեսը բարձր դասարանցի Պողոսին ասում է՝ լոբու սարի է պետք, կկարա՞ս բերես: Պողոսը, որ կարգին սովորող չէր, ուրախանում է, որ գոնե մի օգտակար բան կանի, ոգևորված ասում է՝ խե՛ չեմ կարալ: Հաջորդ օրը 5 հատ սարի է վերցնում, տանում, դնում նրանց բակում: Ընկեր Ներսեսը ջղայնանում է, քե՛ «Արա՛, ա՛յ տափը մտած, էս հի՞նչ էս պիերել»: Պողոսը հանգիստ պատասխանում է. «Ընկե՛ր, ասել էս սարի՛ պիերել եմ. կըսիր 100-ն ա պետք, 100-ը կայիր»...

30. Մեխակը մի քանի անգամ ամուսնացել էր: Հերթական կինը ռուս էր: Մի օր ճանապարհին հանդիպում է Թաքի բիքը, հարցնում. «Մեխակ, քազա կնեկդ հո՞ւնց ա»: Մեխակը մտահոգ ասում է. «Լավն ա, Թաքի՛ բիք, մաքրասեր, դոչադ, ամա շատ ա ուշուց տալիս»: Թաքին հարցնում է. «Ի՞նչ ուշուց ա տալիս»: Մեխակն ասում է. «Խոսքին տակին-կլխին ինձ ասում ա՝ «... Տվայու մատ»: Թաքին մխիթարում է. «Վե՛չինչ, քեզ մատադ, լավ ա, վար ասում չի՝ սուկին սին»...

31. Սերոժի աղջիկը դայրոցն ավարտում է: Ուզում է ուղարկել Ռուսաստան՝ ուսումը շարունակելու, բայց անհանգստանում է, որովհետև աղջիկը շատ գեղեցիկ էր, իսկ ինքը՝ շատ պատվախնդիր և խստապահանջ մարդ: Վերջապես ելքը գտնում է. տղային էլ հետն է ուղարկում, որ այնտեղ քրոջը հետևի: Մի որոշ ժամանակ անց հայրը զանգում է տղային, հարցնում՝ ո՞նց եք: Տղան հանգիստ բացատրում է. «Ա՛յ պապ, հի՞նչ ասեմ. պատկերացրո՛ւ մի ճյուղված, կարմրած գիլասի՛ մի բայաբան դյուզում, չորս դոն էլ աման ջուտի յըլընքըրադ ա շոռ կյալիս: Ծառին տակին էլ մի կըտաղած շոն ա կապած, վար քիշեր-ցիբեկ չարիս ա տալիս, վախում են, քա հըռուցանա էլ յաշեն դյուբա գիլասը»: Հայրը, մինչև վերջ լսելով ու ամեն ինչ հասկանալով, ասում է՝ ապրես, քեզ մատադ...



32. ...Գեղեցիկը գյուղից եկել էր Բաքու՝ Լիլիկենց տուն: Լիլիկի աղջիկների համար գեղեցիկ շալ էր գործել, նվեր բերել: Ասաց. «Գործել եմ, վար հեփը մեռնեմ, յիրաս լավ լաց ինեմ»: Հերմինեն իր ստացած շալը գլխին գցեց ու ասաց. «Ես խե՞ պետք ա լաց ինեմ. հովը առանց շալ ա մնացել, թող նա լաց ինի»... Ներկաները ծիծաղեցին: Նրանց բարեկամ Միմասը, որ ներկա էր և սովորաբար հայերենն ու ռուսերենը խառնած էր խոսում, ասաց. «Մեր Հերմինեն շատ օստրամիտկա աղջիկ ա»... Նորից բոլորը ծիծաղեցին՝:

33. Իշխանը սիրահարված էր Լիլյային: Գաղտնի հանդիպում էին: Մի երեկոյան քաղի մեծահասակները տան դիմացի շաքանին նստած զրուցում էին, իսկ երեխաները պահմտոցի էին խաղում: Հանկարծ փոքրիկ Նվերիկը գոռում է. «Իշխանը Լիլյային պաչեց»... Լիլյայի տատը զարմացած ու վրդովված ասում է. «Մա՛տդ կտրի, Լիլյան հենց էս քուպեին ըստեղ նստած էր, հե՞փի հըսցըրավ պաչի»: Խաչի դային ասում է. «Ախճի՛, դու խո Սոփանը չե՞ս. պաչիլը կըռըկյութան ա՞, վար ասում ես՝ հե՞փի հասցրեց»...

34. Մեխակ դային մեծ մարդ էր: Գիշերը հանկարծակի վատանում է, տանում են հիվանդանոց: Առավոտյան քծիշկ Դաղարյանն ստուգման ժամանակ հարցնում է՝ «Հայրիկ, ինչի՞ց ես բողոքում»: Նա ասում է, որ փորը ցավում է: Բժիշկը հարցնում է. «Հայրիկ, ճիճու ունե՞ս»: Մեխակ դային ուրիշ բան է հասկանում, միամտորեն ժպտալով ասում է. «Ա՛քքեզ մատաղ, պա առանց դրա ե՞մ»:

35. Գյուղամիջի արքյուրի մոտ մի կին լվացք էր անում: Կանգնում է, լվացքը քափ տալիս: Այդ պահին պրսեցի հայտնի գվարճախոս Ակուփի դային փողոցով անցնում էր, տեսնում է, թե կինն ինչքան է նիհար: Զարմացած բարձրաձայն ասում է. «Պա՛, քու տոնը շինվի, էս հինչքա՞ն ա լղար. հղլակը վար կլխավը քիցես, մի դյոգյուն չկա, վար դեմ ընկնի»:

36. Երկու շահումյանցիներ Մոսկվայում տաքսի են նստում: Որպեսզի վարորդը իրենց զրույցը չհասկանա, սովորաբար գյուղի բարբառով են խոսում: Մեկը մյուսին «հայերեն» ասում է. «Արա՛, էս տաքսիստի ռոժան պաղազրիտելնի ա»: Վարորդը զարմացած հետ է

* Նա խառնել էր օստրոումնի և սրամիտ բառերը (ծ.կ.):

նայում ու նեղացած տոնով հարցնում. «Ռեբյա՛տա, չե՞մ յա պա-
ղազրիտելեն»...

37. Ազրունց Արշակի երեխան ինչ-որ չարություն է անում,
ծնողներին կանչում են դպրոց: Արշակի կին Լաուրան գնում է,
մոտենում ընկեր Մեծլումին, անհանգիստ ու շփոթված արագ-արագ
ասում. «Ընկե՛ր Մեծլում, իմ բախան մեղավոր չի, իմ արևը, քո արևը,
իմ արևը, քո արևը»... Մեծլումն ասում է. «Քո արևը կանուխ-կանուխ
ասա, իմ արևը ասիլ մի»...

38. Արևհատին տանն Արև էին ասում: Իր փոքրիկ Սիլվային
գրկած գնում էր բարեկամի տուն: Հանդիպում է իրենց ընտանիքի
մոտիկներից Մայիսը: Նայում է երեխային, տեսնում, թե ինչ գեղեցիկ
ու ժպտերես է, ուրախ ասում է. «Էս հինչ լավ բալիկ ես, ես քու ցավը
տանեմ, քու արևը կծեմ»: Երեխան զարմացած ասում է. «Վա՛, իմ
մաման»...

39. Խրխափորից մեկը հաճախ է իր գոմշակովը բաց քողնում
կոլտնտեսության կադամբի դաշտում: Բրիգադավարն ասում է. «Ա՛յ
մարդ, ինչու՞ չես անասունդ պահում, ամեն օր մտնում է կադամբի
դաշտը»: Գոմշակովի տերն անհոգ պատասխանում է. «Ա, դե, դաշտ
ա մտնում՝ ակտ կիրի, լի»: Բրիգադավարը դժգոհ ասում է. «Էնքան եմ
ակտ կիրել, բիգարել եմ, վերջապես ես քյալամ եմ ցանե՞լ, թա՞
ակտ»...

40. Խրխափորցի Հայկազը ձմեռնամուտին մի մոզի է առնում,
որ մեծացնի, գոմշակով դարձնի: Մի օր հանդիպում է Արշակ դայուն
ու հարցնում. «Փորձառու մարդ ես, մի տես՝ էս մոզին գոմշակով
կդառնա՞»: Արշակը նայում է, ասում. «Լավ մոզի ա, լավ կկերակրես,
կպահես: Ջրի մեջ էլ նստելու է, գովանա ու էդպես մեծանալու է, գոմեշ
դառնա»... Մի քանի օր հետո Հայկազը գնում է Արշակի մոտ, ասում.
«Արշա՛կ դայի, մոզին մտցրել եմ ջուրը, որ գովանա, ջերմում ա»...
Արշակը ծիծաղելով ասում է. «Այ քո տունը շինվի, բա ես ասել եմ, որ
էս ձմեռվա կեսի՞ն մոզին մտցնես ջուրը»...

41. Վերինշենցի Սաշիկը գնացել էր Ներքին Շեն՝ եղբոր համար
աղջիկ ուզելու: «Չէ» են ասում և ավանդույթի համաձայն հյուրերին
նույնիսկ ոչնչով չեն հյուրասիրում: Դուրս են գալիս տնից, որ գնան,
բայց... Սաշիկի վիզը ծուռ էր մնացել, տանտիրոփում ասում է. «Ա՛,
Սեղա՛ տոտա, բա Վերին Շենից կգան, հասնեն Ներքին Շեն, գինի

չեն խմի՞: Գոնե մի կրուշկա գինի բեր, խմեն»: Սեղան ասում է. «Լսօր հեշ, էգուց կարող ես գալ, գինի խմել»...

42. Բեղը Վերին Շենում տուն էր պատում: Կեսօրին նստում են ճաշի: Դե, պակաս տարիներ էին. տանտիրուհին սեղանին մի քիչ «խիզուզում» է դնում և մի աման հոնի մուրաբա: Բեղը ծիծաղելով տանտիրուհուն ասում է. «Ա՛յ Ռոզա, ես սաթիջամ ե՞մ, վար հյունի վարեննի ես պիտեի»...

43. Վերինշենացի Ռոզան գնում է խանութ, մանր-մունր գնումներ կատարում: Խանութպանը հաշվում է, ասում՝ վաքսունօխտը մանեք: Ռոզան գրպանի փողերը հանում է, հաշվում՝ ուղիղ 67 ռուբլի: Վերադառնում է տուն, ամուսնուն՝ Շամիրին, պատմում. «Տե՛ս, սիրտս ինչքան ա մաքուր, խանութպանն ինչքան ասաց, հենց էդքան էլ փող ունեի»: Շամիրը ծիծաղելով ասում է. «Աղջի՛, բա առևտուր անելիս հաշիվ չեն անի՞. ինչ որ ասել ա, էն էլ վճարել ես. բելքա՞ մի մանեք ավել ա ասել»:

44. Ղարաչինարցի «Բաղնիքի Յաշան» մի անգամ գնում է կինո: Դե, սովորաբար տոմսը 20 կոպեկ էր լինում: Տոմսավաճառը նրանից 30 կոպեկ է պահանջում: Յաշան զարմանում է, քե ինչու պիտի շատ վճարի: Ակումբի տնօրեն Խաչատուրովը ներկա է լինում և նրան բացատրում է. «Յա՛շա, ես կինոն «ուղիւնյոննի» ա, քանկ ա»: Անցնում են օրեր: Խաչատուրովը գնում է բաղնիք: Յաշան ասում է՝ հերք է, պիտի սպասես: Երկար սպասելուց ձանձրացած Խաչատուրովը ջղայնանում է. «Արա՛, ես հինչքա՞ն պետք ա սպասեմ, բա չվերջացրի՞ն էդ լողացողները»: Յաշան ծիծաղելով ասում է. «Մեր «բանյան» «ուղիւնյոննի» ա...

45. Ղարաչինարցի Վալդը «խոպան» էր գնացել: Առավոտից երեկո ծանր ֆիզիկական աշխատանք էին կատարում շինարարության մեջ: Մի օր մի մեքենա ավազ են բերում, բայց մենակ էր Վալդը, օգնող չկար: Շրջակայքի երեխաներին կանչում է, քե՛ ես ավազը թափեցեք, ամեն մեկիդ մի ռուբլի եմ տալու: Երեխաները ոգևորված գործի են անցնում, արագ թափում ամբողջ ավազը: Վալդը հանում է, ամեն մեկին 20 կոպեկ տալիս: Երեխաները դժգոհում են, քե՛ դու 1 ռուբլի ես խոստացել: Վալդը հանգիստ բացատրում է՝ «բեզդետնին» ու «պաղախողնին» հանել եմ, մնացել ա 20 կոպեկ...

46. Ղարաչինարցի Հայկոն լսում է, որ «կլուբում» լավ կինո է

լինելու, բոլորը ընտանիքներով գնում են, ինքն էլ իր կին Աստղիկին է վերցնում ու գնում: Խեղճ կինն ամբողջ օրը դաշտում արևի տակ աշխատել էր, հոգնել: Հենց որ դահլիճի լույսերը հանգցնում են, աչքերն իրեն-իրեն փակվում են, քնով է անցնում: Կինն վերջանում է, դահլիճի լույսերը վառում են, Հայկոն նոր միայն նկատում է, որ կինը հանգիստ քնած է: Հրում է, արթնացնում, ասում.«Ախճի, պա մեր տանը ձրի քոն կինիք, լի՞, խե՞ գուր տեղը 20 կոսլեկ տվի»...

47. Մարգուշը բնավորություն ուներ՝ ամուսնու շավարի գրք-պանները միշտ «մաքրում» էր: Մի անգամ հյուր պիտի գնային: Ամուսինը Մարգուշին ասում է. «Շորերս մաքրիր, տեղ ենք գնալու»: Երբ մոտենում է գնալու ժամը, ամուսինը հարցնում է. «Շորերս մաքրե՞լ ես»: Կինն ասում է՝ հա: Ամուսինը հագնվում է ու նկատում, որ կոշիկները ցեխոտ են: Ջղայնացած ասում է. «Էս կոշիկներն ինչու՞ չես մաքրել»: Կինը զարմացած ասում է. «Բա կոշիկին ջուր օնի՞»...

48. Հայկոն իր «ջեջը» տարել էր Մեսրոպի «զավոդը»՝ «արաղը քաշելու»: Ինքը կրակի մոտ հանգիստ պառկել էր քախտի վրա, քնել, իսկ Մեսրոպն իր գործը կատարում էր: Գիշերվա կեսին, երբ սկսում է քարն օդին ծորալ, Մեսրոպը Հայկոյին արթնացնում է, քե՛ վեր կաց, հաց ուտենք, նոր օդին էլ փորձենք: Հայկոն հրաժարվում է, ասելով՝ սոված չեմ: Մեսրոպն ստիպում է, վեր կացնում: Սկսում են ուտել ու խմել: Մի քիչ հետո Հայկոյի ախորժակը լավ բացվում է, սկսում է հավեսով ուտել-խմել և ինքնիրեն ասում է. «Արա՛, պյանին յաշած՝ քիշերը միշտ սոված եմ լինում, ամա դամիշ չեմ լինում, հա՞»...

49. 4-րդ դասարանի վերջում քննություն էինք հանձնում ռուսաց լեզվից: «Դիկտանտ» էր: Դասատուն ընկեր Սոֆյան էր՝ մի գեղեցիկ աղջիկ Կիրովաբադից: Նա թելադրում էր, մենք գրում էինք: Իսկ Արշակ վարժապետն ասիստենտ էր երևի, հետևում էր, քե ինչ-պես ենք գրում: Մի պահ գլխավերևս կանգնեց, նայեց, ասաց. «Աշա՛ն տղա, քանի անգամ եմ ասել՝ եթե բառի վերջում լինում են լաս-լոս կամ լիս, վերջում պիտի «մյազկի գնակ» դնեք»: Ես լաց եղա, իսկ վարժապետը վատ զգաց դրանից: Գլուխս շոյեց, ասաց. «Մենք բարեկամ ենք, դու մեր Ջունի-ամին քոռն ես, լաց մի լինի»: Անցել է 50 տարուց ավելի, բայց հիմա հենց որ բառի վերջում լաս-լոս-լիս է հանդիպում, հիշում եմ այդ դեպքը:

50. Ժորիկն ու Հասմիկը, բույր ու եղբայր, սովորում էին Երևանում: Ծնողներն աղջկան պատվիրել էին, որ եթե որևէ տղայի հավանի, անպայման տեղյակ պահի եղբորը: Մի օր Հասմիկը գալիս է դասից, եղբորը պատմում, որ իրենց գյուղացի Վաղոդին հավանում է: Ժորիկը զարմացած ասում է. «Աղջի՛, նրա ինչի՞ն էս հավան կացել, քիթը մի մետր կա»... Բույրն ասում է. «Ա, ջհաննամը. ինձ հո՞վ արևական՝ քիթը շալակիր, շող եկ»...

51. Ոսկի տատը հիվանդ էր: Ասենք, որ տունը եկեղեցու մոտ էր, և երեխաները սովորաբար եկեղեցու հետնամասի տարածքում էին խաղում: 6 տարեկան թոռանը հարցնում է. «Շահեն՛, մանը քեզ մատաղ լինի, էս որ մեռնեն, լաց էս լինելո՞ւ»: Երեխան կտրուկ ասում է՝ չէ: Տատը զարմացած հարցնում է. «Բա ի՞նչ էս անելու»... Երեխան ասում է. «Քինական են յղեցին քմակին հաղ անեն, մինչև որ քեզ քաղեն, պրծնեն, հետո գամ տուն»: Տատը հարսին ասում է. «Իրիցանց աղջիկ, էս որ մեռնեն, սրան էդ օրը հաց չտաս, որպեսզի սոված լաց լինի, ժողովուրդը զոռն կմտածի, քե թոռս ինձ համար է լացում»...

52. Ղարաչինարցի Մարտիկը խանութից մոր շալվար առած տուն էր գնում: Հանդիպում է իր փեսա Հրանտին, ասում. «Վար մի քազա սյան են ինք օնում, պետք ա «աբմըվատ» անեն. եկ, քինանք մեր տոն, շունհավեր անենք»: Հրանտն ասում է. «Բա էս քեզ ատկազ կանե՞մ»: Ու գնում են, լավ խմում: Սկսում է անձրև: Մարտիկն ասում է. «Էս եղենակին տանան տյուս չեն կյալ, իսկական օրիշու տան խմելի օր ա»... Հրանտը պատասխանում է. «Քո ասածն ինձ հետի օրենք ա»... Եվ շարունակում են խմելը: Օրվա վերջում Հրանտն օրորվելով, ցեխոտ փողոցներով մի կերպ գնում է տուն: Հենց որ դուռը բացում է, կինը զարմացած ասում է. «Արա՛, էդ հի՞նչ ա քո հալը. կրունկիցդ մինչև խիզատակդ լրիվ ցեխ ա»... Հրանտն ասում է. «Ա՛յ կնիկ, բրիզգավիկներս թողել եմ Բուդաղանց տանը»...

53. Հայկազի ատամը ցավում էր: Երեսից պինդ բռնած գնում էր դեպի ատամնաբույժ Գրիշիկի տուն: Ճանապարհին հանդիպում է Ռազմիկը, հարցնում. «Ի՞նչ է պատահել»: Հայկազը բացատրում է, որ ատամը ցավում է, գնում է, որ Գրիշիկը ցավող ատամը հանի: Ռազմիկը ծիծաղելով ասում է. «Պա՛ քո տունը շինվի, դրա համար պիտի

հասնես Գրիշիկենց տու՞մ, հալա փող էլ տա՞ս. Չիրթունց չափարին մի քիչ ձեռք տուր, ասամի՞ղ հարցը տեղնուտեղը կլուծեն՝ ...

54. Շատ առաջ գյուղերում տների կտուրը ծածկում էին ծղոտով, ցեխով ծեփում, վրայից հող լցնում: Անձրևների ժամանակ տները կաթում էին: Նորից հող էին լցնում, բայց չէր օգնում, էլի էր կաթում: Անձրևների ժամանակ գյուղացիների գլխավոր հոգսն ու գրույցի քեման դա էր լինում: Մի ուժեղ անձրևային գիշերվանից հետո տարիքավոր մարդիկ հավաքված, մտահոգված խոսում էին կաթելու մասին: Բաղմանյան Լևոնը հանգիստ ասում է. «Մեր կտուրը կաթում չի»: Ներկաները զարմացած ասում են՝ չի կարող պատահել: Իսկ Լևոնը պնդում է իրենը: Մարդկանց հետաքրքրությունն այնքան է զրգովում, որ ասում են՝ պիտի գնանք, տեսնենք: Լևոնն ասում է՝ բայց որ ճիշտ եղավ, պիտի ինձ մի լավ հյուրասիրեք: Գրագ են գալիս, գնում: Դուռը բացում են, տեսնում՝ ամբողջ տանը լճակներ են: Ծիծաղելով ասում են՝ «Աբա՛, բա ասում ես՝ չի կաթու՞մ» ... Լևոնը հանգիստ ասում է. «Բա կաթելը տհենց ա լինու՞մ, բոռը լոխ տանը մեջին ա եկել: Այնպես որ՝ զրազը տանուլ եք տվել, պիտի մի լավ հյուրասիրեք ինձ»...

55. Սալեխարդը ԽՍՀՄ-ի ամենահեռավոր քաղաքներից էր շահումյանցու համար: Սալեխարդից մի պրսեցի երիտասարդ վերադառնում է հայրենի գյուղ 1989 թ.: Գյուղում ազատ աշխատատեղ չկար: Ծրջկոմը խնդիր էր դրել՝ թոշակառուներին ազատել, երիտասարդներին տեղավորել: Պարիսի կոլխոզի պահակ Յաշային կանչում են, բացատրում, որ գործից ազատեն: Յաշան ասում է. «Պա սհենցի պյան կլինի՞. ինձ էտի Սալեխարդից էլ ա ցավ կյալիս»...

56. Ղարաչինարցի Ջունգուլանց Թյունին գնում է «Տեշտը»՝ հնձավարձ անելու (հնձած հացահատիկի մի մասն ստանում էին որպես վարձ): Որպես չափ ծառայում էր խոնը՝ տախտակից պատրաստած դուլլանման անոթ: Տեղանքը շոգ էր, ջուրը՝ կեղտոտ: Կարճ ժամանակ անց Թյունին հիվանդանում է, վերադառնում գյուղ՝ հագիվ մեկուկես խոն ցորեն վաստակած: Հարևանները հավաքվում են տեսության: Կինը վշտահար զրուցում է հարևանների հետ՝ ասելով՝

* Չիրթունց գյուղում հայտնի էին որպես չափարի համար կոփողներ (ծ.կ.):

«Քինացել ա, մի խոն լոյի սլիրել, էս օրն ինգել»... Անուսինը մի կերպ քարձրացնում է գլուխը և նեղացած ասում. «Աղջի՛, լյուզիդ կլալկվի՞, վար էն կես խոնն էլ ասես»...

57. Մանասինշենացի Ղահրամանի տղա Ստեփանը բանակից գալիս է: Լուրը տանում են դաշտ, «ունգունուփոռնոկ» վերցնում Ղահրամանից: Մինչև տուն հասնելն ամեն հանդիպող իր հերթին «ունգունուփոռնոկ» է ուզում, և նա գրպանում ինչ ուներ՝ բաժանում է: Տանն էլ շարունակվում է նույն ձևով: Օրվա վերջում գալիս է հարևանի կինը, նա էլ իր հերթին «ունգունուփոռնոկ» ասում: Ղահրամանը թոռանն ասում է. «Քե՛զ մատաղ, էն շկաֆին գլխին մի կծած սրկեուլ կա, բեր, տուր իրեն»...

58. Շրջկենտրոնում մանկավարժական կոնֆերանսի ավարտվելուց հետո ուսուցչուհիներ Եվան, Մարգոն, Արմենուհին, Մարալը ոտքով ճանապարհվում են դեպի Ղարաչինար՝ մտածելով, որ մի մեքենա կհանդիպի: Քանի անգամ ձեռք են քարձրացնում, անցնող մեքենաները չեն կանգնում: Մարգոն հուսահատված կատակով ասում է. «Մարա՛լ, էս անգամ էլ դու ձեռքդ քարձրացրու, դու սիրուն կին ես, շոֆերները մեր սֆաթը որ տեսնում են, գազին հոփ են տալիս, գնում»... Ընկեր Մարալը, որն իսկապես աչքի էր ընկնում հաճելի արտաքինով, ձեռքը քարձրացնում է: Մոտեցող մեքենան իսկույն կանգնում է: Բոլորը ծիծաղելով մտնում են մեքենան: Պարզվում է, որ վարորդն իրենց նախկին աշակերտն է, հեովից նկատել է, ճանաչել, կանգնել: Երկար ժամանակ ընկերուհիները սլատմում էին այս մասին դայրոցում ու ծիծաղում: Ավա՛ղ, նրանք չորսն էլ անժամանակ հեռացան կյանքից, և նախկին աշխատանքային ընկերներն այսօր ցավով են վերհիշում այս զվարճալի պատմությունը:

59. Գյուղում ամեն տոհմին մի մականուն էին կապնում: Մեկը, որի տոհմին «էշ» մականունն էր կապած, նոր մեքենա էր առել, Կիրովաբաղից գյուղ էր գնում: Գերանբոյի խաչմերուկում հանդիպում է համագյուղացիներից մեկը, որի տոհմին «կանաչ լոբի» էին ասում: Նստեցնում է մեքենան, տանում և կատակի համար հարցնում. «Ձեր բախչի կանաչը դուրս ա եկե՞լ...»: Իսկ նա, հասկանալով ակնարկը, իր հերթին սրամտում է. «Հա՛, դուրս ա եկել, ամա հալա արածելու չի»...

60. Բենիկն ու Աշոտը շախմատ էին խաղում: Աշոտը ձիուց բռնում է, որ հերքական քայլը կատարի, բայց իսկույն նկատում է, որ սխալ է, ձեռքը հետ է քաշում: Բենիկը ջղայնանում է, քե՛՛ ձիուդ ձեռք ես տվել, պիտի խաղաս: Աշոտը հանգիստ ասում է. «Արա՛, ձին իմն ա, ես քիմարել եմ: Խե, ամեն անգամ, որ ձիուն ձեռք են տալիս, նստում են, մի տեղ գնու՞մ»...

61. Մուխիի տունը ճանապարհի եզրին էր: Պատշգամբում նստած՝ տղայի հետ միասին ճաշում էին, տղան էլ բաժակները լցնում էր, խմում էին: Այդպես հանգիստ ուտում-խմում են որոշ ժամանակ: Մի պահ տղան երևի մտքերով տարվում է, բաժակները մնում են դատարկ: Հայրը ջղայնացած նայում է դատարկ բաժակներին, իսկ տղան գլխի չի ընկնում: Այդ պահին պատուհանի տակով ճանապարհով անցնում է համագյուղացի Սահակը: Մուխին լուսամուտի ապակին քիկացնում է, Սահակը հետ է նայում: Մուխին ասում է. «Ա՛յ Սահակ, նի մտի, ուրուր նհետ հաց ոտենք, համ էլ ստաքանները կլցնես, կինի կխմենք»...

62. Ներսեսի աղջիկը Ադու ջուր թաղամասում էր ապրում: Փեսան խմիչքի նկատմամբ մի քիչ թուլությույն ուներ: Տնեցիների դժգոհությունը կամ խնդրանքը չէին ազդում: Հաճախ անախորժ գրույցներ էին լինում: Ներսեսը մի օր վեր է կենում, գնում աղջկա տուն, որ փեսայի հետ անձամբ խոսի: Հակառակի մնան փեսան այդ օրն էլ է խմած տուն գալիս: Ներսեսը սկսում է, որ մի քանի խրատական խոսք ասի: Փեսան միանգամից այնպես է «նախշում», որ Ներսեսը շվոթված չի էլ հասցնում հագնվել, կոշիկներն արագ դնում է կոնատակին, դուրս գալիս տնից, ակամա շարժվում դեպի Բուզլուխ տանող ճանապարհով: Հարևանները զարմացած ասում են. «Ներսես՛, ձեր տունն էս կողմի վրա է, դու էդ դեպի ո՞ւր ես գնում, կոշիկներդ էլ չես հագել»: Ներսեսն առանց կանգ առնելու ասում է. «Մաջալ չօնեն, խուսուցնիլ միք, մաջալ չօնեն»...

63. Շրջկենտրոնում շաբաթօրյակ էր: Մասնակցում էին նաև բոլոր գյուղերից պատասխանատու աշխատողներ: Կեսօրվա կողմերը մանաշիղցի Մամիկն աննկատ հեռանում է, գնում իր ընկերոջ՝ Վելյան Բքիստապիորի տուն՝ ճաշելու: Տղմա էին եփել: Մի մեծ աման լցնում են, ախորժակով ուտում է, հավանում և... մաքրագարդում կաթսան: Հետ դառնալով շաբաթօրյակի տեղը՝ սկսում է եռանդով

աշխատել: Մյուսները՝ հոգնած ու քաղցած, տրտնջում են, քե՛ն՝ հոգնել են, քաղցած են: Մամիկը ժպտալով ասում է. «Ա՛յ ընկերներ, հոգնելը ո՞րն է, սովածը ո՞րն է, հագիվ հավաքվել ենք, եկեք մի լավ աշխատենք»: Շրջանի ղեկավարները գովում են նրան, մյուսներին էլ դիտողությամբ անում, քե՛ն՝ օրինակ վերցրեք Մամիկից:

Ի վերջո շաբաթօրյակն ավարտվում է: Քրիստափորն ընկերներին, այդ թվում և Մամիկին, հրավիրում է իրենց տուն՝ ճաշելու: Կինն սկսում է արագ-արագ կարտոֆիլ մաքրել ու «ծարխտ» անել: Քաղցած հյուրերը կարմրածները տեղնուտեղը վերցնում են, ուտում: Քրիստափորը ջղայնանում է. «Ա՛յ կնիկ, ինչու՞ չես նախօրոք մի բան պատրաստել»: Կինը շփոթված ասում է. «Մի դազան տու՛մա էի եփել, Մամիկը մի քիչ առաջ եկավ, հյուրասիրեցի, մեկ էլ տեսա՝ դազանը դատարկվել է»...

64. Դարաչինարցի Իվանյան Գերասիմը բեռնատարի վարորդ էր, բայց այն տարիներին ուրիշ մեքենաներ համարյա չկային, և ժողովուրդը բեռնատարով էր տեղից տեղ գնում: Մի անգամ «կուզովը» թուրք ուղևորներ լցրած տանում էր Դասիմբայի գյուղ: Ճանապարհին մեքենան շուտ է գալիս, 7 հոգի մեռնում են... Անցնում են տարիներ: Մի անգամ Գերասիմը գնում է Երևան, մտնում ավտոպահեստամասերի խանութ, որոշ մասեր գնելու: Խանութի աշխատողը, նրա բարբառը լսելով, արհամարհական ձևով մերժում է՝ ընկերներին ասելով՝ «շուտ տված» հայ ա... Գերասիմը ջղայնանում է, քե՛ն՝ դու ի՞նչ կլինես արած հայի համար, իսկ ես Դասիմբայի թուրքի գյուղում «քրատսկի մագիլա» եմ սարքել... Խանութի աշխատողները, անհարմար զգալով, ասում են. «Ախպե՛ր ջան, ինչ որ պետք է, ջոկի՛ր, տա՛ր»...

65. Ջունգուլանց Թյունին ծույլ, բայց շատակեր մարդ էր: Նրա բնավորությունն իմանալով՝ նրան մեծ ամանով էին ճաշ տալիս, լիքը լցրած: Էլի միշտ դժգոհում էր, քե՛ն իր բաժինը քիչ է: Մի անգամ էլ եփած ամբողջ ճաշը դնում են նրա առաջին, ասում՝ քո փայն է: Թյունին էլի է դժգոհում, ասելով. «Էսքան որ ինձ համար եք պահել, բա դուք ինչքա՞ն կլինեք կերած»...

66. Դարաչինարցի Արտուշը ռուսական մի գյուղում բրիգադավար է: Դաշտում աշխատում են: Անձրևից ճանապարհի վրա մեծ լճակ է գոյացել: Մի մեքենա կանգնում է ջրափոսի մոտ: Վարորդը

դուրս է գալիս. Արտուշին հարցնում. «Դ-րո՞ւզ, սմագո՞ւ պրաեխատ»:
Արտուշը հանգիստ պատասխանում է. «Մլո՛ւշայ, եսլի գլազա
կուշաեա, եզժայ. եսլի գլազա նե կուշաեա, նե եզժայ»...

67. Պրսեցի Անդոն հարևանի ոչխարը գողանում է: Հարևանը
կասկածում է նրան և հայտնում միլիցիային: Միլիցիայում Անդոյին
կանչում են, հարցնում. «Դ-ու ե՞ս գողացել ոչխարը»: Անդոն կեղծ
նեղացած պատասխանում է. «Ա՛, համուք չի՞, էդ հի՞նչ եք ասում»: Մի
ուժգին ապստակ են հասցնում: Անդոն երեսից բռնում է. ասում. «Ա՛,
հի՞նչ եք վռագում. պատմելով գալիս եմ, էլի»...

68. Սաշիկն ու Արաքսյան արդեն բոշակառուներ էին: Գյուղում
մենակ էին ապրում. իսկ երեխաներն ամուսնացել, տարբեր քաղաք-
ներում էին ապրում: Մարտի 9 -ն էր: Օրը սովորականի նման անց-
նում է, պառկում են, քնում: Գիշերվա կեսին Արաքսյան հանկարծ
արթնանում է, հիշում, որ մարտի 9 -ը իր որդի Վովայի ծննդյան օրն է,
մոռացել են, չեն նշել: Կամաց, զգույշ տեղաշարժից վեր է կենում, մոտե-
նում պահարանին, պսլզում, դուռը բացում, մի բաժակ գինի լցնում և
ցածրաձայն շշուշում շնորհավորանքի խոսքեր: Ամուսինն արթնանում
է, նկատում: Հարցնում է. «Աղջի՛, և՛ հի՞նչ բանի ես»: Նա պա-
տասխանում է. «Պա սօրի ըրխիս ռաժդեննին ա իլել, նշել չենք»:
Սաշիկը վեր է կենում, ինքն էլ մոտենում: Անկախ իրենից ինքն էլ է
պսլզում, ասում. «Դ-ե, մի ստաքան էլ ինձ հետի աժա»: Կինը լցնում է,
բարի օրհնանք են անում, խմում: Մի պահ սթափվելով՝ Սաշիկն
ասում է. «Աղջի՛, էս հի՞նչ ենք անում, բա պիպիզած ռաժդեննի
կլինի՞»...

69. Շրջանի ղեկավար մարմինը՝ բյուրոն, քննարկում է կոլխոզ-
սովխոզներում ձմեռացման նախապատրաստման հարցը: Բուզլովսի
նախագահ Շիմշատ Բաբայանին շրջանի ղեկավարն ասում է. «Ֆեր-
մայի շենքը պիտի քո ուժերով նորոգես»: Շիմշատն ասում է. «Մատե-
րիալ չունեն, բաբոչի չունեն, կարալ չեն»: Նա նորից է պնդում, քե.
«Պիտի միջոցներ գտնես, մինչև ձմեռը գալը նորոգես շենքը՝ ինչ
ուզում ես, արա»: Շիմշատը հիասթափված ասում է. «Ա՛, ինկեր
Միրզոկ, ես ասեմ, դու ասես՝ դա հի՞նչ կղառնա»...

70. Շուշի բիբը բացում է կուսըջկոմի քարտուղար Էլմիրա Դա-
նիելյանի կաբինետի դուռը, կոշիկները հանում, բողնում դռան մոտ,
բարևում, առաջ գնում: Քարտուղարն ասում է՝ կոշիկներդ հագիր,

Շուշի բիք: Նա պատասխանում է. «Չէ՛, ֆարշ ըրած պոլին վըտըմանով շոռ չեն կյալ»: Հարցնում է. «Ի՞նչ է պատահել»: Իսկ նա բարձրաձայն երգելով, ձեռքերը չորս կողմերի վրա տարածելով ասում է. «Շու՛շի բիքը ցավերդ տանի, Շու՛շի բիքը ըռաջիդ մեռնի, Շու՛շի բիքը երկու հըսած աղջիկ օնի, հո՞ւնց պահի»... Քարտուղարն ասում է. «Ա՛յ Շուշի բիք, ես ի՞նչ կարող եմ անել»: Նա բացատրում է. «Աղջկանս մի գործի դիր»: Պատասխանում է, որ աշխատանքի հարմար տեղ չկա: Իսկ նա հայտնում է. «Սավխոզի գրադարանի աշխատողին էս գիշեր փըխճըցրել են»: Քարտուղարը զանգում է սովխոզի տնօրենին, ասում. «Վադինա՛յ Սերգեևիչ, գրադարանի աշխատողի տեղն ազատվել ա, եթե հնարավոր է՝ Շուշի բիքի աղջկան տեղավորեցեք, բանվորական ընտանիք են, վիճակները լավ չի»: Տնօրենն ընդունում է: Անցնում է մի երկու ամիս, Շուշի բիքը նորից է գնում Դանիելյանի կաբինետը, նորից սկսում նույն ձևով «երգել»: Քարտուղարը հարցնում է. «Շուշի՛ բիք, աղջկադ աշխատանքի են ընդունել, էլ ի՞նչ ես ուզում»: Շուշին ասում է. «Նրան կինո-դամոյ են արել»: Քարտուղարը հարցնում է. «Կինո-դամոյը» հի՞նչն ա, Շուշի բիք»: Իսկ նա բացատրում է. «Վա՛, պա ռայկոմ ես, կինոյից-դամոյը գյուղում չե՛ս հինչն ա՝ տարել են կինո, էնտեղից տարել դամոյ»: Քարտուղարն ասում է. «Պա ավելի լավ, էլի՞, ես հի՞նչ անեմ»: Իսկ նա նորից երգում է. «Շու՛շի բիքը մատաղ ինի քեզ, պա Շուշի բիքին մի աղջիկ էլ օնի, նրա ճարը հո՞ւնց պիտի ինիլ, նրան էլ պիտի գործի ընդունես, վար քամահ անեն, օգեն, տանը նստած աղջկանը հո՞վ կօզի»:

71. Շատ տարիներ առաջ էր, դարաշինարցի Մարյանանց Սաշիկը դպրոցական էր, մոտենում է հորը, խնդրում, քե՛ 5 կապել տու: Հայրը՝ Պետո դային, ասում է՝ հինչի՞դ ա պետք: Երեխան ասում է՝ ռետին պիտի առնեմ: Հայրը չի իմանում, քե դա ինչ բան է, հարցնում է. «Ռետինը հի՞նչն ա, դա հի՞նչ են անում»: Երեխան բացատրում է. «Դե տետրի մեջ որ սխալ բան են կիրում, ռետինավ ճինջում են»: Պետո դային մի քիչ մտածում է, հետո հանգիստ պատասխանում... «Ապան քեզ մատաղ ինի, վե՛չ սխալ ըրա, վե՛չ էլ ճինջես»...

72. Ուզում էի տուն սարքել: Մի լապատկա վերցրի, որ գնամ, հող բերեմ: Դե, այն ժամանակ հողով էինք ցելս անում, պատ շարում: Փողոցում կանգնած էի մեքենայի մոտ: Միրզաջան դային ճանապարհի սարքող բրիգադում էր աշխատում, տարիքն առած մարդ էր:

Լապատկան մեջքին հենած, երկու քեռի տակով անցկացրած, հանգիստ քայլելով՝ մոտեցավ, բարևեց, հարցրեց. «Բաջօղլի, հենց ա գնում ես հող բերելու»: Ասացի՝ հա: Նա քե՛ն ես էլ կգամ, օգնեմ: Ես ասացի. «Անհարմար է, Միրզաջան դայի, մեծ մարդ ես, օգնող շատ կա, քեզ նեղություն չեմ տա»: Գնացի մի մեքենա հող բերեցի: Հաջորդ օրը ցեխ էի անում, իսկ վարպետը՝ Մելին, իր փոքր եղբոր հետ պատ էր շարում: Միրզաջան դային մոտեցավ, ասաց. «Էդ ա հողը բերել ես, լավ ցեխ ա դառնու՞մ»: Ես ասացի. «Հա՛, ա՛ դայ, լավ ցեխ ա դառնում»: Նա հարցրեց. «Ցեխի լավն ու վատը ինչի՞ց ես իմանում»: Ես բացատրեցի. «Դե, ա՛ դայ, ցեխը լապատկային չի կպչում, հեշտ եմ խառնում»: Նա ժպտալով ասաց. «Պա՛, քեզ մատաղ, ցեխը եթե լապատկային չի կպչում, քարին էլ չի կպչելու, դրա լավը ո՞րն ա»... Աստված ողորմի Միրզաջան դայուն: Այս իմաստուն խոսքը մինչև հիմա չեմ մոռանում:

73. Վանիկը գնացել էր Վոլգոգրադ՝ իր հին ընկեր Աշոտի մոտ: Դե, Աշոտն արդեն փորձառու էր, իսկ Վանիկը քաղաքի կյանքին անծանոթ էր, ռուսերեն էլ լավ չգիտեր: Ասում է. «Աշո՛տ, քող ես ինքս խանութում առևտուր անեմ, որ քիչ-քիչ խոսելը սովորեմ»: Մտնում են հացի խանութ: Վանիկը հարցնում է. «Դե՛վուշկա, պաչեմու՞ խլեբ»: Վաճառողը զարմացած ասում է. «Զտորը կուշատ»: Վանիկը դժգոհում է. «Ա, նետ է՛, պաչեմու՞ խլեբ»: Վաճառողը ճարը կտրած ասում է. «Ատո՛նեայոշ դամոյ, տեբե օբյասնյատ»: Աշոտը նկատում է, որ Վանիկը չի կարողանում հարցնել, քե հացն ինչ արժե, ինքն է մոտենում, բացատրում. «Դե՛վուշկա, օն խոչետ սպրասիտ՝ զաչե՞մ խլեբ»^{*}:

74. Վերին Շենի սովխոզում երկու վարորդ եղբայրներ կային՝ Սաշոն և Գրիշան: Որպես առաջավորների, նրանց նոր բեռնատար էին տվել: Գնում են Գյոթան կայարան՝ բեռ տեղափոխելու: Թե ինչպես է պատահում՝ «կոիլոն» կաշում է ինչ-որ բանի, ներկը քերվում է: Գյոտ վերադառնալիս անցնում են Ղարաչինարի միջով, որտեղ ճաշարանն էր: Բոլոր անցնողները սովորաբար այդտեղ կանգնում էին, հաց ուտում, նաև գինի խմում: Դե, Ղարաչինարը գինով առատ էր, ժողովուրդն էլ ուտող-խմող: Ճաշարանի մոտ հավաքված դարա-

* Փոխանակ ասելու՝ պաչո՞ւմ խլեբ:

չինարցիները զննում են Գրիշայի նոր մեքենան, իսկ նա տրտնջում է, որ «կոխլոյի» ներկը քերվել է: Ներկաներից Սարգիս դային ասում է. «Պա, քեզ մատաղ, դա հի՞նչ ա, որ մտածում ես. մի չեքվեռ կինի կառնես, կսարքեն»: Համաձայնում է: Նրա տունն էլ մոտիկ էր: Մեքենան քշում են նրանց բակը, մենք էլ՝ հավաքվածներս, նրանց հետևից, որովհետև Սարգիս դային ուստա չէր: Մեզ հետաքրքիր էր, քե ինչ է անելու: Նա մտավ տուն, հետո եկավ՝ ուսին գցած մի պղնձե դազան, մի բանկա օլիֆ և մի վրձին: Օլիֆը քսեց «կոխլոյի» քերված տեղը, դազանի քամակի մուրն էլ քաթախեց, որ քսի վրան: Գրիշան անհանգստացած հարայ տվեց. «Սարգիս դայի, հենց ապրես, մաշինս մոտտառես վե՛չ, ես քու մի չեքվեռ կինին կառնեմ»...

75. Ղարաչինարցի՝ Վեդոն շրջկենտրոնի ուսումնարանում էր աշխատում: Ներքինչնեցի Չադառ Վալոդն այնտեղ պահակ էր, իսկ Բաբաջանանց Նազարը՝ պարեա: Մի օր պայմանավորվում են, քե՝ «սաաբրազիտ» անենք, ճաշարանում մի լավ ժամանակ անցկացնենք: Երբ քեֆները լավանում է, Վեդոն հարցնում է. «Աձեր շենացուց խե՞ են չեչեն ասում»: Վալոդը Նազարին նայում է ու հարցնում. «Սրան քակենք, հետո հաց օտենք, քե՞ հացը վերջացնենք, հետո քակենք»: Նազարն ասում է. «Քեզ մատաղ, տհենցի գործն ուշացնիլ չեն. կարող ա հաց օտենք՝ մոռանանք»... Վալոդը հենց կողքի պատից մի տախտակ է պոկում, շրխկացնում Վեդոյի գլխին: Արյունն սկսում է շոռալ: Թևից բռնում են, տանում, աղբյուրի մոտ կռացնում, սկսում լվանալ: Հետո վերքը փաթաթում են, երեքով գնում, նստում ուտել-խմելը շարունակում: Այդ ընթացքում աղմուկ է բարձրանում: Վեդոյի կինը, որն այնտեղ էր աշխատում, վազելով գալիս է, Վալոդին ասում. «Ա՛ խորզոնքհատ, խե՞ ես ըրխոցս եթիմ քողում»... Վալոդը, անկեղծ ձևանալով, ասում է. «Աղջի՛, հի՞նչ ես իսկ-իսկ խոսում. խմած էր, գնաց, որ «կռանդից» ջուր խմի, վայր ընկավ, գլուխը փշրեց, մենք ենք մի հանգով փրկել»: Կինը մի պահ լռում է, հետո կամաց ասում. «Հա՞, ողորմի ձեր անցյալին, լավ եք արել, ինձ հալբաթ սխալ են ասել»...

76. Ներքինչնեցի Ռաժդենը նոր էր հաստատվել Պյատիգորսկում: Հարևանը քյավառցի էր: Դե, քյավառցիները հայտնի են խմելով, իսկ նրանց բարբառով ա-ին օ են ասում: Մի օր հարևանը կանչում է Ռաժդենին, հարցնում. «Օրաղ կխմե՞ս»: Ռաժդենն ուրախ

տոնով ասում է. «Ինչու՞ չեմ խմի. հալա գերանդին էլ «գակուսկի» կանեմ»...

77. Պրսեցի Վանիկը հայրենի շրջանում վարորդ էր աշխատում: Մի առավոտ աշխատանքի է ներկայանում ու ընկերներից լսում, որ «շեֆի» տղայի հարսանիքն է եղել, և կոլեկտիվից շատերը մասնակցել են: Մոտենում է և նեղացած տոնով ասում. «Աչքդ լույս, տղայիդ պսակել ես, ամա նեղացել եմ, որ ինձ հրավիրել չես»: Պետն ասում է. «Վարորդ տղա ես, դեմիշ չեմ արել կանչեմ. որ ծախս չանես, պահարկա առնես»: Վանիկը զարմանում է. «Այ քո տունը շինվի, հերինջս ծախել եմ, երեք հազար մանեթ տվել քեզ, որ վարորդ ընդունես, հիմա մի պաղարկան դեմիշ չես անու՞մ»...

78. Եփրեմը շատ աշխատասեր և ազնիվ ու բարի մարդ էր Ներքին Շենում: Երկար տարիներ ջրաղացական եղավ, բայց աղալու համար ոչ մեկից վարձ չվերցրեց: Ասում էր՝ «գամբը» ինձ հերիք ա: Արագախոս մարդ էր, բառերն էլ հաճախ իրար էր խառնում: Մի անգամ ջրաղացում հավաքված մարդիկ գրուցում էին լավ մագերի մասին՝ ում մագերը խիտ են, ումը լավ գույնի են, ում ծամերը երկար են և այլն: Եփրեմը ոգևորված ասում է. «Մագեր-մագեր՝ մեր Ջաբելինն ա է՞. վեռավը տյուս ա կյալիս»...: Մի անգամ գութանով վար անելու ժամանակ եզան վրա գայրանում է. «Ա՛յ անտեր, քեզ ասում եմ՝ հո՞-Բյանոշ, որ դեսը գաս, դու գնում ես Տյափրունց յա՞լը»...

79. Ռայկունի բյուրոյի ժամանակ քուրք քարտուղար Ջամալովը խոսում է զարմանալին աշխատանքների մասին: Ռուսերեն վատ իմանալով՝ դաշտային աշխատանքներին ասում է. «Պալավրե րաբոտը նաչալիս» և կարգադրում է, որ բոլորն ակտիվ մասնակցեն: Հավաքվածները ծիծաղում են, իսկ նա չի հասկանում պատճառը: Կողքը նստած Էլմիրային հարցնում է՝ էս ինչի՞ եմ ծիծաղում : Նա ասում է. «Դոխտուր Վարսիկին հարցրու, քեզ կբացատրի...»: Վերջում երևի մեկը բացատրում է նրան: Հաջորդ նիստի ժամանակ վեր է կենում, նորից ասում. «Դյա նաս գլավնե — պալավրե րաբոտը»: Կողքը նստած Էլմիրան իսկույն ոտքին խփում է, իսկ նա նեղացած ասում է. «Ա՛, ոտքիս խփեցիր, սխալվեցի»...

80. Գյուղերում շրջանի ղեկավարին «ռայկոն» էին ասում: Նա ամենագոր մարդ էր համարվում, նրա ասածն օրենք էր բոլորի համար: Երկու երեխա այգենիջյան ճանապարհով՝ «դախկազով»

գնում էին: Յեխաշբի մի մեծ փոս է հանդիպում՝ «գյուլ»: Մեկը մյուսին հարցնում է. «Կկարա՞ս էս գյուլավը լոքես»: Նա ասում է. «Ա՛, սկի ռայկոմը կարալ չի»...

81. Սեդրակը չաղ մարդ էր, տարիքն էլ առած: Կինը նրանից ավելի էր չաղ: Երկուսն էլ չէին աշխատում, թռչակի էին: Սեդրակը շուրջը նայում է, կնոջն ինչ-որ դիտողություն անում: Կինն ասում է. «Արա՛, բոլ ա, լի. բա մարդու երեսին էդքան կխոսա՞ն. կաշիս ա մնացել ու ոսկորս»...

82. Շրջանի մորընտիր ղեկավարը գնում է գյուղեր՝ տնտեսությունների վիճակին ծանոթանալու: Հայ Պարիսում տեսնում է՝ դաշտերը լրիվ կարմիր կակաչով ծածկված: Այդ նշանակում է, որ սերմացուն մաքուր չի եղել, հացահատիկի բերքը վատ է լինելու: Իսկ նա հիացած նայում է, ասում. «Կակայա կրաստտա՞»: Շուրջը հավաքված գյուղացիներից մեկն ասում է. «Պահո՞, տնըրներս քանդված ա, եթե սա պիտի մեզ ղեկավարի»... Անցնում են առաջ, մոտենում անասնապահական ֆերմայի շենքին: Այդ պահին այնտեղ մի սայլ կար, եզները կանգնած որոճում էին: Նորընտիր ղեկավարը ձեռքը դնում է եզան մեջքին, թփթփացնում ու հարցնում սայլապահին. «Ինչ-քա՞ն ա կաթ տալիս»: Սայլապանը զարմացած ասում է. «Սա կով չի եզն ա»: Իսկ նա անհոգ շարունակում է. «Կակա՞յա ռագնիցա՞...»:

83. Պյատիգորսկում Արթուրը մի անգամ իրեն վատ է զգում: Գնում է բժշկի, ասում են՝ խոլեստերինդ բարձր է, պիտի դիետա պահես: Նա բժշկին խնդրում է, թե՛ գրիր, տեսնեմ՝ ինձ ինչ ա կարելի, ինչ՝ չէ: Եվ հարցնում է. «Ժմեղը վնաս ա՞»: Բժիշկն ասում է. «Ընդհակառակը, չափավոր խմելն օգուտ ա»: Նա ուրախացած ասում է. «Դե, մնացածը հինչը օգուտ ես՝ կիրի»...

84. Էստեղի շուկայում մի հայ կին կանաչի ա ծախում: Անկախ ինձնից միշտ նրանից են կանաչի առնում: Նա էլ առիթից օգտվում է, համ գնի մեջ է խաբում, համ էլ կշեռքի մեջ: Ես դիտմամբ դեմքս շրջում եմ, իբր չեմ տեսնում, որպեսզի նա արխային խաբի. նա իր ուզածն անում է միշտ, բայց վերջում մի քանի հատ ավելի է դնում, ինքն էլ հայերեն է խոսում, դրա համար ենք նրա մոտ գնում...

85. Արթուրը Մոսկվայում բիզնեսով է զբաղվում, իսկ տարիքն

* Ի՞նչ տարբերություն (թրգմ. կ.):

առած ծնողների համար Հյուսիսային Կովկասում տուն ու հողամաս է առնում, որ այնտեղ իրենց ուզած ձևով ապրեն՝ սեփական տուն-տնտեսություն ունենան, հող մշակեն: Հետո էլ ինքն է իր հաջողակ բիզնեսը թողնում, գնում ծնողների մոտ, որ մենակ չլինեն: Կից հիմնարկում հայրն աշխատանքի է անցնում որպես սլահակ և ամբողջ գիշերը հողամասը փորում, մաքրում մոլախոտերից, ընտիր այգի սարքում: Ու միշտ ասում էր. «Բա գիշերը պարապ մտնեմ, քե՛ սլահակ ե՞մ»... Մի օր հարևանները դժգոհում են Արթուրի մոտ, քե՛ «Վաշ դեղ մամ պակոյա մի դայոտ»: Արթուրն անհանգստանում է, որ գուցե՞ հայրը մեկի հետ վիճել է: Իսկ հարևանները բացատրում են՝ չէ՛, ի՞նչ ես խոսում. մա գիշեր-ցերեկ աշխատում է, այգին դարձրել է դրախտ. դե, մենք էլ ամոքից մայում ենք, մեր այգում աշխատում... Եվ այդպես տարիքն առած Վալդին այգում ամեն ծառ ու թուփ աճեցրել է, իսկ հսկայական բակը լրիվ խաղողի չարդախով է ծածկել. և հով է, և գեղեցիկ, տարեկան կես տոննա էլ գինի է սարքում իր ձեռքով՝ մեր գյուղերի ձևով...

86. Էստեղ մեզնից մի քիչ հեռու մի քանի շահումյանցիներ են ապրում: Ուրքով ահագին տեղ գնում են, որ նրանց հանդիպեն , իմ ուզած ձևով զրուցեն: Նրանք էլ բերում են, ուտելիքը լցնում, հյուրասիրում: Ասում են. «Արա՛, ուտելու համար չեմ եկել, է, եկել եմ, որ մեր լեզվով զրուցենք»...

87. Իբրև Ստավրոպոլում տարիքն առել է, բայց ամբողջ օրն աշխատում է, մի օր նեղարտված տուն է գալիս, տղային ասում. «Արթո՛ւր, քեզ մատաղ, ես որ մեռնեմ, կտանես Հայաստան, էնտեղ թաղես»: Տղան ասում է. «Ա՛յ մամ, դրա վախտը չէ, համ էլ՝ քեզ համար մեկ չէ՞»: Մայրն ասում է. «Չէ՛, քեզ մատաղ, ես սրանց հողումը կարալ չեմ կենամ. իրենք չեն աշխատում, մեր մասին էլ միշտ դժգոհում են. քե՛ չոո՞ գա լյուղի. բանո ուխտոյատ, պոզոնո պրիխտոյատ»...

88. Ներքին Շենում Փիշիկանց ազգին կատու են ասում, Վելյանների՝ շոն: Ռուսաստանում հայրենակիցների հանդիպում է, բա-կում մեծ սեղան է զգված, աշխույժ զրույցներ են գնում: Հանկարծ ցանկապատի վրա մի կատու սկսում է ծվծվալ: Արթուրը Վելունց Գևորգին ասում է. «Էն կատուն կարող ա՞ քեզ տեսել ա, վախեցել»:

* Չեր պապիկը մեզ հանգիստ չի տալիս (թրգմ. կ.):

Կողքից համազրուողացի Էլմիրան ասում է. «Է՛, ավառս, որ ձեր ասածներն էստեղ չեն հասկանա»...

89. Գյուղում ընդունված էր, որ երբ երեխայի ատամն ընկնում էր, այդ ատամը հետևի կողմի վրա շալրտում էին, որպեսզի փոխարենը լավ ատամ դուրս գա: Արշակը 80 տարեկանին մոտ էր, ընդհանենը 2 ատամ ուներ: Մի անգամ դրանցից մեկն ընկնում է: Արշակը վերցնում է, հետևի կողմի վրա շալրտում: Թռռը նկատում է, զարմացած հարցնում. «Պապի՛, քեզ էլի ա՞տամ դուրս գալու»...

90. Գյուղում կոլխոզի նախագահի վարորդն էի, նա էլ Կիրովաբադի գյուղինստիտուտում հեռակայում էր: Չմեռվա մեկ ամիսն այնտեղ էր լինում: Այնտեղ մի քանի ուրիշ գյուղերից էլ նախագահներ կային: Շաբաթական 3 անգամ «Վիլիսն» ապրանքով լցնում էի, գնում նրանց մոտ: Էնքան էի գնացել, պահակը կարծում էր, թե դասախոս եմ»...

91. Մեր հայրենակիցների գրույցների մեջ հաճախ են եզակի ու հետաքրքիր, պարզապես տեղնուտեղը հորինված բառեր լինում: Վելունց Յուրիկն ասում է՝ իմ հայրը Հախունց Սերգեյի հետ ընկերություն է արել: Հորիցս հետո ես եմ շարունակել այդ ընկերությունը նրա հետ: Չնայած ինձնից մեծ էր, բայց իրար հետ «ստըբընակոխ» ենք արել՝

92. Ներքինչնեցի Ժենիկը բռնագաղթից հետո մի քանի հարազատներով ապաստան էր գտել Ամերիկայում: Նյութապես ապահովված էին, կարծես թե ապրելու բոլոր պայմաններն ունեին, բայց այդ երկրի օտար ու խորթ պայմաններին չէր հարմարվում: Երկար տարիներ անցնելուց հետո վերջապես տեղափոխվում է Ռուսաստանում ապրող հարազատների մոտ: Ծանոթները զարմանում են, թե ինչու է Ամերիկայի մման երկիրը թողել, եկել: Կողքից «բացատրում» են, թե իբր փողոցով անցնելիս Ամերիկայի նախագայ Բուշին «չանչ» է արել («ալ-լէ»), Բուշն էլ ջղայնացել է, թե՛ էս երկրում կամ ես պիտի մնամ, կամ Ներքինչնեցի Ժենիկը, և Ժենիկին վտարել են Ամերիկայից...

93. Խորհրդային տարիներին շրջանի կոլխոզ-սովխոզների շատ գործեր շաբաթօրյակով էին կատարում: Խոտհոնձ էր: Բոլոր հիմնարկներից խմբեր էին կազմում, գնում խոտ հնձելու և հավա-

* Դա նշանակում է շատ խմել (ծ. կ.):

քելու: Մարդկանց համար դա բնության գրկում ժամանակ անցկացնելու միջոց էր և, հասկանալի էր, կարգին չէին աշխատում: Միլիցիայի կոլեկտիվից միայն Արշակին են ուղարկում: Գնում է, տեսնում՝ տարբեր կոլեկտիվներից խմբով տղամարդիկ կան: Հարցնում է. «Տղերք, ձեր կոլեկտիվի նորման ինչքա՞ն ա»: Յույց են տալիս չափը: Գերանդին վերցնում է, մտնում խոտհարքը, մինչև կեսօր իրենց կոլեկտիվի նորման հնձում, զնում: Ամեն տեղամասում մի ղեկավար էր կցված: Նրանցը շրջանի դատավորն էր: Գալիս է, տեսնում, զարմացած ասում. «Ա էդ մարդը կոմբայն ա՞. նրա հնձածի չափով մարդ կարալ չի ման գա»...

94. Սրբուհին տարեց կոլտնտեսական էր՝ հազարումի հոգսելով ու կարիքով: Մի օր գանձապահն ասում է. «Սրբուհի՛ բիբ, քո կատարած աշխատանքի դիմաց որ 1000 մանեք գրեն, գոհ կլինե՞ս»: Նա ուրախացած ասում է. «Վու՛, քե՛զ մատաղ, եթե էդքան փող գրես, ամեն օր քեզ համար աղոթք կանեն»: Գանձապահն ասում է. «Դե լա՛վ, քեզ վրա կգրեն 3000 մանեք, կստանաս, 1000 -ը վերցնես, 2000 -ը մի քիչ հետո բերես, տաս ինձ»: Համաձայնում է, այդպես էլ անում են: Սրբուհին փողերն ստանում է: Անցնում է որոշ ժամանակ, Սրբուհին չի գնում գանձապահի մոտ: Գանձապահը ինքն է ստիպված գնում նրա մոտ: Հանդիպում է ճանապարհին, հարցնում. «Սրբուհի բիբ, բա էն փողը չբերեցիր, ե՞րբ ես բերելու»: Նա ասում է. «Պա ասիլ չե՞ս, փողը բերում էի, որ քեզ տամ, ճանապարհին փեշկիցս վայր ընկավ, կորավ»: Նա դժգոհում է. «2000 մանեքը փեշկումն են պահու՞մ»: Սրբուհին հանգիստ պատասխանում է. «Ա՛ տղա, դե, ես էդքան փող ստացած կա՞մ, որ գլխամ՝ որտեղ են պահում»...

95. Ֆելիքսը Լիարի ձորով իջնում էր: Տեսնում է՝ քար քանդող Մթովանց Կոլին ծառի տակ նստած սիգարետ է ծխում: Ուզում է մի հատ խնդրել, բայց միանգամից չի ուզում: Բարևում՝ ոնց ես, գործերը ոնց են և այլն: Հետո հարցնում է. «Կոլի դայի, մի սիգարետ կտա՞ս, քաշեն»: Կոլին շատ սիրալի ասում է. «Պա՛, քո արևը, իմ արևը, պաշկայի մեջին 19 հատ ա մնացել»*...

96. Շրջկենտրոնի ակումբը տարբեր գյուղերի երիտասարդության սիրված հավաքատեղին էր: Մի անգամ հավաքված զվարճալի

* Սովորաբար ասում էին՝ մի հատ ա մնացել ու մերժում են (ծ.կ.):

պատմություններ էին անում, մոտենում է Դիլլաքանց Մամիկը: Հարցնում են. «Մամիկ, քանի՞ անգամ կկարաս «բաց թողնես»: Նա տրտնջում է, քե. «Ձե՛զ մատաղ, էլ առաջվա Մամիկը չեմ, ջանս լավ չի, Սավետի գիմնը մի հանգով եմ դուրս բերում»:

97. Հայտնի շատակեր ու զվարճախոս Մամիկին հարցնում են՝ ինչքա՞ն գիլաս կուտես: Նա երկու ձեռքերն իրար է միացնում, ցույց տալիս չափը, ասում՝ էսքան մի ծառ:

98. Մամիկը պահածոների գործարանում պահակ էր: Կողքը անտառտնտեսության գրասենյակն էր: Մի օր նկատում է, որ նրանց բակում խաշլամա են դրել կրակին, իրենց դիրեկտորին էլ հրավիրել: Հյուրերն ու «տանտերերը» հավաքված մարդի էին խաղում, մինչև որ եփի: Բորիկին ուղարկում են, քե՛՜ գնա, տես պատրաստ չե՞: Նա գնում է, կաքսայի բերանը բացում, բարձրաձայն ասում՝ մի 15 թուփից եփած կլինի: Մամիկն իր «պոստում» լսում է և մտածում՝ իսկական իմ ուտելու ժամանակն է: Թաքուն գնում է, կաքսան վերցնում, տանում, քափում խոտերի մեջ, վրան էլ մի դույլ սառը ջուր լցնում՝ «զլուշիտ» անում, որ գոլորշի չբարձրանա: Նստում է, հանգիստ ուտում:

Որոշ ժամանակ հետո Բորիկին նորից են ուղարկում կրակի մոտ, որ խաշլաման ստուգի, անհանգստացած վերադառնում է, քե՛՜ գողացել են: Սոխաված ամբողջ խմբով վեր են կենում, գնում մոտակա ճաշարանը: Գործարանի տնօրենը պահակակետի մոտով է անցնում, Մամիկին նկատողություն է անում, քե՛՜ որտե՞ղ էիր, մի քիչ առաջ եկա՝ «պոստում» չկայիր: Մամիկը բացատրում է, քե՛՜ գնացել էի պահեստի դռներն ստուգելու: Եվ խնդրում է. «Կբողա՞ս գնամ ճաշարան, մի քիչ պիվա խմեմ, գամ»: Դիրեկտորը թույլ է տալիս: Նա գնում է, մի «բալոն» պիվա վերցնում, զլխին քաշում, մի շնչում խմում: Անտառտնտեսության կոլեկտիվն այնտեղ նստած էր: Անտառապահ Մամեդովը զարմացած հարցնում է. «Մամիկ, կկարա՞ս մինն էլ խմես»: Նա ասում է. «Ա՛, սոված փորին ո՞նց խմեմ»: Բերում են մի մեծ աման խաշլամա, մի բալոն «պիվա» էլ կողքը դնում: Ամանը թուփական սրբում է, բալոնը մի շնչում դատարկում, հետո հանգիստ ասում. «Դե, սրանից հետո կարելի է, ինչքան ուզում եք՝ բերեք»...

99. Գյուղերից բեռնատարները խաղող բարձած բերել էին,

* Ոչ որ չգիտեր, որ ամբողջ խաշլաման մա է կերել (ծ.կ.):

պահածոների գործարանի մոտ հերթ էին կանգնել, որ կշռեն ու հանձնեն: Պահակ Մամիկը մոտենում է բեռնատարներից մեկին, ներսում նստած նախագահին խնդրում, քե՛ կթողա՞ս մի քիչ խաղող ուտեմ: Նախագահն ասում է՝ դա ի՞նչ խոսք ա, ամոք չի՞. մոտեցիր, ինչքան ուզում ես՝ կեր: Մամիկը բարձրանում է, սկսում ուտել: Երբ հերթը հասնում է, նախագահն իջնում է, որ մոտենա կշեռքին: Տեսնում է՝ Մամիկն արդեն մի քանի արկղ դատարկել է: Ջարմացած իր վարորդին «թափշուր» է անում. «Մա օշեփ ա, մյուս անգամ որ գաս, հենց սկզբից մի մեծ արկղ կտաս իրեն, թող տանի, չմոտենա մեքենային»...

100. Բորիկը հարևանի հավը գողանում է, քեփ տակ դրած, մութ-մութին չափարի վրայից անցնում, որ փախչի: Այդ պահին միլիցիա Արշակը հանդիպում է, ձեռքից ուժեղ բռնում: Երեխան սկսում է դողալով լաց լինել: Արշակը հարցնում է. «Խե՞ ես լաց լինում»: Բորիկն ասում է՝ վախում եմ: Արշակը մի պահ մտածում է, հետո երեխայի ձեռքը բաց թողնում, գնում, ասելով՝ դե, ես քեզ տեսել չեմ...

101. Սլավիկը նոր մեքենա էր առել: Գիշերը բակում կանգնած էր պահում: Ֆելիքսն ընկերոջ հետ երեկոյան ուշ ժամին մտնում են նրանց բակը, սկսում մեքենայի «կալպակները» հանել: Այդ ուշ ժամին Սլավիկն ինչ-որ տեղից տուն է վերադառնում: Տեսնում է՝ իր մեքենայի «կալպակները» գողանում են: Ուզում է մոտենալ, որ տեսնի՝ ովքեր են: Ֆելիքսը մատը դնում է բերանին, կամաց ասում՝ սո՛ւսս... Սլավիկն անկախ իրենից լռում է, սուսուփուս բարձրանում տուն...

102. Ընկեր Եղիշը մաքեմատիկայի ժամին Գոհարիկին հարցնում է. «Մեկ կիլոն քանի՞ գրամ ա»: Գոհարիկը, որ թույլ էր, հենց այնպես մի քիվ է ասում՝ տասը: Ընկեր Եղիշը ջղայնանում է. «Ա՛յ աղջիկ, ձեր տնեցիք որ մի մանեք տան, ասեն՝ գնա, մի կիլո շաքար առ, խանութի աշխատողն էլ կշեռքի վրա դնի մի կտոր, ասի՝ տասը գրամ, ես ա մի կիլոն, վերցնելո՞ւ ես: Ամոք չէ՞: Բա ձեր ընկերներն ի՞նչ կասեն քեզ»: Աշակերտներից մեկն ասում է. «Ա՛ ինկեր, տրանց տանը Գոհարիկին հո՞վ ա մի մանեք դավերիա անում»...

103. Ռանտիկը լավ որսորդ էր: Մի օր տղան հորն ասում է. «Ա՛յ պապ, մեր քոլումը բոլ-բոլ մոշահավ են տեսել, գնանք, որս անենք»: Վեր են կենում, միասին գնում տղայի ասած տեղը: Հայրն ասում է. «Ռ՞ւր են քո ասած դուշերը»: Նա ցույց է տալիս ծառին կանգնած մի

կաշաղակ, ոգևորված ասում. «Հրե՛ն, պա՛պ, ծառի վրա մոշահավ ա»: Հայրը հիասթափված ասում է. «Ը՛մ-մ, մոշահավը դա չէ է, մոշահավը ես եմ, որ քո խելքին եմ ընկել, եկել էստեղ»...

104. Ֆելիքսն ընկերոջ հետ կեսգիշերին վեր է կենում, Ներքին Շենից գնում որսի: Հենց գյուղից դուրս են գալիս, նկատում են, որ հացը մոռացել են: Մոտենում են հացի գործարանին, տեսնում, որ լույսերը վառվում են: Գոռում են, որ մեկը դուրս գա, մի երկու բոքոն հաց տա: Գոռոցի վրա գործարանի տնօրենը կաբինետի դուռը բացում է, հրացանը մեկնում, ասում. «Ուլքե՞ր եք, ոռդ եղեք էստեղից»: Նրանք սուսովուս հետ են գնում, պտտվում շենքի շուրջը, տեսնում, որ հացթուխ Լեւոնոշը ներսում աշխատում է: Դուռը կամաց բացում են, ներս մտնում: Ֆելիքսը վրան գոռում է, քե՛ շուտ մի քանի հաց տուր: Լեւոնոշը տեսնում է, որ «քյալլագյոզ» տղաներ են, հրացանները բռնած: Ինքն էլ՝ հոգնած մարդ, արդեն տուն գնալու ժամանակն է: Ասում է. «Տղե՛րք, հացն արդեն քիսած ա, բայց ես մեմակ կարալ չեմ հանեմ: Էստեղ մի մեծ ակը կա, պիտի ձեռքով պտտեք, հացն ինքն իրեն դուրս է գալու»: Երկու հոգով սկսում են այդ ծանր քափանիվը պտտել: Պտտում են, պտտում, ոչ մի տեղից հաց չի դուրս գալիս: Հոգնած մտտում են, որ մի քիչ շունչ քաշեն, տեսնում են՝ Լեւոնոշը չկա. երկաթե դուռն էլ փակած: Սի կերպ պատուհանով դուրս են գալիս, չորս կողմը նայում, ոչ ոք չի լինում: Հետո լուսնի լույսի տակ նկատում են, որ Լեւոնոշը Վարար գետն անցած, «Զերծի» ճանապարհով տուն է գնում...

105. Շրջանի ղեկավարը կանչում է գլխավոր ագրոնոմ Նիկիտին, ասում. «Բուզլուխում մի 20 տոննա կարտոֆիլ կա, կկարա՞ս «սպիսատ» անես»: Նիկիտն ասում է. «Եթե մեջքումս կանգնես, Բուզլուխն էլ «սպիսատ» կանեմ»...

106. Նիկիտը հայտնի էր իր անսահման ախորժակով: Սի օր ասում է. «Երանի մի ոչխար լինեք խաշլամա արած, հետը մի յաշիկ պիվա: Ինձ հետ էլ մի ընկեր լինեք, բայց ուտող-խմող չլինեք»...

107. Շրջկոմի բյուրոյում քննարկում են երիտասարդ կադրերի հարցը: Արթուրին առաջ են քաշում պատասխանատու պաշտոնի:

* Սովորաբար ղեկավարներին ինչ որ պետք էր լինում, «սպիսատ» էին անում՝ դուրս գրում (ծ.կ.):

Շրջանի ղեկավարն առաջարկում է, որ ներկաներից ամեն մեկն իր կարծիքը հայտնի: Նիկիտն ասում է. «Արթուրն իմ հարևանի տղան է, հայրը լավ մարդ է, լավ էլ գինի ունեն»...

108. Մամիկին հարցնում են՝ ինչքան խաղող կուտես: Ասում է՝ «մի ջյարգ»...

109. Պյատիգորսկում շահումյանցիները հավաքվում են միլի-ցիայի նախկին աշխատող Արշակի տանը, ուտում-խմում, հիշում անցյալի զվարճալի շատ դեպքեր: Գևորգը մի դեպք է պատմում իր կատարած գողությունից: Արշակն իսկույն վեր է բռնում տեղից, ասում. «Պա՛յ, էդ տյու ես իլե՞լ, քանի տարի ա, ես նիգյարան եմ դրանից, հենց մեկ ակտ եմ կիրլայան»: Գևորգն ասում է. «Արշա՛կ դայի, հինչը օգում ես՝ կիրի, փող չօնեմ, վար տամ, մի բոթուկ կա տանձի արադ կտամ»...

110. Ռաժդենի տղան պառկել է անկողնում, բայց չի քնում: Անընդհատ նվնվում է, հետո էլ սկսում է անտեղի լաց լինել: Հարցնում են. «Հի՞նչ ա պտահել, իսե՞ չես քոն ինում»: Երեխան քնաթաթախ ասում է. «Ժարիտ արած կարտոշկա եմ օգում»: Շատ որ լացում է, Ռաժդենը կնոջն ասում է. «Ախճի՛, ժարիտ ըրա, տու իրան, թող արխային քոն ինի»: Այդ ուշ ժամին մայրը կարտոֆիլ է «ժարիտ» անում, տալիս երեխային, բայց նա նորից է լացում: Ռաժդենը ջղայ-նացած ասում է. «Արա՛, կարտոշկան էդ ա, ըռաջիտ տիրած, մեե՞կ հինչ ես լաց ինում»: Երեխան ասում է. «Վախում եմ՝ կշտանամ վեչ»...

111. Լյովայի մականունը Կուրաս էր: Ինքնապաշտպանության ժամանակ լավ հրետանավոր էր: Հրամանատար Բաղդասարյանն ամեն օր զգուշացնում էր. «Տղանե՛ր, առանց բրոնեժիլետի պոստի չգնաք»: Մի օր Կուրասն անտրամադիր գնում է շտաբ: Բաղդասար-յանը հարցնում է պատճառը: Նա ասում է. «Մնարյադը կպել ա, մեր կովին սպանել»: Բաղդասարյանն ափսոսանքով հարցնում է. «Բա՛ ո՞նց ա պտահել»: Նա ասում է. «Ո՞նց պիտի պատահի՝ առանց բրոնեժիլետ էր քինացել հանդը»...

112. «Գաղթական» Մուշեղը մահացել էր: Ժողովուրդը հավաք-ված էր քաղման օրը: Մուշեղի թոռ Ֆելիքսը տխուր մայում է պապի դագաղին, ասում. «Է՛, մի տես հինչ հանգիստ պառկած ա»: Գևորգն ասում է. «Մարամ որիշներին պապը քաբութումը լոք-լոք ա անո՞ւմ»...

113. Կարինեն և Մարինեն երկու քույրերով Մոսկվայում են ապրում: Կարինեն մետքոյում սիգարետ է վաճառում, տան վարձն ու մյուս ծախսերը հազիվ է հասցնում հոգալ: Իսկ Մարինեն սեփական տունն ունի, չի աշխատում: Ամուսինն էլ տան ծախսերից բացի օրական 1000 ռուբլի է սեղանին դնում, գնում, ասելով. «Էս էլ քո աշխատավարձն ա»: Մի հանդիպման ժամանակ Մարինեն տրտմջում է իր կյանքից: Քույրն ասում է. «Ախճի՛, դու էլ ես բողբոջում. Ես ծեզին եմ տանան տյուս կյալիս, առանց մի քիքյա լղէ անելի, իրեսս էլ մետքոյի զախոտումն եմ լվանում, օրական անջախ եմ 1000 ռուբլի ըշխադում: Ամա տյու կեսօրին զուրթնանում ես, աչքիդ ճեպուռը վեր անում, քու հազար ռուբլին ստոլան յօր օնում»...

114. Սեդրակ Դանիելյանը երկար տարիներ Շահումյանի շրջանում աչքի է ընկել իր բարեխիղճ աշխատանքով. վաստակել հասարակության հարգանքը: Եվ ժողովրդի այդ հարգանքը նա բարձր էր գնահատում: Մի անգամ աղջիկը՝ Էլմիրան, գալիս է տուն, ասում, որ իրեն դեպուտատ են ընտրել: Հայրը հսկարտանում է, ոգևորված բացատրում, որ դա շատ պատասխանատու և հեղինակավոր բան է: Այդ պահին մեկը դռսից կանչում է՝ հե՛յ, ինկեր Էլա: Սեդրակը հսկարտ դուրս է գալիս բալկոն, աղջիկն էլ հետը: Համագյուղացի մի երեխա էր: Էլմիրան պայծառ դեմքով. բարձր տրամադրությամբ հարցնում է՝ ի՞նչ է պատահել: Նա բակից բարձրաձայն ասում է. «Մեր էշը ստակել ա, պետք ա ակտը ստորագրես, վար փողը տան»... Սեդրակը միանգամից մռայլվում է, ներս մտնում, ասելով՝ «Թու՛հ, շա՛ն լակոտ, էս հանգիս տրամադրությունս փչացրիք»...

115. Ժողկրթբաժնից գալիս են Մանաշիդի դպրոցն ստուգելու: 2-րդ դասարանում դասն Ավարայրի ճակատամարտի մասին էր: Ուսուցիչը հարցնում է Խաչիկին: Նա ոգևորված շատ լավ պատմում է: Դասը լսողն էլ է ոգևորվում, զովում Խաչիկին ու հարցնում է. «Հայրենասեր տղա ես երևում, կարո՞ղ ես ասել՝ որն է Հայաստանի մայրաքաղաքը»: Երեխան հսկարտ պատասխանում է՝ Մանաշիդը: Բոլորը ծիծաղում են: Իսկ պատասխանը կարծես ճակատագրական էր: Հայրենի գյուղը Խաչիկի համար եղավ անփոխարինելի. մասնակցեց ինքնապաշտպանությանը՝ ընտանիքով. մասնակից եղավ գյուղի ազատագրմանը: Երկրորդ անգամ զավթվելուց հետո էլ մասնակցեց պարտիզանական կռիվներին: Իսկ հրադադարից սկսած մասնակ-

ցում է ազատագրված տարածքների վերակառուցմանը և առաջին հերթին նոր գյուղ է կառուցել՝ Մանաշիդ անունով:

116. Լուսյան շատ խելոք, սուսիկ-փուսիկ երեխա էր: Դասատուն մի անգամ նրա մորը հարցնում է. «Անիշկա՛, երեխան կարող ա՞ հիվանդ ա»: Մայրը զարմանում է. «Խե՞՞ ես տհե՞նց ասում, ընկե՛ր Ժենիկ»: «Ախր շատ ա խելոք», - պատասխանում է նա:

117. Ադոն ու Սյոմիկը եղբայրներ էին: Հերթով տանում էին իրենց ապրանքը հանդը՝ պահելու: Թյունին հանդում կրակ էր վառել, կարտոֆիլ եփել: Ուզում է ուտել, նկատում է, որ աղը մոռացել է տանը, չի բերել: Հեռվում նկատելով ապրանք պահող մի երիտասարդի, ձեն է տալիս. «Արա՛, էհե՛յ, աղ օնե՞ս»: Նա ասում է. «Չէ՛, ես Սյոմիկն եմ»: Թյունին բացատրում է. «Արա՛, անունդ չեմ հարցնում է, կարտոշկա եմ եփել, աղ չօնեմ, աղ օնե՞ս»...

118. Բուզլուխեցի Լյովիկն ու Սիմոնը վիճում են, քե Մակրտունյանք քանի եղբայր են: Լյովիկն ասում է՝ 6, իսկ նա՝ 5: Ի վերջո Սիմոնն ասում է. «Արա՛, բա չե՞ս լսել, նրանց անունները գյուղում ոտանավորի նման էին ասում՝ հուշուտ Շամիր, հանձուտ Թեմիր, վեսկի Փաշա, արծաթի Ալեքսան, քրքոտ Ամիրխան»...

119. Մինասը Մանաշիդում էլեկտրիկ էր, ինքն էլ խմելու հետ սեր ուներ: Հենց որ մեկի տանը հարսանիք կամ քեֆ էր լինում, նա գյուղի լույսերն անջատում էր, որ իր բաժին խմիչքը բերեն, հետո միացնի հոսանքը: Ժողովուրդն այնպես էր վարժվել, որ հենց լույսերը հանգչում էին, հասկանում էին պատճառը և ասում. «Ըմմ՛, քաղեմ քեզ, Մինա՛ս»: Անցել են շատ տարիներ: Այլևս ոչ գյուղը կա, ոչ Մինասը: Աբովյանում մանաշիդցի Լուսյայի տանը քեֆ է: Հանկարծ լույսերն անջատվում են: Լուսյան անկախ իրենից ասում է. «Ըմմ՛, քաղեմ քեզ, Մինա՛ս»...

120. Արարատն ու Գրիշան գործով գնում են Վերին Շեն: Հյուրընկալվում են Հակոբյանների տանը, շատ լավ խմում: Երբ քեֆները լավացած դուրս են գալիս, որպեսզի վերադառնան իրենց գյուղ, Արարատն ասում է. «Գրիշա, մեքենան քշիր Սարը-սու գյուղ, իմ ծանոթ Իդրիսի տուն, մի լավ խմենք»: Գրիշան բացատրում է՝ առանց այն էլ լավ խմած ենք, կարիք չկա: Արարատը կիսափակ աչքերով, նստարանին պառկած, համառում է, քե՛ չէ, քշիր Իդրիսի տուն: Գրիշան չի վիճում, լռում է, բայց քշում է դեպի իրենց գյուղ,

կանգնում Արարատենց դարպասի մոտ, ասում՝ տեղ ենք հասել, իջիր: Այդ պահին Արարատի մայր Վարսենիկը բակն ավելում էր: Արարատն աչքերը բացում է, զարմացած ասում. «Ա՛, էս շան տղի պառավն Իդրիսենց դռանը հի՞նչ ա անում»...

121. Ռուսաստանում Լենան զանգում է իր նախկին նախագահին, հարցնում՝ ո՞նց ես: Նա ասում է. «Է՛, Լենա, Այդինին Հուլիսն են դառել, փետավ են ման կյալիս»: «Արա, էդ չեմ ասում, սատղ մի տեսակ ա», շարունակում է Լենան: Իսկ նա բացատրում է. «Հա՛, մի քիչ «օրդան-բուրդան» ենք արել, դրանից կլինի»:

122. Շամոն այգին փորում է: Կինը տնից դուրս է գալիս ու ասում. «Քինում են բալնիցան, երկու ժամանը ետը կիկյամ: Կարտոշկան սարքել են, տիրել ստոլին: Մի քիչ հետո իրան ճյուր կլցնես, տինես գազին, եփի, մինչև կյամ»: Նա զարմացած հարցնում է. «Ախ՛ճի՛, եթե էդքանը ես պիտի անեմ, դու հի՞նչն ես սարքել»...

123. Ռուսաստանում ապաստան գտած մեր հայրենակիցներից Գրիշիկն ասում է. «Ա՛, հինչ լավ էր, վար շենան փախանք»: Իշխանը զարմանում է, քե՛ դրա լավը ո՞րն ա: Իսկ նա բացատրում է. «Առաջ ես կարծում էի, քե գոբանչն ու աները մեր թշնամիներն են: Հիմա էդպես չէ, նրանք երեխաներին պահում են, մենք գնում ենք աշխատանքի»...

124. Հայրական օջախից Հանես դայու հիշատակը մի գեղեցիկ բաժակ էր: Հայրը մասնակցել էր Առաջին համաշխարհային պատերազմին, գերի ընկել, հայտնվել եվրոպական տարբեր երկրներում: Իր հետ գյուղ էր բերել այդ անսովոր գեղեցիկ բռնակով բաժակը: Վաղուց արդեն հայրը չկար, Հանեսն էլ իր համար նոր տուն էր կառուցել, ապրում էր մեծ գերդաստանով՝ 3 հարս մի տան մեջ: Գինին այդ բաժակով էր խմում Հանես դային, «օխայ» անում ու հիշում հորը: Բոլորին պատվիրել էր՝ զգույշ լվանալ և ուրիշի չհյուրասիրել այդ բաժակով: Հարսներն առաջինն այդ բաժակն էին վերցնում, առանձին տանում, լվանում, հետո հանգիստ զբաղվում մյուսներով: Ամեն անգամ շատ լարված էին լինում, որ հանկարծ այդ բաժակը չջարդեն, կեսրայրի աչքից ընկնեն: Մի անգամ ճաշից հետո փոքր հարսը՝ Լուսիկը, վազելով գնում, մտնում է մյուս հարսի սենյակը, ուրախացած ասում. «Աչքդ լո՛յս, պրծանք էն բաժակից, Մուսանը (փոքր

* Ուզում է ասել՝ խմել են (ծ.կ.):

հարսը) լվանալու ժամանակ ջարդեց»... Հանես դային բարձրաձայն ոչինչ չասաց, բայց կնոջն ասել էր. «Էդ շան ախճկան սկզբից էլ աչքով աչք չունեի, մեկ էլ օգու՜մ չեմ, վար տեսնամ»... Եվ որդին իր ընտանիքով առանձնացավ հայրական տնից:

125. Գյուղի խանութում տարիքն առած ու չամուսնացած մի աղջիկ էր աշխատում: Չայնն անսովոր հաստ ու կոշտ էր. ինքն էլ բարձր խոտոդ էր: Մի օր տանում են կուսշրջկոմ. որ կուսակցության շարքերն ընդունեն: Դե. հատուկ քաղաքական և այլ հարցեր էին տալիս. որ որոշեն. թե արժանի՞ է կուսակցական լինելու: Շրջանի ղեկավար Պետրոսյանը հարցնում է. «Գիրք կարդում ե՞ս»: Նա բարձրաձայն ծիծաղելով ասում է. «Վա՛, պա հու՞նց չեմ կարդում»: Պետրոսյանը հարցնում է. «Ի՞նչ գիրք ես կարդում»: Նա գլուխը կախ է գցում. ծիծաղում. թե. «Կարալ չեմ ասեմ»: Պետրոսյանը զարմացած նորից է հարցնում. «Գրքի անունն ի՞նչ ա»: Իսկ նա նորից ծիծաղում է կոշտ ու բարձր և ասում. «Վա՛, էսքան մարդին կշտին կարալ չեմ ասեմ»... Ներկաները ծիծաղում են, նիզյարան մնում, թե էդ ի՞նչ գիրք կլինի, որի անունն ասելն էլ ա ամոթ: Եվ այդպես էլ նիզյարան նրան կուսակցական են դարձնում...

126. Նոր էինք հաստատվել Հյուսիսային Կովկասում: Մի փոքրիկ հողակտոր ունեինք: Գարնանը տեսա՝ կրմրըրըպենջարը լցվել ա: Ոգևորված սկսեցի քաղել, մաքրել, լցնել սումկան: Հարևանը տեսավ, զարմացած հարցրեց. «Դա ինչի՞դ ա պետք, որ քաղում ես, դա մենք խոզերին ենք տալիս»: Կեսօրին տապակեցի, հարևանին էլ հրավիրեցի, միասին կերանք: Հաճույքով կերավ ու հարցրեց. «Էս ի՞նչ էր»: Ասացի. «Հենց էն էր, որ դուք խոզին եք տալիս»: Չարմացավ, որ մինչև հիմա իրենք չեն իմացել այդ մասին, և սովորեցին պատրաստելը: Նույն ձևով սովորել են «հռածած» պատրաստելը, և հիացած են, թե ինչքան օգտակար ճաշ է: Մեզ նման խաշլամա են պատրաստում՝ կանաչիներով ու բարձ պոմիդորով և այլն:

127. Խաղողաքաղ էր: Բոլոր հիմնարկներից տանում էին գյուղերը՝ շաբաթօրյակի, որպեսզի բերքավաքը շուտ ավարտեն: Դե ժողովուրդը ձանձրացել էր մշտական շաբաթօրյակներից: Շատերը լավ չէին աշխատում կամ «գլուխ էին պահում» կամ ուղղակի գնում էին՝ իրենց համար հաճելի ժամանակ անցկացնելու: Կուլտուրայի տան աշխատողները Ջեյվայի այգիներում էին: Շրջանի կուլտուրայի

բաժնի վարիչ Արեստը գալիս է ստուգելու: Երաժիշտը Ռաժդենին հարցնում է. «Ո՞նց եք, լավ ե՞ք»: Ռաժդենն ասում է. «Ընկե՛ր Արեստ, մնացածի մասին կարալ չեմ ասեմ, ամա ես ու Շիրինը սաղ օրը մի քուպե նստել չենք»: Արեստը զարմացած հարցնում է. «Ձեր քաղաժն սկի չի երևում. բա որ նստել չեք, ի՞նչ եք արել, ո՞ր եք»: Ռաժդենն ասում է. «Պառկած ենք եղել. գինի-արաղ էինք բերել, խաշած հավեր. առավոտը մի լավ կերել ենք, խմել, պառկել»...

128. Ղարաչինարցի Իսակը մահացել էր: Հարազատները տխուր նստոտած էին դագաղի շուրջը: Իսակի քույր Գոհարը, որը մի քիչ միամիտ կին էր, ձեռքը դրած հանգուցյալի ոտքերին, կամաց հեկեկում է: Հետո շրջվում է դեպի Իսակի հարսն ու ասում. «Դոնի՛կ, քեզ մատաղ, Իսակի ոտքերը լրիվ սառած են. հարթուկի տակ մի փալաս դիր, լավ տաքանա, բեր, ոտքերը փաթաթենք»...

129. Ղարաչինարցի Գյուլի բիբը գինի և օղի էր վաճառում տանը: Գյուլի հայտնի խմողներ Իվանանց Գարասը, Մալախունց Մոսին, Ավանյան Պիտոն, մյուսները գնում էին, նրա մոտից խմիչք առնում: Ով «նաղդ» փող էր տալիս, Գյուլի բիբը նրա անվան դիմաց «պլյուս» էր դնում, իսկ ով «նիսյա» էր տանում, «մինուս» էր դնում: Մի օր կանչում է իր հարևան Դոնիկին, խնդրում, թե՝ «Բե՛զ մատաղ, եկ մի սպիտկներս ստուգիր, տեսնեմ հինչքան «նիսյա» օնեմ»: Դոնիկը բացում է Գյուլի բիբի տետրը, տեսնում՝ բազմաթիվ տեղերում իր անունին Գարասին «մինուս» է դրած: Գարասի «մինուսները» «պլյուս» է դարձնում, մյուսների «մինուսներն» իրար գումարում: Գյուլի բիբին հայտնում է, թե ինչքան «նիսյա» ունի և գնում տուն: Երեկոյան երբ անունինը գործից գալիս է, Դոնիկը ձեռքերն իրար է շփում, ասելով. «Ա՛ Գար, մաղաքիչ պիտի անես, «մինուսներդ» լոխ «պլյուս» են սարքել»...

Գարասն ասում է. «Աղջի, լավ ա Գյուլի բիբին պարտք մնամ, քան թե քեզ»...

130. Բաքվից ռուս ստուգողներ են գալիս շրջան: Գնում են Ղարաչինար: Կոլխոզի նախագահ Բագրատը հյուրերին տանում, ծանոթացնում է իրենց տնտեսությանը: Դե, Բագրատի «ռուսերենն» էլ բոլորին հայտնի էր: Ձեռքը մեկնում է մեքենայի պատուհանից. ասում. «Էտը նաշի գորը, էտը նաշի սաղը...»: Իսկ խոսհարքներով անցնելիս «բացատրում» է. «Ա էտը նաշի բյուլյուլի»:

131. Ղահիրմանը շրջանի առաջին մոնսյորն է եղել: Տղաները՝ Օնիկն ու Հովիկը, հորից հետո շարունակում էին նրա գործը, բայց, չգիտես ինչու, ժողովուրդը նրանց Օնիկ-Հովիկ էր ասում, ոչ մեկն առանձին անունով Օնիկ կամ Հովիկ չէր ասում: Մի անգամ նրանց բալի մոտով անցնելիս մեկը երեխային հարցնում է. «Զեզ մատաղ, դու Հովիկի՞ն ես, թե՞ Օնիկի՞ն»: Երեխան ասում է. «Մեկ ա, էլի, դուք Օնիկ-Հովիկ եք ասելու»...

132. Բռնի տեղահանությունից հետո Ռուսաստանում մի հավաքույթի ժամանակ Համլետն ինքն իրեն ասում է. «Զո բալան մեռնի, էլ չիբե՛յ»... Ներկաները զարմանում են՝ էդ ինչու՞ միանգամից հիշեցիր: Համլետն ասում է. «Բա որ Շահումյանում մնացած լինեի՞նք. Օնիկ-Հովիկին սենցի կուկլա երեխա կլինե՞ր»...

133. Կուսշրջկոմի քարտուղար Էլմիրա Դանիելյանը գնում է աշխատանքի, տեսնում՝ ռուս մեքենագրուհի Շուրան տխուր նստած՝ աչքերն արցունքով լցված: Հարցնում է. «Ի՞նչ է պատահել»: Նա ասում է. «Գագիկ ուզում խոպան գնա»: Գագիկն ամուսինն էր, խմելու նկատմամբ սեր ուներ, կնոջն էլ մեկ-մեկ ծեծում էր: Քարտուղարը հանգիստ ասում է. «Ինչու՞ ես լաց լինում. ամեն օր քեզնից փող ա ուզում, խմում, հալա մեկ-մեկ էլ ծեծում. ավելի լավ չի՞, որ խոպան գնա, տանը չլինի»: Շուրան խեղճացած ասում է. «Է՛, ինկեր Էլա, խե՞ս ասում, տան վե՛շ ա լի, թող մնա»...

134. Մուրիկը նոր էր գնացել Ռուսաստան: Ոչ լեզուն լավ գիտեր, ոչ էլ տեղի սովորություններին էր լավ ծանոթ: Շոգ օր էր: Գալեջրի կրպակի մոտ մարդիկ հերթ էին կանգնած: Մոտենում է, ուզում է ասել, որ ինքն անծանոթ է, թույլ տան, առանց հերթի գալեջուր վերցնի: Ասում է. «Իզվինիտե, յա խամ»... Եվ հերթից դուրս մոտենում է վաճառողին: Մարդիկ զարմացած հետ են քաշվում, ասելով՝ դե, եթե ինքն իր բերանով ասում է, որ «խամ» է*, թողեք վերցնի, գլուխ մի դրեք հետը...

135. Կուսշրջկոմի քարտուղար Էլմիրա Դանիելյանը գնում է գյուղերը՝ ստուգելու, թե ինչպես են նախապատրաստվում բերքահավաքին: Կոլտնտեսության նախագահ Շիմշատին հարցնում է. «Պատասխանատու տեղերում ո՞ւմ եք նշանակել, բարեխիղճ, վստահելի

* Օտար, քոի, գռեհիկ (թրգմ. կ.):

մարդիկ ե՞ն»։ Շիմշատն ասում է. «Պա՛, ինկե՛ր Էլա, կադրերի խա-
խալիզացիա եմ արել, ում որ պետք է, մենակ նրանց եմ թողել»։

136. 1960 -ական թվականներին ԽՍՀՄ-ում երևացին առաջին
տրանզիստորային ռադիոընդունիչները։ Շրջանի առևտրի ցանցում
մի բանվոր կար՝ Վալոդը, որին չգիտես ինչու «Տոռն» էին ասում։ Բար-
ձում կամ բեռնաթափում էր մեքենաները, ապրանքը տեղափոխում,
դասավորում պահեստներում։ Կիմիկի խանութում ինչ-որ փոքրիկ
տուփ է տեսնում, հարցնում՝ էս հի՞նչ ա։ Կիմիկը բացատրում է.
«Պրիոմնիկ ա, առանց լարերի, առանց տոկի կանցերտ ա տալիս, էլե-
մենտով ա գործ անում»։ «Տոռնը» հարցնում է. «Պա տրա էլեմենտը
հի՞նչ հանգի ա»։ Նա ասում է. «Սովորական էլեմենտ ա, ամեն տեղ
լիքն ա»։ «Տոռնն» ասում է. «Իսկական իմ պլանն ա»... Սի հատ
առնում է։ Բարձր միացրած փողոցով քայլում էր, իսկ աշխատելու
ժամանակ էլ դնում էր կողքը, համերգ լսում։ Ժողովուրդը դրան ասում
էր՝ «Տոռնի պրիոմնիկ», ու ոչ ոք չէր առնում։ Կիմիկը փոշմանում է, թե
էս հինչ իսկ խելք էր, ես դրան պիտի տրանզիստոր չտայի, էդ
դեֆիցիտ ապրանքը մնաց խանութում, չի վաճառվում։

137. Էլմիրա Սեդրակովման ռուսաց լեզվի դասատու էր։
Մտնում է դասարան, նկատում, որ Արտակը չկա։ Հարցնում է՝ ա գո՞ե՞
Արտակ։ Լյոնիկը ձեռք է բարձրացնում, թե՛ ես ասե՞մ։ Դասատուն
նրան կանգնեցնում է, հարցնում. «Ա նու, Լյո՛նիկ, գո՞ե՞ Արտակ»։ Լյո-
նիկը ոգևորված «ռուսերեն» ասում է. «Գուդի վազմիլա, պաշլա
Զիբիդարին-ծյոր»։ Դասատուն զարմանում է. «Լյո՛նիկ, գուդի պա-
նիմայու, էտո սումկա, ա Զիբիդարին-ծյոր չտո՞ տակոն»։ Լյոնիկն իր
հեթքին զարմանում է. «Ա, ինկե՛ր, յալ, դա»...

138. Դարաշինարցի ընկեր Գարեգինն աշակերտներին հավա-
քում է, թե՛ պիտի գնանք կոլխոզի այգին, բահով վար անենք։ Աշա-
կերտներից մեկն ասում է. «Ինկե՛ր, ես վար անիլը սիրում չեմ»։ Գա-
րեգինը հանգիստ պատասխանում է. «Տյու գյուղում ես, թա ես շատ
սիրելուց ճու՞մբը խտտում եմ, քոն ինու՞մ»...

139. Ժողկրթբաժնի վարիչ ընկեր Բենիկը մի ժողովում վեր է
կենում, դժգոհում, թե՛ մենք մի բան ենք ասում, ընկեր Գարեգինն
ուրիշ բան է ասում, մենք ասում ենք՝ սենց ա պետք, նա մի ուրիշ բան
է ասում և այլն։ Գարեգինը վեր է կենում, հանգիստ ասում. «Ես քե-
զանից շատ շնորհակալ եմ, դու իմ ամուսնը շատ բարձրացրիր, մինչև

հիմա լսել ենք, որ Մարքսից, Էնգելսից ցիտատ բերեն, դու էսօր մենակ ինձնից ցիտատ բերեցիր»...

140. Ներքինչնեցի զվարճախոս Արշակ վարժապետը շուտ էր գրկվել կնոջից, ամեն հարցում խառնվում էր կենցաղային գործերին, միջամտում, խորհուրդներ տալիս տղային ու հարսին: Մի օր հարսին ասում է. «Ես որ մեռնեմ, հո՞ւնց ես լաց լինելու, մի փորձիր, տեսնեմ»: Ու քախտի վրա պառկում է: Հարսը՝ Պայծառն, ասում է. «Ա՛յ պապ, դե որ վախտը գա, լաց կլինեմ, էլի»: Արշակը ստիպում է, քե՛ չէ՛, պիտի ես հիմիկվանից իմանամ, որ արխային լինեմ: Հարսն սկսում է «լացել». «Ա՛յ պապ, էդ խե՞ մեռար, պա ես հո՞ւնց կիմանամ՝ սողանի սերմը 2-2 են գցում, քե՞ մին-մին»: Վարժապետը տեղից վեր է թռչում, ասում՝ մին-մին ու նորից պառկում: Հարսը նորից է սկսում «լացել». «Ա՛յ պապ, պա եթե խնձորներն աշնանը լոխ օտենք, ձմեռվա համար չմնա, հի՞նչ կանենք»: Արշակը տեղը նստում է, մտահոգված ասում. «Պա՛, ես գյուղում եմ, դուք ռիխելեր զատ եք, տհե՛նց եք ընական, ուրեմն՝ հալա մեռնելուս վախտը չի»...

141. Իբարիտը շատ փոքրամարմին, բայց լավ ֆուտբոլիստ էր: Մի օր մարզիչ Սիմյան Արկադյան խաղից առաջ նոր ֆորմաներ է բերում, բոլորին բաժանում՝ բոլորը նույն չափսի: Իբարիտը հագնում է. փորձում հարմարեցնել խոշոր մայկան իր փոքր մարմնի վրա, չի ստացվում: Դժգոհ ասում է. «Ա, ինկե՛ր Արկադյա, որ բարձրացնում եմ, համարս ծածկվում ա, իսկ որ իջեցնում եմ, տափովը քաշ ա ինում»...

142. Ուրիկը հարևան թուրքական շրջանում հրշեջ խմբի պետն էր: Մի օր վերադառնում է հայրենի Ներքին Շեն և զրույցի ժամանակ ոգևորված հայտնում ընկերներին. «Ա, էրեզ Գերանբոյում մի լավ պաժառ կար, լազաթ օներ»... Վովան զարմացած հարցնում է. «Արա՛, լավ պաժառ կլինի՞, դրա լազաթը ո՞րն ա»: Իսկ Ուրիկը բացատրում է. «Մի մեծ մագազին կար, պաժառ էր ընկել, դե, վարիչի սարքած գործն էր, 5 հազար մանեթ էլ ինձ տվավ»...

143. Ընկեր Վալոդը վաղ առավոտյան մտնում է ուսուցչանոց, տեսնում տնօրենը՝ ընկեր Բենիկը, մենակ ու շատ տխուր նստած է: Հարցնում է. «Էդ ի՞նչ ա պատահել»: Նա անտրամադիր պատասխանում է. «Պահակին նկատողություն արեցի, որ գիշերը քնով ա հնցնում, շան տղան ինձ յաման ուշունցներ տվավ»: Վալոդը

հանգստացնում է. «Ոչինչ, երևի դու էլ ես ուշուց տվել»: Բենիկն ասում է. «Ա. հա է. ես էլ եմ ուշուց տվող. ամա տհենցի ուշուցներ սկսացած չեմ. քեզ բան եմ ասում է. իմ բառարանում տհենցի բաներ չկա, էդ շան տղան անգրագետ տեղավն էդ հինչե՞ր ա գյուղում»:

144. Ձոյան բռնիկի հետ գնում են Սոչի՝ հանգստանալու: Կեսօրին գնում են մի տեղ ճաշելու: Մոտակայքում մի ռեստորան կար: Թոռանը հարցնում է. «Քրիստինե՛, էս ա՝ «Գրեչեսկի ռեստորան», մտնե՞նք»: Երեխան համաձայնում է, մտնում են, ճաշում: Դուրս գալիս թողը զարմացած հարցնում է. «Բաբո՛, բա ասացիր՝ գրեչեսկի ռեստորան, ինչո՞ւ գրեչկա չտվեցին»...

145. Մի խումբ մանաշիղցիներ հավաքվում են Էդիկի տանը՝ խաշ ուտելու: Երբ գտվելով ուտում են, Հայկն ասում է. «Ա՛, խաշն էնքան պիտի ուտես, որ ուսուխաչերդ քուլանան»...

146. Բուզուխցի Մուխին հաղթանդամ, խոշոր մարմնով մարդ էր, ինքն էլ իր չափսերին համապատասխան ուտող-խմող էր: Մի քեֆի ժամանակ երիտասարդներից մեկը նկատում է, քե մա ինչպես է արագ-արագ չմփչմփացնելով ուտում, կատակով ասում է. «Մուխի՛ դայի, հենց ա՝ իշտահ չօնես»: Մուխին ինքնագոհ պատասխանում է. «Պա՛հ, քո տունը շինվի, խալխն իմ իշտահավն ա հաց օտում, դու էդ հի՞նչ ես ասում»...

147. Գրիշայենց գոմշակովը կորել էր: Իրենց Միշոյի հետ գնում են Զիբի անտառը՝ փնտրելու: Մեկն անտառի ծայրից է մտնում, փնտրում, մյուսը՝ հակառակ ծայրից: Որոշ ժամանակ հետո Միշոն ձեն է տալիս. «Էհե՛յ Գիշո, գոմեշը գտա՛ր»: Գիշոն, որ հաճախ քարս-մարս էր խոսում, պատասխանում է. «Ա, գոմեշն ասեղ ա՞, ասեղ»:

148. Ուրոն մի քիչ պարզամիտ տղա էր: Գնացել էր քաղաք, աղբ հավաքող մեքենայի վրա էր աշխատում: Մի անգամ համագյուղացիներից մեկը հարցնում է. «Զաղաքում ի՞նչ ես անում»: Նա պատասխանում է. «Զիբիլի վրա եմ աշխատում, շատ օգուտով գործ է»: Դիմացինը զարմանում է. «Աբա՛, դրա մեջ ի՞նչ օգուտ կարող ա լինի»: Նա բացատրում է. «Օրինակ՝ գիբիլի մեջ մի ոսկե մատանի եմ գտնում, հարցումիորձ եմ անում, տիրոջը ճարում, ինձ մի մանեթ մաղարիչ եմ տալիս»...

149. Գրիշան գնում է Կիրովաբադ՝ հորաքրոջ տուն: Հայրը մի

լավ շուն է տալիս, կապը դնում ձեռքին, ասում՝ կտաս հորքուրիդ: Քաղաքի մի փողոցով անցնելիս մեկը մոտենում է, քե. «3 մանեք տամ, էդ շունը տուր ինձ»: Գրիշան ասում է. «Իմ քիքին հետի եմ տանում, տալ չեմ»: Մի քիչ հետո մեկ ուրիշն է կանգնեցնում, ասում. «Էդ հինչ լավ շուն աս, 5 մանեք տամ, տուր ինձ»: Գրիշան, որ մի քիչ պարզամիտ էր, դժգոհ ասում է. «Ա՛ հի՞նչ ես խոսում, սկի մի քիչ առաջ 3 մանեք էին տալիս, չեմ համաձայնեք»...

150. «Գավազան» Արշոն ճարպիկ ու զվարճախոս երեխա էր: Մի օր դպրոցում ընկերներն ասում են. «Արշո, կկարա՞ս ոռայկոմի տղայի հետ կոխ բռնես»: Արշոն չնայած փոքրամարմին էր, իսկ «ռայկոմի»՝ տղան՝ փարթամ ու բոյով, բայց համաձայնում է: Նա բռնում է, Արշոյին գետնին փռում: Արշոն վեր է կենում, շորերը թափ տալիս ու արդարանում. «Ա շա՛ն վերքի, դու ամեն օր շոկոլադ ես օտում, իսկ իմ կերածը ծաղկած հաց աս»...

151. Երկու դարաչինարցի Գյուլիստանում տուն են պատում: Դե, նրանք խմիչքի սովոր մարդիկ էին, իսկ տանտերը ճաշի ժամանակ բերում է, ամեն մեկի առաջին մի աման մածուն դնում: Վարպետներն իրար երեսի նայում են ու տանտիրուհուն ասում. «Ա՛ բիբ, եթե ամենքիս մի գրաֆինկա էլ գինի բերես, ուրիշ բան պետք չի»: Կինը զարմանում է. «Վա՛, մածոնով գինի կխմե՞ն»: Դարաչինարցին ասում է. «Ա՛ բիբ, դու գինին բեր, ես կարող աս ծյունուկուլուկավ խմեմ, քեզ համար մեկ չի՞»...

152. Մի օր Էլմիրա Սեդրակովան գնում է աշխատանքի, նկատում, որ ռուս մեքենագրուհի Շուրան՝ Գագիկի կինը, տխուր է: Հարցնում է. «Մի տեսակ տխուր ես երևում, ի՞նչ է պատահել»: Նա ասում է. «Է՛. ինկե՛ր Էլա, տղաս ռուս օգում. ռուս աղջիկ ի՞նչ հարս լինի»: Էլմիրա Սեդրակովան զարմացած հարցնում է. «Շո՛ւրա, բա դու էլ ես ռուս, էլի»: Շուրան գլուխն օրորելով պատասխանում է. «Է՛. Գագիկ ինձ էնքա՛ն թակել, ես ի՞նչ ռուս»...

153. Գագիկը բանակից գյուղ է վերադառնում, ուզում է աշխատանքի տեղավորվել: Հարևան Գերանբոյի շրջանում տրակտորիստների դասընթացներ են բացվում: Գնում է, որ սովորի, նկատում են, որ տեխնիկայից շատ է հեռու: Մի ծանոթ թուրք ասում է. «Էստեղ

* Շրջանի ղեկավար (ծ.կ.):

2 ամսվա կուրսեր կան, ով ռուսերեն մի քիչ գիտի, ընդունում են, գյուղերի համար ռուսերեն դասատու պատրաստում: Ռուսերեն լավ խոսում ես, գնա, դասատու դարձիր»: Գնում է, սովորում, 2 ամիս հետո գյուղ գալիս՝ դասատուի վկայականով: Հայրը հարցերը լուծում է ընդունված ձևով, և սեպտեմբերին Գագիկը դպրոց է մտնում որպես դասատու... Մի օր փոքրիկ Գայանեին դաս է հարցնում: Երեխան կարդում է՝ «լուչի սոլնցա»: Գագիկը հարցնում է՝ «սոլնցան» ի՞նչ ռոդ ա: Երեխան ասում է՝ սրեդնի: Նա ջղայնացնում է. «Աղջի, չես տեսնո՞ւմ, որ ա -ով ա վերջանում, Ժենսկի ա»: Երեխան զարմանում է. «Ընկեր, բա երեգի ասել ես՝ սրեդնի ա»: Դասատուն «բացատրում» է. «Ախր երեկ «սոլնցե» ա գրած եղել»...

154. Սպարտակը չարածճի երեխա էր: Մի անգամ ինչ-որ անշնորհք բան է անում, մայրը ջղայնացած ասում է. «Արա՛, հեյվան ե՞ս, հեյվան»: Հայրը կողքից ասում է. «Հեյվանը պոզավեր ա լինո՞ւմ»: Երեխան ասում է. «Ա՛յ պապ, պա առանց պոզի հեյվան ա լինո՞ւմ»...

155. Արսենը Ռուսաստանում հաճախ էր պարտքի մեջ ընկնում, եղբորից փող ուզում: Մի անգամ էլ որոշում է փող ուզելու ձևը փոխել: Նամակ է գրում մոր անունով: Մայրը նամակը տալիս է մեծ տղային, ասում. «Կարդա՛, մի տեսնենք՝ ինչ է գրում»: Կարդում է, որ ուզում է տուն սարքել, փող է ուզում: Մայրը լռում է, իսկ մեծ եղբայրը երկար նայում է նամակին և մի գռեհիկ հայհոյանք տալիս ռուսերեն: Մայրը հարցնում է. «Բա է՞դ հինչ էր, օրիշ պյան էլ ա կիրե՞լ»: Տղան ասում է. «Հա՛, օգու՞մ ա երկրորդ հարկ էլ սարքի»...

156. Արմավիրում Էդվարդի տանը հայրենակիցները հավաքված քեֆ են անում: Մեկն օղու բաժակը դատարկում է ու ձեռքով քերանին հով անելով ասում. «Պա՛հ, էս հի՞նչ յաման քունդ էր»: Ռաժդենն ասում է. «Էնքան մաջալ օնես, էդ էլ ես որոշո՞ւմ»...

157. Հայրենակիցներով հավաքված Արմավիրում գրուցում են: Ռաժդենը դժգոհ պատմում է. «Ա՛ մեր կնեկը ոչ մի օր աշխատած չկա, 1600 մանեք պենսիա ա ստանում, իսկ ես 42 տարվա ստաժ օնեմ, 3 տարի էլ բանակում եմ ծառայել, 800 մանեք են տալիս, պա սհենցի պյան կինի՞»: Եվ շրջվելով դեպի Էդվարդը, նրան հարցնում է. «Դու պենսիա ստանում ե՞ս»: Էդվարդն ասում է՝ այո: Ռաժդենը նորից է դժգոհում. «Արա՛, դու Լենինին հետի մի կապուկ ճախ ըրած ե՞ս, դու հի՞նչ ես արել, որ քեզ պենսիա են տալիս»...

158. Կուլտուրայի բաժնում ընդհանուր ժողով է: Վարիչը վեր է կենում, քննադատում կլաոնետիստ Ռ-աժդենին, թե՛ սաղ օրը գործը թողած գնում ես տարբեր տեղերում նվագում, հլա աշխատանքի էլ մխրել խմած ես գալիս... Ռ-աժդենը, որ մինչև այդ կիսափակ աչքերով հանգիստ նստած լսում էր, այդ խոսքի վրա վեր է թռչում, ասում. «Պա՛յ, խե՞ք մխրել ասում, լավ էլ խմած եմ գալիս, պա հարսանիքից տանտերն ինձ մխրել խմած հետ կուղարկի՞»...

159. Իգորն ու Արթուրը մեքենայով տեղ են գնում: Անվտանգ երթևեկության միամսյակ է քաղաքում, և ամեն քայլափոխի «ԳԱԻ» տեսուչները կանգնեցնում են, ստուգում՝ հո խմած չե՞ն: Հերթական անգամ մեքենան կանգնեցնում են: Տեսուչը հանգիստ մոտենում է, «չեստ» տալիս: Իգորը մեքենայի ապակիին իջեցնում է, ուժգին «հո» անում: Տեսուչը տեղից վեր է թռչում: Արթուրը ծիծաղելով ասում է. «Վախիկ մի, կապած ա»...

160. Ռ-աժդենը Կիրովաբաղից ուզում էր գյուղ վերադառնալ: Ճանապարհին հանդիպում է ընկերը և ստիպում, թե՛ անսլայման պիտի գնանք մեր տուն: Նա ասում է. «Ախր ավտոբուսից ուշանում եմ»: Ընկերն ասում է. «Ոչի՛նչ, մի բռնելով ներս կմտնես, ընտիր քրի օղի ունես, գոնե մի բաժակ խմես, գնաս»: Մոռում են տուն: Շիշը բերում է, ստիպում, թե՛ գոնե 50 գրամ պիտի լցնես: Սեղանին մի խոշոր «սոկի» բաժակ կար: Ռ-աժդենն ասում է. «Դե լավ, վրագում եմ, էստեղ ածա, ես մատս կդնեմ մեջը, որ 50 գրամ լցնես»: Ընկերը շիշը թերում է, սկսում լցնել: Նա լցնում է, իսկ Ռ-աժդենը քիչ-քիչ մատը բարձրացնում է: Տեսնելով, որ շիշը դատարկվում է, կինը կողքից ասում է. «Արա՛, բող գոնե տակը մի քիչ մնա, ես էլ համն օճեմ»...

161. Ռ-աժդենը շրջանում հայտնի երաժիշտ էր: Բոլոր գյուղերում հարսանիքների և այլ միջոցառումների ժամանակ կլաոնետ էր նվագել: Մի անգամ հյուր է ընկնում մի գետաշենցու տուն: Սեղան են բացում: Տանտերն ասում է. «Ռ-աժդեն՛, քե՛զ մատաղ, սրտալի հաց կեր, հմանչիլ մի, հաշել ըրա, քա ձեր տանն ես»: Ռ-աժդենն ասում է. «Մաքամ ես մեր տանը ե՞րբ եմ հաց օտում, որ ձեր տանը հմանչեմ»...

162. Խորենը մի մոտոցիկլ է առնում: Ընկերները համոզում են, թե՛ «10 մանեթի պիվա առ, մաղարիչ խմենք»: Նա մի քիչ ժլատ էր, հրաժարվում է: Ընկերները զիտեին, որ տեխնիկայի լեզուն դեռ չի հասկանում, «սվեչան» քաբուն քրջում են: Խորենն ուզում է «խտղի»

զցել, չի հաջողվում: Ընկերներն ասում են՝ պահո՞ւ, «սվեչան» փչացել ա, պիտի փոխես, եղ էլ շատ քանկ է: Եվ բացատրում են, որ «էտտէս»-ի պահեստում կա, 25 մանեք ա: Նախօրոք էլ զանգում են, պահեստապետին տեղյակ պահում: Նա մի քանի կոպեկանոց «սվեչան» 25 ռուբլով առնում է, «խողի» գցում, ուրախանում: Իսկ ընկերներն ասում են՝ դու 10 մանեք մաղարիչ չարեցիր, մենք քո փոխարեն 25 մանեք ենք մաղարիչ առնում: Եվ պահեստապետի հետ միասին բռնաբերում մտնում են, «մաղարիչ» անում...

163. Միշիկը գյուղում «արաղ էր քաշում»: Մոսոն իրենց «ջեջը» տանում է նրա մոտ, խնդրում, որ քաշի: Միշիկը նկատում է, որ Մոսոն այդ գործից բան չի հասկանում, «ջեջին» նայում է, ավստասանքով ասում. «Պահո՞ւ, հոտ ա ինզել մեջը, հազիվ 3 լիտր բան կստացվի»: Երբ Մոսոն գյուղամեջում պատմում է, ընկերները ծիծաղում են. «Արա՛, ջեջը առանց հոտ կլինի՞. խաբել ա, գնա և քաշելու ժամանակ աչքդ վրան պահիր»: Մոսոն այդպես էլ անում է, մինչև վերջ ուշադիր հետևում է, 15 լիտր օղի է ստացվում: Միշիկն արդարանալու համար ասում է. «Արա՛, էս հինգ գյոռսաթմա բան էր, հենց ա մեջը պետկ ես լցրել»...

164. Պրսեցի Արթուրը մեքենայով Յարտավլից գնում էր Շուրսկոյ: Ճանապարհին մեքենան շրջվում է, երթևեկությունը փակում: Մեքենաները կուտակվում են, վարորդները դուրս են գալիս, որ տեսնեն՝ ինչ է պատահել: Ջարդված դեկը մնացել էր Արթուրի գրկին: Այդպես դեկը գրկած, արյունոտված մի կերպ դուրս է գալիս մեքենայի միջից: Այդ պահին մի ռուս զայրացած մոտենում է, ասում. «Չյո՞ռնի, եզժատ նե ումենշ, զաչեմ սիդիշ զա ռույլ»: Արթուրը հանգիստ ասում է. «Վա պերվըխ՝ յա նե չյոռնի, ա խեյլախ ոիժի, ա պատոմ՝ եսլի խոչեշ, վոտ, բերի ռույլ, սամ եզժայ», — ասում է ու ջարդված դեկը մեկնում նրան...

165. Պերեյասլավում գյուլիստանցիները մուշկեթի գինի են հյուրասիրում պրսեցի Ջիվային: Ջիվան խմում է, փահ-փահ անելով գլուխը քափահարում ու ասում. «Ա՛ ես գիդացել եմ, քե գյուլիստանցին մենակ «Ճուխի-ճուխի»՝ անելն ա գյուղում, հո՞ւնց եք սհենցի գինի սարքել»...

* Խոզերին կանչելը (ծ.կ.):

166. Պրսեցի Մոսոն նոր էր ամուսնացել: Գյուղի տուն էր, առանց կարգին կահույքի: Մայրը նորապսակների համար անկողին է գցում տանը, իսկ իր ու ամուսնու համար՝ բակում, մի նեղիկ «սալ-դատսկի» մահճակալի վրա: Երբ նորապսակներն առավոտյան տնից դուրս են գալիս, տեսնում բակում թթենու տակ դրված փոքրիկ մահճակալը, հարսը զարմացած հարցնում է. «Վո՛ւ, այա, էս նեղվածք տեղը երկուսով հո՞ւնց եք տեղավորվում»: Նա բացատրում է. «Դե, մինչև գիշերվա կեսը ես եմ ի՛ր վրա պառկում, նրանից հետո ինքն է ինձ վրա պառկում»...

167. Վովան իր մեքենայով Բաքու պիտի գնար: Արարատն էլ Բաքվում գործ ուներ, և որպեսզի ձրի ստացվի, Վովային խնդրում է, որ իրեն էլ հետը տանի: Չմեռ էր: Պայմանավորված ձևով առավոտյան շուտ վարորդը գնում է, Արարատին կանչում: Նա վերաբերում վրան է գցում, տնից դուրս գալիս: Վարորդն շտապեցնում է, թե՝ արագ նստի՛ր մեքենա, Վովան հրեն իրենց բակում սպասում է: Գնում են, Վովային էլ վերցնում, ճանապարհվում: Երբ հասնում են Բաքու, մեքենայից իջնում, նկատում են, որ Արարատը շալվար չի հագել. ինչ-որ սպորտային շոր է՝ փողբերը մինչև ծնկները ծալած: Արարատը վարորդի վրա զայրանում է, թե. «Սեղավորը դու ես, էնքան վռագեցրի՛ր, մոռացա, որ շորս փոխեմ... Իբր ուզեցի ձեզ հետ գամ, որ էժան նստի, ավելի քանկ նստեց»... Եվ գնում են խանութ, նոր «շալվար» առնում:

168. Դուխիկը բարի կին էր, հարևաններին օգնում էր ամեն հարցում: Մի օր մեկը գալիս է, խնդրում, Դուխիկը լցնում է, մի բանկա նավթ տալիս: Այդ մարդն ուզում է օրհնել, ասում է. «Ա՛ Դուխ, էս ժողովրդին լոխճին քյոմազ ես անում, թող էս ժողովրդի ցավը քո պկան կենա»...

169. Հետպատերազմյան ծանր տարիներին էր: Գյուղում տղա-մարդիկ պակասել էին, ծանր շատ գործեր կանայք էին կատարում՝ տարիքն առած տղամարդկանց հետ: Ամառվա մի շոգ օր Հայ Պարիսի կալում աշխատողները շվաքում նստում են, որ հանգստանան: Սոփի բիբն անմարդ կին էր, ինքն էլ կատակասեր, Միրաբ դային էլ տարիքն առած մարդ էր: Սոփին վեր է կենում, նրա հետ կոխ բռնում,

* Իբր ուզում է ասել՝ էս ժողովուրդը քո ցավը տանի (ծ.կ.):

գետնին գցում, վրան կանգնում, թռչկոտում: Միրաբն ասում է. «Աղջի՛, տիե՛նց մի անիլ, ջանս կծանում աս»...

170. Սոփի բիբն իրենց բակի սև թթենու տակ նստած սև բուք էր հավաքում, ուտում: Հարևանը հարցնում է. «Հո՞ւնց ես, Սոփի՛ բիբ»: Նա ասում է. «Զե՛գ մատաղ, վերևինս սև, տակինս սև, կերածս սև, հո՞ւնց կլինեն»...

171. Պրսեցի Յաշան գյուղի կոլտնտեսության կատարածուն էր: Գրասենյակում մենակ նստած էր: Հեռախոսը զնգում է: Հարցնում են՝ «Նախագահը որտե՞ղ կլինի»: Յաշան հոգնած ու նեղսրտված ասում է. «Ա, նա մի տեղ վեր ա ինգնու՞մ, որ ես գիտամ»...

172. Պետրովսկ քաղաքում Հակոբի վարսավիրանոցի մոտ հանդիպեցին երկու հայրենակիցներ՝ նախկին ընկերներ Ջիվան ու Գրիշիկը, որոնք երկուսն էլ «քենգատարի» վարորդներ են եղել շրջանում: Սկսում են ջերմ հարցուփորձը: Պատուհանից նրանց տեսնելով, դուրս է գալիս մակ Հակոբը, և երեքով սկսում են քաղցր հիշողություններ պատմել: Այդ պահին մի հաճախորդ է կանգնում վարսավիրանոցի դռան մոտ: Հակոբը զրույցը կիսատ է թողնում, գնում: Գրիշիկն ասում է. «Արա՛, կացի, գոնե խոսքս պըժմեն, հետո կգնաս»: Ջիվան ասում է. «Արա՛, 100 մանեթ ա, է, դռան կշտին կանգնած, ո՞ւնց թողնի, գա»...

173. Ոչխարի ֆերմայի աշխատողները սովորաբար ոչխարների ճակատագիրն իրենց ուզած ձևով տնօրինում էին: Առուշանյան Ֆրիդոնը գնում է ֆերման ստուգելու: Հովիվ Շուրային հարցնում է. «Ոչխարների դրությունը հո՞ւնց ա»: Շուրան մտահոգված ասում է. «Ա՛, դե ո՞ւնց պիտի լինի՝ դրադան պակասում են»...

174. Հայ Պարիսի կոլտնտեսությունը Կույբիշևի անվան էր, նրա կիսանդրին էլ գրասենյակում դրված էր: Հայպարիսեցի Գենոն շրջկենտրոնում միլիցիայի բաժնում էր աշխատում: Մի օր միլիտետ Ադամյանը զարմացած հարցնում է. «Գենո՛, բա ձեր գյուղում մի անգամ գողություն չի լինո՞ւմ, որ բռնես»: Գենոն ասում է. «Ընկեր Ադամյան, եթե ամեն գողի բռնեն, մեր գյուղում մենակ Կույբիշևը կմնա»...

“ Իբր թե իրենք չեն մորթում-ուտում կամ վաճառում (ծ.կ.):

175. Ընկերներով խոսպանում աշխատում էին: Ուշ երեկոյան, քնելուց առաջ, Բորիկն ընկերներին ասում է. «Եթե դուք քնելու եք, գոնե ես արթուն մնամ, որպեսզի գիշերվա ժամը 3-ին ժամացույցի սլաքը մի ժամով առաջ տամ»: Ընկերները ծիծաղում են նրա միամտության վրա, իսկ նա դժգոհ ասում է. «Արա՛, հի՞նչ եք ռեխներդ բաց անում. տելեվիզոր չեք լսե՞լ. էս գիշեր ժամը փոխվելու է»...

176. Ղահրաման դային մտնում է պետապահովագրության բաժին: Դե, այդ հիմնարկին ժողովուրդը «գոսստրախ» էր ասում, հայերեն անվանումը շատերը նույնիսկ չգիտեին: Մտնում է պետի կաբինետը, ասում. «Քարև ձեզ, պարո՛ն պետապահովագրության պետ»: Պետը, այդ անսովոր բառերը լսելով, տեղից վեր է կենում, զարմացած շուրջը նայում, հարցնում. «Էդ ի՞նձ նիետ ե՞ս»...

177. Այնպես պատահեց, որ ռուսական Շուրսկոյ գյուղում պրսեցի Էնգելսի հայրն էլ, մայրն էլ մի կարճ ժամանակում իրար հետևից վախճանվեցին: Էնգելսի տղան էլ, քրոջ տղան էլ նշանված էին, պատրաստվում էին հարսանիքի, բայց պապի ու տատի մահվան պատճառով ստիպված հարսանիքը հետաձգում են: Որոշ ժամանակ անց համագյուղացիները կողքից բացատրում են, որ դա ճիշտ չէ, տարիքն առած մեծերի պատճառով երիտասարդների կյանքի ճանապարհին բարդություն չպիտի ստեղծվի: Քույրը տղային ամուսնացնում է: Մի երկու շաբաթ էլ որ անցնում է, Էնգելսն ինքն է տղայի հարսանիքն անում: Հարսանիքի օրն անսպասելի երկինքը մռայլվում է, ուժեղ փոթորիկ է բարձրանում, ծառեր արմատախիլ անում, շենքերի տանիքներ քանդում: Մի քիչ հետո եղանակը հանդարտվում է, պայծառ օր է բացվում:

Էնգելսն ընկնում է անհանգիստ մտքերի մեջ, թե դա ինչի նշան կարող էր լինել: Մովսեսը հանգիստ բացատրում է. «Ինձ համար ամեն ինչ հասկանալի է»: Հայրդ էն աշխարհում ջղայնացել է, ասել. «Ենթադրենք աղջկաս լեզուն կարճ էր, չկարողացավ փեսային համոզել, և հարսանիք արին, բա իմ տղան՝ Էնգելսը, ինչո՞ւ հարսանիք արեց, բա մեր հիշատակը չի հարգո՞ւմ»: Եվ այդ գայրույթը փոթորիկ է դարձել: Հետո մայրդ հանգստացրել է, ասել. «Ա՛ տղա, իսկ չե՞ս, թող մեր թոռն ամուսնանա, երջանիկ լինեն, և հորդ բարկությունն անցել է, եղանակն էլ լավացել է»...

178. Պրսեցի Ակուփը գյուղում ու շրջականերում ճանաչված ու հարգված մարդ էր: Մի օր ծանոթներից մեկը շրջկենտրոնից ձիով վերադառնալիս հյուր է ընկնում Ակուփի դայու տուն: Չին բակում ծառից կապում է, մտնում տուն: Ակուփի տղա Սերոժը 10 - 12 տարեկան էր, չարաճճի ու շատակեր երեխա: Նկատում է, որ հյուրի ձիու մեջքին լիքը խուրջին կա, ասում է. «Ա՛ դայ, տանե՞մ, ձիուն խոտ տամ»: Հյուրն ասում է՝ չէ, կերած-կուշտ ա: Մի քիչ հետո գալիս է, քե՛ տանեմ, ձիուն ջուր տամ: Հյուրն ասում է՝ կարիք չկա: Սերոժն ասում է՝ մեղք ա, շոգ ա: Եվ գնում է՝ ձին արձակում, տանում մի քիչ հեռվում խուրջինն ստուգում, տեսնում է՝ լիքը տանձ է: Տանձը դատարկում է մի թաքուն տեղ, խուրջինը քարերով լցնում, նախկին ձևով ծածկում, ձին բերում, իր տեղում կապում: Հյուրն Ակուփի հետ ուտում-խմում է, ձին նստում, գնում իրենց գյուղ: Երբ մտնում է իրենց բակը, երեխաներն ուրախացած դիմավորում են, ասում է. «Դե՛, զնացե՛ք, խուրջինը բերե՛ք, տեսե՛ք՝ ձեզ համար ինչ էմ առել»: Երեխաները գնում են, ստուգում, տեսնում՝ քարով է լցված: Հեռախոսը վերցնում է, զանգում Ակուփին, ջղայնացած ասում. «Ես քո լակոտի իլած սհաքը... Պա ես նրան չասեցի՞, որ իմ ձիուն ջուր չտա»...

179. Պակաս տարի էր: Ակուփի կինը մի քիչ մեղր ուներ, պուլիկի մեջ թաքրած պահում էր «դարմանի համար»: Երեխան՝ Սերոժը, գլխի է ընկնում, որ մայրը մի բան է թաքցրել: Փնտրում է, տեսնում՝ «սատուրի» տակ մի արկղ կա, արկղի մեջ՝ ցորեն, ցորենի մեջ՝ պուլիկ, մեջը՝ մեղր: Լքիվ ուտում է, դատարկ պուլիկը նույն ձևով թաքցնում, վերջում էլ մի քիչ մեղր քսում է իրենց կատվի բեղերին: Կատուն ուրախ բեղերը լայստելով պոչը տնկած քայլում է տանը: Սերոժը, անմեղ ձևանալով, մորն ասում է. «Ա՛յ մամ, էս կատուն հենց ա մի թաքուն բան ա ճաքել, կերել, բերանը լպստում ա»... Մայրն ասում է. «Է՛, քե՛զ մատաղ, մեր դատարկ տանը հի՞նչ կա, որ կատուն ճաքի»... Ասում է, բայց սիրտն ահ է ընկնում, մտնում է «պաղվալը», ստուգում, տեսնում՝ պուլիկը դատարկ: Ջղայնացած հետ է գալիս, տղային ասում. «Ա՛ խոըզնըհատ, դա կատվի բան չի, լոխ դու ես լալիել, պա զոնե մի պատառ թողիլ չե՞մ միջին»...

180. Պյատիգորսկում մի ուրախ սեղանի շուրջը նստած Վելունց Յուրիկը երգ է ասում: Ամեն տողը 5 - 6 անգամ կրկնում է: Ներկաներն ասում են. «Արա՛, առաջ գնա, էդ տողը 5 - 6 անգամ ասել ես»:

Յուրիկը բացատրում է. «Անգրագետ մարդ եմ, մի տողն էնքան ասում եմ, մինչև մյուսը միտս ընկնի»: Եվ կնոջը ցույց տալով ասում է. «Մա ու մեր Ժուլետը որ կոտրիս եմ լինում, բառերը հուշում եմ, երգում եմ. հիմի Ժուլետն էստեղ չի, սա էլ խոովել ա, սուս արել, ես մի հանգով կյուլառ եմ անում»...

181. Շահումյանցիների հետ մի հանդիպումից հետո հաջորդ օրը նորից եմ հավաքվում քեֆի: Մեկը դժգոհում է. «Յուրիկ, երեկ էնքան նստեցինք, երգ չասեցիր»: Յուրիկն ասում է. «Ա՛, հալա խոսում էլ ե՞ս. պիվայից հետո բաժակս կոնյակով լցրիր, ձայնս կտրվեց»: Էլան ասում է. «Արա՛, պա քեզ ո՞վ էր ստիպում, չիմեիր, էլի»: Յուրիկը զարմացած պատասխանում է. «Պա՛՜, պա ստաքանս պահեմ, հի՞նչ անեմ, տանեմ, աղջաղեցին տա՞մ»...

182. Նախշունը մեծացել էր, հիշողությունը կորցրել, լսողությունն էլ հետը: Մի օր տղային հարցնում է. «Արգան, հերդ որտե՞ղ ա»: Նա ասում է. «Ա՛յ մամ, միտդ չե՞, մեռել ա, էլի»: Նորից է կրկնում. «Ա՛ տղա, սկանում չե՞ս, քեզ ասում եմ հերդ որտե՞ղ ա քինացել»: Տղան նորից է նույնը պատասխանում: Երկար մտածելուց հետո Նախշունը հարցնում է. «Պա հի՞նչ ա քինացել Մոսկվա»: Տղան էլի բացատրում է նույնը: Մայրը վերջապես հանգիստ շունչ է քաշում. «Հա՛, հալբաք քինացել ա Սարատով, Բելան կոշտը»: Տեսնելով, որ ուրիշ հնար չկա, Արգամը ձեռքն ուսին է դնում, ոտքով-ձեռքով հասկացնում, որ հայրը մեռել է, ուսներին դրած տարել են, հողին հանձնել: Մայրը նեղացած ասում է. «Ա՛ տղա, դու հունց ես դեմիշ անում, քո հորն ասում ես՝ մեռել ա»...

183. Վարորդ Յուրիկը գնացել էր Կիրովաբադ՝ ասյրանք բերելու: Գործը վերջացնելուց հետո ընկերոջ հետ մտնում է մի ճաշարան, ուտում-խմում են ու լավ ձայնով երգում է: Կողքի սեղանից մի թուրք խնդրում է, որ մի երգ էլ թուրքերեն ասի: Յուրիկը բառեր չգիտեր, բայց լավ ձայն ուներ: Հիշում է միայն թուրքերի սիրելի անունները՝ Նիզամի, Ֆիզուլի և այլն: Քաղցր ձայնով մի երգ է կկկացնում հայերեն. «Ա՛յ Ֆիզուլի, դու մահակը վերցնես, Նիզամու բեյինը վեր-թակ տաս»... Ընկերը մի կերպ է ծիծաղը պահում, իսկ թուրքերից մեկն ինչ-որ բան է կասկածում, հարցնում. «Արա՛, էդ հի՞նչ «բեյին» ես ասում»: Յուրիկը բացատրում է. «Չես հասկանո՞ւմ. բեյինը գլուխն ա, Նիզամին ու Ֆիզուլին էլ ուշոննի մարդիկ են իլել»...

184. Շրջկենտրոնում շաբաթօրյակ է: Ամեն մեկին մի գործ է հանձնարարված, կատարում են: Մարումն Գրիգորը բախով ցեխ է շաղախում, որ վարպետը պատը շարի: Դե, նա հայտնի էր, որպես այդպիսի հարցերում ծույլ մարդ: Գործկումի նախագահ Ջաֆարովը մոտենում է, զարմացած ասում. «Գրիգոր դայի, ի՞նչ լավ ցեխ ես անում»: Գրիգորը պարծենալով ասում է. «Ը՛մն, սա հի՞նչ ա. եթե ջուրը պղտոր չլինի, ավելի լավ ցեխ կանեն»...

185. Արշակ վարժապետի կինը վատառողջ էր: Ամեն օր կաթ էր առնում հարևաններից: Մի օր էլ կնոջն ասում է. «Անիկա, փոխանակ ամեն օր հարևանին փող տանք, եկ մի կով առնենք»: Առնում են, պահում մի քանի տարի. բայց կովը չի ծնում, որ կաթ տա: Հարևանը մի օր ժպտալով հարցնում է. «Վարժապետ, կովդ ծնեց վե՛չ, տհե՛նց հի՞նչ կդառնա»: Նա հանգիստ բացատրում է. «Ա՛, ես դրա հետի եմ առե՞լ, պա մարդին դռանը մի ապրանք չալիտի լինի՞, որ պռանչի»...

186. Խոսք է բացվում Գորբաշովի մասին: Ամեն մեկն իր ձևով հայեցում է, որ նա ամբողջ երկրում խառնաշփոթ գցեց: Վելումն Յուրիկն ասում է. «Արա՛, նրա մասին խոսալ միք, նրա անունը որ տալիս եք, կատուն մեջքովս բուքսավատ ա անում»...

187. Ներքինչենցի Դանիելյան Սեդրակը զվարճալի սովորություն ուներ: Խանութից վերադառնալուց հետո գնումները դնում էր մի կողմ, սեղանի մոտ նստում, ծոցատետրի մեջ գրում, քե ինչ է գնել, չափը, գինը և այլն: Հետո այդ ամենի տակ գիծ էր քաշում, գրում՝ խոզոտ ...ռուբ. ...կոպ. Դրա տակն էլ գրում էր՝ օբմանուլի. ...ռուբ. ...կոպ.: Վերջում էլ ստորագրում էր, ամսաթիվը նշում:

188. Ռուս Պարիսից մի կին կար, ներքինչենցի Դանիելյան Սեդրակի ծանոթն էր: Տարբեր առիթներով հյուր էր գալիս, իսկ երբ ուշանում էր, մնում էր Սեդրակենց տանը, երբեմն՝ մի քանի օր: Փոխադարձ հարգանք կար, բայց... Մի փոքրիկ «բայց» կար: Հենց որ հեռուստատեսությամբ Բաբվից համերգ էր լինում, այդ կինը զզվանքով ասում էր. «Թո՛ւ, էլի սկսեցին ոռնոցը», և վեր էր կենում, անջատում: Սեդրակն, ընդհակառակը, սիրում էր նրանց երգերը, մանավանդ Ջեյմաբի համերգը: Մի անգամ Ջեյմաբի համերգը հենց սկսվում է, այդ կինը ներս է մտնում: Իսկույն մոտենում է հեռուստացույցին, անջատում: Սեդրակը ճարահատյալ լռում է, քերքը վերցնում, բռնում երեսին՝ իբր կարդում է, և հայերեն ասում. «Պա՛հ, ես քո

հերն եմ անիծել, դու՞ որտեղից եկար»... Հյուրը գլխի է ընկնում և նկատելով, որ Մեդրակը բերքը «թարս» է բռնել, ծիծաղելով ասում է. «Գռնե բերքն ուղիղ բռնիր»...

189. Կուրբասը զվարճասեր տղա էր Ներքին Շենում: Հաճախ էր անառիկ և անսպասելի բաներ անում, ընկերների հոգու հետ խաղում: Մի օր հեռուստացույցի հետևի տախտակը հանում է, իրենց կատուն մտցնում ներս: Հաջորդ օրը հեռուստացույց նորոգող Շիմոյին հրավիրում է, թե. «Ա՛յ ընկեր, մեր տելեվիզորը չի աշխատում, արի, մի տես՝ հինչ ա իլեր»: Շիմոն գալիս է, հեռուստացույցի հետևի տախտակը հանգիստ բացում: Ներսում խցկված, սոված-ծարավ կատուն խսկույն վրա է թռչում, Շիմոյի երեսից կայչում: Ասում են՝ քանի օր Շիմոյի ձեռքերը դողում էին, չէր կարողանում աշխատել...

190. Կուրբասը կատակասեր էր ու մահ կարողանում էր ցանկացած մարդու մահն մրա ձայնով խոսել: Անշնորհք կատակների պատճառով հիմնարկի ղեկավարը մրան աշխատանքից հեռացնում է: Երեկոյան Կուրբասը հեռախոսը վերցնում է, ձայնը փոխած, շատ կուլտուրական ձայնով հարցնում. «Ձեր հեռախոսի համարն ի՞նչ է»: Էդ մարդն անկախ իրենից լուրջ պատասխանում է՝ 67-68: Կուրբասը գռեխիկ ձևով հայեություն է ու ասում՝ «67 հետ ռավետը..., 68 հետ իրիկունը»: Նախկին շեֆը սառած տեղը նստում է, գլխին խփում «տրուրկայով», ասում. «Ա՛, գռնե չասացի «01-01»...

191. ...Գյուղամիջում մեկը Կուրբասի վրա ջղայնանում է: Կուրբասը հանգիստ ասում է. «Դե լավ, ձեր հեռախոսի համարն էլ գիտեմ, կտեսնես՝ գլխիդ ինչ օյին կզա»...

192. Յուրիկը Կիրովաբադից մի «լազան» առած գալիս է Ներքին Շեն: Դե, խորհրդային տարիների այդպիսի ապրանք հազվադեպ էր ճարվում: Երբ հասնում է շրջկենտրոնի վարչական շենքին, ամեն կողմից կանայք հավաքվում են, հարցնում՝ էդ որտեղից ա՞: Յուրիկը հանգիստ պատասխանում է. «Հրե՛ն, Կամոյի խանութը լիքը»: Կանայք իրար իմաց տալով վազում են «Կետին դրաղը»՝ Կամոյի խանութը: Տեսնում են՝ խանութը դատարկ, Կամոն էլ ծառի տակ նստած շախմատ է խաղում...

193. Դաթիկոյի տղա Սուրիկը բեռնատարի վարորդ էր: Մեքենան պատրաստ վիճակում կանգնեցրել էր բակում, որպեսզի հաջորդ օրը առավոտը շուտ գնա Կիրովաբադ: Հարևանի տղա Կուրբասը լսել

էր այդ մասին: Առավոտ շուտ վեր է կենում, Դաթիկոյի էշը մտցնում բեռնատարի մէջ, ինքը չափարի տակ քաքնվում: Սուրիկն արագ տնից դուրս է գալիս, մեքենան քշում, գնում՝ էշն էլ հետը: Մի քիչ հետո Դաթիկոն է դուրս գալիս, որ էշին նստի, գնա հանդը, տեսնում է՝ էշը չկա: Ջարմացած բարձրանում է տուն, կնոջ վրա ջղայնանում, քե՛ էշը չկա, ի՞նչ է պատահել: Այդ պահին Կուրասն էշի նման գոռում է: Դաթիկոն ուրախացած դուրս է գալիս, էս կողմ-էն կողմ նայում, էշը չի գտնում: Մտնում է տուն՝ «էշը» նորից է գոռում: Նորից է Դաթիկոն դուրս գալիս, փնտրում, չի գտնում: Ջայրանում է կնոջ վրա, ասում. «Աղջի՛, էս էշը որտե՞ղ ա»: Մարդ ու կնիկ երկար վիճում են, վերջապէս Կուրասն իրենց բակից ձայն է տալիս. «Ա՛յ Դաթիկո դայի, առավոտ քիշերով հի՞նչ եք մարդուկնիկ կռիվ անում»: Դաթիկոն նոր միայն գլխի է ընկնում, զայրանում. «Զյուփօղի՛, էս լոխ քո արած դալաքը կլինի»... Իսկ մի քիչ հետո Սուրիկը, որ ճանապարհին լսել էր իրենց էշի զոռը, մեքենայով հետ է գալիս, տնեցիների վրա զայրանում. «Ա՛ էս էշը հո՞վ ա քիցել մաշինը»...

194. Մինասը գյուղում անտառապահ էր: Անտառից փայտ, ցախ, մանավանդ լոբու «սարի» բերելու համար շատերն էին միշտ խնդրում նրան, որ քույլ տա: Բռնագաղթից հետո շատերի նման Մինասն էլ է առևտուր անում: «Լուծնիկի» տոնավաճառում կանգնած ձայն է տալիս՝ «սիգաբետնե՛ր, օպտո՛վ»: Կուրասը մոտենում է, ասում. «Մինա՛ս դայի, օպտով լոբու սարի չունե՞ս»...

195. Ժորիկը ծխող չէր: Մի անգամ ակումբի մոտ հավաքված երիտասարդները զրուցում են: Մեկը սիգաբետը գրպանից հանում է, սկսում ծխել: Չգիտես ինչու՝ Ժորիկի սիրտն էլ է ուզում: Ասում է. «Մի հատ սիգաբետ տուր»: Ընկերը տալիս է: Ժորիկը սիգաբետը դնում է բերանը, վառում, սկսում ծխել ու ասում է. «Մի հատ էլ տուր»: Ընկերը զարմանում է՝ ինչի՞դ ա: Ժորիկը բացատրում է. «Մեր Ծիրինը որ տեսավ, ուզելու ա»...

196. Միխայելը Բաքվում էր ապրում: Մի օր գնում է գյուղ՝ իր քույր Ռոզայի տուն: Իր հետ որպէս նվեր բաժակակալներ է տանում, որպէսզի քեյի բաժակները դնեն մէջը, այդպէս խմեն: Դե, խորիքային տարիներին ոչ միայն բաժակակալ, նույնիսկ հասարակ քեյի բաժակ չէր ճարվում: Նստում են պատշգամբում, միասին քեյ խմում: Ռոզան իր բաժակը բաժակակալի մէջ դրած նախկին ձևով ողողում է,

ջուրը շարտում բալկոնից: Բաժակը ցած է ընկնում, ջարդվում: Ռոզան իրեն վատ է զգում, ինքն իրենից դժգոհ ասում. «Վո՛ւյ, այ Մուխի, երանի Բաքվից եկած չի՞նեիր»...

197. Սվենանց Զոքորը տարիքն առած մարդ էր: Առողջությունը մի քիչ վատացել էր, բժիշկն արգելել էր օդի խմել: Դե, նա էլ սովոր էր: Մի անգամ, երբ տանը մենակ էր մնացել, մի բաժակ օդի է լցնում, խմում: Շրջվում է, տեսնում՝ թոռը դռան մոտ կանգնած: Ասում է. «Գիշո՛, քե՛զ մատաղ, բաբոն ասես վե՛չ»: Մի քիչ հետո կողքն սկսում է ցավալ: Թախտիկն պառկում է, կողքից բռնած կուչ գալիս: Կինը գալիս է, տեսնում կուչ եկած, ասում է. «Ա խորզնըհա՛տ, հենց ա արադ ես խմել»: Նա ասում է. «Չէ՛, քո արևը՝ խմել չեմ, օգում ե՞ս, Գիշոն հարցրու»: Եվ շուտ է գալիս, թռռանն ասում. «Գիշո՛, ես արադ եմ խմե՞լ»: Երեխան ասում է. «Պապի՛, տեսնում ե՞ս՝ ես ծախում չեմ, դու խե՞ ես ինձ ծախում»...

198. Վանեսը գյուղամիջում տաբեցների հետ կանգնած գրուցում է: Հանկարծ վազելով մոտենում է թոռը: Վանեսն իսկույն գլխի է ընկնում, որ տանն ինչ-որ տհաճ բան է կատարվել, և չի ուզում, որ երեխան բոլորի ներկայությամբ պատմի: Երեխային ասում է. «Ա լակո՛տ, ռեխդ բանաս վե՛չ»: Բայց երեխան չի լռում, վռագ-վռագ ասում է. «Այան ու մաման հրեն իրար միս են ուտում»: Վանեսը գնում է տուն, տեսնում՝ մայրն ու կինն ամեն մեկը քախտի մի ծայրին սուսուփուս նստած: Գրաֆիկական հանում է, դնում սեղանին, սկսում սուսուփուս խմել: Երբ քեֆը լավանում է, հանկարծ ձեռքն ուժգին խփում է սեղանին: Կինն ու մայրը վեր են թռչում: Կնոջն ասում է. «Էն «ուզոլը» տեսնում ե՞ս. գնա, «ուզոլ» կանգնիր»: Կինը սուսուփուս գնում է, անկյունում կանգնում: Մայրը ոգևորված ասում է. «Այ ապրե՛ս, դայդը դա ա, ես քեզ մատաղ»: Իսկ Վանեսը շարունակում է խմել ու սկսում է երգել իր սիրած երգը՝ «Դոլայի գյա՛լ»: Հանկարծ երգն ընդհատում է, ձեռքն ուժգին խփում սեղանին, մայրը վեր է թռչում: Մորն ասում է. «Էն մյուս «ուզոլը» տեսնում ե՞ս, դու էլ գնա, էնտեղ կանգնիր»: Շարունակում է խմելն ու երգելը, հետո կիսատ թողնում, գոռում կնոջ վրա. «Ա՛յ կնիկ, ոտքդ բարձրացրու, մի ոտնանի կանգնիր»: Հետո շրջվում է դեպի մայրը, ասում. «Ա՛յ մամ, տեսնո՞ւ ես ո՞նց ա կանգնած, դու էլ մեհենց կանգնիր»: Հարս ու կիսուր մի ոտքի վրա կանգնած, հոգնած լուռ ճոճվում են: Վանեսը գրպանից մի կոնֆետ է

հանում, տալիս մորը ասում. «Ա՛յ մամ, էն հարսն ա առավոտն ինձ տվել, որ քեզ տամ, մոռացել էի»: Մայրը ժպտալով վերցնում է, ասում. «Պա՛, տհեճցի հարսին մատաղ լինեմ, ա տղա, պա դրա նման հարսին ուզո՛ւ կկանգնեցնե՞մ»...

199. Ներքին շենացի Ֆլորան (Ղահրամանաց Պետրոսի հարսը) նոր էր տեղափոխվել Պյատիգորսկ: Թողը դպրոցից պիտի գար, արդեն ժամն էր, բայց ուշանում է: Անհանգիստ տնից դուրս է գալիս, փողոցում «բորդյուրին» նստում, սպասում, որովհետև դպրոցի տեղը չգիտեր, որ գնա դիմավորելու: Մի մարդ մոտենում է, ասում՝ բարև, ա բիբ: Ֆլորան սովորություն չուներ անծանոթի հետ խոսելիս գլուխը բարձրացնելու, գլուխը կախած բարևում է: Նա հարցնում է՝ որտեղացի՞ ես: Ֆլորան գլուխը կախած, անտրամադիր, ասում է. «Է՛, տեղը գիտա՛լ չես. ես Շահումյանից եմ, Ներքին Շենից»: Նա ասում է. «Որ մի մարդ հարցնեմ, կարող ա՞՞ ճանաչես՝ Ղահրամանաց Պետրոսը»: Ֆլորան տեղից վեր է թռչում, դեպի վեր նայում ասում. «Վո՛ւ, կտրվես դու, Էդիկ, դու ե՞ս»...

200. Վահանն Աստրախանի մարգում է ապրում: Լսում է, որ իրենց շրջանից մի մարդ է եկել: Նոր տարածքներ են յուրացնում, շինարարություն է արվում, «դոմիկներ» են դրված: Ասել են, որ այնտեղ է ապրում՝ արդեն մի քանի ամիս: Գնում է, փնտրում՝ անծանոթ տարածք, իրար նման հողակտորներ, իրար նման «դոմիկներ»: Մի տեղ հեռվից նկատում է՝ լավ մշակված հողամաս, տան առաջ «չարդախ» սարքած, քախտը դրած: Վստահ մտնում է բակ, հայերեն ասում՝ շահումյանցի ե՞ս... Արկադյան տեղից վեր է թռչում, փաթաթվում և արդարանալու համար շուրջը նայում ու ասում. «Դե, վրենեննի բան ա, էլի»: Վահանն ասում է. «Ինչքան ուզում ա վրենեննի լինի, շահումյանցու վրենեննին բոլորից տարբեր կլինի...»:

201. Աստրախանի մարգում «տրասսայի» վրա հանդիպում են երեք շահումյանցիներ՝ մախկին ծանոթներ: Ուրախանում են, զրուցում, թե ով ինչպես է փոխվել: Մեկիքը հպարտանում է, թե ինքը սպորտսմեն է, լավ է պահպանվել: Արկադյան վիճում է. «Չնայած դու սպորտսմեն ես, ինձանից ջահել, բայց ես քեզանից արագ կվազեմ»: Վահանն ասում է. «Գրագ եկեք»: Գրագ են գալիս: Վահանն ասֆալտի վրա գիծ է քաշում, նրանք երկուսով գծի վրա կանգնում են, իսկ ինքը հաշվում է՝ մեկ, երկու, երեք... Մեկիքն արագ պոկվում է

տեղից, վագում: Մի քիչ հետո հետ է մայում, որ տեսնի՝ ինչքան է առաջ գնացել: Տեսնում է՝ նրանք երկուսով գծի մոտ կանգնած ծիծաղում են...

202. Բուզլուխցի Մակրատմանց 5 եղբայրները սայլը լծած խոտ էին տեղափոխում: Ճանապարհին սայլը շոտ է գալիս: Այդ պահին ճանապարհով անցնում է ներքինչնեցի Բաբալունց Բախշին և զարմացած ասում. «Արա՛, 5 ախպերով կարում չե՞ք մի բաբա խոտ տաներ»: Եղբայրներից մեծը պատասխանում է. «Հինգը չենք, վեցն ենք. մարդ ենք ուղարկել, որ էն մեկին էլ կանչեն»...

203. Բուզլուխցի Մերգին բազմազավակ էր: Մեծ տղաներին ամուսնացրել էր, արդեն թոռներ ուներ, բայց կինը դրանցից հետո էլ նորից 2 երեխա էր բերել: Մի անգամ այդ Մերգին Ուրիկի հետ գնում է մոտակա անտառ: Հանկարծ դիմացը մի արջ է հայտնվում, հետևի ոտքերի վրա կանգնած ուժգին գոռում է: Արջին տեսնելով՝ Մերգին սարսափահար ավելի ուժգին է գոռում: Արջը, որ անդունդի եզրին էր կանգնած, երկի հետ-հետ է գնում, թե՞ ոտքի տակից քար է դուրս պրծնում, գլորվում է ձորը: Մերգին այդքանը չի էլ նկատում, վախից ընկնում է գետնին: Իսկ Ուրիկը, որ մի քիչ հեռվում ցախ էր ջարդում, արջի ձենը լսելուն պես վագում է գյուղ, հարայը գցում, թե՛ հասեր, օգնեցեր, արջը Մերգիին կերավ: Ով հրացանով, ով բահով կամ եղանով, հասնում են անտառ: Տեսնում են՝ Մերգին գույնը գցած, գետնին մատած, իսկ արջը չկա, գլորվել է ձորը, այնտեղից հեռացել: Բոլորն ուրախանում են, որ լավ է պրծել, ողջ է մնացել: Տղան՝ Մայիսը, կատակով ասում է. «Ա՛, մենակ ապերը չի լավ պրծել, այան էլ ա լավ պրծել: Եթե արջն ապորը վախեցրած չլիներ, այան հարսներին արգոն էր անելու»...

204. Բուզլուխցի Ուրիկը գնում է Գյուլիստան՝ աղջիկ ուզելու: Աղջկա ծնողները հարցնում են. «Ի՞նչ փեշակ ունես»: Ուրիկն ասում է. «Շատ լավ վեխճարու օչերեղ են գնում»: Մարդ ու կնիկ զարմացած իրար երեսի են մայում: Ուրիկը շարունակում է. «Ա՛, հի՞նչ եք մի հանգի դառել. օրական տասը մանեք օնեն էդ գործավը»...

205. Պետրոսյան Արարատը պատասխանատու պաշտոնի էր: Միշտ մասնակցում էր շրջանային խորհրդակցություններին, բայց թուլությամբ ուներ՝ անընդհատ խոսում, զրուցում էր կողքինների հետ: Շրջանի ղեկավարն անընդհատ դիտողություն էր անում, չէր

ուղղվում: Վերջապես մի անգամ կարգադրում է. «Արարա՛տ, սրանից հետո դու միշտ առաջին շարքում կմտես, հրահանգիչների արանքում», որպեսզի միշտ իր աչքի առաջ լինի, չխոսի: Դե, նիստերի ժամանակ միշտ համարյա նույն հարցերի մասին, նույն մարդկանց, երկար-քարակ նույն բանն էր ասում առաջին քարտուղարը: Մարդիկ ձանձրանում էին, բայց լուռ լսում էին: Մի անգամ իր ելույթի ժամանակ մի ձայն է հասնում նրա ականջին: Լռում է, որ տեսնի՞ ով է խոսողը: Չայնն էլ է լռում: Հենց սկսում է խոսել, ձայնն էլ է սկսում: Լարվում է, որ իմանա, թե ով է: Հանկարծ նկատում է, որ Արարատն առջևում չի նստած: Պոռթկում է. «Արարա՛տ, ինչո՞ւ չես քո տեղը նստել, ինչո՞ւ ես խանգարում»: Արարատն ասում է՝ ես խոսում չեմ: Նրա կողքը նստած էր Շահնազարյան Միշան: Քարտուղարն այս Միշային է հարցնում. «Արարատը խոսում է՞ր, թե՞ չէ»: Միշան ընկնում է ծանր վիճակի մեջ՝ չի ուզում ընկերոջը մատնել, բայց և չի ուզում հակաճառել դեկավարի հետ, ասում է. «Ընկե՛ր Պետրոսյան, խոսում չի, ամա օգում ա, վար խոսա»... Բոլորը ծիծաղում են, շիկացած մթնոլորտը խաղաղվում է: Արարատն ասում է. «Ա՛յ Միշա, դու հի՞մն չես գյուղում՝ ես օգում եմ խոսա՞մ»...

206. Արշակ վարժապետը կատակասեր, բայց շատ սկզբունքային ու պատվախնդիր մարդ էր: Երբեմն կարող էր անհավատալի բաներ կատարել: Մի անգամ հիվանդանում է: Քույրն ու իր տղա Սեմիկը Ղարաչինարից գնում են Ներքին Շեն՝ տեսության: Դե, սովորական ձևով լցնում են «սումկան», հետո էլ մի կենդանի հավ տանում: Սեմիկը քեռուն սրտապնդում է, թե՛ շուտ լավանալու ես, արխային կաց, ինչ որ պետք լինի, ինձ կասես, ես քո մեջքումը կանգնած եմ: Վարժապետը մտքի մեջ նեղանում է այդ խոսքերից, թե՛ ի՞նչ օրի եմ ընկել, որ էս ջահելն էսպես է ասում. «Մի հավ ա բերել, կարծում է, թե իմ մեջքումը կանգնած ա՞»: Եվ... Հյուրերը երեկոյան հետ են դառնում, գնում Ղարաչինար: Վաղ առավոտյան քույրը գնում է բացում հավաբնի դուռը, որ հավերին կուտ տա, տեսնում է իր տաքած հավը հավաքնում է: Իսկույն հասկանում է, որ եղբոր տարօրինակություններից է. գիշերը թաքում բերել է, գցել ներս, գնացել: Չանգում է Ներքին Շեն, նրա տղա Ժորիկին ասում՝ հերդ սենցի օյին ա ըրել... Պարզվում է, որ վարժապետն այնպես գաղտնի վեր է կացել, այդքան տեղը գնացել ու հետ եկել, տնեցիները չեն իմացել: Ժորիկն

ինքն էլ իր հերթին է ուզում հորը «սյուրալիզ» անել: Ասում է. «Ա՛յ պապ, գնում եմ, բիբին բերած հավը մորթեն»: Վարժապետն ասում է. «Զե՛, եթե ուզում ես, մեր հավերից մեկը մորթիր»: Ժորիկը համառում է, թե. «Ա՛յ պապ, դարիք հավ ա, մի տեղ կկորչի, ավելի լավ ա՝ բիբին պիրածը մորթեն»: Շատ որ համառում է, վարժապետը խոստովանում է, թե. «Արա՛, բիբին հավը տարել եմ, գցել իրենց հավաբունը, կա վե՛չ»...

207. Զալիբեկը կոշկակար է Ռոստովում: Պրսեցի Ռաֆիկը հարցնում է՝ ո՞նց ես: Զալիբեկն ասում է. «Է՛, հարսի պահածը ո՞նց կլինի. վայ հարսին պահած պատրոնը, վայ դարմանով պահած էշը»...

208. Դասատուն առաջին դասարանցիներին բացատրում է, թե լույսն ինչպես է բացվում կամ ինչպես է օրը մթնում: Ընկեր Վարսիկը փոքրիկ Զարմիկին հարցնում է. «Ե՞րբ է մթնում, Զարմի՛կ, ինչպե՞ս ենք իմանում»: Զարմիկն ասում է. «Ինկե՛ր, էն ա մեր էծերը որ գալիս են տուն, ուրեմն մթնել ա»: Դասատուն անկախ իրենից ասում է. «Ա՛յ տղա, էծը ես եմ, էդ օրն էլ տուն չեմ գալիս, ուրեմն չի մթնելո՞ւ»: Զարմիկը պատասխանում է. «Բա՛, ինկե՛ր, մեր էծերը քեզ նման դանգլա ե՞ն. եթե տոն չի կյան, կյուր կօտի»...

209. Մանիկը ընտանիքով ռուսական մի գյուղում էր տեղավորվել: Յերեկը տան տղամարդիկ գնում էին աշխատանքի, երեխաները՝ դպրոց, ինքը տանը մենակ էր մնում: Մի անգամ երկու հոգի «մասկալով» տուն են մտնում, գոռում. «Բոլորիդ կկոտորենք, փողեր, ոսկեղեն, ինչ որ ունեք, մեզ տվեք»: Մանիկը տեղից վեր է թռչում, պահաբանից տան եղած փողը վերցնում, մի քանի հատ էլ մատանի, տալիս իրենց, ասում. «Մեր ունեցած-չունեցածն էս ա, վերցրեք, գնացեք, քյորփեքը տանը քմակին խաղ են անում, վախեն վե՛չ»... Գողերն արագ վերցնում են, հեռանում: Մանիկը մի քիչ հետո դուրս է գալիս բալկոն, նրանց հետևից կանչում. «Տղե՛րք, էս մի՞նը վազայի մեջն է եղել, տեսել չեմ. եկեք, էս էլ վերցրեք»: Ասում է ու վերջին մատանին էլ տալիս նրանց...

210. Բուզուխցի Դավիթը տարիքն առել էր, լավ չէր տեսնում, լսողությունն էլ չէր լավ: Թողը տանում է բժշկի: Դեղեր են նշանակում: Մի քանի օր խմում է նշանակված դեղերը, նորից գնում է բժշկի: Ստուգում է բժիշկը և ինքնագոհ ասում. «Ո՞նց որ հիմա մի քիչ լավ ես»:

Դավիթը դժգոհում է. «Ա՛, սենցի լավը մզոված. կլխումս հրսանիք ա, ունգուններումս էլ գրուզինսկի կինտոկի»։ Մի պահ լռում է, հետո բժշկին բացատրում. «Կինտոկին գյուղում ե՞ս հինչն ա. պար ա, էլի, կինտոների պար»...

211. Սեդրակը շրջկենտրոնում պետական շենքում էր ապրում, որտեղ 8 ընտանիք կար։ Մի օր աշխատանքից վերադառնում է, տնեցիներին ջղայնացած ասում. «Մի գնացեք, են լվացքը շուտ հավաքեցեք»։ Աղջիկը զարմացած ասում է. «Ա՛յ պապ, մերը չէ, հարևանի լվացքն ա»։ Սեդրակն ասում է. «Ա՛յ աղջիկ, փողոցով անցնողը շատ կիմանա՞, թե ումն ա. մեր քենդիրի վրա ա փռած, լվացած շորերի վրա էլ օխտը ռանգի կեղտ կա»...

212. 1930 -ական քվականներին գյուղերում գործում էին անգրագիտության վերացման կայաններ՝, որտեղ ընդգրկված էին գյուղացիներն անկախ տարիքից ու սեռից։ Խմբերից մեկում էր գաղթական Մալխաս Սահակյանը։ Գրքում նկարներ էին և տակը գրած, թե ինչ է։ Մի տեղ վարպետները քար էին տաշում և տակը գրված էր. «Քեռի Դանիելը քար է տաշում»։ Մալխասին հարցնում են դասը։ Նա նկարին նայում է, ասում. «Դան-Դանիելը քար է տաշում»։ Քանի անգամ ուղղեցին, որ քեռի ասի, նա այդպես էլ չսովորեց, միշտ Դան-Դանիել էր ասում...

213. Գաղթություն առաջին դասարան բացվել է 1933 թ., գյուղի ակումբի սենյակներից մեկում։ Առաջին ուսուցիչը Մաշիկ Մարյանյանն էր։ Այբբենարանում նկարներ կային, տակը գրված կարճ բառեր։ Երեխաները տառ-տառ կարդում էին և ասում բառը։ Տուն էր նկարված, տակը՝ 3 տառ։ Վանյան Ժորիկը կարդաց «Տ...Ու... ծյուկ-նու չանգալ»։ «Ն» տառը նա մոռացել էր և նմանեցրել էր ձուկ բռնելու չանգալի։ Երեխաները ծիծաղեցին, ընկեր Մաշիկը փորձեց ուղղել, իսկ նա արդարանում էր. «Ա դե, ծյուկնու չանգալ ա, լի»։

214. Մոստյի մորաքույրը Գերմանիայից մի լավ «ավիտեր» էր բերել։ Դե, խորհրդային տարիներին խանութում հնարավոր չէր լավ հագուստ ճարել։ Նա էլ շարքային կոլխոզնիկի երեխա էր։ Գեղեցիկ հագնված գնում է գյուղամեջ։ Տարեցները «Չինարու տակ» հավաք-

* Լիկկայան (ծ.կ.)։

ված գրուցում էին: Մոստոյին տեսնելով, Առուշանովն ասում է. «Էս հինչ սիրուն երեխա ա, ավառս, որ Գրիշինն ա»...

215. Անդրոն բեռնատարի վարորդ էր, շրջկենտրոնում էր աշխատում: Պետն էլ էր գյուղից եկած: Մի օր դիտողություն է անում. «Անդրո՛, էս մաշինը խե՞ղ չես մի հետ վանում»: Անդրոն առանց մտածելու ասում է. «Ինկե՛ր մաչալնիկ, էդ դալաթն արիք, էլ անես վեչ»...

216. Վարժապետ Արշակը լավ դասատու էր, լավ էլ ընտանիք էր ստեղծել: Բայց երկար տարիներ գրկված էր կնոջից, և տան գործերին շատ էր միջամտում, հարսին խորհուրդներ տալիս, քե ինչը ինչպես պետք է կատարվի: Հաց քիսելու ժամանակ հարսին ասում է. «Պայծառ, 2 կապուկը բոլ ա քորոնը վառելու համար»: 2 կապուկ ցախը վառում էին, քոնիքը լավ չէր տաքանում, հացը պատերից պոկելու ժամանակ տակը կայում էր պատին, «քերինջ» դառնում: Վարժապետը դիտողություն էր անում, քե՛ հացը լավ չես հանում քոնրից: Հարսն արդարանում էր, քե՛ 2 կապուկով լավ չի տաքանում քոնիքը: Պայծառը մանկապարտեզում էր աշխատում, լավ բուժքույր էր: Մի անգամ բոլորի մոտ պատմեց այդ մասին: Դե, այդ կանանցից ամեն մեկը մի «սուռյա» էր: Ասացին՝ այս անգամ որ հաց քխելիս լինես, քոնրից հանելուց առաջ կգանգես մանկապարտեզ, իմաց տաս, իրենք էլ կգանգեն, Պայծառին կկանչեն աշխատանքի, քող վարժապետն ինքը հացը քոնրից հանի, որ համոզվի: Այդպես էլ անում են: Պայմանավորված ձևով անհրաժեշտ պահին զանգում են, Արշակ վարժապետին ասում. «Մտուգողներ են եկել, Պայծառը պիտի շուտ գա աշխատանքի»: Վարժապետն ասում է. «Պայծա՛ն, քե՛զ մատաղ, դու արխային գնա, ես հացը կհանեմ քոնրից»: Սկսում է հացը հանել: Մեծ մասը պատից պինդ կլած է լինում, ջարդուփշուր է լինում, վարժապետը ջղայնացած քերում է ծիանով, գցում քոնիքը: Հազիվ 3 - 4 հաց է նորմալ ստացվում: Պայծառը գալիս է, տեսնում, ասում. «Վո՛ւ, պապա՛, էս հի՞նչ ա իլել»: Վարժապետն ասում է. «Պայծա՛ն, սրանից հետո օգում ես 3 կապուկ գցի քոնիքը, օգում ես՝ 4»...

217. Վերինշենցի Վաղաշին նշանակում են Ղարաչինարի կոտնոտեսության մախագահ: Դե, Ղարաչինարը խաղողի հայրենիքն էր, իսկ Վերին Շենում միայն ցածրադիր մասում մուշկեթ էր աճում՝ սև, մանր խաղող: Աշնանը Ղարաչինարում բոլորն սկսում են խաղողի բերքահավաքը, իսկ Վաղաշն ասում է՝ դեռ ժամանակը չէ: Շրջկոմից

ստուգող է գալիս, մի քանի հոգով շրջում են կոլտնտեսության այգիներում: Վաղաշին հարցնում են՝ ժամանակն անցնում է, ինչու⁹ չեք քաղում խաղողը: Վաղաշը պատասխանում է. «Թող արեք մի լավ հասնի, սևանա»: Ծիծաղելով բացատրում են. «Ա՛յ մարդ, սա սպիտակե՞նի խաղող ա, ինչքան էլ հասնի, չի սևանալու»...

218. Հետպատերազմյան տարիներին (մահ հետագայում) առանձին մարդիկ գնում էին հարթավայրային թուրքական գյուղերը, հնձին օգնում, դիմացը հացահատիկ ստանում: Վերինշենցի Արշակը գնում է թուրքական Սափիքյուրդ գյուղում հունձ անելու: Գյուղում տղամարդիկ քիչ էին, կանայք էլ էին հունձ անում: Արշակը մի պահ հունձը կիսատ է թողնում, գնում ջուր խմելու: Հանկարծ տեսնում է՝ բրիգադավարը հասկերի դեզի տակ մի կնոջ հետ առանձնացած է: Անկախ իրենից ասում է. «Ալլահ բյոմազ էքսըն»^{*}: Դա թուրքերի մոտ ընդունված խոսք էր: Արշակն ասում ու անցնում է և ոչ մեկի մոտ չի խոսում այդ մասին: «Սեզոնի» վերջում բրիգադավարն Արշակին կրկնակի շատ ցորեն է տալիս: Ընկերները զարմացած հարցնում են, թե՛ այդ ո՞նց եղավ: Նա ասում է՝ ալլահն օգնեց...

219. Առաջներում Գաղթություն մի տարօրինակ կատակ էր տարածված: Որոշ մարդիկ իրենց երեսը ներկում էին գունավոր մրգերի հյութերով, ձևացնում, թե՛ «պել մարդ» են: Կատակասեր Նատո բիբին գյուղում բոլորը մամա էին ասում: Կոլտնտեսության այգում աշխատելու ժամանակ դեմքին ու ճակատին սև թուք է քսում և ճմրած կարմիր հոն, դառնում անճանաչելի և թաքնվում թփերի մեջ: Այգու պահակ Ալեքսան դային մահակն ուսին անցնում է թփի մոտով: Նատոն դուրս է սլոծնում թփերի միջից և նրան խիստ վախեցնում: Ալեքսան դային գոռալով վեր է թռչում, հետո հասկանալով, որ Նատոն է, մահակով այնքան է ծեծում, մի կերպ ձեռքից ազատում են: Բայց այդ կատակն ուրիշ ոչ մի վատ հետեւանք չթողեց...

220. Ղարաբաղի Սեդրակի կին Փառանձեմը Ներքին Շենում իր փոքր քրոջն ուղարկում է, թե՛ գնա Մադաթ դայուց գինի առ, բեր: Քույրն ասում է, որ նրան չի ճանաչում: Փառանձեմն ասում է. «Գնա՛ կլուրին կոշտը, էնտեղ հարցրո՛ւ Պիզտի Մադաթի տունը, քեզ ցույց կտան»: Երեխան «բալոնը» գրկած գնում է, տեսնում՝ կլուրի մոտ

^{*} Աստված օգնի (թրգմ. կ.):

մարդիկ են հավաքված: Հարցնում է. «Պիզուի Մադաքի տունը ո՞րն ա»: Հակառակի մման Մադաքը հենց այդտեղ է լինում. մա շատ կարճահասակ էր, դրա համար էին այդպես ասում: Եվ որովհետև բարի մարդ էր, հասկանում է, որ երեխային այդպես են սովորեցրել: Մի քունդ մախշում է «սովորեցնողին», հետո գնում, «բալունը» զինով լցնում, տալիս իրեն...

221. Գասուն նոր էր բանակից վերադարձել: Գյուղամիջում երիտասարդների շրջապատում զվարճալի հուշեր էր պատմում, հետն էլ ռուսերեն կոտրատում: Մի պահ ոգևորված մոռանում է, որ քիչ այն կողմ տարեց մարդիկ են հավաքված, ռուսերեն հայտնի հայհոյանքն է տալիս՝ ...մատ: Ընկերներից մեկն ամոքանք է տալիս. «Արա, հմանչում չե՞ս, Ջինավոր դային էնտեղ կանգնած ա»: Գասուն ասում է. «Ա՛, Ջինավոր դային հի՞նչ ա գյուղում, «...մատը» հինչն ա»: Տարեցներից մեկը լսում է և ասում. «Ա՛ դուռումսաղ, էս շենին կեսը Ջինավորից ա «մատ» անելը սովորել, դու հենց զարգացել ես, նրան էլ ասում ես՝ գիդալ չի»...

222. Ը-ն երիտասարդ ուսուցիչ էր գյուղում: Այնտեղ աշխատանքի էին նշանակել քաղաքից եկած մի գեղեցիկ աղջկա (Դ. Է.): Մեպտեմբերի առաջին օրերն էին: Ծենք մտնելիս հենց աստիճանների վրա հանդիպում է այդ աղջկան, դուրը գալիս է: Իսկույն անկեղծորեն ասում է. «Դու ինձ շատ ես դուր գալիս»: Աղջիկն առանց երկար մտածելու ասում է. «Իսկ դու ինձ դուր չես գալիս»: Ը-ն մի պահ լռում է անսպասելի կտրուկ պատասխանից, հետո խորը շունչ քաշում ու ասում. «Դե, ուրեմն՝ վէչ ասած, վէչ սկացած, դա-սվիդանի»...

223. Շտապօգնության մեքենայով շրջկենտրոնից գնում են Էրբեջ: Հիվանդի հարցերը բարեհաջող լուծում են: Տանտերը գառ է մորթում, լավ սեղան բացում: Հյուրերն այնպես են մաքրագարդում սեղանը, որ գոնե տան փոքրիկների համար մի կտոր միս չի մնում: Գիշերվա կեսին կերած-խմած հեռանում են: Վաղ առավոտյան հիշում են, որ բժշկական պայուսակը թողել են այնտեղ: Հետ են գնում Էրբեջ: Տանտիրոջ երեխան հեռվից նրանց տեսնելուն պես գոռում է. «Ա՛յ պապ, երեկվա դյուլերը գալիս են»...

* Մայր ... (ծ.կ.):

224. Փակի քոլում շաբաթօրյակ էր: Մի խումբ շինարարներ խոտ էին հնձում: Շրջագործկումի նախագահի տեղակալ քուրք Ռաջաբովը վերահսկում էր տարբեր տեղամասերում աշխատողներին: Մոտենում է մի խմբի, որոնք ուզում էին հաց ուտել: Ռաջաբովը խմելու հետ սեր ունեւ: Տղաները շիշը հանում են, որ հյուրասիրեն, հանկարծ նկատում են, որ բաժակները մոռացել են: Դե, Ռաջաբովին արդեն հրավիրել էին, անհարմար վիճակ է ստեղծվում: Յաշոն ասում է. «Արա՛, հի՞նչ եք խառնվել»: Վերցնում է մի խոշոր բիբար, կոթի մասը դանակով կտրում, թափ տալիս, ասում. «Բռնիր, ընկե՛ր Ռաջաբով, հի՞նչ պակաս ստաքան ա»: Ռաջաբովը խմում է ու ասում. «Ազնիվ խոսք, եթե հազար թորք լինել էստեղ, ոչ մեկի մաքով չէր անցնի էս բանը»...

225. Ներքին Շենում մի լեզգի Մուսա կար, պղնձե կաթսաներ էր կլայելում: Ապրում էր ընտանիքով, բայց ընտանիքը երբեմն գնում էր Դաղստան, որոշ ժամանակից վերադառնում: Մի անգամ գնում են, մի քիչ ուշանում, իսկ Մուսան անգրագետ մարդ էր, նամակ գրել չգիտեր: Մտնում է հարեան Սեդրակի տուն, խնդրում. «Փառո՛ բաջի, մի նամակ գրիր մեր Փիրուզայի վրա, որ գա, բայց՝ «սէխ կիրի, պէնդ կիրի, վար կանուխ կյա»:

226. Թուրք ատամնաբույժ Հեյդարը Ներքին Շենում էր ապրում ընտանիքով. ինքը՝ թուրք, կինը՝ ռուս, երեխաները, կարելի է ասել՝ հայ... Մի առիթով մտնում է Սեդրակի տուն: Կինը փլավ է բերում, հյուրասիրում: Հեյդարն ախորժակով ուտում է, ասում. «Օխա՛յ, կյանքումս էսպիսի փլավ չէի կերել»: Փառանձեմն ասում է. «Վա՛յ, պա քո կինը Մոսկվայից ա, նա պիտի լավ ճաշեր եփել իմանա»... Հեյդարն ասում է. «Մոսկվայում փեյին չի լինու՞մ»...

227. Ժենիկը հյուրասեր, սիրտը բաց կին էր, բայց մաքրասիրտությունից շատ էր հեռու: Ընկերուհիները հաճախ էին կատակում, թե նրանց սպիտակ «պաղաղյալնիկը» ինչ գույնի է դարձել... Բռնի տեղահանությունից հետո հաստատվել է Հյուսիսային Կովկասում: Մի անգամ Կրասնոդարում պատահաբար հանդիպում է իր նախկին աշխատանքային ընկերուհի Էմիրային, ասում. «Վո՛ւ, ինկե՛ր Էմիրա, հինչ լավ ա, վար պատահեցիր, գնանք մեր տուն»: Նա հրաժարվում է, թե՛ ժամանակ չունի: Ժենիկը համառում է, թե. «Ցավդ

տանեմ, պիտի անպայման գաս, զոնե «պաղաղյալնիկներս» տեսնաս, քե ինչքան են մաքուր, եթե ես պատմեմ, հրվըտլական չես»...

228. Հեղուշը գնում է շրջկումի 3-րդ քարտուղար Էլմիրա Դանիելյանի մոտ, ասում. «Մի հարևան օնեմ, երգրում պահելու չի, դու պիտի օգնես, մեկ էլ Սեդան. մի ռայկոմ դու ես, մի պրակուրոք Սեդան, երկուսդ էլ մեր հարսներն եք»... Էլմիրան ասում է. «Հեղո՛ւշ բիք, քո հարևանն ա, պիտի յոլա գնաս հետը»: Հեղուշը հիասթափված ու զարմացած ասում է. «Ըը՛մմ, ես էլ գիդացի, քա պյան ես գյուղում»...

229. Թուրքերը Ներքին Շենում քերում էին, ձմերուկ վաճառում: Մեկը մի հսկա ձմերուկ էր բերել: Վեճ է առաջանում: Թուրքն ասում է. «Մա 10 հոգով չեն կարող ուտել, սրա նման ձմերուկ ես շուկան դեռ չի մտել»: Մի քանիսն առարկում են, քե. «Դա սկի Մամիկին բոլ չի անի»: Գրագ են գալիս: Թուրքն ասում է. «Ով կարողանա էս ձմերուկը մենակ ուտել, մեքենայի մեջ մնացած ամբողջ ձմերուկն իրեն կտամ»: Իսկույն գնում են Դիլլաքյանց Մամիկի մոտ: Նա նոր էր ճաշել, իրենց բակի թթենու տակ պառկել, քնել: Չայն են տալիս. «Մամի՛կ, ուտելու «սպոռ» կա, պիտի գաս»: Մամիկը չի էլ հարցնում՝ ինչ է, որտեղ է: Իսկույն տեղից ցատկում է՝ քե՛ սպասեք, Նադյայիս լծեմ: Նադյան նրա ձիու անունն էր: Լծում է սայլակին, գնում են: Շուկայի երկար սեղանի վրա ձմերուկը կտրտում են, կտորները մեկ-մեկ տալիս Մամիկին: Նա արագ-արագ ուտում է, կեղևը տալիս Նադյային: Չմերուկը թուրքի աչքի առաջ «հավում է»: Մի քիչ հետո Մամիկը հարցնում է. «Քանի՞ դիլիմ ա մնացել»: Ասում են՝ երեք: Մամիկն անհանգստանում է. «Պա՛, ձեր բալան տոն կյա, խե՞ չեք կանոխ ասել. մնացածը պետք ա քչըվալ օտեմ, վար կուշտանամ»... Թուրքը որ այդ տեսնում է, ձմերուկները բողմում է, ձեռքը թափ տալիս, գնում: «Դե, տղե՛րք, պետք է փայ անենք», ասում է Մամիկը և սկսում: Մի հատ տղաներից մեկին է տալիս, մի հատ մյուսին, մի հատ ինքը վերցնում, երկու հատ էլ մի կողմ դնում, ասում. «Էս էլ Նադյային, նրա գործը ծանր ա»... Ու այդպես ամբողջ ձմերուկը «հավասար» բաժանում է:

230. Մի անգամ առավոտյան Գրիշիկը կնոջ հետ կովում է և խռոված գնում աշխատանքի: Օրվա վերջում գալիս է, բայց չի ուզում տուն մտնել: Որոշում է զարածը բացել, հարևանի հետ նարդի խաղալ բակում: Չեռքի հեռախոսով զանգում է տուն, որ երեխաները բանա-

լին ցած գցեն: Հակառակի նման հեռախոսը կինն է վերցնում: Գրի-
շիկը չի ուզում կնոջ անունը տալ, իր մեծ տղայի անունն է տալիս,
ասում. «Գագո՛, գարածի բանալին ցած գցիր»: Կինը սլատուհանը
բացում է, ինքն էլ իր փոքր տղայի անունը տալիս. «Յա՛շա, բանալին
վերցրու»...

231. Դարաշինարցի Իվանյան Վոլոդյային ընդունում էին կու-
սակցության շարքերը: Բյուրոյի նիստում կուսընկերների առաջին քար-
տուղար Ավանեսովը հարցնում է՝ որտե՞ղ ես աշխատում: Վոլոդյան
հանգիստ պատասխանում է՝ շավառխանայում: Ներկաները ծիծա-
ղում են, իսկ Ավանեսովը զարմացած հարցնում է. «Մեր շրջանում
այդպիսի հիմնարկ կա՞, ինչու՞ չեմ ես իմացել»: Նրան բացատրում
են, որ ժողովուրդը մթերման գրասենյակին, չգիտես ինչու, շավառ-
խանա է ասում...

232. Միերն աշխատանքով այնքան է զբաղված, ժամանակ չի
ունենում, որ մի անգամ գնա դպրոց, հետաքրքրվի տղայի դասերով:
Այդպես տարիներն անցնում են: Բայց մի անգամ տան բանալին մո-
ռացել էր հետը վերցնել, ինքն էլ շտապ պիտի գնար տնից փաստա-
թղթեր բերելու: Ստիպված մտնում է դպրոց, որ բանալին տղայից
վերցնի: Միջանցքում հանդիպում է տնօրենը: Միերը հարցնում է.
«Չե՞ք ասի 7-րդ դասարանը որտեղ է, Դահրամանյան Արթուրին եմ
ուզում տեսնել»: Տնօրենը ժպտալով ասում է. «Արթուրն 8-րդ դասա-
րանում է, այ, այն դուռը»...

233. Ընկեր Ազնիվը մաքեմատիկայի լավ դասատու էր, աշա-
կերտներն էլ շատ սիրում էին, բայց... Դպրոցը ռուսական էր ավար-
տել, Ռուսաստանում էլ բարձրագույն կրթություն ստացել, գրական
հայերեն չգիտեր: Դասի ժամանակ գյուղի ամենաթունդ բարբառով էր
խոսում աշակերտների հետ, պառավների նման էլ «նախշում»: Մի
անգամ երեկոյան մանկավարժական ժողովում գրականության դա-
սատուներն քննադատում են նրան, քե՛ն մենք մի կերպ ուզում ենք երե-
խաներին սովորեցնել գրական լեզվով խոսել, իսկ նա բոլորիս արածը
ջուրն է լցնում: Հաջորդ առավոտյան ընկեր Ազնիվը մտնում է դասա-
րան, աշակերտներին նկատողություն անում. «Ա՛խողզնահատեր, էդ
հո՞վ ա խաբար տվել, քա ես շենի լյուզվավն եմ խոսում. քիշերիս
մշանք մտածել եմ, հողոս շաղ ա կյալիս»...

234. Շրջանի ինքնապաշտպանության ժամանակ տեր Գրի-

գորը շատ-շատերին կնքել է, շատերին էլ հայկական անունով կոչել: Ռափոյին կնքելով՝ ասել էր՝ Գոռ ես: Ռափոն սխալ է լսում, որովհետև դա նրա համար անծանոթ անուն էր: Դրսում ընկերները հարցնում են. «Ռափո՛, բա քո անունն ի՞նչ դրեց»: Ռափոն մի տեսակ տարակուսած ասում է. «Ա՛, ինձ գորտ ասեց»...

235. Պարտիզանական ջոկատում Հովիկ դային ու Վալոն հաճախ էին իրար հետ կատակում, որը վեճ էր դառնում: Հովիկը հայտնի որսորդ էր, անվախ հետախույզ: Զգիտես ինչից՝ երկու մատները վնասվել էին, կուչ եկած էին: Վալոն մի օր լուրջ տոնով սկսում է բացատրել, թե իբր Հովիկը բանակում ուժեղ զինմաստ է եղել. տոտնիկի վրա այնքան շատ է «սալտո» արել, պտտվել, տաքությունից մատները վառվել են, կուչ եկել: Հովիկը ջղայնացած տեղից վեր է թռչում, գետնին ընկած երկաթե տրուբան վերցնում, ուժգին հարվածում Վալոյին, գետնին փռում: Աղմուկի վրա բլինդաժից դուրս է գալիս Նովիկը, հարցնում՝ ի՞նչ է պատահել: Հովիկն անմեղ-անմեղ նայում է տրուբային ու ասում. «Ա, հո՞վ կգիդար, բա էս մի պատառ տրուբումը սկեմցի հունար կա»...

236. Սիրանույշը Կալինինգրադում խանութում առևտուր է անում: Վաճառասեղանին շարված են տարբեր ապրանքներ, ամեն մեկի վրա գրված անունը, գինը: Սեղանի ծայրին մի ձմերուկ է դրված, վրան գրած՝ «արբուզ, բերեմեննի»: Մարդիկ զարմացած նայում են, մտամոլոր հեռանում: Տղան գալիս է, տեսնում ու իր հերթին զարմացած ասում. «Ա՛յ մամ, էս հի՞նչ էս կիրել, ժողովուրդը մնացել ա պլշած»: Մայրն ասում է. «Սի հարևան ունենք, խնդրել ա, թե՛ տուն գալիս ինձ համար մի ձմերուկ կբերես. դե, բերեմեննի կնիկ ա, մեղք ա, վրան գրել են, որ չմոռանամ»:

237. Վովան Ականաբերդից հյուր է գնում Երևան՝ ընկերների մոտ: Ընկերները տանում են ռեստորան, լավ պատիվ տալիս: Նա զարմանքով նկատում է, որ սեղանի վրա դրված «պուլտը» սեղմում են, մատուցողն ուտելիք ու խմիչք է բերում: Երբ կերած-խմած դուրս են գալիս ռեստորանից, Վովան ցույց է տալիս, որ «պուլտը» քաբուն վերցրել է, դրել գրպանը: Հարցնում են. «Ինչի՞դ ա պետք»: Իսկ նա ռզկոթված բացատրում է. «Տանելու են մեր գյուղը, ինչ որ իշտահա քաշի, զակագ տամ»...

238. Տնեցիները կոմպոտ են պատրաստում: Արամին ուղարկում

են, քե՛զնա խանութից մի հատ բալոն առ, բեր: Արամը մտնում է խանութ, ասում՝ աղին բալոն դավայ: Վաճառողն ասում է՝ նետու: Դատարկ հետ է գալիս: Մայրը ջղայնանում է. «Ո՞նց քե նետու, խանութը լիքն ա, շուտ գնա, մի հատ բեր»: Տղան նորից է գնում, դատարկ հետ դառնում: Մայրը ջղայնացած տղայի հետ գնում է խանութ, ձեռքը դնում 3 լիտրանոց բանկայի վրա, դժգոհ տոնով ասում է. «Աղջի՛, էտը մի բալո՞ն»: Վաճառողը նոր միայն հասկանում է, ասում. «Ա՛, բանկա ե՞ք ուզում»...

239. Գյուղի խանութը ձողիկով հյուք է ստացել: Ջահելները ոգևորված առնում են, խմում: Ռոման էլ է ներս մտնում, ասում. «Մի հատ աղնառազըլի սոկ տուր»...

240. Վարդուշը զանգում է քրոջը, քե՛զ կարալ չե՞ս մի օր ինձ տանես մեր խմբագրություն. դու շուտ-շուտ ես գնում, իսկ ես տեղը չգիտեմ: Քույրն ասում է՝ երբ ուզում ես, արի գնանք: Մի քանի օրից հետո նորից է զանգում, նույնն ասում, քույրն էլ նույն ձևով համաձայնվում է: Մի քանի օր անց էլի է զանգում: Քույրն ասում է. «Աղջի՛, դե, ասեցի, էլի, երբ ուզում ես, գնանք»: Վերջապես մի օր զանգում է. «Արի՛, հենց այս երկուշաբթի օրը ժամը մեկին հանդիպենք մանկավարժականի մոտ, միասին գնանք»: Երկուշաբթի ժամը մեկին քույրը գնում է, երկար սպասում, Վարդուշը չի գալիս: Ջղայնացած զանգում է. հարցնում. «Որ պայմանավորվում ես, ինչո՞ւ չես գալիս, մնացել եմ մի ժամ փողոցում կանգնած»: Վարդուշը հանկարծ հիշում է ու ասում է. «Վո՛ւ, երկուշաբթի ես ասել, գիդացել եմ, քե դա երկրորդ օրն ա»... Նորից պայմանավորվում են, որ հաջորդ օրը նույն ժամին հանդիպեն նույն տեղում: Քույրը ժամը մեկին գնում է, նույն տեղում երկար սպասում: Կես ժամ հետո հանգիստ գալիս է Վարդուշը: Քույրը հարցնում է. «Աղջի՛, ժամը մեկին ենք պայմանավորվել, նոր ես գալի՞ս, արդեն երկուսի կեսն ա»: Վարդուշը ծիծաղելով ասում է. «Է՛, դե լավ, է, երկուսի կեսն էլ մեկն ա, էլի»...

241. Ամեն երեկո ընտանիքով հավաքվում են՝ հեռուստատեսությամբ վերջին լուրերն իմանալու: Որպես կանոն, բոլորին հետաքրքրում են տարբեր երկրներում տեղի ունեցող ցնցող դեպքերը՝ երկրաշարժ, ջրհեղեղ կամ հրդեհ: Յուցադրվող կադրերի տակ սովորաբար գրվում է տվյալ երկրի անունը: Բայց շատ հաճախ հին կադրեր են ցուցադրում և տակը երկրի անունի փոխարեն գրում են՝ «արխիվ»:

Մի անգամ Գոհարիկը զարմացած հարցնում է մորը. «Ա՛յ մամ, եղ արխիվում ինչու՞ են միշտ ջրիեղեղներ լինում կամ հրդեհներ»...

242. Վարսենիկը բռնագաղթից հետո տեղափոխվել էր Ռուսաստան, աղջկա մոտ էր ապրում: Սեփական տուն էր, տնտեսություն: Մի առավոտ վեր է կենում, տեսնում՝ ձյուն է նստել: Հավերին բնից դուրս չի անում: Ներսում կուտ է տալիս, դուռը փակում: Աղջիկը նկատում է, որ բակում հավ չկա: Մորը հարցնում է, նա բացատրում է, որ ձյան պատճառով հավերին դուրս չի արել: Զարմացած ասում է. «Ա՛յ մամ, տեսնում չե՞ս, բոլորի հավերն էլ ձյունների մեջ ման են գալիս, հո դրանց վալենկաներ չե՞նք հագցնելու»...

243. Գյուլիստանցի Միրզա դային լավ այգի ուներ: Ամեն տեսակ ընտիր մրգեր կային: Հենց որ մրգերն սկսում էին հասնել, հարևանի տղա Վալոդը գիշերը գնում էր, հասածները բաղում: Միրզա դային չէր կարողանում բռնել, բայց վստահ էր, որ Վալոդի արածն է: Մի օր փողոցում բռնում է Վալոդին, բուքումուր տալիս: Վալոդը երդվում, արդարանում է, թե ինքը չի գողանում և մտքի մեջ որոշում է Միրզա դայուն համոզել: Ընկերներին ասում է. «Միրզա դայու ամառնատանձը հասել ա: Դուք գնացեք, քաղեցեք, ես հեռվից բարա մտած կսպասեմ: Հենց որ տեսնեմ՝ Միրզա դային գալիս ա, կշվկացնեմ, կփախչեք»: Տղաները գնում են նրանց բաղը, իսկ Վալոդն իսկույն գնում է Միրզային կանչում, թե՝ գնա, տես, թե ովքեր են ձեր տանձը բաղում: Միրզան գնում է իրենց բաղը: Հենց որ մոտենում է, Վալոդը հեռվից շվկացնում է: Ընկերներն արագ իջնում են ծառերից, փախչում: Միրզան չի հասցնում ոչ մեկին բռնել կամ ճանաչել, որովհետև մութ էր: Սկսում է վազել նրանց հետևից: Վազում է մինչև գլուղ: Տղաները ցրվում են ամեն մեկը մի կողմի վրա: Միրզան հոգնած գնում է տուն և ասում. «Պա՛, ես Վալոդին ցավը տանեմ, իմաց տվալ, գնացի, գողերին քչեցի: Ես էլ մինչև հիմա եղ խեղճ երեխուն էի կասկածում»: Իսկ Վալոդը հեռվից «բուսը» պահում էր: Տեսնելով, որ Միրզան հոգնած գնացել է տուն, ճանապարհվում է դեպի նրանց այգին, տանձը լրիվ բաղում...

244. ...Ընկեր Մինասը Գյուլիստանի դպրոցի տնօրենն էր: Նոր տարվա նախօրյակին գնում է Սարավ գյուղից մի «բոչկա» ընտիր գինի առնում, բերում, որ մանկավարժական կոլեկտիվով քեֆ անեն: Վալոդը տեսնում է և խնդրում, թե՝ ընկեր Մինաս, ի՞նչ կլինի, մենք էլ

գյուղի էս մի քանի ջահելներով մասնակցենք ձեր քեֆին: Մինասը խստապահանջ մարդ էր, մերժում է, քե՛ չի լինի, միայն դպրոցի կոլեկտիվի համար է: Գինին դնում են գրադարանում, կողպում, գնում: Վալողը պայմանավորվում է իրենց Արտուշի, Մեյրաֆանց Ռանտիկի և խրխափորցի Արտուշի հետ, քե. «Ես սեղանի հոգսը քաշեմ, դուր գնացեք, հենց որ մթնի, գինին բերեք»: Տղաները գնում են, մի երկաթի կտորով հենց ձգում են, կողպեքը տեղից դուրս է թռչում: «Բռչկան» հանում են, կողպեքը նորից մտցնում տեղը: «Բռչկան» մի կերպ իրար օգնելով տանում են Վալողի տուն ու Վալողին ասում. «Արա՛, էս ծանր գործը մեզ վրա էս թողել, դու փիչին կշտին նստե՞լ»: Վալողը ծիծաղելով ասում է. «Ա՛յ տղերք, էդ բռչկան բերելն ավելի հեշտ ա, քան քե մեր կնկանը համոզելը, որ մի հավ մորթի»...

Նախատոնական օրերին գրադարան մտնող չէր լինում, իսկ երբ գնում են, տեսնում են՝ «բռչկան» չկա... Մի քանի օր շարունակ քեֆ էին անում Վալողն ու ընկերները... Անցնում է ահագին ժամանակ: Մի անգամ գյուղամիջում գրուցելիս Վալողը երեսով է տալիս ընկեր Մինասին, քե. «Նոր տարուն մեզ չթողեցիր, որ ձեր քեֆին մասնակցենք, զոնե ասա, իմանանք՝ գինին լավն է՞ր»: Ընկեր Մինասն ասում է. «Արա՛, աղվեսություն չանես. էս էն ժամանակ եմ իմացել քո անելիքը, որ դու տեսել էս էդ բռչկան: Բայց զոնե ասա, քե բռչկան ինչ եք արել, որովհետև ամբողջ գյուղում էդ բռչկան չերևաց»: Վալողն ասում է. «Տեսանք, որ դա մալականու բռչկա ա, որտեղ պահենք, ճանաչելու եք, դրա համար էլ քանդել ենք, տախտակները խորոված արել, օբբույներն էլ գցել ձորը»...

245. Վարդանն իր փեսա Սամվելին չէր սիրում: Նույնիսկ Բաֆֆու բոլոր վեպերը ծերության հասակում նորից կարդում էր, բացի «Սամվելից»: Տնեցիները դիտմամբ բերում էին այդ գիրքը, ասում. «Ա՛յ պապ, կարդա, լավ գիրք ա, նա դժգոհ մի կողմ էր գցում, ասելով. «Ա՛, դպրոցում կարդացել եմ, լավը չի»... Եվ ահա նոր թռչնիկ է ծնվել: Բերել են տուն, հարազատներով հավաքվել, ուրախանում են: Բոլորը նկատում են, որ Սամվելին շատ ա նման: Վարդանը ձայն չի հանում: Տնեցիները դիտմամբ հարցնում են՝ ո՞ւմ ա նման: Նա ասում է. «մորը նման ա»: Տնեցիները զարմանում են. «Այ պապ, չես տեսնո՞ւմ, տոչնի Սամվելն ա»: Նա չլսելու տեղ դնելով ասում է. «Պա հա, լի՞, էս էլ եմ ասում՝ տոչնի Սուսանն ա»...

246. Հովիկն ու Սոման մեծ ընտանիքով Ռուսաստանում վարձով են ապրում: Ի վերջո որոշում են վարկ վերցնել, բնակարան գնել: Ամեն ինչ բարեհաջող ձևակերպում են և իրենք իրենց խորհում, քե՛ վարձ չեն տա, ծախսերն էլ մի քիչ խնայողաբար կկատարեն, 25 տարում կփակվի վարկը: Այդպես գրույցով են ընկնում, մեկ էլ տեսնում են՝ աշխատանքի գնալու ժամանակն է: Սոման արագ-արագ վերմիշել է «Ժարիտ» անում, Հովիկն ուտում է, գնում գործի: Օրվա վերջում գալիս է, տեսնում՝ կինը լվացքն է հարթուկում: Հարցնում է՝ ուտելու ի՞նչ կա: Սոման ասում է. «Ուրորկա եմ արել, լվացքը պրծել, հիմա էլ հարթուկում եմ, ճաշ եփելու ժամանակ չի եղել, առավոտվա վերմիշելից կա, կեր, մինչև ճաշն եփեմ»: Հովիկը սուսուփուս ամանն առաջն է քաշում ու ժպտալով հարցնում. «Ախճի՛, կարող ա՞՞ էս առաջիկա 25 տարին մենակ վերմիշել ուտենք»...

247. Սհերն ընկերոջ մոտ պատմում է, որ կնոջն ու զոքանչին ուղարկում է մի տասն օրով հանգստանալու: Ասում է. «Տոմսերն արդեն վերցրել եմ, վաղը պիտի ճանապարհեն»: Ընկերը ոգևորված ասում է. «Եթե Չեչնիա ես ուղարկում, մերոնց էլ ճանապարհեն իրենց հետ»:

248. Ամալյան հարևանուհու հետ նստած «սերիալ» են նայում: Հարևանուհին ասում է. «Ախճի՛, գոնե մի կոֆե բեր, զբաղվենք»: Ամալյան գնում է խոհանոց, արագ-արագ ջուրը, սուրճը, շաքարն իրար գլխի լցնում, դնում «պլիտայի» վրա, բայց չի համբերում, որ կողքը կանգնի: 3 տարեկան բռնիկին կանչում է, ասում. «Կարինե՛, բարոն մատաղ ինի բեզ, էս կոֆեին յաշի, վեր յղառնա»: Ինքը գնում է, շաքունակում ֆիլմը դիտել: Մի քիչ հետո երեխան գալիս է, լացակումած ասում. «Բարո՛, կոֆեին յաշում եմ, ամա վեր ա դառնում»...

249. Բուզլուխցի Սաթիկ բիբն ամեն տարվա աշնանը գնում էր Բաքու՝ իր տղա Հրաչիկի տուն, ձմեռն այնտեղ անցկացնում: Շատ հյուրասեր ու բարեկամասեր կին էր: Մի անգամ բարեկամը հիվանդացել էր, իրենք էլ հեռախոս չունեին, որ Սաթիկը զանգեր, հիվանդի մասին հարցներ: Մի ռուս հարևանուհի կար՝ Ժաննան, որը նրա բռնան հետ էր աշխատում: Սա լսում է, որ հիվանդին տեղափոխել են հիվանդանոց, մտնում է Հրաչիկենց տուն, որպեսզի տեղեկացնի այդ մասին: Մտնում է, տեսնում՝ տանը միայն Սաթիկ բիբն է: Մտածում է, որ այդ տարեց գյուղացի կինը ռուսերեն չի իմանա, բայց գոնե բուր-

քերեն մի բառ կիմանա, ուզում է մի կերպ հասկացնել, որ հիվանդին տարել են հիվանդանոց: Ինքն էլ բուրքերեն լավ չգիտեր, բայց հիշում էր, որ հիվանդանոց բառի մեջ «խանա» կա: Սկսում է այդպիսի մի քանի բառեր ասել՝ բարբարխանա, քիթաբխանա, եմաբխանա: Վերջապես գտնում է, ասում՝ բաբուշկա, բալնոյ՝ խաստախանա... Վերջապես Մաթիկը գլխի է ընկնում նրա ասելիքը, հարցնում՝ հա՛, բալնիցա՞... Սպասիբա ժաննա, սադիս, կուշի... Ժաննան հանգիստ շունչ է քաշում: Երբ տնեցիները գալիս են, պատմում է, ասում. «Ձեր բաբուշկան կարգին ռուսախոս է, ես էլ իզուր չարչարվել եմ...»:

250. Ռուսաստանի հեռուստատեսությամբ Լենինի մասին հաղորդում է: Պատմում են նրա հակահայկական գործունեության մասին: Էմման այդ ամբողջը լսելով վճռական ձևով ասում է՝ էգուց գնալու եմ Մավգալեյը: Տղան ծիծաղելով ասում է՝ այ մամ, սովետի ժամանակ Մոսկվա էինք եկել, խնդրեցինք, որ գնանք դամբարանը տեսնենք, չիամաձայնեցիր, ասացիր՝ Լենինի սփաթին կարոտել ե՞ք, գնանք Տրետյակովսկի գալերեա, հիմա ինչու՞ ես միտքդ փոխել, կարոտել ե՞ս: Էմման ասում է. «Կարոտել չեմ է, ուզում եմ գնալ, երեսին քթել»: Տղան ասում է. «Ա՛յ մամ, էնքան շատ մարդ կա, որ ուզում է նրա երեսին քթել, դրա համար էլ ապակու տակ են պահում. ավելի լավ է՝ նորից մի կուլտուրական տեղ գնանք...»:

251. Խորհրդային տարիներին որակյալ ու ճաշակով ապրանք դժվար էր ճարվում: Ճարվածն էլ քաքուն «տակից» կամ պահեստից էին վաճառում: Մի օր Ռաֆիկն ընկերոջ հետ գնում է պահեստ: Պահեստապետն էլ իրենց ընկերն էր: Ասում է. «Երեք զույգ ընտիր «բասանոշկա» կա մոտս, ամենքիս մի զույգ վերցրել եմ»: Ասում է ու մեկական զույգ փաթաթում, տալիս ընկերներին: Ամառ էր, Ռաֆիկի ոտքերն էլ շոգին չէին դիմանում: Ուրախացած գնում է տուն, կոշիկները հանում, «բասանոշկան» փորձում և իսկույն տրամադրությունն ընկնում է: Հայրը նկատում է, որ տղայի ուրախությունը տխրության փոխվեց, հարցնում է՝ ի՞նչ եղավ: Ռաֆիկն ասում է. «Շատ լավն է, բայց ոտքերիս շատ է մեծ»: Հայրն ասում է. «Ո՛չինչ, քե՛զ մատաղ, ձմռանը բրդե գուլպայով կհագնես, ոտքիդ իսկական կլինի»...

252. Մուսաննան ռուսաց լեզվի ուսուցչուհի է և շատ պահանջկոտ: Ինքն էլ շատ բարձրաձայն է խոսում: Փոքրիկ Մնացականը տանը սիրված երեխա է, սովոր չէ, որ իր հետ բարձր խոսեն, բայց

ռուսերենից թույլ է: Ուսուցչուհու ասածը չի հասկանում, դրա համար էլ նեղարտվում է: Մի անգամ Սուսաննան հարցնում է նրա ազգանունը, երեխան լռում է: Նորից է բարձրաձայն հարցնում: Երեխան գլուխը կախում է ու լռում: Հաջորդ օրը չի ուզում մանկապարտեզ գնալ: Հայրը մի կերպ համոզելով, ուշացումով տանում է: Մանկապարտեզի հենց միջանցքում լսելով Սուսաննայի ձայնը՝ երեխան լացելով ասում է. «Չեմ գնում, նա ինձ ծեծում է»: Հայրը ներս է մտնում, դժգոհում, քե՛ ինչո՞ւ եք իմ երեխային ծեծում: Հավաքվում են նաև մյուս ուսուցչուհիները, ասում, որ Սուսաննան լավ մանկավարժ է: Ընկեր Ջինան բացատրում է, որ Սուսաննան ընդհանրապես չի ծեծում երեխաներին, պարզապես բարձր է խոսում: Փոքրիկ Սվետան, որ Ջինայի կողքը կանգնած լսում էր, ասում է. «Ընկե՛ր Ջինա, որ դու ինձ ծեծում ես, ես իմ մամային չեմ ասում. ես խելոք եմ, չէ՞»...

253. Հարազատներով հավաքվել են: Գյուղի ձևով տղմա են եկել, ուտում են՝ հիշելով անցյալից հետաքրքիր դեպքեր: Արուսը պատահաբարով դանդաղ շուռումուռ է տալիս տղման ու տխուր մտաբերում. «Գոհար այան տղմա շատ էր սիրում»: Տղան՝ Մայիսը, նոր էր նշանվել: Խնամիները մի օր հյուր են կանչում Ներքին Շեն: Հարսնացուն՝ Սուսանը, իմանալով այայի մասին, լավ տղմա էր եկել: Ամեն մեկին մի աման լցնում է, դնում սեղանին, պատահաբար էլ կողքը: Բոլորը հաճույքով ուտում են ու զրուցում: Տղան նկատում է, որ այան չի ուտում: Ջարմացած հարցնում է. «Այա՛, խե՞ չես օտում, քո սիրած տղմայից ա»: Գոհար այան մատով ցույց է տալիս ափսեի մոտ դրված պատահաբար ու կամաց ասում. «Պա վախում եմ քեռանս ծակի»...

254. Վարաչինարցին խոսքանից վերադառնում է: Չմռանը մի տղա է ծնվում: Որոշում է անունն Իգոր դնել. ասում է՝ իմ խոսքանի կոլխոզի նախագահի անունն է, շատ լավ մարդ է: Երբ գնում են զագա՝ ծննդյան վկայականը գրելու, այնտեղ առարկում են, քե՛ պիտի հայկական անուն դնես, Իգորն ի՞նչ անուն է: Նա զայրանում է, ասում. «Ա՛, դուք էլ անունից ի՞նչ եք հասկանում. մի խոսքան ա իլել, մի Իգոր Իվանովիչ, պետք ա իմ տղայի անունն էլ Իգոր դնեմ»:

255. Մոսկվայում ամեն անգամ Վահրամիս հյուր կանչելով, քույրն իսկույն ասում է՝ ինչ լավ ա, եկար, պահարանի դուռը պոկվել է, կամրացնես: Կամ՝ լվացքի մեքենան փչացել է, մի կնայես: Միշտ

այդպիսի մի գործ «հանձնարարում է»: Եղբայրը կատակում է, քե՛ հենց որ տանը մի գործ է լինում, իսկույն ինձ հյուր ես կանչում: Մի օր էլ քույրը զանգում է, քե. «Վահրա՛ն, որևէ գործ չկա. ուղղակի՝ խորոված ենք անելու, կեսօրին անպայման կգաս, բայց... էլեկտրոդրեկն էլ հետդ կբերես»...

256. Գազոն Մոսկվայում է ապրում: Մի օր համագյուղացիներից մեկը գնում է Մոսկվա: Դե, գնացողներից շատերը, ծանոթ, քե անծանոթ, նրա տանն էին մնում: Այդ ընկերն էլ գնում է, զանգում Գազոյին, քե՛ գյուղից եմ եկել, մնալու տեղ չունեմ: Գազոն ասում է. «Ցավդ տանեմ, աշխատանքի մեջ եմ, չեմ կարող գալ: Դու գնա մեր հասցեով, դռան դիմաց մի պոլի շոր կա գցած, բանալին այդ փալասի տակ է, դուռը բացիր, ներս մտիր, ազատ հանգստացիր, ես երեկոյան կգամ»: Ընկերն այդպես գնում է, մտնում տուն, հանգստանում, իսկ երեկոյան զարմացած հարցնում է Գազոյին. «Աբա՛, սա մեր գյուղն ա՞, որ բանալին դրել ես դռան փալասի տակ. բա որ մի պատահական ռուս իմանա՞ տեղը»: Գազոն հանգիստ պատասխանում է. «Անհոգ մնա, ռուսը շատ ա՞ հասկանում, քե դռան փալասի տակ բանալի կլինի»...

257. Նազարանց Սինասն իր կին Ժենիկի հետ գնացել էին Կիրովաբադ: Երկար շրջում են քաղաքի խանութներում: Ժենիկը մի տեղ փողոցում ամուսնու ակամեջին «ինչ-որ բան» է ասում: Սինասը ոգևորված ձեռքով ցույց է տալիս կնոջ ուզած մոտակա «օբյեկտը» և ասում. «Հրե՛ն, տեսնո՞ւմ ես, 2 դուռ կա, մեկի վրա գրված է Մ, մյուսի վրա՝ Ժ: Մ-ն Սինասի համար է, Ժ-ն՝ Ժենիկի համար, արխային գնա էն-տեղ»...

258. Վալոդը գյուղից տանձ է տանում Կիրովաբադ՝ վաճառելու: Շոգ օր էր, հաճախորդ չկար: Վալոդը ձանձրացած սկսում է հաճախորդ կանչել-հրավիրել. «Այ լավ տա՛նձ, եկեք, տանձ առեք, տարեք, կերեք»... Մի կին մոտենում է Վալոդի կողքը կանգնած վաճառողին, տանձերը տնտղում, երկար նայում, դժգոհ ասում՝ լավը չի: Վալոդն ասում է. «Ա՛յ տոտա, իմ տանձն առեք, շատ համով ա, կերեք, կհամոզվեք»: Այդ կինը զայրացած ձեռքի «սումկայով» խփում է Վալոդի գլխին, ասում. «Տա՛ր՝ քո այան օտի, հողեն կիլիխը»:

259. 9-րդ դասարանում էինք սովորում: Մի օր Բուզլուխ վերադառնալու ժամանակ Ղարդաղուզի ձորում հանդիպեց Մակրտումանց

Ամիրխանը: Խնդրեցինք, որ պատմի իր ու իր եղբայր Փաշայի քաջքի պատմությունը: Ու նա պատմեց. անհատական ժամանակ էր: Մենք ոչխար շատ ունեինք, ես ու իմ եղբայր Փաշան հերթով պահում էինք: Հերթով էլ գիշերը գոմում պահակություն էինք անում: Այդ օրն իմ հերթն էր: Ոչխարը լցրի գոմը, ներսից դուռը փակեցի, փխտուրը վառեցի, իմ թախտի վերևից կախեցի ու պառկեցի, որ քնեմ: Համան մոտս էր: Տեսա, որ խանգարում է, գոտիից հետ արի, սյունից կախեցի, պառկեցի: Դեռ չէի քնել, մի ձեռն եկավ. «Ա՛յ Ամիրխան, եկ թաժա հաց ուտենք»: Աչքերս բացեցի, զարմացած չորս կողմս նայեցի, լրիվ մութ էր, փխտուրը հանգցրած: Նորից նույն ձայնով կանչեցին. «Ա՛յ Ամիրխան, եկ թաժա հաց ուտենք»: Մտածեցի, որ երևի Դադունց քաջքն է, եկել է, որ ինձ տանի: Ինքս ինձ ասեցի՝ դաման վերցնեմ, դեպի իրեն գնամ: Տեսա՝ դաման չկա: Իսկ ձայնն անընդհատ կանչում էր: Թախտից մի փայտ պռկեցի, դեպի գոմի ծայրը գնացի: Մեկ էլ տեսա՝ գոմի մյուս ծայրից է ինձ կանչում: Շրջվեցի, ոչխարներին կոխկրտելով գնացի գոմի մյուս ծայրը: Տեսա՝ նորից հակառակ կողմից է ձայն տալիս: Էնքան էս կողմ, էն կողմ վազեցի, քրտնեցի, ջրի մեջ կորել էի: Չգիտեի, թե հետո ինչ է կատարվում: Ասացի՝ ոնց ուզում ա լինի՝ սրան պիտի բռնեմ: Չայն տվի, ասացի. «Էհե՛յ, հըըը, հըըը, խոզին մազը, ռեխդ իմ պէլին հաջա... որ բռնեցի, մեջադ շախկա եմ տլական»: Չեքս էս կողմ, էն կողմ գցեցի, վերջը մթության մեջ բռնեցի: Չեռքիս լատանը բարձրացրի, որ խփեմ, սպանեմ, նա հարայ տվեց, թե. «Ա՛ քեզ թաղեմ, ես եմ է՛, քո ախպեր Փաշան եմ»... Չայնից ճանաչեցի, որ եղբայրս է, մի քիչ խեղդեցի, հետո ջղայնացած ասացի. «Դե, որ տհենց ա, իմ փոխարեն դու պիտի էստեղ մնաս, ես գնում եմ տուն»... Պարզվեց, որ նա երդիկով մտել է գոմը, իմ դաման վերցրել, փխտուրը հանգցրել, սկսել ինձ հետ էղպիսի խաղ խաղալ:

260. Ես, կոշկակար Էդիկը, պտուղների կետի վարիչ Վալողը, ճաշարանի վարիչ Վաղաշը, փոշտի Միխայելը, գյուղատվետի աշխատողները հաճախ հավաքվում էինք, միասին ճաշում: Որոշում էինք, թե ով ինչ պիտի բերի իր հետ: Վալողը միշտ ասում էր՝ կրակը ինձանից, որ ծախս չանի՝ Մի օր գնացի մասվաճառի մոտ, ասացի. «Իսակ

* Դե, պտուղները չորացնելու համար պետությունը նրան փայտ էր տալիս, որ վառեն (ծ.կ.):

դայի, Վալոդը քեզ բան չի՞ ասել: Նա ասաց. «Չէ՛, ի՞նչ պիտի ասեր»: Ես ասեցի. «Վալոդն ասել ա՛՝ Իսակ դայու հետ խոսացել եմ, որ ուր կիլո միս տա»: Իսակ դային ասաց. «Կարող ա՛՝ ասել ա, մոռացել եմ, քեզ մատաղ»: Եվ կշռեց, ուր կիլո միս տվեց: Միսը բերեցի, տվեցի Վալոդին, ասացի. «Մի լավ բասրմա կանես քո հալալ ապրանքի նման, կեսօրին խորովես, որ գանք, ընկերներով ուտենք»: Նա ուրախացած ասեց՝ աչքիս վրա: Դե, մեզ սողան օտող, վեսկուտ կրծող աղջաղեցի են ասում, առանց խորովածի հաց չենք ուտում:

...Մի քանի օր հետո Իսակ դային գյուղամիջում հանդիպում է Վալոդին, ասում. «Էն փողին պատառը տալիս չե՞ս»: Նա զարմացած հարցնում է՝ ի՞նչ փող: Իսակը պատասխանում է. «Էն որ ուր կիլո խորովածի միս ես տարել»: Վալոդն ասում է. «Հա՛, մոռացել էի»: Փողը տալիս է ու ծիծաղելով ասում. «Դա Շիմշադի սարքած գործն է»:

261. Մինասն ու Վալոդը հարևաններ էին: Մինասը գյուղի էլեկտրիկն էր, Վալոդը՝ փոստի պետը: Մի առավոտ աշխատանքի գնալիս հանկարծ Վալոդը նկատում է, որ Մինասը էլեկտրասյունից կախված ճոճվում է: Արագ մի քանի տղամարդ է հավաքում, ներքևում գորգը բռնած պահում են, «ռուբլինիկից» հոսանքն անջատում, Մինասն ընկնում է գորգի վրա: Ինչ որ պետք է՝ կատարում են, կյանքը փրկում: Մինասի կին Ժենիկն ուրախացած ասում է. «Ապրես դու, Վալոդ, քեզ մի պաղարկա եմ տրական»: Դեպքն էլ է մոռացվում, «պաղարկան» էլ: Բայց ամեն անգամ հենց որ Մինասը խմած գալիս է տուն, կովում Ժենիկի հետ, Ժենիկը հարայ է տալիս. «Քեզ քաղեմ, Վալոդ, խե՞սքան ազատեցիր»: Հարևան Վալոդը միշտ լսում է, մի օր էլ ասում է. «Ա՛յ Ժենիկ, լավ պաղարկա ես տալիս. հալքաք մի հետ էլ Մինասը ստոլիք կախ կլինի, ես կգիդամ՝ հինչ անեմ»...

262. Վալոդը Օրենբուրգից զանգում է Շահումյանի շրջկենտրոն, խնդրում, որ միացնեն Ղարաչինարի փոստը: Երբ միացնում են, նա ռուսերեն ասում է՝ միացրեք 1-84: Հեռախոսավարուհի Վերոն, որ հենց Վալոդի կինն էր, անտարբեր ձևով զանգում է այդ համարին, ասում՝ պատասխանող չկա: Վալոդը նորից է խնդրում, ասում՝ նորից փորձեք 1-84: Վերոն նորից է զանգում այդ համարով ու դժգոհ ասում. «Ա դե, պատասխանող չկա, լի, տանը մարդ չկա»: Վալոդը կնոջ ձայնը ճանաչում է, հարցնում. «Վերո՛, էդ դու ե՞ս»: Կինն ասում է. «Հա՛, Վալոդ, դու ե՞ս»: Վալոդն ասում է. «Ախճի՛, պա վար դու փռչտումն

ես, ես էլ խոսանում, մեր տանը հո՞վ պիտի պատասխանի»...

263. Գառնիկը նոր էր Երևանում աշխատանքի ընդունվել որպես տարբու վարորդ: Փողոցում մեքենայի մոտ կանգնած ծխում էր: Մի երիտասարդ կին մոտենում է, ուշադիր նայում Գառնիկին էլ, մեքենային էլ, հետո հարցնում՝ քո՞նն է: Գառնիկն ասում է՝ հա: Կինը հարցնում է. «Գառնի չե՞ս տանի»: Գառնիկն ասում է. «Կտանեմ էլ, կբերեմ էլ, եթե փողը տաս»: Հարցնում է. «Ի՞նչ պիտի տամ»: Գառնիկն ասում է՝ 10 ռուբլի: Նստում են, գնում Գառնի՝ նրանց տուն: Կինը դուռը բացում է, մտնում են: Հյուրասիրում է սուրճ ու միրգ: Հետո էլ ասում է. «Մի քիչ հանգստացիր, միասին հետ կգնանք: Գառնիկը սենյակները դիտում է, մեծ, գեղեցիկ տուն էր, կինը մենակ էր ապրում: Հետո իջնում է այգի, շրջում ծառերի տակ: Կինը մի ժամ ներսուդուրս է անում, մեկ-մեկ հարցնում. «Ո՞նց է, լավ տեղ է՞»: Գառնիկն ասում է. «Հա, ամեն ինչ շատ լավ է»: Վերջը կինը նստում է մեքենան, ասում. «Քչի՛ր, գնանք Երևան»: Տեղ են հասնում, կինը հանում է, 10 ռուբլի տալիս, ասում. «Էս քո ասած փողը, — հետո էլ 5 ռուբլի է տալիս, ասում, — էս էլ զարի կառնես, ուտես»...

264. Ներքինչենցի Արկաղյան ամուսնացել էր վերինչենցի Իրայի հետ: Դե, ներքինչենցիներին «չեչեն» էին ասում, Վերին Շենում էլ Արկաղյային էին «չեչեն» ասում, մույն ձևով էլ՝ կինն ամուսնուն: Մի անգամ Ռուսաստանում նրանք ամուսիններով գնացքով տեղ էին գնում: Վագոնի հարևաններն սկսում են միմյանց հետ ծանոթանալ: Արկաղյային հարցնում են՝ ի՞նչ ազգից ես: Իրան իսկույն ասում է՝ չեչեն: Հարևաններից մեկը, որն իսկապես հենց չեչեն էր, ոգևորված սկսում է ինչ-որ բաներ ասել իրենց լեզվով: Արկաղյան ռուսերեն պատասխանում է, որ չի հասկանում նրա լեզուն: Հարևանն էլ զարմանում է, քե չեչեններն է, ո՞նց չի հասկանում: Իրան ծիծաղելով ասում է. «Օն արմյանսկի չեչեն»...

265. Արմենն Ալավերդի քաղաքում պատահաբար ծանոթանում է ներքինչենցի Սերգեյի հետ: Սերգեյը նրան հրավիրում է իրենց մոտ՝

* Այս իրական դեպքի մասին Գառնիկն ինքն է պատմել ընկերների մոտ: Նա վաղուց արդեն տարիքն առել է, բայց ընկերները միշտ հիշում են այդ դեպքն ու ծիծաղում: Իսկ Գառնիկն ամեն անգամ արդարանում է. «Ախր դուք չգիտեք, է, մեր դիրեկտորը զգուշացրել էր, որ ամեն տեսակ բան պատահում է, չխաբվենք»... (ծ.կ.):

Այրում: Յույց է տալիս հարմարավետ սեփական տունը, ընդարձակ այգին, որտեղ ամեն տեսակ պտղատու ծառ կար: Եվ ակամայից ասում է. «Ա, կինս այգու բոլոր կողմերում սողան ա վարում ամեն տարի. ինչքան ասում եմ՝ բոլ ա, էդքան սողանն ո՞ւմ ա պետք, հնար չկա, էլի բախճան սողանավ լցնում ա»... Արմենը հարցնում է. «Լսի՛ր, կինդ կարող ա՞ Ղարաչինարից ա»: Սերգեյն ասում է. «Հա՛, բա դու ի՞նչ գիտես»: Արմենն ասում է. «Բա դու չգիտե՞ս, նրանց գերբը սողանն ա»...

266. Ղարաչինարցու քոռ Լուսինեն ծաղիկներ շատ էր սիրում: Գարնանը տարբեր ծաղիկների և գազոնային խոտի սերմեր է բերում, որ Մոսկվայում իրենց սեփական տան դիմացի ազատ տարածքն իր ճաշակով գեղեցիկ ձևավորի: Աշխատանքից վերադառնում է, տեսնում՝ տատն ամբողջ տարածքում սոխ է ցանել: Դժգոհ ասում է. «Բարո՛, ըստեղ էլ ե՞ս սողան վարել, քոդ արա գոնե մի քիչ տեղ մնա, գազոն սարքենք»: Տատը հանգիստ պատասխանում է. «Ա՛լ քեզ մատաղ, գազոնն ուտլական ե՞ս»...

267. Վահրամը գնում է ղարաչինարցի պապիկին տեսության: Հետը մի երկու կիլո բանան է տանում, մտածելով, որ հաճելի բան է, ուտելն էլ հեշտ կլինի: Պապն ասում է. «Դեղոն քեզ մատաղ ինի, սա բերել ես, հի՞նչ անես, սրա փոխարեն մի կապուկ կանաչ սողան կբերեիր»...

268. Դավիթը, որի պապը Ղարաչինարից է, պատմում է, որ ամբողջ բնակարանում որտեղ նստում են, սոխի հոտ է գալիս: Ստուգում են, տեսնում՝ պապը դիվանի մեջ, պահարանի խորքում, սեղանի դարակներում, տարբեր տեղերում «գապաս» սոխ է պահում: Երբ զարմացած հարցնում են, քե ինչու է դրել այդ տեղերում, նա բացատրում է. «Ձեզ համար սողանը եղած-չեղած մի հաշիվ ա, կարող ա պրծնի, մոռանաք առնեք, ես իմ գապասը պահում եմ»...

269. Լյուբան ամուսնու հետ վաղուց Ռուսաստանում է ապրում: Երեխաները մեծացել, առանձին ընտանիքներ են կազմել, հիմա էլ քոռներին են մեծացնում: Երևանից մանկական մի ուսանավոր է հիշում: Փոքրիկ Նորոյին ծնկանը նստեցրած ուսանավոր է ասում.

Ծափիկ, ծափիկ, ծափանիկ,
Ունեն տատիկ ու պապիկ,

Տատիկս ճաշ է պատրաստում,
Պապիկս փայտ է կտրատում...

Նորիկ պապիկը, կողքից կատակով լրացնում է. «Փայտ էլ եմ կտրտում, ճաշ էլ եմ պատրաստում, շուկա էլ եմ գնում»...

270. Դոնարի տատը ծերացել էր, վատ էր լսում: Թոռները տանը հավաքված բարձրաձայն զվարճալի պատմություններ են անում ու ծիծաղում: Տատն ասում է. «Դոնա՛ր, աղջի՛, էդ հի՞նչ եք խոսում, սկանում չեմ»: Դոնարը բարձրաձայն կրկնում է տատի համար, ու նորից երեխեքով շարունակում են իրենց ուրախ գրույցը: Տատը նորից է հարցնում. «Դոնա՛ր, քե՛զ մատաղ, էդ հի՞նչ եք խոսում»: Երբ այդպես մի քանի անգամ կրկնվում է, խեղճ տատի զահլեն գնում է իր ականջից, ինքն իրեն ասում է. «Թու՛, ունգունումս օխտը շենու շոն քաքի»... Բոլորը բարձրաձայն ծիծաղում են տատի այդ պատկերավոր խոսքի վրա:

271. Ներքին Շենի բաղնիքը գետի վրա էր կառուցված: Գետից ջուրը լցվում էր խոշոր չանի մեջ, տաքացվում, ուղղվում դեպի լողախցիկները: Մի ձմեռ ուժեղ ցրտեր են լինում, չանի ջուրը սառչում է, ոռչում, տակը պոկվում է: Մի քանի օր բաղնիքը չի աշխատում: Դե, այն ժամանակ դա շրջանի միակ բաղնիքն էր, ղեկավարները և բնակիչներից շատերը, հատկապես ծառայողներն ու շրջանի հյուրերը դրանից էին օգտվում: Իսկույն բողոքի բազմաթիվ հեռագրեր են ուղարկում Բաքու: Բաքվի ղեկավարությունը հեռագիր է ուղարկում շրջանի կոմունալ բաժին և պահանջում բացատրել, թե ինչու բաղնիքը չի աշխատում: Բաժնի վարիչը զանգում է բաղնիքի աշխատող Բալունգ Արտոյին, հարցնում պատճառը: Արտոն պատասխանում է. «Չուրը սառել ա, չանին վեղը տրաքել ա, սարքում ենք»: Վարիչը տեղում տեղը նույն ձևով քարգմանում է, հեռագրի պատասխանն ուղարկում մինիստրություն: Այնտեղից կապվում են շրջանի ղեկավարի

* Շատ տարիներ հետո Ռուսաստանում մեծացած թոռները վերիշում են տատի այդ խոսքերը, և ամեն մեկը փորձում է տատի ասածը բարգմանել ռուսերեն: Թող ընթերցողը պատկերացնի, թե ինչ կլինի ստացված... Մի հավաքույթի ժամանակ, երբ պատմեցին այս ամենը, Լաուրան ասաց. «Իմ տատը հաճախակի մի հետաքրքիր խոսք էր ասում. «Հողս շաշ վեդիդ»: Ո՞վ կկարողանա բարգմանել»... (Ծ.կ.):

հետ, ասում. «Մեզանով տնագ ե՞ն արել, էդ ի՞նչ պատասխան են ուղարկել»...

272. Տնեցիներով հավաքված գրուցում են: Մարուսյա տատիկն ասում է. «Փառք Աստծո, լավ ենք, տղաս ու հարսս շատ լավ պահում են ինձ, ամեն ինչ յուր են տանում, բայց ավստո՛ւ՝ ականջներս փակվել են, չեմ լսում»: Հարսը՝ Բելան, ասում է. «Ա՛յ մամ, բա դրա համար ենք լավ, էլի»...

273. Կոլի դային կիսագրագետ մարդ էր, բայց սիրում էր գեղեցիկ ճառեր ասել: Մարտի 8 -ին կոլխոզի կյուբում հանդիսավոր ժողով էր: Հերթով ելույթ են ունենում տղամարդիկ, գովում կանանց, պատմում, քե որքան եռանդուն ու աշխատասեր են, մեկ-մեկ քվարկում են կանանց աչքի ընկած գործերը: Կոլի դային վեր է կենում, ասում. «Լոխդ դուրդ եք ասում, ամա ես օգում եմ կնանուցը մեղ-մեղ տեղերի մասին խոսամ, գլխավորը դա ա»: Բոլորը փոքկացնում, ծիծաղում են, իսկ նա հանգիստ շարունակում է պատմել, քե կանայք ինչքան մեղություն են քաշում տանը, բոլոր հոգսերը նրանց վրա են...

274. Ներքինչենաի Վարդանուշ բիբին կարպետները լվացել էր, դրել առվի ափին, կողքը նստել: Ծանր էր, չէր կարողանում տանել: Այդ պահին Սլավիկն էշին նստած անցնում է առվի մոտով: Վարդանուշ բիբին ասում է. «Սլավիկ, մատաղ ինեմ քեզ, էշը քեք, կարպետները դնենք վրան, տանենք մեր տուն»: Սլավիկը կամակոր երելսա էր, ասում է՝ կարալ չեմ: Վարդանուշ բիբին փորձում է համոզել, ասում է. «Արա՛, պա համութ չի՞, մենք խնամի ենք»: Սլավիկը հանգիստ պատասխանում է. «Ա՛, էշը շատ ա՞ գյուղում, վար մենք խնամի ենք»...

275. Մեր փոստատարը Կիրովաբաղում մի տարեց մարդ էր, Հայաստանից եկած: Օրերով քերթ չէր քերում: Մեկ էլ գալիս էր՝ բերելով նույն քերթից՝ մի դաստա: Մի օր ասացի. «Ա՛, սենցի բան կանե՞ն, մեծ մարդ ես, համութ չի՞»: Նա հանգիստ պատասխանեց. «Պա հու՛նց չի համութ»...

276. Միրայի ամուսինը Երևանից գնում է գյուղ: Օնիկը հյուր է կանչում իրենց տուն և ուզում է երևանցի փեսայի մոտ գրական լեզվով խոսել, կնոջն ասում է. «Լյո՛ւբա, կուրա-կիրա պատրաստիր, ուտենք»...

277. Մեր գյուղերում տարածված հայիոյանք կար, ասում էին՝ քո իլած սիաթը... Բռնագաղթից հետո Տոլիկը մի որոշ ժամանակ Երևանում ապրում է բաջանաղի տան հարևանությամբ: Հաճախ կատակներ էին անում, և երևանցի բաջանաղն անընդհատ Տոլիկի հոգու հետ խաղում էր: Այդպես մի ջղայնացած պահ Տոլիկն ուզում է գրական լեզվով սլաոտասխանել, ասում է. «Ա քո եղած ժամացույցը մզովա՞ծ»...

278. Մանկապարտեզում քնի ժամ է: Երեխաները բոլոր խմբերում պառկել են, քնել: Չինան մտնում է կողքի խումբը, տեսնում՝ ընկերուհիները նստած ճաշում են, սեղանին էլ մի մեծ շիշ կա: Ասում են՝ մաճառ է, կխմե՞ս: Չինան ասում է. «Փոխանակ հարցնելու, բաժակը լցրեք, ասացեք՝ խմիր»: Ընկերուհիները ծիծաղում են և մի մեծ բաժակ լցնում, տալիս իրեն: Չինան հանգիստ խմում է ամբողջը և զգում է, թե ինչպես միանգամից կոկորդն էլ, գլուխն էլ սկսեց տաքանալ: Դեռ բաժակը ձեռքին կանգնած, հանկարծ նկատում է, որ երեխաներից մեկն արթնացել է, տեղաշարժի մեջ նստել: Անկախ իրենից ասում է. «Ի՛, է՞ս ինչի ա արթնացել էս ալկաշը»: Զգիտես ինչու՝ հենց այդ բառն է քերանը գալիս և խմբովին ծիծաղում են...

279. Էլոն շատ բարի կին էր և լավ բուժույր: Երեխաները սովորաբար սրսկվելուց վախենում էին, բայց եթե սրսկողը Էլոն էր լինում, չէին լացում: Մտածում էին, որ եթե Էլոն սրսկի, չի ցավելու: Նրա ամուսին Բորիկն էլ գյուղի լավ պլոտնիկներից էր, շատ բարեկամասեր մարդ և արդարամիտ: Երբ մի անարդար կամ սխալ բան էր տեսնում, ջղայնանում էր: Բոլորն այդ մասին գիտեին: Նրանց աղջիկ Գայանեն ամուսնացավ: Հարս ու կեսուր իրար հետ լավ լեզու էին գտել, ապրում էին շատ համերաշխ: Բայց մի անգամ մի պատահական առիթով Գայանեն վիճում է կեսուրի հետ: Կեսուրը զարմացած ասում է. «Աղջի՛, պա ես քո մայր Էլոյին թամահ արի, քեզ ուզեցինք, չիմացանք, որ տհեճի լեզու ունես»: Գայանեն «արդարանում է».

«Պա գիդացել չե՞ք, որ էդ դաթումը Բորիկ էլ կա»...

280. Յուրան իրենց շրջանից մի աղջկա Երևանում տեսել էր, հավանել: Գնում է գյուղ, տնեցիներին հայտնում այդ մասին: Մայրն ասում է. «Պիտի գնամ նրանց գյուղը, հարցուփործ անեմ, տեսնեմ՝ կարգին մարդիկ ե՞ն»: Գնում է հարևան գյուղ, ճանապարհին մի պատահական կնոջ հարցնում. «Մովսեսի տունը ո՞րն ա»: Այդ կինը տան

տեղը ցույց է տալիս և հարցնում. «Ո՞վ ես, ինչո՞ւ ես գնում»: Նա «բացատրում» է. «Ախր մեր էծերը կորել են, լսել եմ, որ նա ա գողացել»: Անծանոթ կինը ծիծաղելով ասում է. «Աղջի՛, խն-խն խոսալ մի, մեր գյուղում նրանց նման լավ ընտանիք չկա, քեզ խաբել են»: Մայրը հետ է դառնում, պատրաստություն տեսնում. և մի գեղեցիկ օր գնում են խոսք առնելու: Ընդունված կարգի համաձայն՝ իրենց հետ քաղցրավենիք ու խմիչք էին տարել, հետն էլ՝ մի լավ խոշոր «բոմբոներկա»: Իրենց հետ տարածը թողնում են առաջին հարկում, իրենք բարձրանում երկրորդ հարկ՝ ծնողների հետ խոսելու: Տան մյուս ջահելներն անհամբեր սպասում էին, որ «բանակցություններն» ավարտվեն, քաղցրավենիքը բացեն, ուտեն: Շատ որ ուշանում են, ասում է. «Ես բարձրանամ դռան մոտից լսեմ, քե ինչ են խոսում»: Գնում է, հետ գալիս, անտրամադիր հայտնում. «Ինչքան հասկացա՝ էս քերածը նույնությամբ հետ են տանելու, բերեք թաքուն բացենք կարոֆկան, գոնե այդ կոնֆետի համն իմանանք»: Այդպես էլ անում են՝ բացում են, մի մասն ուտում, մնացածը նույն ձևով փակում: Խստապահանջ ծնողները սկզբից «չէ» են ասում, բայց հետո համաձայնում են, որովհետև տեղեկանում են, որ լավ տղա է, իրենց աղջիկն էլ նրան հավանում է:

281. Լենան անցյալից մի դեպք է հիշում և զայրացած ասում. «Ձինավերը խորըզնդատ ինի, փիս մարդ էր»: Ամուսինը կողքից հորդորում է. «Աղջի՛, էն մարդը մեռած ա, ասիլ մի»: Լենան բորբոքվում է. «Հա՛ է, դյուզ ես ասում, ամա ցեխս նրա գլխին, փիս մարդ էր»...

282. Մաքունց Նախշունը խանում-խաթուն կին էր, բոլորի կողմից հարգված: Մի անգամ հյուր էր գնացել իր եղբայր Ղարայի տուն: Ջահելները սիրով շրջապատում են, խնդրում, քե՛ անցյալից մի հետաքրքիր բան պատմիր: Նա սկսեց այսպես. «Աղջիկ էի, ջահել սիրուն աղջիկ: Ամառվա օր էր: Տեղաշորը գցել էի մեր սրահի վրա, երեխեքիս հետ պառկել. Մուխին ու Մակրտումը՝ վրտնատակավրս, Սաքին՝ կողքս»... Նունիկը ընդհատեց նրա պատմությունը, զարմացած հարցնելով. «Նախշո՛ւն աքա, խե՞՞ծեր ժամանակին ջահել աղջիկները 3-4 երեխա են ունեցել»...

283. 1936 թ. Սերգի ամին ինչ-որ գործով գնում է Գանձակ (արդեն Կիրովաբադ էին ասում): Երիտասարդ կնոջն էլ՝ Մարալ ազիին

հետը տանում է: Իր գործը վերջացնելուց հետո կնոջն ասում է. «Հազիվ մի անգամ հաջողվել է, քաղաք ես եկել, արի՛, քեզ տանեն մի լավ բժշկի մոտ՝ սուուգման»: Գնում են: Բժիշկը տղամարդ էր, և Մարալ ազին գլուխը կախած, ամաչելով էր հարցերին պատասխանում: Բժիշկը հարցնում է. «Բանի՞ երեխա ունես»: Մարալ ազին մատերը ծալելով քթի տակ կամաց հաշվում է՝ Լուսիկը, Վանոն, Անուշը, Սիրանը, Վաղոն, Բենիկը և պատասխանում է՝ վեց: Բժիշկը զարմանում է, որ այդքան երիտասարդ վեց երեխա ունի, և հարցնում է՝ քանի՞ տարեկան ես: Մարալ ազին ասում է՝ տասնհինգ: Բժիշկը բարձրաձայն ծիծաղում է, ասելով. «Լավ ես հասցրել 15 տարեկանում 6 երեխա...»: Հետո Մերգի ամին բացատրում է, որ 15 տարեկանում ամուսնացել են, և նա միայն այդ քիվն է լավ հիշում...

284. Շատվերյան Ջարմիկը մի քաթոխալ օր տավարի օչրեղ է գնում: Փակի քոլն էր տարել: Որոշ ժամանակ անց նայում է ժամացույցին, տեսնում՝ 5 -ին է մոտենում: Տավարն ուզում է գյուղ տանել, չեն գնում, մահակն առաջն է անում, զոռով իջեցնում գյուղ: Գյուղի ծայրին՝ Ռիկին կշտին, ընկերը հանդիպում է, զարմացած հարցնում. «Ա՛յ Ջարմիկ, կովերը խե՞ ես էսքան շուտ բերել»: Ջարմիկն ասում է. «Բա ժամը 5 -ը չի՞»: Ընկերն ասում է. «5 -ը ո՞րն ա, նորա 2 -ը դառել»: Ջարմիկը գլուխն օրորելով գնում է տուն, բակից ձայն է տալիս կնոջը. «Աղջի, Կիմա՛, մի մեր չաբուճը բեր»: Կինը մուրճը բերում է: Ջարմիկը ժամացույցը ձեռքից հանում է, դնում քարի վրա, մուրճով խփում, ջարդում: Կինն ապշած հարցնում է. «Արա՛, խե՞ տհենց ես անում»: Ջարմիկն ասում է. «Բա Սովետի երկրում մենակ ժամացույցին եմ հավատացել, հիմա սա էլ ա ինձ խաբում»:

285. Շրջանի ինքնապաշտպանության ծանր օրերն էին: Ժողովրդի ոչխարները պահելու «օչերեղը» Ռանտիկինն էր: Կեսօրին ոչխարները բերում է միգիլատեղը, ինքն էլ մի շվաքում նստում: Անցնում է մի քանի ժամ: Գնացող- եկողը դժգոհում է. «Ա՛յ Ռանտիկ, էս ոչխարները խե՞ չես տանում հանդը»: Նա ասում է. «Ա՛, տեսնում չե՞ք՝ գրադը վեր ա թակում»: Ջարմացած հարցնում են. «Արա՛, վախում ե՞ս»: Ռանտիկն ասում է. «Արա՛, դա շո՞ն ա, վար մհակավըս ռելիը թակեն, հետ դառնա»...

286. Մեր հայրենակիցներից մեկը Մոսկվայում ճաշի ժամանակ ասում է. «Էս անտեր քաղաքում մի կարգին մարդկային պանիր չկա»:

Տղան ծիծաղելով ասում է. «Այ մամ, շատ բան եմ լսած, ամա մարդկային պանիր առաջին անգամ եմ լսում»: Հաջորդ օրը մտնելով խանութ՝ նա հիշում է մոր խոսքը և վաճառողին ծիծաղելով ասում. «У вас нету человеческого сыра?»: Վաճառողը՝ տարեց ու փորձառու մի կին, իր հերթին ծիծաղելով ասում է. «Յավդ տանեմ, հայ ե՞ս, ի՞նչ ես ուզում»: Նա պատմում է մոր ասածը: Կինն ասում է՝ վաղը չէ, մյուս օրը կգաս, ստանալու ենք: Երիտասարդն այդ օրը գնում է: Վաճառողը ցույց է տալիս հայկական պանիր և ասում. «Այ սա է մամայիդ ուզածը, վերցրու»...

287. Սայունց Նարգիզն իրենց սրահի տակ «վեստան» էր դրել, գորգ էր գործում: Եվ որովհետև շատ շուտ էր պետք, հրավիրում է գյուղի մի քանի հմուտ գորգագործների, որպեսզի միասին գործեն, շուտ վերջացնեն: Օրվա վերջում Շուշին ասում է՝ վաղը կարևոր գործ ունեմ, չեմ գալու: Նարգիզն ասում է՝ դե , ոչինչ: Իսկ բաժանվելիս բռնորին ասում է. «Ա կնանիք, Վասիլը միս է բերել, էգուց մի լավ տոլմա եմ եփելու»: Դե, պակաս տարիներ էին, Շուշին ձեռքը քափ է տալիս, ասում՝ տանս գործը էն մի օրը կանեմ, էգուց ես էլ եմ գալու: Հաջորդ օրվա վերջում Նարգիզը նորից զգուշացնում է. «Ա՛ կնանիք, էգուց դա՛գը մորթելու եմ, մի լավ խոխտի սարքեմ»: Իսկ Շուշին ասում է. «Էգուց էլ եկա. իմ գործը ջհաննամը...»: Եվ այդպես, մի քանի օրվա մեջ մի հրաշալի գորգ գործեցին: Ավա՛դ, բազում այլ գորգերի, քանի-քանի արժեքների ու սրբությունների հետ այդ գորգն էլ մնաց հայաթափված շրջանում՝ բողնելով միայն տխուր հիշողություն...

288. Նեստն առաջին դասարանում էր սովորում: Առաջին անգամ ուսուցչուհին դաս է հարցնում, նա լավ չի պատասխանում: Ասում է՝ երկու ես ստանում: Երեխան չի հասկանում դրա իմաստը: Գնում է տուն, հայարտ-հայարտ մորն ասում. «Այ մամ, դասատուն ինձ դաս ա հարցրել, երկու եմ ստացել»: Մայրը ջղայնացած գլխին խփում է ու ասում. «Կիլիստ հողեմ, մաքամ լավ դալաք ես արել, լավ էլ պարծենում ե՞ս»: Տատն էլ չէր ջոկում քվանշանի լավն ու վատը, բայց որ նկատում է՝ հարսը երեխային խփեց դրա համար, կողքից դիտողություն է անում. «Ա կո՛ղ կոտրի, խե՛թ քակում ես քրխին. սօրի երկուս ա ստացել, էգուց էլ մեկ կստանա»...

289. Լոնդին Ասատուրը Վերին Շենում ակտիվ, գործունյա մարդ էր: Առևտուր էր անում, ամեն տեսակ գործ ձեռնարկում էր և լավ

ապրումսն ուներ: Գյուղում տարածվել էր, թե իբր նա յուրացրել է եղբոր գտած ոսկին: Տարիներ անց, բռնագաղթից հետո հաստատվել էին Կրասնոդարի երկրամասում: Երբ կինը մահանում է, Ասատուրը ողբալով ասում է. «Ա՛յ ժողովուրդ, գյուղում քյուռ ին քիցել, մաքամ ես վեսկի եմ քիթել: Սէ հա իմ վեսկին, իմ վեսկին ինքն ա իլել: Իմ աշխատածը տօն ա տիրել: Մըսլըհաթավ ապրել ենք»...

290. Բաբաքոյիսյանների մի ճյուղին գյուղում «խև» էին ասում: Մի անգամ կոլտնտեսության նախագահը՝ Բաբաքոյիսյան Գուրգենը, համագյուղացի Ասատուրին դատապարտում է, թե նա ինչ-որ վնաս է տվել կոլխոզին... Դատարանը քննում է գործը: Վեճ է առաջանում: Գուրգենը դատավորին ասում է. «Ա՛յ ընկեր դատավոր, սա խև ա է, խև»: Ասատուրն ասում է. «Ճիշտ ա ասում, ընկեր դատավոր, իմ այան դրանց ազգից ա՝ Բաբաքոյիսյան ա»:

291. Լևիկը չարածճի երեխա էր, դայրոցում պիոներ էին ընտրել, բայց վզկապը չէր կապում, ջոկատավարն անընդհատ ջղայնանում էր նրա վրա: Մի անգամ ջոկատավարը նկատում է, որ Լևիկը նորից առանց վզկապի է: Ջղայնանում է. «Ա՛յ տղա, հո՞ր ա վզկապդ»: Նա ասում է. «Իմ այան խլեղը կրկատել ա վզկապավս»...

292. Վերին Շենի դայրոցում բաց դաս էր: Ներկա էին դասավարներ տարբեր գյուղերից և ժողկրթբաժնի աշխատակիցներ: Թեման «Ճնճղուկն» էր: Որպես ցուցադրական սլարագա՝ ընկեր Արմիկն իր հետ բերել էր մի մեծ նկար՝ շուն և ճնճղուկ: Իսկ պայուսակի մեջ աննկատ դրել էր մի ճնճղուկ՝ ոտքը թելով կապած, որպեսզի անհրաժեշտ պահին ցույց տա, դասն ավելի հետաքրքիր դառնա: Դասի ժամանակ ցույց տվեց նկարի վրա շան մեծ պատկերը և ճնճղուկը՝ փոքրիկ ու անօգնական: Դաս լսողներն իրար հետ ոգևորված զրուցում էին բոլորովին այլ ինչ-որ թեմայով, ոչ ոք չէր հետևում դասին: Ճնճղուկի նկարը ցույց տալու ժամանակ Արմիկը կամաց բացեց պայուսակը, ճնճղուկը դուրս թռավ ու սկսեց քաածել դասարանում: Արմիկը թելի ծայրը պահում էր ձեռքի մեջ, մեծ իրարանցում սկսվեց, կարծես ռումբ պայթեց: Դաս լսողները վեր թռան: Աշակերտներից Զիլինգարյան Վազրիկը գոռաց. «Ինկեր, քները պուկ տուր»... Դաս լսողներից Միմոնյան Արմիկն ասաց. «Պետք է բոլորիս վախը հավաքելու փողը տաս»...

293. Փոքրիկ Անահիտը մի օր ընկեր Արմիկին ասաց. «Գիտե՞ս,

որ մեծանամ ինչ եմ դառնալու»: Նա հարցրեց. «Ի՞նչ ես դառնալու»: Երեխան ասաց՝ վարսավիր: Ընկեր Արմիկը շարունակեց. «Ինչ լավ կլինի, մազերս ձրի կկտրես»: Երեխան ասաց. «Ը՛մմ, էն վախտը դու մեռած ես լինելու իմ Աճի տատիկի մման»...

294. Ընկեր Արմիկը մի օր առաջին դասարանում դասի ժամանակ հարցրեց. «Լևո՛ն, եթե երկու խնձոր ունենաս, երկուսն էլ Ռոդիկը տա, ինչքա՞ն կդառնա»: Լևոնը պատասխանեց. «Ինկեր, տե՛նցի օրինակ կլինի՞, նա վար մեռնի էլ, ինձ խնձոր չի տա»...

295. Ընկեր Արմիկը փոքրիկ Մինասին հարցրեց՝ եթե հայրդ տասը ձմերուկ բերի, երեքը տաք տատիկիդ, քանի՞սը կմնա: Երեխան ասաց. «Բա մաման կթողա՞»...

296. Ալբերտը Բաքվից գյուղ է գալիս, հետը նաև երշիկ է բերում և կնոջն ասում է. «Մի կտորը կտաս մամայիդ» (այսինքն՝ իր գոքանչին): Իրենք երեկոյան ուտելը վերջացնում են, պառկում քնելու, բայց կինը, որ ուտելու հարցում թուլություն ուներ, չի կարողանում քնել: Մի քանի անգամ վեր է կենում, կամաց գնում խոհանոց, «գրադվում» իր սիրած գործով: Հաջորդ օրն աշխատանքից վերադառնալով, Ալբերտը կնոջը հարցնում է. «Էն կալքասը մամային ես տվե՞ր»: Կինն ասում է. «Պա հի՞նչ եմ ըրել»... Երեկոյան, երբ բոլորը հավաքվում են սեղանի շուրջը, և մայրն էլ ներկա է լինում, Ալբերտը դիտմամբ հարցնում է գոքանչին. «Էն կալքասը լավն է՞ր»: Աղջիկը կողքից հուշում է՝ այ մամ, ասա՛ հա: Զոքանչը զարմացած նայում է աղջկան և ամեն ինչ հասկանալով՝ ասում. «Ը՛մմ, բողազդ կրակ ա ինզել, չէ՞, լոխ կերել ես»...

297. ...Ռուսաստանում բռնի տեղահանված մի շահումյանցու հարկի տակ փոքրիկ Արայոնը մորից փող է ուզում, մայրն ասում է՝ օնեմ վէշ: Երեխան դժգոհ տոնով ասում է. «Լիհա տանան տյուս ես կյալիս, մի ժարոննիկ ինք կալած կյալիս: Մին էլ ես քինում, մին էլ մի ժարոննիկ ինք կալած կյալիս: Ամա վար փող եմ օգում, ասում ես՝ կա վեշ»: Տնեցիները ծիծաղում են, որ երեխան այդպես խոսում է գյուղի լեզվով: Պապն ասում է. «Էս քախան մենակ խաղալիս ա ռուսերան խոսում»...

298. Զարգարյան Արշակին գյուղում «Տոկի» էին ասում: Շրջկոմում հրահանգիչ էր և ապրում էր պետական բնակելի շենքում՝ Ներսեսի հարևանությամբ, որը կոմերիտշրջկոմի քարտուղարն էր: Նա

միշտ լավ գինի էր ունենում, բայց չէր բացում, պահում էր հատուկ հյուրերի համար: Մի անգամ Արշակն ընդմիջման ժամին Ներսեսից շուտ է դուրս գալիս գործի տեղից, մտնում է նրանց տուն, կնոջն ասում՝ Ներսեսը գնաց գյուղտովետ, ինձ ասաց՝ գնա մեր տուն, էն հարսին ասա, թող սեղան զցի, գինին բացի, ես շուտով կգամ: Կինը պարզամիտ և հյուրասեր էր: Իսկույն սեղան է զցում, գինին բացում: Արշակն սկսում է ուտել-խմել: Այդ պահին գալիս է Ներսեսը, կնոջ վրա զայրանում, թե՛ էդ ի՞նչ ես արել: Արշակը ծիծաղելով խոստովանում է, որ ինքն է խաբել...

299. Արշակը Բաբվում էր ապրում՝ «Էրմանիքենդի» շուկայի մոտ: Չվարճասեր էր ու լավ նվագում էր: Ինքն էլ, կինն էլ շատ հյուրասեր էին, լավ էլ հարմարավետ տուն ունեին: Գյուղից եկողը հյուրանոցի փոխարեն նրանց տանն էր մնում: Արշակը «Կոմունիստի» խմբագրությունում էր աշխատում և ամեն օր տուն գնալիս 2 հատ աղյուս և մի տոպրակ ավազ էր հետը տուն տանում: Իր մոտ եկողին էլ էր նույն ձևով փաթեթ տալիս, որ տուն տանեն: Մի անգամ համագյուղացի Գուրգենը գնում է նրա աշխատանքի վայրը: Արշակը փաթեթը տալիս է Գուրգենին, ասում՝ կտանես տուն, ես հետո կգամ: Գուրգենը տանում է, դնում նրանց պահարանի վրա: Արշակը գալիս է, տեսնում, ծիծաղելով դիտողություն անում, թե՛ սրա տեղը բակն է, ինչո՞ւ ես պահարանին դրել: Եվ ցույց է տալիս, թե մեջն ինչ կա: Գուրգենը, որ գյուղում քարհանքի վարիչն էր, զարմացած ասում է. «Այ քո տո՛ւնը շինվի, իմաց կտայիր, քեզ համար մի սամուվալ կուրիկ կրե՛րեի»...

Այդպես քիչ-քիչ հավաքելով, որոշ ժամանակ անց այնքան էր կուտակել, որ մի լավ տուն սարքեցին: Այդ մասին «մատերիալ» գրեցին, թե՛ տունն ինչո՞վ է սարքել: Դե, խորհրդային տարիներին ամեն հասարակ բանի համար կարող էին մեղադրել ու բանտարկել: Միլիցիան գալիս է, ասում՝ փաստաթղթերդ ցույց տուր, թե շինանյութը որտեղից է: Նա ասում է՝ չունեն: Միլիցիան պահանջում է, թե՛ պիտի ասես՝ ով է տվել, բռնելու ենք: Արշակը նրան տանում է ծովափ: Տեսնում են՝ մի մեքենա շինարարական աղբը բերեց, քափեց ծովափին: Այլքը խփում է, աղյուսի կտորներն ու ավազը լվանում: Արշակն ասում է. «Ահա՛ մաքուր ավազ և աղյուսներ, ծովն ինձ համար է բերել, ծովին բռնեցեք»...

300. Հախումնց Յուրիկի կին Ջինան ռուս էր՝ Կեմերովոյից: Ազատ խոսում էր հայերեն և այնպես էր մերվել հայկական միջավայրում, որ ասում էր. «Մեր հայերը ռուսների նման չեն, մերոնք հյուրասեր են»: Հաճախ ասում էր. «Իմ տղաներից որևէ մեկը եթե ռուս օզի, նրան բաժին չեմ տա»... Հարևանները ծիծաղելով ասում էին. «Ախճի՛, մոռացել ե՞ս, վար դու էլ ես ռուս»...

301. Ընկեր Սիրուհին այդ օրը հերթապահ էր դպրոցի շենքի առաջին հարկում: Դե, պարտավոր էր բոլորից շուտ գալ, բայց ուշացած է գալիս աշխատանքի: Տնօրենը հանդիպում է դռան մոտ և դիտողությամբ անում: Սիրուհին վրդովված ասում է. «Ա՛ տյու լիհա մենակ նկատողությունն ես գյուղո՞ւմ. պա մի հետ հետաքրքրվիլ չե՞մ, քա աշխատողը հունց ա յուլա քինում: Նյանա բիբը մեր բուխսը կանին ճոտերն ա կոտորում, քինում եմ աղբյուրը՝ հերթը շատ ա, օգում եմ հաց քիսեմ՝ քորոնը հեռու ա»... Տնօրենը ձեռքը քափահարում է, քե՛ բոլ ա, բոլ ա, շարունակիլ մի... Ու ծիծաղելով հեռանում է...

302. Գյուղում առատ բերք էր եղել, և բոլորն առատորեն օղի էին քորում: Ամանները չէին բավարարում պահելու համար: Դպրոցի մոտ գտնվող մի տուն ապակե «բալոններ» են բերում վաճառելու: Լսելում պես բոլորը գնում են առնելու: Ընկեր Սիրուհին, որ դասի էր գնում առավոտյան, իմանալով այդ մասին, ինքն էլ է գնում, «բալոններ» առնում: Երբ ուշացած մտնում է դպրոց, տեսնում է՝ տնօրենն արդեն իր մասին հերթական նկատողությունը գրած, բուրբ վակցնում է պատին: Հենց այդ պահին նկատում է, որ տնօրենի կինը դեռ նոր է շենք մտնում: Սիրուհին իսկույն ասում է. «Հրե՛ն, քու կնեկը հալա նոր ա կյալիս, աչքդ մենակ ինձ ա՞ տեսնում, նկատողություն ես գրել»... Թե՛ այդ օրն ինչ գրույց ունեցավ տնօրենն իր կնոջ հետ, միայն կարփնետի պատերն իմացան, բայց կինն այլևս երբեք չուշացավ...

303. Գոսին չէր ուզում դպրոց գնալ: Գիրք կարդալ չէր սիրում: Դեռ երկրորդ դասարանից ուզում էր հեռանալ դպրոցից, իսկ մայրն ստիպում էր, որ նա սովորի: Գոսին կենդանիներ էր սիրում, ոչխարի հոտի շներն էլ էին նրան ճանաչում, իսկ մայրը շնից շատ էր վախենում: Մի անգամ կոլխոզի ոչխարների հոտն անցնում էր ճանապարհով: Գոսին շներին կանչում է, բոլորը գալիս են, հավաքվում նրա շուրջը: Մորն ասում է. «Էլ ե՞ս ըսական՝ քինա շկոլը. սիսիս ես

շներին փայլը կսարքեն քեզ»... Ու այդպես էլ դայրոցը թողնում է, հովիվ դառնում: Մի անգամ ստուգումների ժամանակ շրջանի ղեկավարները նկատում են, որ դայրոցական տարիքի երեխան հովիվ է, զարմացած հարցնում են՝ էս երեխան ինչու՞ չի դայրոց գնում: Պատասխանում են, որ երեխան ինքը չի ուզում: Ասում են՝ երեխան դեռ երեխա է, բա էդ դայրոցում դիրեկտոր չկա՞: Գոսին ասում է. «Ա, խե՞ղկա. տրակտոր՝ էլ կա, սամոսվալ՝ էլ կա»... Փոքրիկ Գոսին այդպես դարձավ հրաշալի հովիվ: Իր գործը գերազանց գիտեր և նվիրված աշխատող էր: Նա անսխալ իմանում էր, քե որ ոչխարը երբ է ծնելու, քանի գառ է ունենալու: Ամբողջ հոտից եթե մի գառ կամ ոչխար պակասեր, առանց հաշվելու նա իսկույն կիմանար: Պատահական չէ, որ մասնակցել էր գյուղատնտեսության առաջավորների Մոսկվայի ցուցահանդեսին և վերադարձել նվերներով ու պատվոգրերով:

304. Պետունց Պողոսը կատակասեր երեխա էր, բայց լավ չէր սովորում դայրոցում: Գերմաներենի ուսուցչուհի ընկեր Վալյան մի անգամ դժգոհ տոնով ասում է. «Ա՛յ Պողոս, եթե քո փոխարեն մի սև քար լինի, զոնե խփելուց մի ձայն կհանի»... Հաջորդ անգամ ընկեր Վալյան մտնում է դասարան, տեսնում է՝ Պողոսը բացակա է, նրա տեղը մի մեծ սև քար կա, մի հատ էլ փոքր: Զարմացած հարցնում է կողքը նստող երեխային, քե քարերն ո՞վ է քերել: Երեխան ասում է՝ Պողոսն է քերել, թողել այստեղ, ինքը գնացել. ասել է՝ դասատուն որ իմ անունը կարդա, այս փոքր քարով մեծին կխփեք, ձայն հանի... Դասատուն այդ պահին ծիծաղում է, բայց երբ հաջորդ դասին Պողոսը մտնում է դասարան, ընկեր Վալյան ջղայնացած ասում է. «Դ՛ո՛ւքս գնա դասարանից, առանց ծնողի դայրոց չգաս»: Պողոսը դուրս է գնում: 10 - 15 րոպե չանցած՝ դասարանի դուռը բացվում է. ընկեր Վալյայի մայրը ներս է մտնում, Պողոսն էլ հետը: Վալյան զարմացած հարցնում է. «Ա՛յ մամ, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես եկել»: Մայրն ասում է. «Բա դու չե՞ս կանչել»: Վալյան, ծիծաղը մի կերպ զսպելով, Պողոսին ասում է. «Ա՛յ հիմար, ես քո ծնողին եմ կանչե՞լ, քե՞ իմ»... Պողոսն ասում է. «Ա՛ մեր տոնը հեռու ա, հինչը ըսական ես, քո ծնողին ասա»...

..Դիրեկտոր (ծ.կ.):
Ուսմասվար (ծ.կ.):

305. Հիվանդանոցի բուժքույրերը՝ Իրան, Ժենիկը, Հերմինեն, Էրիկան, Էլոն շատ զվարճասեր էին: Հաճախ էլ շատ բաներ հորինում էին ընկերուհիները, դնում Շախյան Էլոյի վրա, որովհետև նա շատ համեստ ու հարգված աշխատող էր: Մի անգամ ընկեր Արմիկը հիվանդանոցում պառկած էր: Զվարճալի տարբեր պատմություններ էլ տում՝ իբր Էլոն է պատմել: Կանչում է այդ Էլոյին, ասում. «Ախճի՛, էս շների մոտ աման հինչ պատմում ես, նրանք էլ այանքը վրան շաղ են տալիս, օրիշ տեղ պատմում»: Հենց այդ օրերին էր: Հակոբյան Շուշիկը սփրքնած ներս մտավ, ասաց. «Մի բան եմ լսել, վախում եմ ասեմ՝ ռադիոյով ասեցին՝ Բրեժնևը մեռել ա»... Բիչ հետո ներս մտավ քուրք բժիշկ Ալիկը և իրենց լեզվով ասաց՝ Բրեժնևը մեռել ա: Ընկեր Արմիկն ասաց՝ ռոդրմի իրեն: Բժիշկն ասաց. «Ի՞նչ եք կարծում, ո՞ւմ կնշանակեն նրա փոխարեն»: Արմիկն ասում է՝ Հեյդար Ալիևին: Էլոն հանկարծակի է գալիս, ասում. «Ախճի՛, պա քորքին տհենցի գործի կդնե՞ն»: Թուրք բժիշկը ծիծաղելով հեռանում է հիվանդասենյակից: Էլոն նոր է գլխի ընկնում, քե ինքն ինչ ասաց և միամտորեն ասում է. «Պա՛, մետո չէր, վար էս խոզնհատը քորք ա»...

306. Արմիկը, Վարդուշը, Էրիկան միասին գնացել էին Եսենտուկի՝ հանգստանալու: Առավոտյան հերթի էին կանգնել: Մի կին մոտենում է, ռուսերեն հարցնում՝ չտո՞: Էրիկան պատասխանում է՝ չտո՞ չտո: Արմիկը հարցնում է՝ հայ ե՞ս: Նա ասում է՝ այո: Պարզվում է, որ կինն ուզեցել է իմանալ, քե ինչի՞ հերթ է:

307. Յարոսլավի մարզի Շուրսկոլ գյուղում Մովսեսը կատակով պատմում է, քե Գառնիկն ու հարազատները փոքրիկ Դավիթին ծանր վիճակում հասցրել են Յարոսլավլ քաղաք, այնտեղ ցույց է տրվել առաջին օգնությունը, հետո շտապ տարել են Մոսկվա: Հուզված ու շփոթված Գառնիկը հիվանդանոցում հանդիպած հենց առաջին բժշկին է դիմում, նրա ռուսերենից բժիշկը ոչինչ չի հասկանում: Հետո փորձում է քուրքերեն բացատրել, նա դարձյալ ոչինչ չի հասկանում: Հիասթափված Գառնիկն ինքն իրեն ասում է. «Ա՛ էս շան տղան վե՛լ մի լյուզի հասկանում չի՞»: Բժիշկն իսկույն ոգևորված ասում է. «Արա՛, հայ ե՞ք»: Պարզվում է, որ բժիշկն ինքն էլ՝ Վիլհեմը, արմատներով խրխափորցի է: Եվ չնայած նա այդ բաժնի բժիշկ չէր, բայց ամեն ինչով օգնում, աջակցում է:

308. Սլավիկի ճնշումը շատ բարձրանում է, վատանում է, քթից

սկսում է արյուն գալ: Կի՛նն ու տղան արագ մեքենա են նստեցնում, տանում Երևան, ուղիղ իր ընկերոջ՝ Մանվելի տուն: Մանվելը դիտողությամբ է անում. «Ա՛յ ընկեր, բա ինչու՞ չեք մեկ-մեկ ճնշումդ չափում, հետևում, որ ժամանակին դեղ խմես, չվատանաս»: Սլավիկի կինը զարմանում է. «Մանվել՛, բա մենք կկարա՞նք ճնշումը չափենք»: Մանվելն իր հերթին զարմանում է, քե. «Ճնշում չափելն ի՞նչ է, որ չկարողանաք. ահա, նայեցեք»: Գործիքը միացնում է քսին, ինքը չափում և բացատրում. «Կնայես ապարատին, հենց որ սկսում է քիսկոց լսվել, դա վերևի ճնշումն է, իսկ երբ քիսկոցը լռի, այդ մասում սլաքն ինչ որ ցույց տա, դա կլինի ներքևինը»: Տղան կողքից հարցնում է. «Մանվել՛ ձա՛ձա, վերևինը զլխի ճնշումն ա, ներքևինը ոտերի՞նը»...

309. Վերինճենցի Ստեփանյան Մուսան կոշկակար էր: 1930-ական թվականներին Գյուլիստանում նախագահ են նշանակում: Հետագայում մի անգամ Վերին Շենում նրա կրպակում հաղափարած ջահելները հարցնում են. «Մուսա՛ դայի, այդ ինչպե՞ս է պատահել, որ քեզ նախագահ նշանակեցին»: Նա բացատրում է. «Ա՛յ քեզ մատաղ, դե՛ մարդը պակաս տարի էր, ինձ նշանակեցին»...

310. Մարունց Գրիգորին հարցնում են. «Յէր ունելում՝ հո՞ւնց ես»: «Շատ լավ եմ, քեզ մատաղ», – ասում է նա: «Բա տալու հարցում հո՞ւնց ես», հարցնում են: «Ա՛ քեզ մատաղ, մարդին մի՛ խասյաք կինի», – պատասխանում է Գրիգորը:

311. Խրիստոփորցի Եղիշը երկու ոտքից զրկված էր: Համարյա երբեք տնից դուրս չէր գալիս: Մի օր հարևանը կանչում է՝ հե՛յ Եղիշ դայի: Եղիշի կինը դուրս է գալիս, հարցնում՝ հի՞նչ ա... Նա ասում է. «Եղիշ դային տանն ա՞, Նուշի՛ բիք»... Նուշին պատասխանում է. «Չէ՛, քինացել ա քոլը»... «Վո՛ւ, պա նա կարում ա՞ քինա», զարմանում է հարևանը: «Պա վար գյուղում ես, խե՞ ես հարցնում, օրիշ վերդեղ ա՞ ինական, տանն ա, լի», – ասում է Եղիշի կինը:

312. Ճաղի դային բարի հոգի ուներ, ինքն էլ հացի մարդ էր, բայց շուտ բռնկվող, ջղայնացող էր: Մի անգամ նա պատ էր շարում, իսկ իր փեսա Հրանտն օգնում էր՝ քար էր տալիս: Ճաղիի կին Չիչազ Բիբին հաց էր քիտում և ճանապարհով անցնողներին քարն հաց ու քան էր հյուրասիրում: Ճաղիին ջղայնացնելու համար Հրանտն ասում

Ուրիշից մի բան վերցնելու գործում (ծ.կ.):

է. «Սա տոնն ա՞, թա՞ ռեստորան. ձեր տան իլած-չիլածը կնեկդ պի-
ժանում ա, ծեր դրբզին յիրա պետք ա կիրէք՝ «Գիգիրանց Ճաղին
ռեստորան»... Ճաղին հասկանում է նրա միտքը և ասում. «Լավ ա
անում, իմ աշխատածն ա պիժանում, վէչ թա քու»: Անցնում է որոշ
ժամանակ: Բաքլից համերգ էին հաղորդում: Մեկը բուրքերեն երգում
էր՝ չիչազ-չիչազ ասելով: Հրանտը Ճաղիին ջղայանցնելու համար
ասում է. «Ճաղի՛ դայի, էդ շան տղան հո՞վ ա, մի ժամ ա Չիչազին դէ
ա տալիս»... Ճաղին նորից նրա միտքը հասկանալով քթի տակ ծի-
ծաղելով ասում է. «Հրանտի՛կ, նա մեղավէր չի, շան-տղոթինը Չիչա-
զան ա կյալիս»...

313. Հերիքը Գյուլիստանից հարս էր եկել Վերին Շեն: Հարեան
կամ համազյուղացի կանանցից շատերի անունները չգիտեր, դրա
համար էլ ում հետ խոսում էր, ասում էր՝ ա քեր (այ քույր): Եվ նրան
սկսեցին «Աքեր» ասել: Մի անգամ Աքերը՝ Հերիք բիքը, հիվանդացել
էր: Ռուբենը գալիս է, տեսնում՝ Աքերը հիվանդ պառկած, Մարութին
հարցնում. «Աքորը գրադուսնիկ ես տվե՞ր»: Մարութն ասում է՝ մոռա-
ցել եմ, էս ա կտամ: Ջերմաչափը բերում է, դնում Աքոր թևի տակ:
Որոշ ժամանակ հետո ջերմաչափը հանում են, նայում, տեսնում, որ
ջերմությունը բարձր չէ, Ռուբենը հանգիստ ասում է՝ ոչինչ, լավ ա:
Աքերն ասում է. «Ռուբեն, ցավդ տանեմ, կանուխ կկյայիր, լի, էդ հինչ
լավ տեղ էր, ջանս թել-թել տյառավ»...

314. Աքերը գյուղից գնում է Գյանջա* եղբորը տեսնելու: Խուր-
ջինով ու տոպրակներով գյուղի բարիքներից ահագին բան է տանում
հետը: Երբ մեքենայից իջնում է, նկատում է, որ այդքանը չի կարո-
ղանալու մեմակ տանել, թողնում է ճանապարհին, ինքը ոտքով գնում
եղբոր տուն, ասում, որ «վէշը» շատ է, գան, օգնեն: Հարցնում են՝ որ-
տե՞ղ ես թողել: Ասում է. «Կարմուր դրբզին կշտին»: Դե, փողոցի
երկարությամբ սեփական տներ էին, համարյա բոլորի դարպասները
կարմիր ներկած: Տնեցիները նրա հետ քայլում են երկար, ոչինչ չեն
գտնում: Դրանից հետո երբ մեկն այդպիսի միամիտ բան էր կատա-
րում, ասում էին՝ «Աքորը Կարմիր դրբզան տյառավ»...

315. Գագիկը տղա է ունեցել: Աչքալուսանք է տարել, աշխա-
տանքի տեղը նշում են: Մինասը հարցնում է՝ երեխայի անունն ի՞նչ

* Գանձակ (ծ.կ.):

էր դրել: Նա ասում է. «Պապի անունը ենք դրել՝ Գրիգոր»: Մինասը հարցնում է՝ ո՞ր պապի: Գազիկն ասում է՝ Վազգեն պապի...

316. Ռոս գրականության հին դասի քեման Պուշկինի «Եվգենի Օնեգին» էր: Ուսուցչուհի ընկ. Լ. Արսենյանը ռուսերեն հարցնում է աշակերտներին՝ «կտո՞ Օլգա»: Աշակերտուհիներից Վ. Ջաքարյանը, որը ոչ մի հարցի պատասխանած չկար, անսպասելի կերպով ոգևորված ձեռք է բարձրացնում: Լ. Արսենյանը դիմում է նրան, որ պատասխանի: Աշակերտուհին հպարտորեն ասում է. «Օլգա մայա սեստրա»: Բոլորը լիաթք ծիծաղում են, նրանց հետ՝ նաև ուսուցչուհին, որովհետև այդ երեխայի քրոջ անունն իրոք Օլգա էր:

317. Ղարաչինարցի Իվանյան Վոլոդյան 1962 թ. կուսակցական տոմսը կորցրել էր: Դիմում է, որ նոր տոմս տան: Կուսկոմիտեի բոլոր անդամները համաձայնում են, բայց Ի. Գրիգորյանը դեմ է արտահայտվում՝ պատճառաբանելով, թե Վոլոդյայի հայրը 1919 թ. Պրմբատում մի մալական է սպանել: Վոլոդյան կատակով ասում է. «Հեռք, հեռք, ինկեր Իվանն օգում ա մալականին սաղացնի»²²...

318. Ղարաչինարի շուկայում մի խումբ երիտասարդներ հավաքված կատակներ էին անում ու լիաթք ծիծաղում: Մի պրսեցի մարդ գառներ էր վաճառում այնտեղ: Կառլենը մոտենում է նրան, հարցնում. «Ա՛ դայ, էս տասը հոգուս միջին լոխս դարաչինարցի ենք, մենակ մի՞նը՝ դարաբաղցի. կգիտա՞ս, քա վերն ա դարաբաղցին»: Պրսեցին մոտենում է, ուշադիր բոլորին նայում, ձեռքը դնում Արտեմի ուսին, ասում՝ այ, սա: Կառլենը զարմացած հարցնում է՝ հինչա՞վ

²² Ի՞նչ էր կատարվել 1919 թ.: Իվանանց Ջաղին կովը կորցրել էր: Երկար փնտրում է, չի գտնում, մտածում է, որ կովը կարող է գնացած լինի Պրմբատի աղբյուրից ջուր խմելու: Գնում է այնտեղ, տեսնում է՝ մի մալական աղբյուրի մոտ նստած: Ջաղին ոչ ռուսերեն գիտեր, ոչ էլ կարգին թուրքերեն: Ուզում է ասել՝ էստեղով կով չի՞ անցել, բայց հարցնում է այսպես. «Ա մալական, բիր ինագ բուրդան գյալսըն-քեչսը՞ն», այսինքն՝ մի կով գա՞ այստեղով անց կենա»: Մալականը պատասխանում է. «Ռագիյամ, քեչսին»: Այսինքն՝ համաձայն են, բող անց կենա: Ջաղին զարմացած նորից է հարց տալիս: Մալականը նորից նույն ձևով պատասխանում է՝ համաձայն են: Ջաղին՝ հոգնած, կովը կորցրած ու ջղայնացած մարդ, կարծում է, թե մալականն իրեն ձեռ է առնում, ջղայնացած հրացանը քաշում է, մալականին սպանում: Գյուղում այդ մասին երկար պատմում էին ու ծիծաղում, բայց որդին այդ պատճառով պատժվեց 1962 թ. (ծ.կ.):

գիղացիք: Պրսեցին ասում է. «Անգուճներալը. նրա անգուճները ծերան մեծ-մեծ են»... Եվ իսկապես, Արտեմի ականջները մեծ-մեծ էին ու միակ դարաբաղցին նա էր: Բոլորը լիաթոք ծիծաղեցին...

319. Էդիսոնը Ներքին Շենույն ճանաչված ներկայաբար էր: Պատերին իր կարողացած ձևով տարբեր պատկերներ էր նկարում, իհարկե՝ ոչ բարձր վարպետությամբ: Մի անգամ աշխատում էր Գրիգորի տանը: Տանտիրուհին ասում է. «Էդիսոն, քեզ մատաղ, պատերին մոկնու ճոտեր, կատվու ծյաքեր չնկարես. մեր տոնը հազար մարդ ա կյալիս, համութ ա, մենակ ծաղիկ կնկարես»: Էդիսոնն ասում է. «Աշկիս իրա, Մերանո՛ւշ բիբ, ծեր պատերին չի՛մանգյուլ կնկարեն, մեկ էլ յուրունիկ»...

320. Ներքին Շենույն Մարունց տանը հարսանիք էր: Գնում են հարսին բերելու, բայց նրանց տանն այնքան երկար ու ճոխ քեֆ են անում, որ վերադառնում են շատ ուշ և բոլորն էլ շատ խմած: Տանտերը լավ պատրաստված է լինում, նկատում է, որ բոլորը լավ կերած-խմած են, կարգին քեֆ չեն անելու, որոշում է մի քանի ժամով հարսանիքը հետաձգել, որի շնորհիվ աշխատանքային օրն ավարտված կլինի, շրջանի ղեկավարներն էլ կզան մասնակցելու. հայտարարում է. «Ա՛յ ժողովուրդ, մինչև ժամը 7 -ը պերերիվ ենք անում, քինացեք ծեր տները, դինջացեք, ծեր ապրանքն էլ տրդվարեցեք, ժամը 7-ին եկեք»:

321. Գաղթական Մուշեղը Ներքին Շենույն հարգված, համեստ ու քչախոս մարդ էր: Հարևանի տղայի հարսանիքին, իսկ հարսնացուն Գյուլիստանից էր, Մուշեղին էլ էին հրավիրել: Երբ հերթը նրան է հասնում, կենացը խմում են: Կողքը նստած Չատույնց Նիկոլն ասում է. «Մուշեղ դայի, կենացդ խմել են, վեր կաց, մի խոսք ասա»: Նա վեր է կենում, ասում. «Ժողովո՛ւրդ, սաղ լինեք, հի՞նչ ասեմ: Դե աման տեղա քինում են Գյուլիստան, կարտոշկա առնում յա խոզու ճոտ, պիրում, մեր ջահելն էլ քինացել ա, ընդեղա ուրան հետի ախճիկ պիրել, բող մի պյարցի ծերանան»:

322. Մի ձմեռ Ներքին Շենույն հարսանիք էր: Յթարանց Շուղի աքոր փոքր տղա Էդիկն ամուսնանում էր: Հյուրեր կային մակ Կիրովաբաղից՝ տարբեր բարեկամներ: Երբ աղջկա տնից հարսան-

* Այդ դեպքը գյուղի պատմության մեջ մնաց որպես «Մարունց պերերիվ», որովհետև հարսանիքի ընդմիջում երբեք չէր եղել (ծ.կ.):

քավորները հարսին բերում են տղայի տուն, սեղան մատում, Կիրովաբաղից եկած հյուրերից մեկը կիսատ-սյուստ, հայերեն-ռուսերենը խառնելով, ասում է. «Հաց չկա, խլեք պրիմեսիտե»: Յթարանց մեծ փեսան՝ Մթովանց Կովին, կողքից դիտողությամբ է անում նրա ձևով. «Ա քյոփօղլի, նոր չեկա՞նք աղջկանց տնից, պաժառ ես ինզե՞լ, խե՞ չես մխրել տիմանում, խլեք նետու՝ կալինկոր կուշի»: Դրանից հետո երբ գյուղում սեղանի մոտ մեկը դժգոհում էր, թե՛ ուտելիք չկա, ասում էին՝ «կալինկոր կուշի»...

323. Վերինշենցի Սաքունց Ռաֆիկն ապրում էր Երևանում: Գյուղից նրա մոտ հյուր է գալիս իր բարեկամ Արսենը: Մի օր քաղաքում միասին շրջելիս Արսենը հանկարծ նկատում է, որ բոլոր մեքենաները միանգամից կանգնեցին: Հարցնում է Ռաֆիկին՝ ես ինչու՞ չեմ գնում: Նա ասում է՝ ինձ տեսել են, կանգնել, հիմա ձեռքով նշան կտամ, բոլորը կշարժվեն: Եվ իրոք, բոլորը միանգամից շարժվում են: Գյուղ վերադառնալով՝ Արսենը պատմում է, թե Ռաֆիկը Երևանում ինչ մեծ հարգանքի տեր է, բոլոր մեքենաները նրա մատի շարժումով շարժվում են: Տնեցիները հասկանում են, որ Արսենը «ավետաֆորից» գաղափար չունի, Ռաֆիկն էլ կատակ է արել: Երբ բացատրում են, Արսենն ինքն էլ է ծիծաղում իր միամտության վրա:

324. Լիլիթի բարեկամի երեխաները գյուղից հյուր էին եկել Երևան: Բակում խաղում էին հարևանների երեխաների հետ և գյուղի լեզվով բարձրաձայն խոսում: Հարևանները տարօրինակ հայացքով նայում էին, իսկ Լիլիթն ամաչում էր դրանից: Տանը երեխաներին նստեցնում է, սկսում սովորեցնել. «Մա սեղան է, ստոլ չասեք, սա գնդակ է, թոփ չասեք»... Այդպես հետները երկար, բարեխղճորեն պարապում է և զգուշացնում. «Հանկարծ բակում գյուղի լեզվով չխոսեք»: Երեխաները գնդակը վերցնում են, իջնում բակ, իսկ Լիլիթը բալկոնից հետևում է նրանց, որ տեսնի, թե «դասն» ինչպես են սովորել: Խաղի ժամանակ գնդակը գլորվում է, անցնում փողոցը, որտեղով մեքենաներ էին գնում: Երեխան դեպի բալկոն նայում է, անհանգստացած ասում. «Լիլիթ, թոփը»... Լիլիթն աչքերը ոլորում է, մատը թափ տալիս: Երեխան իսկույն իրեն «ուղղում» է. «Չէ՛, չէ՛, սեղանը քինաց»...

325. Ամառվա օր է: Վալյան բակում «պլիտաների» վրա մուրաբաներ է եփում: Կեսուրին ձայն է տալիս, ասում. «Մի քինա, էն տոկը միացրու»: Երևի կեսուրի ձեռքերը քաց են լինում, «վիլկան» էլ

ջարդված, «տոկը» խփում է, նա սկսում է դողալ, գյուղի խոսվածքով ասած՝ «շղիարում ա»: Երեխան նկատում է ու հորը ձայն տալիս. «Պապա՛, ե՛կ, տոկն անջատի, այսան շղիարում ա»: Վալյան երեխային կամաց ասում է. «Թող մի լավ շղիարի, տիրա աշկին ազիզը քաղեն»...

326. Մեր գյուղերում այսպիսի խոսք կար. էշին հարցնում են՝ ժամում քանի՞ կիլոմետր կկարաս վագես: Նա ասում է՝ քիզը կգիդա...

327. Էդոն չարաճճի երեխա էր և դեռ փոքր հասակից արդեն քաքուն ծխում էր: Մի անգամ ուզում էր ծխել, բայց «պապիրոս» չուներ, ոչ էլ մոտը լուցկի կար, որ վառի: Գնում է իրենց հարևան մանկավարժ Աշոյի մոտ, ասում. «Ընկե՛ր Աշո, սլապան մի հատ նի-կըցըրած պապիրոս ա օգում»...

328. Վանոն ու Արշոն մանկության ընկերներ էին՝ միամիտ գյուղական պատանիներ: Երբ պատերազմն սկսվում է, երկուսին միասին ռազմաճակատ են տանում: Այնտեղ միասին գերի են ընկնում, միասին ազատվում, շատ տարիներ հետո վերադառնում գյուղ: Գերի լինելու պատճառով գյուղում զվարճալի շատ զրույցներ էին տարածված նրանց մասին: Պատմում են, թե երկու ընկերներով խրամատի մեջ նստած, ոչ ռուսերեն գիտեին, որ կողքինների հետ խոսեն, ոչ էլ կովից էին բան հասկանում: Երբ ուժեղ կրակոցներ են սկսվում, Վանոն Արշոյին ասում է. «Ա՛, էս հինչ փիս տրաքուց են անում, ըստեղ մարդասպանություն էլ կլինի»... Մի պահ կրակոցները լռում են, գերմանացիները մտնում են խորհրդային զորքի դիրքերը: Իսկ նրանք երկուսով հանգիստ նստած զրուցում էին: Հանկարծ մի գերմանացի զինվոր խրամատի փոսի վերևում հայտնվում է՝ հրացանը մեկնած դեպի Արշոն: Հրացանը քիչ է մնում՝ դեմքին կաշի: Արշոն դժգոհ ասում է. «Տենց լավ չի, բյաբակս կոխի»...

329. Գյուղերում «Կազբեկ» ծխախոտ էր հայտնվել՝ մի ծայրին՝ ծխախոտը, մյուս ծայրը՝ փուչ գլանի նման: Դե, գյուղացիները սովորաբար «խնքնաշեն», այսինքն՝ իրենց ձեռքով լրագրի կամ այլ քղթի կտորի մեջ փաթաթած ծխախոտ կամ չիբուխ էին ծխում, իսկ այդ տեսակը ծիծաղելի էր երևում: Ռուբենը հաճախ էր «Կազբեկ» առնում ու ծխում: Նրա կինը մի անգամ փողոցում հանդիպում է հարևանին, հարցնում՝ մեր Ռուբենին տեսել չե՞ս: Նա արհամարհական ձևով ասում է. «Հա՛, մի զուռնա ռխին քինում էր»...

330. Մամիկը կոլտնտեսության պարտկոմն էր՝ կուսքարտուդարը: Գնում է Կիրովաբադ, աստամները սարքել տալիս, նոր պրոքեդ դրած գալիս գյուղ: Հարեանն ասում է. «Մամիկ, քանի օր ա՝ ըրելվում չես, վերդե՞ղ ես իլեր»: Մամիկը պատասխանում է. «Քինացել եմ Կիրովաբադ, կեռիքներս սարքել տվել»: Նա ասում է. «Մի նհաշ տուր, տեսնեմ՝ լավ ե՞ն սարքել»: Մամիկը բերանը բացում է, նոր աստամները ցույց տալիս: Նա ասում է. «Պա՛, քու մեռելը վայ տամ, էդ հի՞նչ ա. տիրա կալխոգ չի տիմանալ»...

331. Մեծումը Բուզլուխից գնում է Սամարղանդ: Հետը գյուղից մի տոպրակ կանաչ լոբի է տանում: Լաուրան դժգոհ ասում է. «Արա՛, տյա պիրել ես, հի՞նչ անես, ըստեղ լոբի կա, վար տրաքուցը յեր ա ինում»... Այդպես դժգոհելով լոբին մաքրում է, դնում կրակին: Մի քիչ հետո խոհանոցից ձայն է տալիս. «Էս լոբին իրա ձու ածե՞մ»... Մեծումը ծիծաղելով ասում է. «Թա տյու ես ըծլական, ածես վե՛շ»...

332. Գյուղում անհատական ոչխարները և այծերը բնակիչները հերթով պահում էին: Երբ ասում էին՝ «վիխճարումն ա», նշանակում էր, որ ոչխար պահելու հերթն իրենն է, տարել է հանդը պահելու: Երբեմն դաշտում ոչխար կամ այծ էր ծնվում, գրկած բերում էին տուն, բայց եթե մի քանիսն էր լինում, իմաց էին տալիս, որ գյուղից օգնող գա: Եվ այդպես մի անգամ լուր են ուղարկում գյուղ: Բորիկը դպրոցում վազում է իրենց դասատուի մոտ, ասում. «Ընկե՛ր, իմ հերը վիխճարումը մի է՞մ ա ծնել, տյասան ըզատի, քինամ հողը պիրեն»... Շատ տարիներ հետո Բորիկը Ռուսաստանում պատմում է այդ մասին, իսկ ջահելները, որոնք արդեն ռուսախոս են դարձել, փորձում են քարգմանել, քե դա ռուսերեն ինչպես կասվի...

333. Մաշիկը Մանաշխից տեղափոխվել է Սամարղանդ: Մի օր ընտիր խաղող գնած բերում է տուն: Կինն ուտում է ու կարոտով ասում. «Է՛, մեր շենի հաղուղը օրիշ էր, ըստեղ էն համը կա վե՛շ»: Մաշիկն ասում է. «Ա դե լավ էլի, ա՛յ Ռիմա, մեր շենին հաղուղն էնքան թթո էր, ակռավը վար օտում էր, թոչում էր, կետին էն դոլին ստակում»...

334. Ռուբիկը գնացել էր Երևան, սովորում էր: 2 - 3 ամիս հետո արձակուրդ է գնում գյուղ: Ճանապարհին հանդիպում է համագյուղացի Սիմոն դային, հարցնում. «Պա՛, քեզ մատաղ, եկել ե՞ս. դե, մի եկ էս հռոին տակին կանգնենք, մխրել գիլեջա անենք»: Ռուբիկն

ուզում է ցույց տալ, թե շատ նոր բաներ է սովորել, ասում է. «Միմոն՝ դայի, դա հոռի չի, դրան լացող ուռենի են ասում»: Միմոնն ասում է. «Գլուդում են, մեր Արտուշը արխին դրադին մինը տնկել ա, սաղ օրը գուգա ա տալիս»...

335. Հարևանուհիները հավաքված զրուցում են բախտի մասին: Վարսենիկն ասում է. «Է՛, Էտնա էլ ասում են, բա Աստված չկա. էսօր մեր Աբելը ամանը վար շալտեց, կողքավա թռավ, պատան կցավ. եթե գլխիս նի կյար, իրիսկըհատս ճինջիլական էր»...

336. Նիկալը վեց քույր ուներ, վեցն էլ ամուսնացած, լավ ընտանիք կազմած, լավ ապրուստ ստեղծած: Իսկ ինքը ծույլ էր: Օգնում էին, որևէ աշխատանքի տեղավորում, երեք օրից հետո թողնում էր, հեռանում: Մի լուսանկարչական ապարատ են առնում, տալիս իրեն, ասում՝ գյուղերում կշրջես, ժողովրդին նկարես, նկարներն էլ բերես, մեզ մոտ քաղաքում հանես: Գնում է, մի քանի օրից հետո, երբ գրպանի փողերը վերջանում են, վերադառնում է՝ հագիլ 5 - 6 կադր նկարած: Տնեցիները նկատողություն են անում, որ ծույլ է, չի աշխատում: Իսկ նա դժգոհում է, թե. «Ա, վեց ճինջիված կան, բող մի ախպեր պահեն, լի»... Մի օր էլ լսում է, որ քույրը քաղաքում նոր տուն է կառուցում: Չանգում է, թե. «Ա՛յ իմ քույր, գալիս եմ, օգնեն»: Զույրն ասում է. «Ցավդ տանեմ, կյաս վե՛չ, ես քո փայ սիվան կըղարկեմ»...

337. Արոն քաղաքից հարս է բերում տղայի համար: Մի օր աշխատանքի գնալուց առաջ հարսին ասում է. «Մածունը կմերես մինչև մենք կյանք»: Նա հարցնում է՝ ինչպես են մերում: Արոն բացատրում է. «Կաթը կտաքացնես, մերանը գցես մեջը, դազանը դնես սեղանին, մի բոլ-բոլ ծածկես, որ տաք մնա»: Օրվա վերջում տուն է գալիս, տեսնում՝ տեղաշորը լցրած սեղանի վրա: Հարսին հարցնում է. «Էս ի՞նչ ես արել»: Նա ասում է. «Մածունը մերել եմ, ծածկել»...

338. Արոյի ընկերները հյուր են գալիս: Նա էլ գիտեր, որ կինը շատ ժլատ է, կարգին պատիվ չի տալու: Իրենց պահարանից մի քանի շիշ կոնյակ ու շամպայն է հանում, դնում սեղանին, հետո կնոջը կամաց ասում. «Ե՛կ, տե՛ս, էն մարդիկ ահագին դես-դեն են բերել, մի կարգին սեղան գցիր»: Կինը հավ է բերում, սեղան գցում: Հյուրերի գնալուց հետո նկատում է, որ իրենց տան խմիչքը չկա, վրդովված ասում է. «Կո՛ւ, էդ մեր տանի խմիչքն են պիրե՞լ»...

339. Դանիելյան Սեդրակը երկար տարիներ բարեխղճորեն աշ-

խատել է Շահումյանի շրջանում և միշտ աչքի է ընկել իր բարձր պատասխանատվությամբ: Բռնի տեղահանությունից հետո հաստատվել է Կրասնոդարում: Ստանում է նվազագույն թոշակ՝ 700 ռուբլի: Հանկարծ մի անգամ տեսնում է՝ թոշակը դարձել է 1350 ռուբլի: Անհանգստանում է: Ասում է. «Ես ստորագրելի չեմ, ինձ խեղճ պիտի էսքան թոշակ տան. կարող ա՝ սխալվել են, հետո կիմանան, խայտառակ կդառնան»: Թողը՝ Իգորը, հանգստացնում է. «Դե՛ղ, վախի մի, արխային ստորագրիր, ես եմ քինացել, համոզել, վար թղթերդ ստուգեն, թոշակիդ չափն իվիցնեն»: Սեղրակը հանգստանում է, թոշակն ստանում: Իսկ տնեցիները թաքուն իրար մեջ ասում են. «Դեղը գյուղում չի, է՛, վար համոզվի հետի կաշառք են տվել, թա չէ էտ թոշակն ստանալ չէր»...

340. Ռոդիկը դպրոցական էր: Բակում նստած բարձրաձայն սովորում էր քվաբանության դասերը. $5 \times 5 = 25$, $3 \times 4 = 12$ և այլն: Տերունց Սոկրատը ճանապարհով անցնելիս լսում է, չափարի մոտ կանգնում, հարցնում. «Ռոդիկ, քվաբանություն լավ ես իմանո՞ւմ»: Երեխան ասում է՝ հա: Սոկրատը հարցնում է. «Մի իրեք-չորս անգամ հինգը-վեց, հի՞նչ կանի»: Երեխան զարմացած նայում է...

341. Սամարան ուսուցչուհի էր և սովորություն ուներ աշակերտներին տանել, իրենց այգում աշխատացնել կամ մման բաներ պահանջել, երբեմն էլ «գլխի էր գցում», որ պիտի նվերներ տան իրեն: Հովհաննեսը շատ լավ սովորող էր, բանվորի երեխա. նրանից հնարավոր չէր նվեր սպասել: Եվ ուսուցչուհին հանձնարարում է՝ կզմաս, մասուր քաղես, բերես: Հովհաննեսը գնում է, ինչքան կարողանում է, հավաքում, տանում: Սամարան վերցնում է ձեռքից, նայում, տնտղում մասուրը, ասում. «Օգանես, մալաղե՛ց, մօ օչեն մալո»... Իսկ մարտի 8-ի նախօրյակին դասն սկսելուց առաջ ասում է. «Երեխաներ, տոնի առթիվ նվեր-բան չառնեք, իրավունք չկա, բայց եթե ուզենաք նվեր առնել, լավ կլինի, որ ոսկե ցեպ առնեք, չէր խանգարի, եթե կուլոն էլ լինեք, թեկուզ փոքրիկ կուլոնչիկ»...

342. Ալբերտը նոր էր նշանվել: Ամեն առիթ օգտագործում էր նշանածի հետ հյուր գնալու, միասին զբոսնելու համար: Բարեկամներից մեկին նոր երեխա էր ծնվել: Փոքրիկ Գայանեի կնունքի առթիվ նշանածին վերցնում է, թե՛ գնանք Կիրովաբադ, մի լավ նվեր առնենք: Առավոտյան գնում են, քաղաքում մի լավ զբոսնում, մի լավ նվեր

առնում, ճանապարհվում գյուղ: Տեղ հասնելուն պես գնում են բարեկամի տուն՝ նորածին Գայանեի կնունքին: Հենց տուն են մտնում, իսկույն նկատում են որ նվերը մոռացել են, թողել ավտոբուսի մեջ... Բարեկամները ծիծաղում են, ասում. «Է՛, պա նրանց դարդը սլադարկան ա՞...»:

343. Վերինշենցի մի տարեց կին, որը շատ չաղ էր, մի օր կատակով տղային ասում է. «Զեզ մատաղ, ես որ մեռնեմ, մորգի աշխատողին կասես՝ ճարպերս լրիվ հեռացնեն, քաշս թեթևանա, որպեսզի դազաղս տանողները մտքում չհայհոյեն, թե ծանր է»: Տղան մորը հանգստացնում է. «Ա՛յ մամ, դու արխային մեռիր, ես էնպիսի տղերք եմ բերելու, որ դազաղդ օղի մեջ թոցնելով տանեն»...

344. Խորհրդային տարիներին ապրանք ու մթերք դժվար էր ճարվում: Համարյա ամեն ինչի համար խանութներում մեծ հերթեր էին լինում: Բաքվում ապրող մի հայ կին մտնում է բարձրահարկ շենքի բակը, և որպեսզի հարևան ռուսները գլխի չընկնեն, բարձրածայն կանչում է ու հայերեն ասում. «Հայկո՛ւշ, ուզլավոյ մագազինումը կալբասի օշրեդ եմ զանիմատ ըրել, տարապիտսյա իլ»...

345. Մի հարսանքատանը կլառնետիստ Ռաժդենին ցույց են տալիս խմիչքների շշերը և հարցնում. «Մրանցից ո՞րն ես խմելու»: Ռաժդենը հերթով ցույց է տալիս սեղանին շարված շշերը, ասում. «Էս մինը, հետո էն մինը, հետո էլ էն ծայրինը»: Տանտերը զարմացած հարցնում է. «Ա՛, եդ որ բոլորը խառնես, բա ո՞նց կլինի»: Նա հանգիստ պատասխանում է. «Դու արխային կաց. կլառնետը վար փչեցի, գազերը լոխ տյուս են կիլյական»...

346. Ժորիկն ու Վանին ընտանիքներով գնում են ծովափ: Իր մեքենայի դեկի մոտ Վանին է: Մի գյուղով անցնելիս հանկարծ ճանապարհին սազեր են հայտնվում, մեր բարբառով՝ դազեր: Վանին կտրուկ դանդաղեցնում է մեքենայի ընթացքը, կամաց քշում ճանապարհի եզրով: Ժորիկը ծիծաղելով ասում է. «Իրենց բարեկամներն են, է՛, տեսնում ե՞ք, ինչքան ա զգույշ քշում»...

347. Ոսկի բաբոյի տղան քաղաքում ռուսի հետ էր ամուսնացել: Նորահարսին վերցրած առաջին անգամ գնում է գյուղ՝ մոր մոտ:

* Վանին Ներսեսանց ազգից էր, որոնց մի ճյուղը «Ղազ» մականունով է հայտնի (Ծ.կ.):

Մայրը ջուր է տաքացնում, ձեռքով-նսքով հարսին հասկացնում, քե՛րկար ճանապարհից հոգնած կլինես, գլուխդ վացիր, հանգստացիր: Հարսը ժպտալով մոտենում է, պատրաստվում վացվելու և ինքն իրեն հենց այնպես ասում է՝ տակ-տա՛կ... Ոսկի բաբոն ասում է. «Տաք-տաք չի, քեզ մատաղ, խառնուրդ եմ արել, տաքուչի ա»: Աշնանային սառն օր էր: Մինչև որ հարսը վացվում է, բաբոն քեյ է պատրաստում, որ միասին խմեն: Բոլորին հրավիրում է սեղանի մոտ, ինքը քեյնիկը վերցնում, որ բաժակները լցնի: Հարսը տեղից վեր է կենում, ասում՝ յա սամա, յա սամա: Ոսկի բաբոն զարմացած ասում է. «Պա տարվա էս վախտը յասաման կլինի»...

348. Ստավրոպոլի երկրամասում շահումյանցիների հանդիպում է: Գովում են կանանց: Արթուրն ասում է. «Ա՛, մեր շահումյանցուց խասյաքը փխն ա, է՛, վար մի կնեկ ենք պիրում, գյուղում ենք, քա մինչև վերջը պիտի պահենք: Ոչ դոգովոր ենք կապել, ոչ պայման ենք դրել, բայց մեզ կոտորում ենք, վար ամեն հինչ կնկանը քեփալը ինի... Պա՛, ա՛ ռուսներին հալալ ա, լի: Պա ռուսը տհենց պյան ա անու՞մ»: Ընկերն ասում է. «Տիրա հետի էլ ռուսին անա իլածը ռուս ա ինում» ...

349. Ներքինչենցի Վոլոդյան ռուսական մի գյուղում է ապաստան գտել: Ինքն էլ, տնեցիներն էլ վաղ առավոտից մինչև ուշ գիշեր աշխատում են, որ ոտքի կանգնեն: Ռուս հարևան Վասյան ամեն օր հարբում է, «կանցերտ» տալիս. կինը ծեծում է, դուրս գցում փողոց, նա փողոցում պառկում է, հենց այնտեղ քնում: Մայրը գալիս է, հարսի հետ կռվում, որ տղային ներս բողնի... Ամբողջ թաղը վարժվել է դրան, և բոլորը տարբեր առիթներով օրինակ են բերում Վասյային: Մի օր Վոլոդյայի տղան տուն է գալիս՝ տրամադրությամբ բարձր: Հոր մոտ արդարանում է, քե. «Ա՛յ պապ, ընկերոջս ծնունդն էր, մխրեկ խմեցի»... Հայրն ասում է. «Պասյան քեզ մատաղ, գյուղում ես, քա Վասյան մերը Վասյա ա պիրե՞՛. նա էլ ա խրեկ-խրեկ խմիլավ Վասյա դառել»... Եվ դա վերջին դեպքը եղավ: Ամեն սեղանի շուրջը որդին ինքն է պատմում այդ մասին:

350. Ռուսաստանում Սեյրանը նոր ռեստորան է կառուցում՝ խաղասրահներով, հանգստի սենյակներով և այլն: Երբ շինարարությունն ավարտվում է, ընկերներին իմաց է տալիս: Ընդունված ձևով հավաքվում են, գնում շնորհավորելու: Նստում են, լավ ուտում-խմում,

վերջում ասում է. «Դե, տղերք, արդեն տեղս գիտացիր. հենց վար ձեռքներդ փող ինզնի, կիկյաք, իմ տյոռը սյաց է ձեզ հետի»...

351. Հայր ու որդի միշտ կեսօրին նստում են բակի ծառերի տակ, նարդի խաղում: Հայրն անընդհատ խաբում է, քարը սխալ տեղ դնում կամ «զառ բռնում» և այլն: Մի անգամ էլ տղան զայրացած նարդին շարտում է հոր գլխին, արյունն սկսում է շոռալ: Հարևաններն ամոքանք են տալիս, քե՛ր դու ո՞նց չամաչեցիր: Նա արդարանում է, քե՛ր շատ ջղայնացրեց, ներվերս չդիմացան: Ասում են. «Որ տեսնում ես՝ ներվերդ չեն դիմանում, մի պապիրոս քաշիր, կհանգստանաս»: Նա ասում է. «Ա՛, համութ չի՞, հորս կշտին հու՞նց պապիրոս քաշեմ»...

352. ...Վալոյի մականունն է՝ Ռուսաստանից հյուր էր գնացել Երևան, վերադարձել: Ընկերները հավաքվել են, հարցուփորձ են անում այնտեղի կյանքից: Ռեզիման հարցնում է. «Սկացել եմ, վար էնտեղ է՞ծու քարտ են ծախում, դա հի՞նչ ա»...

Մի անգամ էլ ընկերները լսում են, որ քաղաքը «ցիրկ» է եկել և այծեր են ելույթ ունենում: Ընկերներն ուրախացած տոմսեր են առնում, Վալոյին հրավիրում, քե՛ միասին գնանք ցիրկ: Նստում են հենց առաջին շարքում: Գեղեցիկ ու հետաքրքիր համարներ են լինում, լավ զվարճանում են: Հանկարծ արեմա են մտնում այծերը, պտտվում, կանգնում Վալոյի դիմացը: Ընկերները մի կերպ պահում են իրենց ծիծաղը, իսկ Վալոն զայրացած ասում է. «Ա՛յ անտերներ, կորեք ըռաչաս, ինձ բիյաբուռ չանեք»...

353. Ռեզիման զվարճախոս կին էր: Հավաքների ժամանակ հաճախ էր բոլորին ծիծաղեցնում: Մի անգամ ընկերուհիներով քաղման են գնում: Ասում են. «Ռեզիմա, ցավդ տանեմ, էնտեղ սուս արած կմնաս, չծիծաղենք, խայտառակ կլինենք»: Նա ասում է. «Որ տեսնաք՝ ծիծաղներդ գալիս ա, բերաններդ քաշկինակով կծածկեք՝ իբր լացում եք»: Թաղման տեղում ինչ-որ բան է նկատում Ռեզիման, կամաց կատակ անում: Կողքին կանգնածը քիչ է մնում փոթկացնի, արագ բերանը ծածկում է քաշկինակով: Ռեզիման ասում է. «Աղջի՛, հի՞նչ ես ճաք-ճաք կյալիս. մեծ մարդ ա, ինքն էլ հեռու բարեկամ, մեռել ա, էդքան լաց կլինե՞ն»...

354. Միշիկը սիրում էր Էլոյին, բայց չէր կարողանում արտա-

* Խոսքը հեռախոսի «իզի» քարտի մասին է (ծ.կ.):

հայտվել: Բանակից վերադառնալուց հետո աշխատում էր հրշեջ խմբում, «պաժառնիկ» էր: Ընկերներն ամեն առիթ ստեղծում են, իսկ նա այդպես էլ չի կարողանում ասելիքն ասել Էլոյին: Շատ որ ձգձգվում է, հարցնում են. «Արա՛, բա հի՞նչ պետք ա անես, մինչև հե՞փ ես մնակամ»: Նա ասում է. «Հույսս էն ա, որ նրանց տունը պաժառ ինձնի, բելքամ հարմարվի, հետը խոսամ»...

355. Ձոյային ռուսական դպրոց էին տվել: Առաջին դասաբանում էր: Ոչ ծնողները ռուսերեն գիտեին, ոչ էլ ինքը, բառերը խառնելով մի կերպ դասը «յոլա էր տանում»: Մի անգամ դասը գրատախտակից արագ արտագրում է, վերջացնում և ոգևորված ասում. «Ժնկե՛ր Էլա, ես պիսել եմ, պրծել եմ»:

356. Արշակ վարժապետը սովորություն ուներ՝ «ռեզինից» կրկնակոշիկներ էր հագնում: Դե, դա հագնում էին կոշիկի վրայից, ցեխի ժամանակ: Հետո հանում էին, բողնում դրսում, մաքուր կոշիկներով մտնում տուն: Սուսանան շրջկոմում էր աշխատում: Նկատում է, որ վարժապետը եկավ, կրկնակոշիկները հանեց, բողեց միջանցքում, մտավ բաժնի վարիչի կաբինետը: Մտքի մեջ ասում է՝ վարժապետը միշտ կատակներ է անում, հիմա էլ ես պիտի կատակ անեմ: Աննկատ վերցնում է կրկնակոշիկները, քաքցնում: Վարժապետը դուրս է գալիս կաբինետից, տեսնում է՝ կրկնակոշիկները չկան. փնտրում է, չի գտնում: Բոլորն իրար են խառնվում: Մտնում է բաժնի վարիչի մոտ, հայտնում, նա ասում է. «Մի լավ հիշիր, որտե՞ղ ես դրել»: Սուսանը զգալով, որ կարող է գործը բարդանալ, արագ տանում է, կրկնակոշիկները դնում նախկին տեղում: Վարժապետը բաժնի վարիչի հետ դուրս է գալիս, տեսնում՝ կրկնակոշիկները նույն տեղում: Ասում է. «Ա՛, ինկե՛ր Արշակ, ռայկոմում էլ ես զարափաք անում»: Վարժապետն ալյալվում է. «Զե՛ճ մատաղ, հալքաք կառնեքս մենակ են մնացել, քինացել տոն, եկել»...

357. «Ապտեկի» Վովան կատակասեր էր: Շրջափակման օրերն էին՝ ցուրտ, մութ, տազնապով լի: Հայկանուշ բիրը, միայնակ կին, գնում է նրանց տուն: Ճաշում են, քեյ խմում, զրուցում: Տանը սոլյարկայի վառարան էր դրված, դե, նրա մոտին էլ շատ կպչուն է լինում: Վովան քաքում տանում է, Հայկանուշի կոշիկների մեջ մութ լցնում: Երբ մոտենում է քնելու ժամանակը, Հայկանուշն ուզում է գնալ իրենց տուն: Դե, սովորաբար Վովան չէր բողնում, որ ուշ ժամին

զնա, իր բիբին իրենց տանն էր պահում: Այս անգամ ոչինչ չի ասում: Հայկանուշը գնում է իրենց տուն, պառկում, քնում: Դե, քանի որ շատ ցուրտ էր, գուլպաները չի հանում: Առավոտյան վեր է կենում, տեսնում՝ տեղաշորը լրիվ մրոտված, ձեռքերը մրոտված: Չի էլ նկատում, որ երեսն էլ է մրոտված: Այդպես անհանգիստ մտնում է իր բարեկամ Ասատուրի տուն, որ պատճառը հարցնի: Ասատուրը հենց տեսնում է, գոռում է. «Ախճի՛, էդ հի՞նչ ա քո հայը, տհենց տանան տյուս կիկյա՞ն»: Հայկանուշը շվարած ասում է. «Գյուղում չեմ, քա հինչ ա պտահել»: Ասատուրը հարցնում է. «Իրիկունը որտե՞ղ ես գնացել»: Նա ասում է՝ Վովայենց տուն: Ասատուրը հասկանում է ամեն ինչ, ասում. «Նրա արածն ա»...

358. Ժենիշկան միայնակ կին էր՝ միակ երեխայի՝ Պողոսի հետ: Դպրոցում հավաքաբար էր: Դասատուները նկատողություն են անում, քե՛ տղայիդ չես հետևում, դաս չի սովորում: Ժենիշկան նեղացած գնում է, տեսնում՝ Պողոսը բակում խաղում է: Ժենիշկան «ա», «զ», և այլ հնչյուններ չէր կարողանում ասել, Պողոսն էլ չէր բոլոր հնչյունները կարողանում ասել: Սովորաբար իրար հետ անեծքով ու հայեռյառք տալով էին խոսում: Ասում է. «Պողո՞շ, ա՛ խորժնրհատ, եկ դաշդ շըվերի»: Պողոսը բակից պատասխանում է. «Ա քու մե՛յը... էս բուխպալ դաս կսովորվի՞»...

359. Հանես դային սարի ֆերմայից էր գալիս՝ ձին պանիր բարձած: Ներքին Շենի խոտհարքներով անցնելիս նկատում է, որ խոտ հնձողները ծառի տակ նստած հաց են ուտում: Մի գունդ պանիր է տանում, դնում նրանց առաջին, ինքն էլ նստում կողքներին: Դե, ալանի քարմ պանիր, նրանք էլ մաքուր օդում աշխատող երիտասարդներ: 5 բոպեի մեջ պանիրը վերջացնում են: Հանես դային գնում է, մի գունդ էլ բերում: Դա էլ են արագ ուտում: Հանես դային երրորդ անգամ վեր է կենում, որ գնա, նորից բերի: Թևաթրոսն ասում է. «Բոլ ա, Հանե՛ս դայի, մենք դյով ե՞նք»: Դե, նրանց ազգին Դյովունց էին ասում, և նա հանգիստ պատասխանում է. «Ասիլ չեն, քե՛զ մատաղ, Դյովը մեզ են ասում»...

360. Պետրոս պապիկը հարազատների շրջապատում նստած ոգևորված խոսում է թոռների մասին: «Դիանաս վըշի սորտ ա, - ասում է նա: - Կարինես պերվի սորտ ա»: Հետո մի քիչ մտածելով ասում է. «Գայանես՝ չէ՛, Գայանեն կոմբիկորմ ա»: Աղջիկը՝ Գա-

յանքի մայրը, ծիծաղելով էն կողմից ասում է. «Ա՛յ պապ, սորտավատ անելիս ներքևից վերև սկսիր, բելքամ իմ Գայանեին էլ նոմեր հասնի»...

361. Չարմիկը դպրոցում շատ վատ էր սովորում, դասերին էլ խանգարում էր: Որոշ ժամանակ հետո էլ դպրոցից հեռանում է, դասի չի գնում: Դե, խորհրդային տարիներին պարտադիր ուսուցում էր, այդպիսի դեպքի համար դպրոցի տնօրենին մեղադրում էին: Տնօրեն ընկեր Բենիկը գնում է նրանց տուն, Չարմիկին համոզում, որ դասի գա: Նա չի համաձայնում: Ստիպված ասում է՝ տղայիս հեծանիվը քեզ եմ տալու, միայն քե դպրոց գաս: Անցնում է մի քանի օր: Չարմիկն իրենց տան մոտ գտնվող «Միրզանց բաղում», որը շրջանի «ստադիոնն» էր, ուրախացած հեծանիվ էր քշում: Հանդիպում է նույն դպրոցից Լուսերեսը, որը շատ չարաճճի աղջիկ էր: Չարմացած հարցնում է. «Արա՛, քեզ որտեղի՞ց ա հեծանիվը»: Չարմիկն ազնվորեն խոստովանում է. «Ընկեր Բենիկն ա տվել, որ դպրոց գնամ, խելոք մնամ»: Լուսերեսն ասում է. «Դե, լավ, սրանից հետո ես նրա գլխին էնպիսի օյին կդնեմ, որ իր «Մոսկվիչն» ինձ տա»...

362. Ինքնապաշտպանության ծանր օրերին էր: Երևանից բռնող ուղղաթիռը Շահումյանում վայրէջք կատարելու պահին դիպչում է լարերին, պոչը ջարդվում է: Ծառերին խփելով ընկնում է ցած: Ուղևորների մի մասը ներսում են մնում, մյուսներն ուղղակի ցած են քափվում ցեխի մեջ: Մայան, որ առաջին անգամ էր ուղղաթիռ նստում, կարծում է, քե վայրէջք կատարելը հենց այդպես է լինում, դժգոհ ասում է. «Ա՛ էս անտերը լավ բան ա, ամա խե՞ ա սենց քշանում»... Դիմավորողները վազում են ընդառաջ, սրան-նրան գրկում, համբուրում ուրախացած, որ ողջ են մնացել: Արթուրը զարմացած նկատում է, որ իրեն մոտեցող չկա: Հետո ինքն իրեն նայում է, տեսնում՝ ոտքից գլուխ ցեխի մեջ կորած, ասում է. «Ա հով գիդա՛ ինձ ճնանչում չեն»...

363. Ինքնապաշտպանության օրերին Ուկրաինայից՝ «Կրասնոյե զնամյա» թերթից լրագրողներ էին եկել Շահումյան: Գնում են «պոստերը» տեսնելու: Գաղթուրի «պոստում» Բուդդանը հյուրերին ուղեկցող Արթուրին ասում է. «Էս մարդուցը մի ստաքան բան չտա՞մ»: Արթուրը հյուրերին տեղյակ է պահում, որ ուզում են մի բաժակ օդի հյուրասիրել: Նրանք համաձայնում են: Բուդդանն իջեցնում է

«ԲՄՊ» -ի «ստվորը», միջից մի շիշ հանում: Ձարմացած հարցնում են, քե ինչու է շիշն այնտեղ պահում: Նա ասում է. «Ըստեղ սյարին ա»...

364. Ինքնապաշտպանության ծանր օրերն էին: Շրջանի ղեկավարներ Ռաջաբովին ու Ջամալովին հայերը տարել էին, ճանապարհել իրենց գյուղերը: Արթուրն ու վարորդ Կամոն ամսվա վերջին աշխատավարձը վերցնում են, որ տանեն, սահմանում Ռաջաբովի ու Ջամալովի վտղը տան: Ռաջաբովն ասում է. «Արա՛, ես հարիֆ ե՞մ, որ վտղ եք բերել. մի բալոն գինի կբերեիք կամ մի բանի պաշկա հայկական «Սալյուտ» սիգարետ»: Կամոն ասում է. «Մեքենայիս մեջ կա, սպասիր, գնամ բերեմ»: Գնում է, մի բլոկ «Սալյուտ» բերում: Ռաջաբովը կամաց ասում է. «Զգո՛ւյշ, ես օդռաշ Ջամալովը չտեսնի. նա «նալոդնի ֆրոնտի» հետ կապված ա, խաբար կտա»...

365. Ներքին Շենում 3 - 4 երիտասարդ, նոր «Ժիգուլի» առած, գնում էին լավ տրամադրությամբ: Հանդիպում է իրենց նախկին ուսուցիչ ընկեր Ժորան: Կանգնում են, բարևում: Ժորան ասում է. «Տղե՛րք, նստում ենք, գնանք»: «Ո՞ր ենք գնալու», ասում են ջահելները, որովհետև սովորաբար նոր մեքենան առնելու առթիվ ծանոթները տանում էին, շնորհավորում: Նստում են, քշում: Ասում է՝ քշիր մեր տուն: Գնում են: Նրանց բակում կանգնեցնում մեքենան, իջնում: Ժորիկն ասում է. «Տղե՛րք, վազները պիտի կտրենք»: Տղերքից ամեն մեկը մի մկրատ է վերցնում, կտրում են՝ վազները էտում: Տղաները մտածում են, քե դրանից հետո կտանի խմելու: Հարցնում են. «Ընկե՛ր Ժորիկ, սրանա ետը հի՞նչ պետք ա ամենք»: Նա ասում է. «Եթե ձեզ լավ պահեք, կթողամ, վար վազնուտը վարեք»...

366. Ներքին Շենում հյուրանոցի առջև մի խումբ երիտասարդներ հավաքված գրուցում են: Ընկեր Ժորիկը Միշիկին ասում է. «Միշիկ, գնացի՞նք»: Միշիկը վեր է կենում, նրա հետ գնում: Հասնում են Ժորիկենց տուն: Նա կոշիկները հանում է աստիճանների մոտ, բարձրանում տուն, դուռը փակում: Միշիկը մնում է կանգնած: Սպասում է, քե դուրս կգա, իրեն էլ տուն կհրավիրի: Երկար կանգնում է, Ժորիկը չի երևում: Միշիկը դժգոհ բողնում է, հեռանում: Հաջորդ օրը հյուրանոցի առջև, որը բոլորի հավաքատեղին էր, Միշիկը պատմում է այդ մասին: Վովան կողքից ասում է. «Ը՛մ-մ, ինձ էլ ա տհենց ըրել. նրանց տան կողքին «ստրոյկա» կա, շները լիքն են, Ժորիկը վախե-

նում է շներից, դրա համար էլ ամեն անգամ տուն գնալիս եղպես մեկին վերցնում է հետը, գնում»...

367. Բարձր դասարանցիները որոշում են գնալ Գյուլիստանի բերդը՝ էքսկուրսիա: Դպրոցի տնօրենը դատելիին հանձնարարում է, թե՛ դու էլ հետները գնա, փորձառու մարդ ես: Բարեհաջող գնում են բերդը: Վերադառնալիս արդեն շատ էին հոգնել, որովհետև ոտքով էին գնացել, մեքենա չկար: Գյուլիստանի մոտակա դաշտում մի տրակտոր վար էր անում: Տրակտորիստը նրանց այդպես հոգնած տեսնելով խղճահարվում է, ասում է. «Գութանն անջատեմ, լաֆետը միացնեմ տրակտորին, նստեք, ձեզ տանեմ Ներքին Շեն»: Բոլորն ուրախանում են: Դատելին ասում է. «Քե՛զ մատաղ, վար տհենց ա, հազուր Գյուլիստանում ենք, մի հատ էլ խոզի ճուտ առնեմ, տանեմ»: Մոտակա տան տիրոջը կանչում է, մի խոզի ճուտ առնում, ասում՝ մի մեշոկ տուր, գցեմ մեջը, տանեմ: Տանտերն ասում է՝ չունեմ: Ասում է՝ գոնե մի «չաքվու կտոր» տուր, կապեմ: Տանտերն ասում է՝ եղ էլ չունեմ: Դատելը ջղայնացած մտնում է տանտիրոջ «պաղվալը», իր ներքնաշորը հանում, խոզի ճուտը դրանով կապում, դնում լաֆետի մեջ: Մի քիչ տեղ որ գնում են, անիվն ընկնում է փոսի մեջ, լաֆետն ուժեղ ցնցվում է, խոզի ճուտը դուրս է պրծնում, փախչում: Տղաները գոռգոռոցով հետևից են ընկնում, որ բռնեն, չի հաջողվում, մտնում է Գյուլի մեղիկ փողոցները, անհետանում: Արթուրը դիմացից եկող մի մարդու հարցնում է. «Ա՛ դայ, խոզի ճուտ չե՞ս տեսել՝ տըկըփոխանը վզին»...

368. Արարատն ու Ռանտոն նարդի են խաղում: Խաղի վերջին պահն է: Արարատին միայն 2 քար է մնացել, 2 -ն էլ 2 -սի վրա, իսկ Ռափոյին 6 քար է մնացել, 4 հատը՝ 6 -ի վրա, 2 -ը 1 -ի վրա, այսինքն՝ հաղթելու համար ինքը պիտի ամենամեծ զառը գցի՝ դու-շեշ, դրանից հետո էլ հակառակորդը պիտի ամենափոքր զառը գցի՝ իքի-բիր: Չառը ձեռքն է վերցնում, խնդրելով ասում՝ այ զառ, դու-շեշ եկ: Եվ իրոք, դու-շեշ է գալիս, չորս քար միանգամից հանում է: Արարատը զառը վերցնում է ձեռքը, հենց նետելու պահին Ռափոն հարայ է տալիս՝ ա զառ, իքի-բիր: Իքի-բիր է գալիս, բոլորը ծիծաղում են, Արարատը նեղացած ասում է. «Դա հաշիվ չէ. դու ի՞նչ իրավունք ունես, իմ զառին բան ասես. քոնն ասել ես՝ դու-շեշ ա եկել, իմ զառի հետ ի՞նչ գործ ունես»...

369. Արկադյան առավոտյան աշխատանքի էր գնում: Ճանապարհին հանդիպում է Արշակ վարժապետին, որը շատ հարգված ու զվարճասեր մարդ էր: Սկսում է երկար-բարակ ինչ-որ բան պատմել: Արկադյան անհանգիստ շուտ-շուտ նայում է ժամացույցին, տեսնում, որ ուշանում է, բայց անհարմար է զգում զրույցը կիսատ թողնել: Հեռվում երևում է Մարունց Կրիքորը և կանչում Արկադյային, թե՛ արի էստեղ: Արկադյան մոտենում է Կրիքորին, հարցնում՝ ի՞նչ կա: Նա ասում է. «Ոչ մի բան, վարժապետից ազատեցի քեզ, գնա գործիդ»...

370. Վանիկն ու Ջամոն Գերանբոյի խաչմերուկում կանգնած մեքենայի են սպասում, որ գյուղ գնան: Վանիկը մի կոնֆետ է տալիս, ասում՝ գցիր բերանդ: Ջամոն ասում է. «Լավ ա զգուշացրիր, թա չե աշկս էի կոխվական»...

371. Անդոն մի տընձրքաղի ուսին դրած գնում էր: Հանդիպում է Ռանտիկը: Անդոն ասում է. «Արա՛, ձեր Արշակն ամեն տեղ քեզ գովում ա, թե՛ մեր Ռանտիկը ռուսերեն յաման գյուղում ա. կկարա՞ս ասես՝ տընձրքաղին ռուսերեն հի՞նչ կասեն»: Ռանտիկը տեղնուտեղը հորինում է՝ «զրուշելովկա»...

372. Կեսուրը հարսների հետ մստած զրուցում են, սուրճ խմում: Իգորը ներս է մտնում, ասում. «Մի ստաքան չայ տվեք»: Բոլորը զրույցով տարված՝ չեն լսում: Իգորը նորից է կրկնում: Մայրը մի պահ սթափվում է, հարսներին դիտողությամբ անում. «Ախճի՛, սկանում չե՞ք»: Իգորի կինն արագ վեր է կենում, մի բաժակ քեյ լցնում, դնում սեղանին, նորից վազում, զրույցը շարունակում: Իգորը մեղմ բնավորություն ուներ, հանգիստ խմում է՝ ինչ բերել են: Մայրն ասում է. «Մաման մատաղ ինի քեզ, թա սառած ա, մի լավ կզմվի հարսի վրա»: Իգորը հարցնում է. «Հու՞նց, վետս տափավը կյա՞մ»...

373. Էռնեստը խաղալու տեղից հոգնած գալիս է տուն, ասում. «Այա, սոված եմ, հի՞նչ կա ուտելի»: Մայրն ասում է. «Այան մատաղ լինի քեզ, մեծ տղա ես, մի ճոթ հաց յեր կալ, մի հափուռ էլ աղ, մտիր մեր բախճան՝ խիյար-պամիդորը հսած, կինձը-կյուտումը լիքը, բուբուլ կեր, կուխկանաղդ պնդի»: Էռնեստը հացն ու աղը վերցնում է, տնից դուրս գալիս, ծիծաղելով մորն ասում. «Մի հուվուրան կիկյաս, օրուգս փոխես»...

374. Լևոնը պատերազմում գերի էր ընկել: Շատ տարիներ հետո վերադարձել էր գյուղ: Արդեն տարիքն առած մարդ էր: Մի օր գյու-

դամիջում հավաքված զրուցելիս ասում են. «Այ Լեոն, նեմեցին կշտին ապրել ես, խե՞ղ չես նրանցից մի բան պատմում»: Լեոնը պատմում է:

«Մի օր վերակացուն ինձ հանձնարարել էր, որ ծառերին տակը վաբեմ, ինքն էլ ընկերների հետ նստած արադ էին խմում, քեֆ անում: Ես նախանձով նայում էի աչքիս տակավը և երանի տալիս, որ գոնե մի բաժակ արադ տան: Դե, ես արդեն լավոսալ հասկանում էի նրանց լեզուն: Մեկն ասաց. «Բերեք, էս պլենին մի կրուշկա արադ տանք, ստիպենք, որ խմի, տեսներ՝ ինչեր կանի, մի քիչ ծիծաղենք»: Մյուսներն ասացին. «Մեղը ա, կմեռնի», իսկ ես մտքումս ասում էի՝ երանի փորձեն: Մի տեսակ էլ հաց էին օտում, հենց էր սիպտակ-բմբուլ. մի հոդկ հաստ էր, ամա որ փռնում էիր, ճկում էր, այաց էիր թողնում՝ պրոժինի նման պիցրանում էր: Մի քիչ հետո եղ նեմեցներից մեկը կրուշկան արադավ լցրավ, պիբրավ, տվավ ինձ: Մի շնչում խմեցի, մնացի տեղս կանգնած: Նրանք զարմացան, որ վայր չեմ ընկնում: Մի մոմենտ մնացին սառած, հետո մեկը ջղայնացած ձեռքը խփեց սեղանին ու ասաց. «Իզուր էղքան արադը փչացրինք»: Սեղանին որ խփեց, հացի «բուխանկան» վայր ընկավ: Ինձ կարգադրեցին, թե՝ տար քիցի ախային յաշիկին մեջը: Ես մատիս ծայրով բռնեցի, իբր զգվում եմ, տարա: Պատին քամակն անց կացա թե չէ, եղ «բուխանկան» հենց հոփ տվի, իրեք հետ կծիլավ լոխ կոլ տվի»...

375. Վերինշենցի Լեոնի թոռը դայրոցից տուն է գալիս, դժգոհ ասում՝ մեր դասատուն ինձ թակել ա: Լեոնը գնում է դայրոց, որ պատճառն իմանա: Մոտենում է դասատուին, հարցնում. «Այ ընկեր Ժորա, էս ըրխին խե՞ղ թակել ես»: Նա սկսում է մանրամասն բացատրել՝ ձեռքերիսան ընդունակություն ունի, բայց... Լեոնը չի հասկանում, թե «ընդունակություն» ինչ բան է, ջղայնացած ասում է. «Ա՛, ես քեզ հարցնում չեմ, է՞, թա մեր ըրխին հինչ օնի, քեզ ասում եմ՝ խե՞ղ թակել ես»...

376. Ինքնապաշտպանության ծանր օրերին էր: Մոսկվայից հայտնի հասարակական գործիչ Իմեսա Բուրկովան մի մեծ խմբի հետ եկել էր Ներքին Շեն: Խմբին բաժանել էին տարբեր տների վրա՝ գիշերը մնալու համար: Բուրկովան գիշերը մնացել էր Արշակի տանը: Առավոտյան հարևանը հարցնում է. «Արշա՛կ, դո՞նադիդ անումը հի՞՞նչ ա»: Դե, դա անսովոր անում էր, տեղացիներին ծանոթ չէր: Արշակն

ասում է՝ Իմըսա: Հարևանն ասում է. «Արա՛, վետավ-ծեռավ քեզ ինի, ես անուճն եմ հարցնում, հի՞՞նչ ա»...

377. Պյատիգորսկի մեր հայրենակիցներից մեկն ուզում էր «տինգ» պատրաստել, որ գյուղի ձևով կորկոտ անեն: Իշխանը ծանոթներին հարցուփորձ է անում, քե ով կկարողանա տինգ սարքել: Գևորգն ասում է. «Բալադունց Վանոն էստեղ մի գյուղում է ապրում, նա կկարողանա, գնանք, կանչենք, գա սարքի»: Գնում են այդ գյուղը, հանդիպում Վանոյին, պատմում իրենց նպատակի մասին: Վանոն հայեղանքով խոսող մարդ էր: Հանգիստ տոնով բացատրում է. «Ա տինգը հի՞՞նչ ... ա, սէ սեւենցի մի փետ ես վերցնում, ...անում, ա դրա տիրոջ..., ոտքդ դնում ես տինգի փետին, ...»: Ամեն ինչ էնպիսի ահավոր «փիրդիվերան» բառերով է պատմում, Իշխանը հիասթափված Գևորգին ասում է. «Գևորգ, վեր կաց, հետ գնանք, սա քաղաք տանելու մարդ չի, մեզ խայտառակ կանի»...

378. Արթուրը Ռուսաստանում է ապրում: Մեկ-մեկ երբ քեֆը լավանում է, գնում է կազինո, ժամանակ անցկացնում: Այդպես մի քանի անգամ երբ տուն է գալիս, հայրը հարցնում է, քե կազինոն ինչ բան է: Արթուրը բացատրում է: Հայրը նորից է հարցնում. «Բա որ գնում ես, տանուլ ես տալիս, քե՞ տանում»: Որպեսզի հոր տրամադրությունը չփչացնի, Արթուրն ասում է՝ տանում եմ: Հայրն ավելի է հետաքրքրվում. «Ընկերներդ էլ են տանո՞ւմ»: Արթուրն ասում է. «Հա՛, ա՛յ պապ, նրանք էլ են լավոսալ փող տանում»: Հայրն ասում է. «Պա~ քեզ մատաղ, մեր Յաշոն հրեն հայարապ տանը նստած, աշխատանք չօնի, մեհետդ տար, նա էլ մի քանի մանեք տանի, յոլա քինա, էլի»...

379. Թուրք Ռաջաբովը շրջկենտրոնում քննիչ Հայրապետյանին դժգոհում է, քե. «Արա՛, ես բուրք ե՞մ, վար ասում ես: Ոտնամանս՝ «Մասիս» ֆաբրիկայի, կոստյումս՝ երևանսկի, զրպանիս սիգարետը՝ հայկական «Սալյուտ», իսկ քո հագինը լրիվ զագրամիչնի, հիմի՛՝ մեզանից ո՞վ ա հայ»...

380. Հայկանուշի Հայկ որդին մի շալ էր առել մոր համար: Դարաչինարի ինքնապաշտպանության ծանր օրերն էին: Ամբողջ օրը շալն ուսերին զգած էր պահում. կարծես որդու կարոտը դրանից էր առնում: Երբ Դարաչինարում վտանգը մեծանում է, նա գնում է Մարաղա գյուղ՝ աղջկա տուն՝ մտածելով, որ այնտեղ ապահով կլինի: Թուրքերի զինված հրոսակախմբերն անսպասելի հարձակվում

են Մարադայի վրա, շատերին կոտորում, կոդոստում ու ավերում գյուղը: Ժողովուրդն ու ինչպես կարողանում է, մի կերպ փախչում է: Հեռվից մոկտալով մայում են այրվող գյուղին: Հայկանուշը ծնկներին տալով աղջկան ասում է. «Նախ՛րա, այ՛ քեզ մատաղ, բա շալս մնաց էնտեղ, է՛»: Աղջիկն ասում է. «Ա՛յ մամ, երկհարկանի տունս, ամբողջ ունեցվածքս էնտեղ, դու շալիդ դարդն ե՞ս քաշում»...

381. Պյատիգորսկում Արթուրը դժգոհում է. «Բադրամյանի անվան փողոցը հասնում է մինչև մեր տան մոտի խաչմերուկը, այնտեղից հետո փողոցի անունը դառնում է Լիպովայա: Չեմ կարողանում շանտոցը համոզել, մի քիչ երկարացնեն, որ մեր տունն էլ դառնա հայկական փողոցի վրա»: Իգորը կողքից ասում է. «Հունց անենք՝ չես կարում համոզել. մեկ էլ Լիպովայան մի քիչ փոխիր, դառնա Լիպոյան փողոց»...

382. Արթուրն ու Կոլիկը ուսանողներ էին, Մոսկվայում էին սովորում և վարձով ապրում: Մի անգամ տավարի չորս ոտք են առնում, բոլոր մոտիկ ընկերներին իմաց տալիս, քե՛ խաշ ենք եփելու, առավոտյան շուտ կգաք: Մաքրում են, երեկոյան դնում բալկոնում պլիտայի վրա, իրենք նստում, սկսում մարդի խաղալ: Ամբողջ գիշերը խաղում են, չնկատելով, քե ինչպես է լուսացել: Առավոտյան ընկերները հավաքված, միասին գալիս են, տեսնում՝ բալկոնը ծխով լցված, հոտն ընկած տուն, խաշն էլ ածուխ է դարձել: Ջղայնացած ասում են. «Ա՛ ձեր տունը շինվի, բա գոնե մի անգամ զիրավ չե՞ք հնցել»: Կոլիկը հանգիստ ասում է. «Ա՛ էդ հեշ, է՛, դուք սչյոտը հարցրեք՝ 180 -ով 176 ա»...

383. Ֆլորայի ամուսինն անկողնային հիվանդ էր: Առանց տրանջալու, բարեխղճորեն քանի տարի պահում է, խնամում: Էլմիրան նրան հանգստացնելու համար ասում է. «Ոչինչ, Ֆլորա, հիշիր ձեր ջահել օրերը, դիմացիր, հիշիր ձեր սերը»: Ֆլորան ասում է. «Ախ՛ճի՛, էն վախտն իմ դարդը սերն ա իլե՞լ. օխտը վեխճար ենք պահել, իրեք կով, չորս խոզ»...

384. Էլմիրան գովում է Ֆլորայի հարսին, ասում է. «Շատ լավ աղջիկ ա, էսքան մեծ տոն, էսքան տնեցիք, էսքան հարազատ, ծանոթ ու անծանոթ, եկող-գնացող է լինում, բոլորին հանգիստ յուրա տանում»: Ֆլորան ասում է. «Պա սա հի՞նչ ա. մեր տանը հենց հարս են իլել, մի սյուրու րախա, ամա մի խոսակցություն չի իլել»: Արթուրն

ասում է. «Տանը հի՞նչ ա իլել, վար կռել անեն, դատարկ տանը հի՞նչ են փայ ընական, վար կռել տյառնա»...

385. Արթուրի հեռախոսը չէր աշխատում: Կանչում է Օնիկ-Հովիկին*, ասում՝ մի բարձրացիր «ստույթան», ստուգիր: Օնիկ-Հովիկն ասում է՝ մի սարի բեր: Չողը վերցնում է, բարձրանում ստույթան, լարերը թափահարում, ստուգում: Հետո վերցնում է կոյրից կախած տրուբկան, կանչում գոռալով՝ ալո՛, ալո՛: Երկար կանչում է, ոչ ոք չի պատասխանում: Վերջապես փոստից պատասխանում են՝ ալո՛: Օնիկ-Հովիկն ասում է. «Այ գահրումա՛ր, քրովառա՞ ես, մի ժամ ա՛ զանգ եմ տալիս»: Արթուրն ասում է. «Արա՛, մաքամ «տրուբկան» յեր ես կալել, հի՞նչ անես. սասդ առանց տելեֆոնի շենին կիլոխն ա հասնում»...

386. Լյուդիկը գյուղից նոր էր եկել Երևան: Չարչարվում էր, որ գրանցվի: Դրա հետ էլ զուգահեռ մի կերպ ուզում էր գրական լեզվով խոսել: Վերջապես գրանցումը հաջողվում է: Հաջորդ օրը հանդիպում է ընկերոջը, որը գյուղ էր գնում: Լյուդիկն ընկերոջը «թափշուր» է անում, թե. «Մերոնք նիգյարան են, կասես, որ վաղն արդեն գրանցվել են»: Հետո խսկույն ինքն իրեն «ուղղում» է. «Ա՛, գյուղում շատ չեն հասկանում, թա վաղը հինչն ա. կասես՝ իրգի գրանցվել են»...

387. Գրիշիկը վատառողջ էր: Բժիշկներն արգելել էին խմելը, դրա համար էլ կինը խմիչքները հեռու էր դրել, որ չտեսնի, սիրտը չուգի: Մի օր Գրիշիկը տեսնում է՝ պահարանի մեջ ինչ-որ նոր շիշ է երևում: Մոտենում է, տեսնում՝ վրան «սկոչով» մի թուղթ է կայցրած, խոշոր տառերով գրած՝ «ուքսուս»: Բանի տեղ չի դնում, շրջվում է, որ գնա՝ մեկ էլ նկատում է՝ «սկոչի» տակից մի հայերեն տպագիր «Հ» է կարդացվում: «Սկոչը» պոկում է, տեսնում՝ տակը գրած «Հոնի օղի»: Կնոջ վրա ջղայնանում է, թե. «Էս գյոզալ արաղի վրա խե՛ ես «ուքսուս» գրել»: Կինը մեղավոր տոնով ասում է. «Ա Գրիշ, նեղանալ մի, բախան նոր ա պիլել, ծածկել եմ, որ հանկարծ չխմես, վնաս կտա»...

388. Արկադյան իրենց բակում աշխատում էր: Հարևանը չափարի մոտ կանգնում է, արագ-արագ կանչում՝ Արկադյա՛, հե՛յ Արկադյա, Ագո՛, ա՛յ Արկո... Արկադյան գլուխը բարձրացնում է, ասում. «Արա՛, մի րոպե սուս արա, որ «հեյ» ասեն»...

389. Արկադյան վերադառնում էր այգուց՝ հոգնած, քրտնած,

նակատն արևից կարմրած, գերանդին ուսին, չաթուն կռնտակին դրած, մի ծայրն էլ կախ ընկած, փռշու մեջ քարշ գալով: Հանդիպում է եղբոր տղա Արթուրը, զարմացած ասում. «Արկո՛ւ ամի, չաթուն խե՞ք քարշ տալով ես տանում»: «Պա քոռ շալով տանե՞մ», – պատասխանում է Արկաղյան:

390. Յուրիկն իր ընկեր Ջիվային կանչում է իրենց տուն, մի լավ խմում են: Հետո նստում են, նարդի խաղում: Արդեն գիշերվա կեսն է դարձել, բայց դեռ խաղում են: Յուրիկն անհարմար է զգում, որ հյուրին ասի՝ ուշ է, քնելու ժամանակն է: Իսկ Ջիվան անընդհատ ժամացույցին նայում է, հարցնում. «Յուրի՛կ, ժամը քանի՞սն է»: Նա ասում է՝ տասներկուսը: Մի քիչ հետո նորից է հարցնում, Յուրիկն ասում է՝ ժամը մեկն է: Հետո՝ ժամը երկուսը: Մի քիչ հետո Ջիվայի կինը մահակը ձեռքին մտնում է ներս, Ջիվային ասում. «Արա՛, հմանչում չե՞ս, խե՞ք չես գալիս մեր տուն, էս ժողովուրդը պառկի, քնի»: Ջիվան միանգամից տեղից վեր է թռչում, ասում. «Պա՛յ, արա ես էլ գիդացել եմ, քա մեր տանն ենք, կանուխ-կանուխ ժամը հարցնում եմ Յուրիկին, բեքա հասկանա, վեր կենա, գնա իրենց տուն»...

391. Յուրիկը երկար-բարակ խոսող-զրուցող էր: Մի օր մեկը մոտենում է նրանց դարպասին, տղային հարցնում. «Գեո՛րգ, պապան տանն ա՞»: Գեորգն ասում է. «Հրե՛ն, բխճին վեռումը առավոտը մի խամ մարդ ա բռնել, մինչև մեկ մագգին կրոտիտ ա անում»...

392. Ադամյանը շրջանի միլիցիայի բաժնի պետն էր: Ուզում է օգնել աշխատանք և կրթություն չունեցող երկու երիտասարդի: Հանդիպում է Բուրեքին, ասում. «Բուրե՛րք, ընկերոջդ վերցրու, եկ, ուղարկեմ միլիցիայի դպրոց, սովորեք, գաք, աշխատեք, մշտական գործ և աշխատավարձ ունենաք»: Բուրեքն ասում է. «Կարալ չենք, ընկե՛ր Ադամյան»: Ադամյանը զարմացած հարցնում է՝ ինչու՞: Բուրեքը պատասխանում է. «Ռեխներաս բռն ենք»...

393. Արարատը շրջանում պատասխանատու պաշտոն էր վաբում: Միշտ մասնակցում էր ակտիվի ժողովին, նաև կուսշրջկոմի բյուրոյի նիստին, որը կարելի է ասել՝ շրջանի գլխավոր մարմինն էր: Զգիտես ինչու, շրջանի ղեկավարն ամեն առիթով նկատողություն էր անում նրան, և բոլորը գիտեին այդ մասին: Մի անգամ շրջանի վարչակազմի համար կառուցված նոր, հարմարավետ շենքը կահավորում էին: Կիրակի էր, օրվա վերջ, բայց վարպետները դեռ աշխատում էին,

հավաքում էին առաջին քարտուղարի կաբինետի կահույքը: Քարտուղարն էլ նրանց հետ միասին մասնակցում էր, օգնում, որ և՛ իր սրտով լինի, և՛ շուտ ավարտվի: Ալբերտն ու Ռազմիկը շրջանի ղեկավարներից էին, առաջին քարտուղարի ընդունարանում նստած սպասում էին: Այդ պահին գալիս է Արարատը: Ռազմիկն ասում է. «Արարա՛տ, քարտուղարի վերաբերմունքը քո նկատմամբ լավ չէ, ինչո՞ւ չես մի անգամ կարգավորում ձեր հարաբերությունները»: Արարատն ասում է՝ չգիտեմ ինչ անել: Ալբերտն ասում է. «Շատ հարմար առիթ է. նոր կաբինետ է, ինքն էլ նոր մեքել ստացած՝ դասավորում են. գնա ձեր տուն, 2 հավ մորթիր, 2 բալոն գինի վերցրու, մի շիշ էլ օղի, բեր, ասա՝ կաբինետդ շնորհավորում եմ»:

Արարատը համոզվում է, գնում: Որոշ ժամանակից հետո, 2 սունկա լցրած, գալիս է: Կամաց, զգույշ ուզում է դուռը բացել, որ քարտուղարին շնորհավորի: Հակառակի նման դա այն պահն էր, որ քարտուղարն ուզում էր նոր դրված «պոլկաները»՝ դարակներն, ամրացնել, ինչ-որ անզգույշ շարժումից դարակները քանդվում են, ձեռքը մնում է տախտակների արանքում, մղկտացնում: Հենց այդ պահին Արարատը գլուխը դռնից ներս է մտցնում, ասում՝ ընկեր... Քարտուղարը զայրացած գոռում է՝ ասում. «Ա՛յ զահրումար, որտեղ դու երևաս, մի վատ բան կկատարվի: Բուզուխ գնալիս ցեխի մեջ մնացինք, Էրբեջում մի ուրիշ վորձանք եղավ, Էստե՞ղ ինչ ես ուզում»... Արարատը շփոթված դուռը փակում է, արագ հեռանում: Փողոցում երկար ժամանակ անհանգիստ մտքերով հետուառաջ է գնում: Այդպես մտքերով տարված շատ երկար քայլում է փողոցում: Քարտուղարը, գործը վերջացրած, նոր կաբինետից գոհ, ձեռքի ցավն էլ արդեն անցած, աշխատակիցների հետ շենքից դուրս են գալիս: Ծիծաղելով մոտենում է Արարատին, հարցնում՝ ո՞նց ես: Արարատն ասում է. «Է՛, ինկե՛ր Պետրոսյան, էնքան ես իրեսիս խոսացել, իմ հորից անցել եմ»*...

394. Արոյի կինը ժլատ էր: Ամուսինը հարյուր անգամ պիտի պահանջեր, որ նա մի հավ մորթեր: Սի անգամ միասին հյուր են գնում: Կինն ընդհանուր ավստեից հավի մի լավ բուդ է վերցնում, դնում

* Արարատի հայրն այդ ժամանակ ծեր մարդ էր, լոխվ կորցրել էր հիշողությունը, գիտակցությունն էլ խանգարված էր (ծ.կ.):

ներն էլ կոլխոզնիկ կանայք էին, հաճախ՝ «տրուսիկները» ծակծկված... Բուժքույրը նրանց փոխարեն ամաչում էր: Տանը դժգոհ պատմում է, քե. «Ա՛ տրուսիկները հենց են գյուլլքիարած պարաշյուտ ինեն»: Ամուսինն ասում է. «Աղջի՛, դե դու էլ մի բանի «սլուժեբնի» տրուսիկ կառնես, էնտեղ պահես, հենց որ գյուլից ծանոթ կին գա, կհագցնես, հետո տանես բժշկի մոտ»...

399. Լուր է տարածվում, որ համագյուղացի մանկավարժ Ռանտիկը քաղաքում մահացել է: Գյուլի բիբը զարմանում է. «Լո՛ւ, պա նրան հի՞նչ պիտի պատահի, որ մեռնի. ոչ շոֆեր ա, որ ավարիա անի, ոչ բաննահ ա, վար պատան վեր ինզնի»...

400. Իգորը Ռուսաստանում ինստիտուտում էր սովորում: Գերմաներենի դասախոսը մի բարի կին էր. քննության ժամանակ հարցեր է տալիս, Իգորը երկար մտածում է, լռում: Դասախոսն ասում է. «Նու, Նալբանդյան, նե գնա՞եշ՝ դվո՞յկա»: Իգորը բացատրում է, որ ինքը հայ է, այդ գերմաներեն հարցը մտքի մեջ թարգմանում է ռուսերեն, ռուսերենից հայերեն, մտածում, պատասխանը գտնում, հետո էլ պիտի մտքի մեջ հայերենից թարգմանի ռուսերեն, ռուսերենից էլ գերմաներեն, որ պատասխանի: Այդ երկար բացատրությունը լսելով՝ դասախոսը խղճահարված ասում է. «Օ՛յ, բեդնյա՛ժկա, չետըրե խվատի՞տ»: Իգորն ուրախացած համաձայնում է, չորս ստացած դուրս գալիս...

401. Մանաշիդցի Վովան համագյուղացի Համոյի հետ ճանապարհվում է Երևան: Մեքենայով հասնում են Շահումյանի շրջկենտրոն, Վովան ասում է. «Համո՛ դայի, ես քո փողը կտամ»: Եվ երկուսի համար վճարում է: Այնտեղից գնում են Կիրովաբադ, Վովան մույն ձևով ասում է. «Համո՛ դայի, ես քո տոմսն էլ կառնեմ»: Կիրովաբադից գնում են Երևան, Վովան այդտեղ էլ է երկուսի տոմսն ինքն առնում: Երբ հասնում են Երևան, տրամվայ են մատում, որ գնան բարեկամի տուն, Վովան ուզում է տոմս առնել: Համոն նրան նկատողություն է անում. «Ա՛ տղա, հե՛յ, Համո դային կշտին տյու ծերքտ ջուրդ չտանես, տրամվային տոմսը ես ինք կօնեմ»...

402. Սիմոնը տարիքն առել էր, բայց չէր պսակվում: Իրենից փոքր եղբայրն ամուսնանում է: Համագյուղացիներից մեկը հարցնում է. «Արա Սիմո՛ն, հրե՛ն, ձեր Նազարը պսակվել ա, դու՞ խե չես

պատկերում, հարս տանես ձեր տուն»: Նա հանգիստ պատասխանում է. «Ա դե Նազարը պիտե՛լ ա, բոլ ա լի»...

403. Գյուղի խոսվածքով սայթաքելուն «բուրբուրմիշ լինել» են ասում, իսկ գայրանալուն կապը կտրած, չափը կորցրած լինելուն՝ դուրբուրմիշ են ասում: Դումաշի բռնանը հարցնում են. «Էրե՞գ էն հի՞նչ էր պատահել, լոխըտ մաշինալ Դարաչինար քինացիք»: Երեխան ասում է. «Այան դուրբուրմիշ ա իլել, կոխկաճաղը կոտրել, տարել ենք դուխտուրին կոշտը»...

404. Ընկեր Գուրգենը Մանաշիդում հարգված մարդ էր: Տեղափոխվում է Հրագոյան քաղաք, բայց միշտ կարոտով է հիշում հայրենի գյուղը: Մի անգամ հայրենակիցների հետ խոսելիս ասում է. «Ա ես գյուղից դուրս եկողը չե՛ի, էն մեր հարևան Աշոտի էշի գոռոցից քոչեցի »...

405. Գուրգենի էշին գայլն ուտում է: Գուրգենը որոշում է այդ գայլին սպանել: Հրացանը վերցնում է, դանան առաջը գցում, գնում դաշտը, անտառի մոտ պառկում, ինքն իրեն ասելով՝ էս ապրանքի հետին գայլը կգա, կկրակեմ, կսպանեմ: Դանան հանգիստ արածում է, իսկ ինքը նստած տեղը ձանձրանալով, պառկում է, քնում: Արթնանում է, տեսնում՝ գայլն ապրանքին կերել ա...

406. Համոյի կովը կորել էր: Չիումն նստում է, հրացանը վերցնում, գնում փնտրելու: Անտառի մի նեղ կածանով անցնելիս հանկարծ դիմացը մի գայլ է երևում: Արագ հետ է շրջվում, ձին քշում, փախչում դեպի գյուղ: Շփոթված դարպասից ներս մտնելու ժամանակ հրացանը շփսկալով կաշում է դարպասի սյունին: Համոն միանգամից իրեն հավաքում է և զարմացած ինքն իրեն ասում. «Արա՛, պա վար էս մուռդիկը ձեռքիս ա իլել, խե՞՞ղ չեմ կյուլին կրակ տվել»... Շատ տարիներ հետո Համոյի քրոջ զավակները հիշում են այդ դեպքը, զվարճանում: Քույրն իր երեխաներին դիտողությոն է անում. «Արա՛, հե՛յ, ախպորս վե՛ռան չկենաք»: Վովան ծիծաղելով ասում է. «Ա՛յ մամ, նրան վե՛ռ օնե՞ք, հենց էր մերանոստ՝ տիմակ լիներ»...

407. Ալբերտը ռուսական մի քաղաքում շահումյանցիների հարսանիքի թամադան է: 3 - 4 հարյուր հայրենակիցներ են ներկա: Նա շատ լավ ղեկավարում է սեղանը հայերեն՝ կես գրական, կես բարբա-

• Մերանոս տեսակի ոչխարը դմակ չի ունենում (ծ.կ.):

ռով հետաքրքիր գրույցներով: Համագյուղացի Էմման, որը շատ վաղուց նրան չէր տեսել, ուրախացած մոտենում է, ասում. «Ալբերտ, քո կրթությունը ռուսական է, ինքդ էլ էս 40 տարի կլինի գյուղից դուրս ես եկել, էդ որտե՞ղ ես էղպես լավ սովորել հայերեն»: «Ռուսաստանում», - առանց երկարացնելու պատասխանում է նա:

408. Գարեգինը քեֆը լավ պառկած էր քթենու տակ: Ուզում է քնել, ճանճերը խանգարում են: Քշում է, նորից են հավաքվում երեսին: Նորից է քշում, նորից գալիս են: Հայհոյելով վեր է կենում, գնում, սրահի տակ պառկում, մեկ էլ էնտեղ են ճանճերը վրա տալիս: Ջղայնացած ասում է. «Ա՛յ Աստված, էսքան ճանճն ինչի՞ համար ես ստեղծել. լոխ իրար հետ կխառնեիր, մի փիղ սարքեիր, Հնդկաստանում կապրեր, ես էլ էստեղ հանգիստ կքնեի»...

409. Գարիկն ասում է. «Արո՛, լսել եմ, որ ուզում ես նոր տուն սարքել. լավ մտածիր, որ կլոր սարքես»: Արոն ասում է. «Գարիկ ծածա, քեզ հասկանում եմ, օգու՛մ ես, վար գործանչս մի անկյուն չգտնի մեր տանը, բայց գյուղում չես, քա նա հինչ տորտ ա. նա կլոր տանն էլ անկյուն կճարի»...

410. Գարիկն ինստիտուտը նոր էր ավարտել, գյուղում աշխատում էր որպես գյուղատնտես: Նկատում է, որ հեկտարից ստացած բերքը մի բան էր, գրածը ուրիշ, վարուցանքը մի տեսակ կատարում էին, մի ուրիշ տեսակ գրում: Գալիս է տուն, զարմացած պատմում այդ մասին, ասում՝ էսպես հնարավոր չէ շարունակել, դա բացահայտ հանցագործություն է: Քեռին հանգիստ լսում է, ասում. «Գարիկ, քե՛զ մատաղ, դու ագրոնոմ ես, քո գործով զբաղվիր, հանցագործության հարցը դատախազության խնդիրն է, քոդ նրանք մտածեն այդ մասին»...

411. Շամիրը կոլտնտեսության հաշվապահն էր երկար տարիներ: Երբ արդեն աշխատանքից ազատվել էր, անցել թոշակի, գյուղամիջում հավաքված գրուցելու ժամանակ երիտասարդներից մեկն ասում է. «Կոլխոզը կերել եք»: Շամիրն անվրդով պատասխանում է. «Մենք համ ըրել ենք, համ կերել, դուք հիմի մի բան արեք, որ ուտելու բան ունենաք»...

412. Խորհրդային տարիներին կային մարդիկ, որոնց հիմնա-

կան զբաղմունքը «մատերիալ»^{*} գրելն էր: Շրջանի ղեկավարությանն անստորագիր նամակներ էին գրում, թե ով ինչքան եկամուտ ունի, ինչով է զբաղվում: Ներքին Շենի հայտնի «մատերիալիստը» Փակի քոլ անտառից գալու ժամանակ բարձունքից նայում է գյուղին, տեսնում, թե ինչպես տների մեծ մասի կտուրին հեռուստատեսային անտենա կա: Ինքն իրեն ասում է. «Պա՛, էս հինչքա՞ն անտենա կա. տելեվիզոր սարքող Կիմիկը որ ամեն մեկից 5 մանեք վերցրած լինի, տես հինչքան փող կդառնա: Պա էս շենումը մի շան տղա չկա՞, որ ռայկոմին իմաց տա»...

413. Վերինշենցի «Բեղին» հարցնում են. «Տղադ երկու տարի ա՛ բանակում, նոր նամակ չի՞ գրել»: Նա ասում է. «Չէ՛, անցյալ տարի մի նամակ էր ուղարկել, են էլ էս տարի հետ ա ուզել»...

414. Մանաշիրում ընկեր Գուրգենի հետ կապված մի պատմություն կա: Ասում են՝ մի անգամ նա դրսից չիսկոց է լսում: Դուրս է գալիս բակ, շրջում աջ ու ձախ, նկատում, որ գոմի դուռը բաց է, խոզը չկա: Առավոտյան հարևանները հավաքվում են, քննարկում, թե ով կլինի գողացած: Ընկեր Գուրգենն ասում է. «Ես գլխացի. վեր շան տղան կյումին տյոռը այաց ա ըրել, հենց նա էլ խոզը կյուղացել ա»... Բոլորը ծիծաղում են: Այդ պատմությունը տարիներ շարունակ հիշվել է այս ձևով: Բայց... Բոլորովին վերջերս մենք իմացանք, թե դա ինչ իմաստով է ասվել: Պարզվում է, որ նա խոզի հետքերով գնացել, մտել է համազյուղացի ...-ի տուն: Տեսել է՝ խոզը մորթած, երկու հոգով մաշկում են: Սուսուփուս հետ է դառնում, չի ուզում, որ գործը միլիցիային հասնի, այդ մարդուն բանտարկեն...

415. Շրջանի զինկոմիսարիատի մոտ տարբեր գյուղերից ժողովուրդ էր հավաքված: Դե, ամեն տեղ հենց որ վերինշենցի ու պրսեցի հանդիպելին, անպայման պիտի իրար հետ կատակ անեին: Պրսեցի Ակուփը տարեց մարդ էր, հայտնի զվարճախոս: Փորձում է բարձրանալ բեռնատար մեքենայի թափքը: Ոտքը բարձրացնում է, որ անցկացնի «բորտի» վրայով, վերինշենցի մի տղա կատակում է. «Պո՛ւ, Ակո՛ւփ դայի, հյաքիդ վեր ինգավ»: Ակուփն ասում է. «Տա՛ր, քու նանին վեռան նիստա կցրու»...

416. Նատաշին գյուղից տանում են Երևան՝ բժշկի: Բժիշկը

^{*} Անանուն զբաղարտություն (ծ.կ.):

հարցնում է՝ ի՞նչ բողոք ունես: Նատաշը բացատրում է. «Վո՛ւ, դո՛խտոր, քիլիս մեջան վար ծակում ա, օգում ա քա հողոս շաղ կյա, կլիսիս շոռ ա տալիս, քա վեր ինգնեն»... Բժիշկն աչքերը չում է՝ ոչինչ չհասկանալով:

417. Աբին գյուղի քերես ամենաաղքատ մարդն էր, բայց յոթ տղա ուներ, բոլորի անուններն էլ՝ ճոճուն. Միրզաբեկ, Սարիբեկ, Կնյազ, Մելիք... Ընկեր Գուրգենն ասում է. «Ա՛, էս քյոփօղլին իրեք էժ օնի, օխտը խան»...

418. Ընկեր Գուրգենը տղայի հետ մի հարսանիքի ժամանակ նստած էր երաժիշտների մոտ: Առատ սեղան էր, ուրախ միջավայր, բայց երաժիշտները շատ վատ էին նվագում, իրենք էլ մոտիկ էին նստած, աղմուկը վատ էր ազդում: Տղան նկատում է, որ հայրը մի տեսակ է: Հարցնում է. «Ա՛յ պապ, վեր կենա՞նք»: Նա ուրախացած ասում է՝ հա՛, քեզ մատաղ: Ու բացատրում է. «Ես ըստեղից յեր կենողը չէի, էս մուզիկանտներին իրիսան օգում են քինան»...

419. Առավոտը ծեզին, դեռ լույսը կարգին չբացված, Շեֆեկից մի թուրք գալիս է Ղարաչինար: Տեսնում է՝ միայն կոշկակարի բողկայում է լույս վառվում: Ներս է մտնում, ասում. «Մի տուն են ուզում պատել, ձեր գյուղից մի լավ վարպետի ցույց տվեք, գա, պատի»: Կոշկակար Պավին, որ կատակասեր մարդ էր, կիսաբաց դռնից նկատում է, որ հեռվից ընկեր Գարեգինը մատյանը քեի տակ դրած գալիս է: Այդ թուրքին մատով ցույց է տալիս, ասում. «Հրե՛ն, այն մարդը մեր գյուղի ամենալավ ուստան ա, գնա՛, նրա հետ խոսի՛ր»: Թուրքը մոտենում է ընկեր Գարեգինին, խնդրում է, որ նա գնա, իրենց համար տուն պատի: Գարեգինը ոչ միայն ուսուցիչ էր, այլև հայտնի գվարճախոս: Նա հասկանում է, որ ինչ-որ մեկը կատակ է արել: Մատյանը բացում է, թուրքին ցույց տալիս անուն-ազգանունները, ասում. «Տեսնո՞ւ՞մ ես, 23 մարդու օջերեդ ա կիրած, դու 24 -րդն ես, ազգանունդ ասա»:

420. Մեր գյուղերում տարածված էր, գնում էին, թուրքերի մոտից խաղող առնում, բերում, առատորեն զինի պատրաստում: Ղարաչինարցի Վալոդը բոլ-բոլ խաղող է առնում, կոխ տալիս հնձանի մեջ, բայց բավարար չափով տակառներ չունեք: Գնում է հարևան Բենիկի մոտ, որը հայտնի խմող քեֆ անող էր, խնդրում է, որ մի տակառ տա: Բենիկն ասում է. «Արա՛, խե՞ ես նեղություն քաշում, բոչկան տանում, քինա՛ կինին պեր, լցրո՛ւ մեր բոչկան, մեր պաղ-

վալում կենա»: Նա ասում է. «Ա՛ դուռունսաղ, դու թողում չես, վար իմ կիմին իմ պաղվալումը կենա, ես պիրեն, քո պաղվալում պահ տամ, յետնա հո՞ւր՝անա օգեն»...

421. Հունունց Լևանի տղա Յուրիկը խոսյանից 100 ռուբլի է ուղարկում և կնոջը զանգում, որ գնա, փոստից ստանա: Կինը գնում է, փողը ստանում, բայց ամաչկոտ կին էր, շենքից դուրս է գալիս, դրսում է փողը հաշվում, տեսնում՝ 9 հատ տասանոց է: Նորից հետ է գնում, ամաչելով ասում. «Ափո՛, պա մեր մարդը 100 մանեթ ա դարկել, դու 9 հատ տասանոց ես տվել»... Ափոն հանգիստ «բացատրում է. «Ախճի՛, դու էդքան միամիտ ե՞ս. Նովոսիբիրսկից մինչեւ Էստեղ փողը այ էն մանքովներավն ա եկել, կարող ա մինը հըղըցումը վեր ա ինգել մանքովան, ես մեղավեր ե՞մ»... Կինը սուսովուս շրջվում է, որ գնա, Ափոն, որ ազնիվ մարդ էր, ծիծաղելով ասում. «Հե՛տ դառ, ես մինն ել յեր կալ»...

422. Անդոն 3 լիտրանոց բալոնը վերցրած գնում է հաբևան Մուրադի տուն, ասում. «Մուրա՛դ դայի, մի լիտր գինի տուր»: Մուրադն ասում է. «Աբա՛, որ մի լիտր ա պետք, մի լիտրանոց բեր, էլի, խե ես իրեք լիտրանոց պիրել»: Անդոն խորամանկ ժպտալով ասում է. «Պա բէլքա մխրեկ շատ ես լցնո՞ւմ»...

423. Իգորի պապը վատառողջ էր, ամբողջ օրը տանն էր լինում: Լույսը բացվելուն պես հեռուստացույցը միացնում էր, գիշերվա կեսին, քնելու ժամանակ, անջատում: Տնեցիները՝ մեծ, քե փոքր, լսեին, քե չլսեին, վարժվել էին, որ հեռուստացույցի ձայնը միշտ լավի: Մի անգամ Իգորը տուն է գալիս, տեսնում է՝ հեռուստացույցն անջատած, բոլորը լուռ նստած: Չարմացած հարցնում է. «Էս տելեվիզորը խե՞ չեք միացնում»: Ասում են՝ պապին մեռել ա: Իգորն ասում է. «Պապին ա մեռել, պա մինը կա վե՞չ, վար էս կնոպկին հոպ տա, միացնի»...

424. Արամի ու Մարոյի հարսանիքն էր Մոսկվայում: Նորապսակների գլխավերևում գորգ էին փակցրել: Որոշեցին շնորհավորական մի խոսք գրել՝ «Շնորհավոր ձեր տոնը»: Երբ հասան «տոնը» բառին, մեծատառ «տ»-ն չիմացան ինչպես է գրվում, մոռացել էին՝ աջից ձախ է գրվո՞ւմ, քե՞ ձախից աջ: Ում հարցրին, չիմացավ: Հանկարծ Յաշան նկատեց, որ իրենց դասատուն հեռվում նստած է՝ ծեփացած, լուռ: Մոտեցավ, հարցրեց՝ ընկեր ..., մեծատառ «տ»-ն ո՞նց է գրվում: Նա, որ արդեն ահագին մեծացել էր, լուռ, ուշադիր նայեց

Յաշային, ասաց. «Արդուխանյան, ես էլ չեմ հիշում...» (երևի կարծեց, թե կատակ են անում):

425. Ռաշիդը սովորաբար շատ արագ էր քշում մեքենան: Մի օր մոր հետ տեղ պիտի գնար: Տնեցիներն զգուշացնում են. «Ա՛յ մամ, չթողաս արագ քշի, չթողաս 100 -ին էլ հասնի»: Մեքենան սլանում է «տրասսայով» 160 -ի վրա: Դե, արտասահմանյան հարմարավետ մեքենա էր, մայրը ոչինչ չէր զգում, բայց քանի որ տնեցիներն զգուշացրել էին, տղային ասում է. «Մամա՛ն քեզ մատաղ, կամաց ես չե՞ք քշում»: Ռաշիդը ցույց է տալիս տախտմետրը, որի սլաքը՝ 40 -ի վրա էր, և ասում է. «Հա՛, ա՛յ մամ, տեսնո՞ւմ ես՝ 40 -ի վրա եմ գնում»: Մայրը զարմացած ասում է. «Ա՛յ քեզ մատաղ, պա տնեցիները խե՞ն միշտ բողոքում քրզանա»...

426. Ընթրիքը վերջացրել են, տնեցիներով հավաքված հեռուստացույցով կլինո են դիտում Վորոնեժում: Հետաքրքիր կլինո է, բոլորը լարված նայում են, իսկ Ռազմիկը մստած տեղը քնով է անցնում: Ֆիլմի մեջ մեկը բռնցքով ծեծում է դուռը և գոռում՝ «Откройте, откройте!»: Ռազմիկը քնած տեղից վեր է թռչում, վազում դեպի դուռը, ասելով՝ «Сейчас, сейчас иду»...

427. Բռնի տեղահանության առաջին տարիներն էր: Նախկին համագյուղացիներից մեկը հանդիպում է Էմմային, հարցնում՝ հո՞ւնց եք: Էմման ասում է. «Միեկ լավ ենք. մեր մարդն արդեն մուսուրում ա աշխատում, լավ ենք»: Դիմացինը, որը հենց մսուր-մանկապարտեզի աշխատող էր, զարմանում է. «Ախճի՛, պա մսուրում տղամարդը հի՞նչ ա գործ անում»: «Մաշին ա քիշում», - պատասխանում է Էմման:

Զրուցակիցն ավելի է զարմանում. «Վա՛, պա մսուրին մաշին ա ինո՞ւմ»: «Ախճի՛, դե էն վար գիրիլ ա տանում, են մաշինը, լի», - ասում է Էմման:

428. Մեսրոպի թոռը Երևանից արձակուրդ էր եկել գյուղ: Գնում է դաշտ, տեսնում, թե պապն ինչպես է խոտ հնձում: Օգնելու փոխարեն «բարի» խորհուրդ է տալիս: Ասում է. «Պապի՛, գերանդին քաշում ես, խոտը հնձում, մեկ էլ դատարկ հետ տանում, նորից քաշում, խոտը կտրում: Չի՞ լինի, որ գերանդիի մյուս կողմն էլ սրես, առաջ տանելու ժամանակ էլ կտրի, հետ բերելիս էլ»: Պապը հանգիստ համաձայնում է. «Կլինի, քե՛զ մատաղ, եղպես էլ կլինի. կարելի է նաև, որ քամակիցս մի թոխա կապեն, քայլելիս քմակավս թոխա տամ»...

429. Հայրենական պատերազմից հետո կադրերի մեծ պակասություն կար: Վերին Շենից շատերն են կոլտնտեսության նախագահ աշխատել շրջանի տարբեր գյուղերում՝ Բաղունց Արմենակը Էրբեջում, Սաքունց Բախշին Մանաշիքում, Չանգլունց Վաղաշը Բուզլուխում և այլն: Երբեմն կատակով ասում էին՝ Վերին Շենից «սապոծնիկ» Մուսան ա մնացել, որ տանեն որևէ տեղ որպես նախագահ: Եվ ահա նրան էլ տարան Գյուլիստան, բայց նա գյուղատնտեսությունից գիտելիքներ չուներ: Ժողովուրդը գալիս է, անհանգստացած ասում՝ կարտոֆիլի բերքը հավաքելու ժամանակն է, սլիտի սկսենք: Իսկ նա հանգիստ ասում էր. «Վռազիլ միք, հալա գյողակ ամառը մնում ա»։ Այդպես էլ ուշանում է բերքահավաքը, կարտոֆիլի մեծ մասը մնում է ձյան տակ... Ասում են՝ այդ ձմռանը մկներն այնքան էին կարտոֆիլ կերել, այնքան էին բազմացել, լցվել էին դաշտերը: Դրանից հետո նման դեպքերում շրջանում դառը կատակով ասում էին. «Հալա գյողակ ամառը կենում ա»...

430. Դումաշ բիքը գյուղից գնում է Կիրովաբադ՝ տղայի տուն: Շատ լավ ընդունում են, օրերը լավ անց է կացնում: Մի առավոտ, երբ տղան ուզում էր գնալ աշխատանքի, Դումաշն ասում է. «Վալո՞ղ, քե՞զ մատաղ, սկացել եմ, վար Նախշուն ազին էստեղ մոտիկ ա ապրում, էսօր գնալու եմ, զիրավ հնցնեմ»: Տղան ասում է. «Ա՛յ մամ, սպասի՛ր, ես գործից կգամ, կտանեն նրանց տուն»: Մայրը չի համաձայնում, ասում է՝ տեղը բացատրի՛ր, մենակ կգնամ: Տղան ասում է. «Հենց մեր տան մոտից տրամվայ կնստես, 3 կանգառ գնաս, իջնես»: Նորից ու նորից զգուշացնում է՝ տես հա, տրոլեյբուս չնստես, մենակ տրամվայն ա էնտեղ գնում: Մայրը փոքր թոռան քաքից բռնում է, գնում: Բարձրանում է տրամվայ, սիրալիք ասում է. «Բարի լո՛յս ձեզ, ա՛յ ժողովուրդ»: Ոչ ոք ձայն չի հանում: Ավելի բարձր է ասում՝ բարի լոյս ձեզ: Դարձյալ պատասխան չեն տալիս: Դժգոհ ասում է. «Ա մռլատոն ա՞ սա, իսե՞ չեք միմենեղ խոսում»: Երբ տեսնում է՝ բոլորը լուռ են, քեքվում է դեպի թողը և կամաց հարցնում. «Վովա՛, կարող ա՞ սխալվել ենք, տրոլեյբուս նստել»...

431. Վերինշենցի Կոստյա Առաքելյանը լավ գինեգործ էր, աշխատում էր Արտաշատում: Մի անգամ Արտաշատից գնալու ժամանակ ավտոտեսուչը կանգնեցնում է Կոստյայի մեքենան: Տեսնում է՝ խմիչքի հոտ է գալիս, ասում է՝ խմած ես: Կոստյան բացատրում է, որ

ինքն ընդհանրապես չի խմում: Ավտոտեսուչը չի համոզվում, նրան տանում է միլիցիայի բաժին: Կոստյան այնտեղ հեռախոսը վերցնում է, զանգում նրանց պետին: Պետը ծիծաղելով ասում է՝ բարձրացիր 2-րդ հարկ: Կոստյան բարձրանում է, պատմում, քե ինչ է պատահել. ուղղակի նրա մեքենայից միշտ խմիչքի հոտ էր գալիս: Պետին ասում է՝ թող մեկը հետս գա, մեքենայի մեջ մի 10 լիտրանոցով լավ գինի կա, բերի քեզ համար, բայց վաղը կանխատրը հետ կոտարկես այդ ավտոտեսուչի հետ: Հաջորդ օրը նույն ավտոտեսուչը դատարկ կանխատրը տանում է ու ասում. «Բա իմ բաժին գինին չե՞ս տալիս»: Կոստյան ասում է. «Չէ՛, քո բաժինը երեկ ձեր վարչությունում են խմել»...

432. Հախունց Յուրիկի հայրը գոհվել է Հայրենական պատերազմում: Ապրել են մոր հետ միասին երկուսով: Տարիքը հասնում է, գորակոչում են բանակ: Ձորացրվելուց հետո վերադառնում է գյուղ, հետն էլ՝ մի ռուս աղջիկ: Հարևաններ, բարեկամներ, ընկերներ հավաքվում են, քեֆ անում: Մայրը մի պահ հարցնում է. «Յուրի՛կ, պա էն աղջիկը հո՞վ ա»: Նա ասում է. «Ա՛յ մեր, պյանը պյանան հնցել ա. իմ կնեկն ա, քու էլ հարսը»: Մայրը զարմանում է. «Ա՛ տղա, պա մեր շենումը մի հայ աղջիկ չկա՞ր, վար տիրա ես յետնատ քիցել, պիրել»... Յուրիկն ասում է. «Ա՛յ մեր, դե բանակում հայ աղջիկ ո՞նց ճարեմ. էդ ա պատահել, էդ էլ հետևիցս ա ընկել, եկել»: Մայրը հանգիստ բայց վճռական տոնով ասում է. «Դե՛, մաման քեզ մատաղ ինի, հունց պիրել ես, մհենց էլ տար, ճանապարհի դիր իրենց երկիրը... Ես դրա հետ ո՞նց պիտի ապրեմ. մա իմ լեզուն չի հասկանա, ես իրենը, նրան իմ եփած ճաշը չի դուր գալու, ինձ էլ նրա եփած բորշը»...

ա) Մի քանի տարի ապրեցին գյուղում: Հետո Յուրիկը կնոջը վերցնում է, երեխաների հետ միասին տեղափոխվում Երևան: Նրա ռուս կին Ջինան գյուղում արդեն հայերեն սովորել էր, բայց նրա իմացած հայերենը Երևանի խոսվածքի մնան չէր: Մի օր ամուսնուն ասում է. «Ա՛յ Յուրիկ, շենումը մի հանգավ հայերան սվերել եմ, ամա սեանց հայերանը օրիշ հանգի ա, դամիշ չեմ ինում: Նոր եմ գիդացել, վար սպիշկին սեանք լուցկի են ասում»:

բ) Ջինան կանացի շոր կարող էր: Իմանալով նրա այդ շնորհքի մասին՝ նոր հարևաններից մեկը մի կտոր գործվածք ձեռքին գալիս է նրանց տուն և Ջինային խնդրում, քե՛ լսել եմ, որ շոր կարող ես, ինձ համար մի դերիա կարիր:

Եվ բացատրում է. «Զինա՛, ամառային դերիա կկարես՝ քները կարճ»։ Զինան չի հասկանում, թե դերիան ինչ է։ Հարցնում է. «Կարող ա լեհինի հետի ես օգում»։ Հարևանուհին էլ չի հասկանում «լեհինը» ինչն է, կարծում է, թե խոսքը իր հարս Լենայի մասին է, որից ինքը խռով էր, ջղայնացած պատասխանում է. «Ա՛, իբր ուզում եմ Լենայի երեսը տեսնեմ, դու էլ ասում ես՝ նրա համար դերիա կարել տա՞մ»։ Տեսնելով, որ իրար չեն հասկանում, Զինան ասում է. «Ղամիշ չեմ ինում, հինչ ես ասում, կացի, Յուրիկը գործից կյա, տեսնամ հի՞նչ ես օգում»։ Երբ Յուրիկը գործից գալիս է ու այս բոլորն իմանում, ասում է. «Ախճի՛, լավ ա յեր չես կալել, խալխին կտորը փչացրել, քա չէ իմ աշխատած փողը հերիք չի անիլ, վար քո ջարմեքը փակեմ»։

433. Վերինշենցի Բիդունց Ղևին ու Բոխայան Բախշին կարտոֆիլ են տանում Գերանբոյ՝ վաճառելու։ Ապրանքը հաջող վաճառում են, գումարի մի մասով էլ ցորեն առնում, որ վերադառնան։ Մութն ընկնում է, մեքենա չի պատահում, որ գնան Վերին Շեն։ Մնում են կանգառում կանգնած։ Յուրտ ձմեռային օր էր, սառնամանիք։ Այդտեղ մի «չայխանա» կար։ Հերթով մտնում էին, մեկը տաքանում էր, թեյ խմում, գալիս, ապրանքի մոտ մնում, հետո էլ մյուսն էր գնում։ Մի քանի անգամ այդպես գնում-գալիս են, բայց մեքենա դեռ չի երևում։ Մի անգամ էլ երբ Ղևիի հերթն էր, ներս է մտնում, հեռախոսը խընդրում, զանգում գյուղի գրասենյակ, ասում. «Բախշին ընկել ա մեքենայի տակ, մեռել, ես էլ մնացել եմ կողքը կանգնած»։ Լաց ու շիվանն ընկնում է գյուղը։ Կոլտնտեսության բեռնատարը վերցնում են, 10 - 15 հարազատներ լցվում մեջը, գնում։ Հասնում են Գերանբոյ, տեսնում են՝ Բախշին խաչմերուկում պարկերի մոտ կանգնած։ Վրա են հասնում, փաթափվում, համբուրում ուրախացած։ Այդ պահին էլ Ղևիի հերթն էր, նա «չայխանայի» ներսում էր։ Բախշին հարազատներին հարցնում է, թե ինչ է պատահել։ Նրանք պատմում են, որ Ղևին է զանգել։ Այդ պահին Ղևին դուրս է գալիս «չայխանայից», ժողովրդին տեսնելով, արդարանում է, ասում. «Ա՛յ ժողովուրդ, մնացել էինք ես դյամաթում կանգնած, մեքենա չկար։ «Չայխանան» էլ էս ա ծածկելու են, գնան, գիշերն էստեղ կսառչենք։ Ուրիշ հնար չգտա, զանգեցի, եղպես ասեցի»...

Ղևին գյուղում հայտնի էր իր քննադատական ելույթներով,

միշտ «գաղափոյի»՝ ժամանակ սուր ելույթներ էր ունենում: Այդ դեպքը էլ հենց «գաղափոյի» նախօրյակին էր կատարվել: Հարցը դնում են կուսակցական ժողովում, Ղևկին խիստ նկատողություն տալիս, թե ինչու խաբել է մարդկանց: Ժողովից հետո, ուշ գիշերին, քայլում են խմբերով դեպի տարբեր կողմեր՝ իրենց տները: Ղևկին ահագին տեղ քայլում է Վերդունց Հայկազի հետ: Երբ հասնում են իրենց տներին ու պիտի բաժանվեին, Ղևկին քաշում է Հայկազի թևից, հարցնում. «Հայկազ գիդացի՞ր էս ժողովը հինչու հետի էր. ինձ նկատողություն տվին, վար գաղափոյին վախտը ելույթ չունենամ»...

434. Առավոտյան Դիմիկը տեսավ, որ թակարդը մուկ է ընկել, բայց դեռ սաղ է: Մտածեց՝ կգնամ գործի, կգամ, մուկն արդեն սատկած կլինի, դեն կգցեն: Իրիկունը եկավ տուն ուշ ժամի, տնեցիներն արդեն քնած էին: Տեսավ, որ մուկը դեռ սաղ է, պոչն էր ընկել թակարդի մեջ: Խառնեց բոլորին, թե՝ վեր կացեք, գնանք, մկանը սատկացնենք: Կինը դժգոհեց, թե՝ այ մարդ, մի մուկ սատկացնելու համար բոլորիս քնահարամ ես անելո՞ւ, պոլի փայտով կամ ավելով խփիր, սատկացրու: Մի որոշ ժամանակ տնեցիները շրխկոց-քրխկոց էին լսում, բայց քնած էին ձևացնում, չէին խոսում: Վերջապես շրխկոց-քրխկոցն ավարտվեց: Դիմիկը մտավ տուն, թե. «Այ կնիկ, հերդ պատերազմի ժամանակ «Ձա օտվագու» մեղալ չի՞ ստացել»: Կինը, որ մինչ այդ քնած էր ձևացնում, իսկույն մտածեց, թե երևի պատերազմի վետերաններին օգնություն են տալիս, ուրախացած ասաց՝ հա, ստացել ա: Ասաց և իսկույն տեղից վեր թռավ, պահարանից հանեց մեղալը, մեկնեց ամուսնուն, իսկ նա ասաց. «Դե մի բեր, քո ձեռքով դռշաս կայցրու, էն մուկը սատկացրել են»: Կինը մոտեցավ, տեսավ՝ թակարդը դատարկ, ավելն էլ ջարդված, կողքը վեր ընկած: Հիասթափված ասաց. «Ը՛մ-մ, քո արածը մզոված, մի մոկնի պատճառով երկու հազար դրամանոց ավելը ջարդել ես, երեկ էի առել»...

435. Շրջանի ղեկավարը Եղիշե Ալեքսանյանն էր: Կուսընթերցումի բյուրոյում քննարկում են անտառատնտեսության հարցը: Նշվում է, որ շատ թերություններ կան: Անտառատնտեսության նախագահը Կիրովաբադից էր՝ Գադիր Ահմեդով, որը ոչ հայերեն կարգին գիտեր, ոչ էլ ռուսերեն: Ապօրինի, թե օրինական փայտ էր վաճառում, փողն էլ

* Կոլտնտեսության տարեկան ընդհանուր ժողով (ծ.կ.):

յուրացնում, ուրիշ բան չէր հասկանում, ոչ էլ ուզում էր հասկանալ: Բյուրոյի վերջում նրան նկատողություն են հայտարարում, իսկ նա չհասկանալով՝ անտարբեր լսում է: Կողքի մատածը փորձում է հասկացնել. «Բեզ վըզովոր են տալիս»: Իսկ նա հարցնում է. «Դ-ա ի՞նչ ա, դրանից ի՞նչ օգուտ ունեն»...

436. Վերինշենցիները «Ամբասի ուրդ» դաշտում կարտոֆիլի բույլից էին անում: Բարձունքի հակառակ լանջին էլ պարսեցիներն էին աշխատում՝ նրանց դաշտն էր: Այդ երկուսի մեջտեղում գտնվում էր Վերին Շենի անասնապահական ֆերման: Հանկարծ հարայ է բարձրանում, որ ֆերմայի տանիքը փլվել է, հորթերը մնացել են տակը: Բարձունքի երկու կողմից էլ ժողովուրդը վազում են օգնության: Տեսնում են, որ բարեբախտաբար հորթերը տակը սաղ են մնացել: Բոլորը զարմանում են, մի պրսեցի ասում է. «Ա՛, էս վերինշենացուց հորթերը հենց են պարաշյուտիստ լինեն»...

437. Հրաչիկը Բաքվի նավթահանքերում էր աշխատում: Աշխատանքի ժամանակ վթար է տեղի ունենում, ոտքը ծանր վնասվում է: Բուժումը չի օգնում, սկսվում է գանգրենան: Տեղափոխում են Երևանի հիվանդանոց: Ընկերները գնում են տեսության: Ընկերներից Ջարմիկը շատ էր սիրում, որ ամեն ինչ, եթե հայկական է, գովաբանեն: Հարցնում է Հրաչիկին. «Էստեղի՞ բժշկությունն է բարձր, թե՞ Բաքվինը»: Հրաչիկն ասում է. «Էստեղինը բարձր ա»: Ջարմիկը ոգևորված նորից է հարցնում. «Հրաչի՛կ, դու քեզ վրա զգացել ես, չէ՞, որ էստեղի բժշկությունը բարձր ա»: Հրաչիկը, որ շատ հումորով էր, նույնիսկ այդ վիճակում կատակում է. «Ա՛, հո՞ւնց չեմ համոզվել. էնտեղ ասել են՝ ոտքդ պիտի ծնկի տակից կտրվի, էստեղ ասում են՝ ծնկից բարձր պիտի կտրենք. բա բարձր չի, հի՞նչ ա»...

438. Մի հանգստի պահի 3-4 ազատամարտիկներ Վերին Շենում մատած գրուցում էին: Մեկը նկատում է, թե ինչպես հարևան Տիգրանի չաղիկ սագերն արածում են խոտերի մեջ: Ասում է. «Տղաներ, ախորժակս դազի միս տվեց»: Մինչև ընկերները գլխի կընկնեին նրա միտքը, երկու հատին կրակում է, բերում, մաքրում, մտցնում կաթսայի մեջ: Հենց այդ պահին ներս է մտնում Տիգրանը՝ մորթած այծի «կեսանը» գրկած: Ասում է. «Տղաներ, սնարյադը պայթել ա, ասկողկան կպել այծին: Մորթել եմ, կեսը բերել ձեզ համար: Հիմա գինի էլ կբերեմ, միասին մի լավ քեֆ կանենք»: Նա գնում է գինի

բերելու, իսկ տղաները այժի միսը կտրտում են, այնպես լցնում նույն կաթսայի մեջ, որ սագի միսը չերևա: Միսն եփում է, ամեն մեկին մի աման լցնում են, ուտում, լավ խմում: Նորից են ամանները լցնում: Հանկարծ Տիգրանը մի կտոր միս է բարձրացնում, սլշած նայում ու զարմացած հարցնում. «Արա՛, քարճիկ ա, պա էծին քարճիկ կլինի՞»... Տղաները ծիծաղելով ասում են. «Էծն էլ ա քոնը, քարճիկն էր»...

439. ...Փոքրիկ Յուլյան նոր էր սկսել խոսել սովորել: Ինչ լսում էր, կրկնում էր: Մի անգամ ընտրությունների առիթով ինչ-որ մեկը հեռուստատեսությամբ չարախոսում է դարաբաղցիների հասցեին: Ժամեն տատիկն ասում է. «Ը՛մն, կիլիստ հողեն»: Մի քանի օր անց Յուլյան հանկարծ հիշում է այդ բառերն ու ասում. «Տատի՛, կիլիստ հողեն»: Բոլորը ծիծաղում են, իսկ երեխան զարմացած հարցնում է. «Տյա հի՞նչն ա»...

440. Կոլխազի խոտհնձի բրիգադը քափ ու քրտինքի մեջ աշխատում էր: Ընկերներից մեկը Ժորիկին դիտողություն է անում. «Արա՛, խե՞ չես գերանդիդ սրում, տեսնում չե՞ս, որ չի կտրում»: Ժորիկը հանգիստ պատասխանում է. «Օգու՛մ ա կտրի, օգու՛մ ա՛ չէ. իմն էն ա՛ գերանդին տանեն-սլիբեն»...

441. Մի օր հարս ու կեսուր Պյատիգորսկում իրենց բակում նստած զրուցում էին: Հարսը պատմում է իրենց նոր ռուս հարևանի մասին, որը շատ ծույլ է: Կեսուրը՝ Ֆլորան, ասում է. «Ը՛մ-մ, նրա մարդը թաղեն, հենց ա ռոդդոմի կատու լինի»: Հարսը ծիծաղելով հարցնում է. «Ա՛յ մամ, խե՛ ռոդդոմի կատուն օրիշ հանգի ա լինո՞ւմ»: Նա բացատրում է. «Բա դու չես տեսե՞լ մեր ռոդդոմում. ծննդկանների համար «խոնչեք» են բերում, տեսակ-տեսակ ուտելիք: Դրանց մեծ մասն էնտեղի կատուն էր ուտում: Չաղացել էր, կոտրատվելով ման էր գալիս. բա նա լայաղ կանե՞ր մոկոն բռներ»...

442. Դարաշինարցի Կալչակին ինչ-որ զանցանքի համար ձերբակալել են: Տանում էին «Փակի քոլը», այնտեղ միլիցիայի հսկողության տակ խոտ էր հնձում: Դե, «Փակի քոլն» էլ ջուրը պակաս տեղ էր, աղբյուր չկար: Մի բոշուն կանգնում է մոտակա քփի վրա, բարձրաձայն կչկչում: Կալչակը ջղայնացած ասում է. «Այ գահրումա՛ր, քե՞զ հինչ ա իլել, միլիցան կլխանդդ յերը կանգնած ա՞. թոիր, գնա «Գյոդակ» արխից ջուր խմի, էլի»...

443. Խորհրդային տարիներին ներքին շենքի Հակոբյան Ֆելիքսը Վորոնեժում էր աշխատում: Արձակուրդին լավ հագնված գալիս է հայրենի գյուղ: Գյուղամիջում հանդիպում է իր ընկեր Արթուրը, ուշադիր նայում, ասում. «Պիտի միասին գնանք Ղարաչինար, գործ կա»: Հարցնում է՝ ի՞նչ է պատահել: Նա ասում է՝ ճանապարհին կբացատրեն: Արթուրը «ռայպոյում» էր աշխատում՝ շրջսպառկոտայում, որին ենթարկվում էին համարյա բոլոր առևտրական օբյեկտները: Ֆելիքսին լավ հասկացնում է, թե ինչ պիտի անի, գնում են: Մտնում են Բեթոյի խանութը, Ֆելիքսը պապկան քեի տակ դրած լուրջ հայացքով չորս կողմը նայում է, հարցուփորձ անում ռուսերեն: Հետո խնդրում է մի հատ կոշիկի կրեն: Բեթոն տալիս է կրեմը: Հարցնում է՝ ի՞նչ պիտի տամ: Բեթոն ասում է՝ 20 կոպեկ: Ֆելիքսը ռուսերեն խոսելով աղմկում է, թե. «Չես տեսնո՞ւմ՝ վրան գրված է 14 կոպեկ, ինչո՞ւ ես խաբում, կանչիր ձեր վարիչին»: Բեթոն ասում է՝ ես եմ վարիչը: Ասում է՝ կանչիր դիրեկտորին: Բեթոն ասում է. «Դիրեկտորն էլ եմ ես, լոխ ես եմ»: Ֆելիքսը պապկան դնում է սեղանի վրա, գրիչը հանում: Այդ պահին ներս է մտնում Արթուրը, ռուսերեն հարցնում Ֆելիքսին, թե ինչ է պատահել: Նա ասում է, որ իրեն խաբել են, ուզում է ակտ գրել: Արթուրը նրան «խնդրում» է, թե. «Դրսում մի քիչ քայլիր, հանգստացիր, ջղայնությունդ անցնի, ես հիմա կպարզեմ, թե ինչու է խաբել»: Ֆելիքսի դուրս գալուց հետո Արթուրն անհանգիստ ձևով ասում է. «Ա՛ դուլադդ մզոված, խե՛ս ես մեր տոնը քանդում. ես շան տղան Մոսկվայից եկած ռևիզոր ա, ռայկոմն էլ քափշուր ա արել, որ ուշադիր լինենք, մի վատ բան չգրի»: Բեթոն իրար է խառնվում, ինքն իրեն ասում՝ բա ես ի՞նչ անեմ: Վերջը հազար ռուբլի է հանում, տալիս Արթուրին, ասում. «Տես կկարա՞ս էդ շան տղին սուսացնես»: Արթուրը փողը վերցնում է: Հաջորդ օրը Ֆելիքսի ու մյուս ընկերների հետ գնում են Կիրովաբադ, ամբողջ օրը քեֆ անում: Վերջում Արթուրն ասում է. «Էքուց էլ Բուզլուխ կքինանք»: Ֆելիքսն ասում է. «Քե՛զ մատադ, շառդ քաշիր, թող օտպուսկս հալալ անցկացնեն»...

444. Պատերազմի տարիներին Ղարաբաղից մեկը սայլը կադամբ բարձած տանում է Վերին Շեն, որ վաճառի: Հանդիպում է Զյուխանց Եղիշը: Սայլապանը նրան հարցնում է. «Ա՛ դայ, ձեր ո՞ր գյուղում լավ կվաճառվի, կադամբը տանեմ էնտեղ»: Եղիշն ասում է. «Էս սարի բամակին մի մալականի գյուղ կա, տար էնտեղ»: Նա սայլը

հետ է շրջում, որ գնա, ներկաները ծիծաղելով ասում են. «Ա՛յ ընկեր, զարափաթ ա անում, մալականներին գյուղումը լիհա մենակ քյալամ ա ինում»...

445. Հայկանուշը նիհար, փոքրամարմին կին էր: Տարիքն արդեն՝ առել էր: Սի անգամ մտահոգված ասում է. «Ախճի՛, միեկ վար սիենց եմ, պա որ մեռնեմ, էն վա՞խտը հինչո՞ւ մման եմ ինական. կալիքեք, գոնե կողքիս շոր-մոր լցնեք, շնորհքս մխրեկ տեղը կյա»...

446. Հայտնի զվարճախոս Շիրինը նաև լավ երաժիշտ էր: Սի անգամ Ներքին Շենում Առստամանց Նազարի տանը հարսանիք էր: Շիրինը ոգևորված դիմել էր խփում ու երգում իր սիրելի երգերից մեկը՝ «Այան մածունը մերել ա»: Այդ պահին Նազարը, որ խմող մարդ էր, մոտենում է, Շիրինի կոկորդից բռնում, ասում. «Ա շա՛ն տղա, իմ այան մեռած ա, հո՞ւնց ա մածուն մերել, տնազ ես անո՞ւմ»... Դե, Շիրինը շատ սրամիտ էր, իսկույն կարողանում է հանգստացնել, ասում է. «Ա՛յ Նազար դայի, քո այան մեռած ա, ախր իմ այան սաղ ա, ես նրան եմ ասում»...

Դրանից հետո Շիրինը երգերն զգույշ էր ընտրում: Սի որոշ ժամանակ հետո նրանց խմբին հրավիրում են Դարաչինար՝ հարսանիքի: Քեֆ-ուրախության, երգ-պարի տաքանալուց հետո Շիրինն սկսում է իր հայտնի կատակ-երգերից մեկը՝ «Ծիտը ծառին սիդիտ արավ, ախտոնիկը վիդիտ արավ»... Հակառակի մման հյուրերից մեկի մականունը «Ծիտ» էր, քեֆն էլ լավ: Ծիտ բառը լսելուն պես զայրանում է, հարձակվում Շիրինի վրա: Հարսանիքն ընդհատվում է: Շիրինը ճարահատյալ դիմող բողնում է իր երաժիշտ ընկերների մոտ, ասում. «Տղե՛րք, նե վեգյոտ, ես գնացի»...

447. Շրջանի միլիցիայի բաժնի տեսուչ աղյբեջանցի Աֆյաքը մի անգամ Վերին Շենում մտնում է Վալոդի խանութը: Տարին վերջանում էր արդեն, բոլորը հաճախ խոսում էին այն մասին, քե գյուղերում վիճակն ինչպիսին է, եկամուտներն ինչպիսին են: Վալոդը հարցնում է. «Աֆյաք, շրջանում ի՞նչ նորություն կա, պատմիր, դու կիմանաս»: Աֆյաքն ասում է. «Դե, օրինակ, Պարիս գյուղը լավ եկամուտներ է ստացել»: Վալոդը նրան ընդհատելով ասում է. «Ա, էդ հեչ, ես նրանց գյուղի եկամուտի չափ օրական խալտուրա եմ անում»...

448. Հայրենական պատերազմի տարիներին կուսըջկոմի երկրորդ քարտուղարը ռուս էր՝ Սևաստյանով: Տարեկերջին շրջանային

ակտիվի ժողովում նա ռուսերեն զեկուցում էր կարդում: Բոլոր տնտեսությունների ու հիմնարկների ղեկավար աշխատողները ներկա էին: Ամեն մեկն ուշադիր հետևում էր, քե իր կամ իրենց գյուղի անունը երբ կնշվի: Պլանները կատարած մի քանի գյուղի անուն է կարդում Սևաստյանովն ու ասում՝ «ի տակ դալեյե»... Ղարաչինարցի Գարոն նստած տեղը նեղացած կամաց ասում է. «Մաքամ մենք փիս ենք գործ անո՞ւմ, խե՞ մեր գյուղի անունը տվալ վէշ»: Բաբայունց Ազատը կողքից ասում է. «Ա՛յ Գարո, ռուսերեն լավ չե՞ս հասկանում, պա «ի տակ դալի»-ն էլ ձեր գյուղն ա, էլի»...

449. Հուդովանց Եղիշը մի անգամ ուշացած է գնում դաշտ՝ աշխատանքի: Ընկերները հարցնում են. «Եղի՛շ դայի, շենումը հի՞նչ նորություն կա»: Նա հանգիստ պատասխանում է. «Ձեզ մատաղ, աշխարհքիս նորությունները կնանուցը հարցրեք, տղամարդիկ քոանգում են, շատ պյան լավ չեն սկանում: Հինչ նորություն լինում ա, կնանիքը պատմում են, էքսի օրը քերթերը կիրում են, իրիկունն էլ տելեվիզորն ասում ա»...

450. Վերինշենցի վարպետ Խորենը (Բայանվեցի էին ասում) Բազմահնուտ արհեստավոր էր և հարգված մարդ: Ճանապարհին հանդիպում է համագյուղացի մի կին: Բարևում են, հարցուփորձ անում իրար: Կինը տխուր ասում է. «Է՛, ախր են հարսը րախսա չի պիրում»: Հաջորդ հանդիպմանը դեռ չբարևած, այդ կինը մորից է ասում. «Ախր են հարսը րախսա չի պիրում»: Խորենն էլի է հուսադրում: Երբ այդպես շատ է կրկնվում, մի օր էլ Խորենն ասում է. «Ա՛յ նանի, դե՛ ես հի՞նչ անեմ, որ րախսա չի պիրում. հորաքն ու քյոթուկը ձեռքիս ա՞, վար մինը կոպիտ անեմ, դնեմ խոտիդ, ասեմ՝ տար»...

451. Վերին Շենում ...-ը հանդիպում է իրենց բարեկամ Բյացի դայուն: Ասում է. «Էս հինչ լավ էր, վար պըղըհեցիր, ձեր շինացի ...-ին ճնանչում ե՞ս»: Բյացին պատասխանում է՝ լավ են ճանաչում: Նա ասում է. «Նրա ախճիկը հո՞ւնց ա, եկել ենք, վար օգենք, հարս տանենք»: Բյացին ասում է. «Ղոչաղ ախճիկ ա, քեզ մատաղ, մաքրասեր, Բաղ ու Բախճա կբիջարի, ապրանք կպահի»: Մի քիչ էլ մտածելով, ավելացնում է. «Նիրա վար հարս տանեք, շոն պըհիլի կարիք չի ինական»...

452. Վերինշենցի Գյուլումյան Հանեսը զվարճախոս մարդ էր: Ասում են՝ եղել է Անդրանիկ զորավարի քիկնապահներից: Երբ մեկին

ուզում էր ասել՝ քեզ ազատ զգա, ասում էր. «Աջ տոբիր, ձախ շալտիր», այսինքն քեֆդ ինչ տալիս է՝ արա...

453. Դոսին խմող ու կատակասեր մարդ էր: Մի օր կնոջը դիտողություն է անում. «Խէ՞ չես էս տան ըռաջին մի քանի լաք կանաչ խիյար անում, վար խմելիս զակուսկի անենք»: Երևի կինն այդպիսի գործեր չէր սիրում, գուցե՞ տան առաջ բանջարեղեն ցանելու հնարավորություն չկար, քե՞ ինչ: Մի օր Դոսին երբ տեսնում է՝ սեղանի վրա նորից վարունգ չկա, թոռանն ասում է. «Մի գնա հարևան Դոշունց Բենիկենց տոն. նա դրբազա սարքող ա, դրբզին էլ միշտ կանանչ կրասկա ա քիցում. ասա, մի քիչ կանանչ կրասկա տա, դամաշնիկներս ռանգ են տլական, դնեմ ստոլին»...

454. Ինչպես հայտնի է, ապարանցիների՝ մականունն «էշ» է: Շահենն այդ քեմայով կատակներ է անում իր ապարանցի ընկերոջ՝ Վրեժի հետ: Մթնոլորտը մի քիչ խաղաղացնելու համար Շավարշը կողքից պաշտպանում է Վրեժին: Նա Շահենին ասում է. «Արա՛, քիչ խոսա, չե՞ս իմանում, որ ապարանցիներն էլ, դարաբաղցիներն էլ մեծ դեր են կատարել Սարդարապատի ճակատամարտում»: Շահենը ծիծաղելով ասում է. «Դրա պատճառն էն ա, վար մեր ղեկավարները չեն ուզեցել մարդկային կորուստներ տալ»...

455. Պրսեցի Աբգարը գյուղամիջում հանդիպում է իր տղայի բաջանաղ Ալբերտին: Թեև քոնում է, ասում՝ գնացինք մեր տուն, մի լավ խմենք: Ալբերտը չեմուչում է անում, ուզում է հրաժարվել: Աբգարը հաղթանդամ մարդ էր, նրա թևատակերից քոնում է, հրամայական տոնով ասում. «Արա՛, քեզ հո՞վ ա հարցնում. գնում ենք»: Տանում է: Ալբերտը նկատում է հեռվում կանգնած իր ընկերոջը և ձայն է տալիս՝ Կարո, քեզ մատաղ, դու էլ եկ: Տանն էլ լավ ուտելիք-խմելիք կար պատրաստ: Սկսում են քեֆը: Մայրը մոտենում է, փորձում համոզել Աբգարին, որ քիչ խմեն: Ասում է. «Ախր դու մեծ ես, դիմանում ես, դրանք ջահել են, վնաս կտա, քիչ խմեցեք»: Աբգարն ասում է. «Այա՛, ախր շատ եմ է սիրում էս անտերը. սերն արգելիլ չեն »...

456. Յուրիկը ֆուտբոլի մոլի սիրահար էր: Արդեն մեծացել էր, չէր կարողանում ստադիոն գնալ: Բայց հեռուստացույցով բոլոր խաղերը դիտում էր: Այնպես տարված էր նայում, որ շուրջն ինչ էլ կա-

* Նաև դարաբաղցիների (ծ.կ.):

տարվեր, ոչ նկատում էր, ոչ լսում: Կինն ինքն իրեն ասում էր. «Երանի երբ ես մեռնեմ, այդ օրը փութաբոլ չլինի»...

457. Ընկեր Կոլյան աշակերտներին տարավ «Ձաքդա հողը», որ այնտեղ հրացանով կրակեն: Երբ տեղ հասան, տեսան՝ Դարազադյան Կոստյան այնտեղ փուշ է կտրում ցակատով: Ընկեր Կոլյան հարցրեց. «Կոստյի, հի՞նչ ես անում»: Նա ասաց. «Կրտուսյի եմ վարում»: Ընկեր Կոլյան նեղացած ասաց. «Էդ հի՞նչ ես խոսում. դու փուշ ես կտրում, ինձ ասում ես՝ կրտուսյիլ ես վարո՞ւմ»: Նա ծիծաղելով ասաց. «Դե՛, վար գյուղում ես, հի՞նչ ես հրեցրնում»...

458. Ինքնապաշտպանության ծանր օրերին շրջկենտրոնում աշխատող բուրք պաշտոնյաները հեռացել էին: Շրջգործկոմի նախագահի տեղակալ Ռաջաբով Յավարն էլ էր գնացել: Նրա փոխարեն ուրիշի էին նշանակել, որը մտնում է կաբինետ, տեսնում՝ սեյֆը փակ, բանալին չկա: Մտածում են, քե ինչպես բացեն: Որոշում են Դանիելյան Իսային կանչել՝ նա հմուտ վարպետ է, մի հնարով սեյֆը կբացի: Բաբայան Միշան ասում է. «Ա, Հավարի, սեյֆում հի՞նչ պիտի լինի, վար տիրա հետի չարչարվում եք, ներսում մի գրաֆինկա կինի ա ինական, մըկել մի աման քոթ»: Եվ իրոք, երբ սեյֆը բացեցին, ներսում միայն մի բալոն գինի էր ու մի փոքր բանկայով՝ քթու...

459. Յուրիկը ռայպոյի վարորդն էր, Բուլոն՝ ապրանքագետ: Երկուսն էլ շատ խոսող, զրուցող էին: Մի օր միասին գնում են Կիրովաբադ՝ ապրանք ստանալու: Հետ դառնալիս Բուլոն ասում է. «Յուրիկ, մեքենան կանգնեցրու, իջնում եմ»: Նա զարմացած հարցնում է. «Ինչո՞ւ»: Բուլոն ասում է. «Պիտի թող անես, որ զոնե Գերանբոյից մինչև գյուղ ես խոսեմ, քե չե՛ ես իջնում եմ, ավտոբուսով գնամ»...

460. Համլետը վարսավիր էր, բայց սափրելիս շատ էր կտրտում: Օվուչը մտնում է վարսավիրանոց, հարցնում. «Սափրելն ի՞նչ արժե»: Նա ասում է՝ 50 կոպեկ: Օվուչն ասում է. «Ես 3 մանեք եմ տալիս, բայց եթե կտրեցիր՝ ամեն կտրելուն պիտի 50 կոպեկ տաս»...

461. Շատվերյան Ավագինը շինարարությունում բանվոր էր: «Պրաբարն» ամսվա վերջում նրա վրա 600 ռուբլի է գրում, 15-ը տալիս նրան, մնացածն ինքը վերցնում: Ռևիզոր է գալիս ստուգելու: Յուցակի մեջ տեսնում է՝ Ավագինի վրա 600 ռուբլի գրած, ստորագրած: Ծիծաղելով ասում է. «Այ ձեր տունը շինվի, ես հի՞նչ եք գրել.

երե 600 -ը մանեթներ սարքեր, պոլին շաղ տաք, Ավագինը կարալ չի ամսումը հավաքի, հաշվի»...

462. Կամոն «թունդ» խմող էր, բայց ինչքան էլ խմեր, չէր հարքում, դրա համար էլ նրան «Ակուլա» էին ասում: Երբ մի տեղ սեղանի հանդիպեր, առաջին հերթին իր ձեռքով օղու շիշը կվերցներ, լցներ գինու բաժակի մեջ, խմեր, հետո կասեր՝ բարև ձեզ: Մի օր հանդիպում է իր բարեկամ Վալդը: Հարցնում է՝ հո՞ւնց ես: Նա ասում է. «Լավ չեմ, երկու բորջում վար խմում եմ՝ նի ա կյալիս»...

463. Ներքին Շենում Ժմհարանց Բաղդասարը ջրաղացական էր: Շատվերանց Եփրեմն էլ էր ջրաղացական: Մի երեկո Բաղդասարը գնում է Եփրեմի մոտ, խնդրում, քե՛ն ջրաղացի քարը տուր, պետք ա: Եփրեմը մերժում է: Բաղդասարը նեղացած թողնում է, հեռանում: Առավոտյան Եփրեմը մտնում է ջրաղաց, տեսնում է՝ քարը չկա: Համոզված ասում է. «Մենակ Բաղդասարը կկարողանար այդ քարը տանել»... Եվ իրոք, նա էր տարել. նրա ուժը հայտնի էր գյուղում:

464. Դարաչինարցին Ռոսաստանում ընկերների հետ նստած քեֆ անելիս է լինում: Հանկարծ կինը զանգում է ձեռքի հեռախոսով: Ամուսինը, նկատելով, որ կնոջ համարն է, ջղայնացած ասում է. «Մի՛ խանգարիր, քեֆ եմք անում»: Կինն ասում է. «Ախր վռագ բան է, դեպք է պատահել՝ երեխան գրիչը կուլ ա տվել»: Ամուսինը հանգիստ ասում է. «Ոչի՛նչ, մատիտով յոլա գնացեք, ես տուն գալիս մի նոր գրիչ կբերեմ»...

465. Մեր գյուղերում ուժը չափելու ձևեր կային: Գնում էին գետափ, խոշոր քարեր ընտրում, փորձում, քե ով կարող է՝ բարձրացնել: Նաև այսպիսի ձև կար: Երկու բռունցքը դնում էին գետնին, մեկը կանգնում էր այդ բռունցքների վրա, և պետք է նրան այդպես բարձրացնել...

466. Արշակ վարժապետը դարաչինարցի մի վարպետ է կանչում իրենց տուն, որպեսզի ինչ-որ գործ անի: Հաջորդ առավոտյան վարպետը գնում է նրանց տուն: Դեռ գործը չսկսած, վարժապետն ասում է. «Քեզ մատաղ, ձեր տնից ես գալիս, սոված կլինես միասին զավորիկ անենք, հետո գործը կսկսես»: Ամեն մեկի համար երկու հատ ձու է խաշում, դնում սեղանին, նաև մեղր, կարագ ու պանիր: Օղին լցնում է ամեն մեկին մի բաժակ, ասում՝ դե, բարի լույս լինի, սկսենք: Խմում են, սկսում ուտել: Մի քիչ հետո վարժապետն ասում է.

«Էն մյուս ծուն էլ ա քո փայը, խե՞ չես օտում»։ Վարպետը խորամանկորեն ժպտալով ասում է. «Ախր ես մեր տանն ամեն ձվի հետ մի ստաքան արադ եմ խմում»։ Վարժապետն ասում է. «Լավ ես անում, կգնաս էն մի ստաքանը ձեր տանը կխմես»^{*}։

467. Վաղոն սովխողի տնօրենն էր, Բորիկը՝ գլխավոր ինժեներ, Նիկիտը՝ գլխավոր ագրոնոմ։ Հաճախ էին միասին ազատ ժամանակն անցկացնում։ Երբ Վաղոն ու Բորիկը շախմատ էին խաղում, Նիկիտը «բալետ» էր անում Վաղոյին։ Երկար տարիներ հետո Վաղոյին տեղափոխում են այլ աշխատանքի, տնօրեն նշանակում Բորիկին։ Փաստաթղթերի «հանձնում-ընդունում» էին կատարում։ Կեսօրին հետ են դառնում, միասին ճաշում, հետո էլ սովորության համաձայն նստում են, շախմատ խաղում։ Նիկիտն ամեն քայլի հետ ոգևորված գովում է Բորիկին, ասում. «Պա՛հ, էս հինչ ուժեղ խող էր»։ Վաղոն զարմացած հարցնում է. «Ա՛յ Նիկիտ, տասը տարի ինձ էիր բալետ անում, էսօր քեզ հի՞նչ ա պատահել»։ Նիկիտը հանգիստ բացատրում է. «Պա էսօրվանից արդեն Բորիկն ա իմ նաչալնիկը»...

468. Բագրատը մի լավ էշ ուներ։ Տղան միշտ անտառ էր տանում, փայտ կամ ցախ բերում։ Էշը դրան էր սովորել։ Մի օր Բագրատն ուզում է փուշ բարձել, տանել այգին՝ «չափար» սարքել։ Էշը հանգիստ չի կանգնում, ջղայնացած մահակով խփում է, էշի աչքին է կախում, կուրացնում։ Տղան բանակ գնալու ժամանակ հորն ասում է. «Ա՛յ պապ, էս էշը կծախես, քե չէ մի օր էլ խփելու ես սատկացնես»։ Տղայի գնալուց հետո նա խկապես որոշում է վաճառել։ Հարևան Զինին գալիս է, որ առնի, հանկարծ ասում է. «Չէ՛, էշիդ աչքը վեր ածած է»։ Բագրատը զարմացած ասում է. «Արա՛, հո՞ւնց անենք, դասատո՞ւ ա, քեզ համար գրավոր ա՞ ուղղելու, էշ ա, էլի, լավ բեռ ա տանում»...

469. Բռնի տեղահանված Հայկն ու Ազոն Ռուսաստանում շուկայում կանգնած ապրանք էին վաճառում։ Մի օր Հայկը մոտենում է, ասում. «Գնում եմ մասլազավոդ, յուղ բերեմ, ծախենք, կգա՞ս»։ Ազոն ասում է. «Ես գամ՝ հի՞նչ անեմ, եթե լավը լինի, մի յաշիկ էլ ինձ համար կբերես, փողդ կտամ»... Հաջորդ օրը Հայկը զանգում է, քե. «Յուղը բերել եմ, եկ, տար»։ Ազոն ասում է. «Ա՛, դե, ես հի՞նչ գամ,

^{*} Մեր գյուղերում սովորաբար առավոտյան միայն մի բաժակ էին օդի խմում (ծ.կ.):

երկուսն էլ իրար նման յուր է, էլի, իմ յուրն էլ դիր քո յուրի կողքը, ծախիր, փողը կտաս ինձ»: Հաջորդ օրը Ագոն գնում է, հարցնում՝ յուրս ծախեցի՞ր: Ասում է՝ հա: Նա ասում է. «Դե, փողս տուր»: Հայկը հանում է, մի արկղից օգուտ մնացած փողը տալիս Ագոյին: Նրա գնալուց հետո ինքն իրեն հարցնում է. «Արա՛, ոչ փող ա տվել, ոչ մապազավողն ա եկել, ոչ առել ա, ոչ ծախել, ես փողն ինչո՞ւ տվեցի նրան»...

470. Հայաբիսցի Բորիկը Երշովում առևտրով է զբաղվում: Ընկերների հետ զրուցելիս ասում է. «Հինչ փող աշխատում եմ, տալիս եմ մեր կնկանը. խև ե՞մ, վար կշտիս պահեմ, ջուբերս ստուգի, կլխիս գործ սարքի»...

471. Ջահելներից մեկը գալիս է, ասում. «Բորիկ ամի, պապան լավ գինի ունի, ամա տալ չի որ խմես»: Բորիկը գնում է նրանց տուն, մտահոգված ձևով ասում. «Պա ասիլ չես՝ գիշերը փիս երազ եմ տեսել»: Նա հարցնում է՝ ի՞նչ ես տեսել: Բորիկը պատմում է. «Երագունս գնում էինք ձեր պաղվալը, տեսնում էինք՝ բռչկադ ծակվել ա, գինին լրիվ քինացել, պաղվալը ցեխ սարքել»... Տանտերը դուրս է գալիս սենյակից, մի բալոն գինի բերում, դնում սեղանին, ասում. «Արխային խմիր, ծակվել չի»...

472. Մի խումբ երիտասարդներ Երևանից ավտոբուսով շրջան էին գնում: Մի պրսեցի վերինշենցի Արկադյային հարցնում է. «Կկարա՞ս ասես՝ մի ձիառուծը հինչիև ա հավասար»: Արկադյան ասում է. «Երկու էլի ուժի»: Անսպասելի պատասխանից պրսեցին լռում է ու այլևս հարցեր չի տալիս:

473. Հայրենական պատերազմի ծանր տարիներին էր: Վերինշենցի Օհանը մի ձմեռնամուտի իրիկնադեմին իրենց տան մոտ կանգնած էր: Տեսնում է՝ ճանապարհով մի օտարական է անցնում: Հարցնում է. «Ո՞վ ես, ո՞ր ես գնում»: Նա ասում է, որ Թալիշից է, իրենց գյուղն է գնում: Օհանը բարի մարդ էր, ասում է. «Էս ժամին ճանապարհ չեն գնա, արի, մեր տանը կքնես, առավոտյան կգնաս»: Մա համաձայնվում է: Մտնում է տուն: Լամպը հագիվ էր լույս տալիս: Յուրտ ու կիսախավար տան մեջ լիքը երեխաներ էին: Օհանն ասում է. «Էն ջուրը եռացրեք, էս մարդը մի բաժակ չայ խմի»: Տան կիներ քեյնիկը դնում է կրակին, փորձում կրակն ուժեղացնել, ոչինչ չի ստացվում: Տունն էլ ծխով լցվում է: Երեխաները հերթով մոտենում,

փչում ու փչում են, կրակը կարգին չի վառվում: Վերջապես մի բաժակ գոլ ջուր են տալիս, հյուրը խմում է, քնում: Դե, սով տարի էր, ամեն ինչ պակաս էր:

Անցնում են տարիներ: 1974 թ. մեխանիզացիայի տեխնիկումում սովորող վերինշենցի մի երիտասարդ իր ուսանողական ընկերոջ հետ միասին Երևանից գնացած է լինում Թալիշ: Մի քանի օր հետո այնտեղից Վերին Շեն ճանապարհվելիս գյուղամիջում հավաքված-ներից մի տարեց մարդ, իմանալով, որ երիտասարդը Վերին Շենից է, հարցնում է. «Բալա՛, քեզ մատաղ, 42 թվին ձեր գյուղում մի Օհան դա-լի կար, տեղյակ չե՞ս, նրանց փիչը նիկցա՞վ, քա՛ չե՞...»

474. Վերինշենցի «Յապոն» դալին մի առիթով գնում է իր ընկե-րոջ տուն: Կինը սեղան է բացում, գինի դնում: Երկու բաժակ խմելուց հետո Գարեգինը կնոջն ասում է. «Էս զիհարը ստողան տար, կորչի, չայ բեր խմենք»: Կինը «գրաֆիկական» տանում է, փոխաբերը քեյ բե-րում: Մի որոշ ժամանակ անց Գարեգինն է հյուր գնում Յապոնի տուն: Նրա կինն էլ է սեղան բացում, գինի դնում: Գարեգինն անընդ-հատ խմում է ու ոգևորված գովում. «Պա՛հ-պա՛հ-պա՛հ, էս անտերն իշտահու դեղ ա, քանի խմում ես, իշտահղ բացվում ա»: Յապոնը ծի-ծաղելով ասում է. «Արա՛, էս անտերը ձեր տանը զիհար ա, մեր տանը՝ իշտահու պինավի՞ք, նույն գինին ա , էլի՞, ես էլ եմ Ներքին Շենից բե-րել, դու էլ»...

475. Եղիշը տարիքն առած մարդ էր: Մի ձմեռ մրսում է, քե՞ ինչ, ջերմությունը բարձրանում է: Կինն անհանգստանում է, որ մեծ մարդ է, կարող է հանկարծ «մի բան» պատահի: Հեռագիր է տալիս տղային, որն Աբովյանում էր ապրում: Տղան վեր է կենում, գնում գյուղ: Դե՛, մինչ այդ Եղիշին արդեն դեղ-մեղ էին տվել, քրտնել էր, լավացել: Երե-կոյան իրենց բակում հանգիստ նստած զրուցելիս տղան հանկարծ ներս է գալիս: Հայրը զարմացած հարցնում է. «Էս հի՞նչ ա պատահել, առանց իմաց տալու եկել ես՝ պռազդնիկ չի, ռաժդեննի չի»... Տղան ասում է. «Ա՛յ պապ, լսեցի, որ հիվանդ ես, անհանգստացա, որ հան-կարծ կարող ա մի բան պատահի, եկել եմ»: Հայրը հանգիստ ասում է.

«Պապան մատաղ ինի, ենթադրենք՝ ինձ մի բան ա պատահել, տհենց վեր ես կացել, ձեռքերդ ծափ տալով եկե՞լ»^{*}:

476. Բորիկն ու կինը Ռուսաստանում ապրանք էին առնում, տանում, ուրիշ տեղ վաճառում: Մի օր լավ փող աշխատած, տուն գնալու ժամանակ մեքենան վթարի է ենթարկվում, ջարդովիշուր լինում, բայց իրենք լավ են պրծնում: Կինն ախուլվիշ է անում. «Պա սհենցի բան կլինե՞ր, հազիվ լավ փող էինք աշխատել, մեկ էլ պիտի տանք մաշինին ռենդնախին»: Բորիկը հանգստացնում է. «Այ կնիկ, իբր որ լավ փող էինք աշխատել, կուրորքուր էինք գնալո՞ւ: Էլի պիտի տանեինք, ապրանք առնեինք, ծախեինք»...

477. Ներքին Շենի սովխոզի տնօրենը գրասենյակի աշխատողներին կարգադրում է, թե՝ վաղը պիտի բոլորդ գնաք շաբաթօրյակ՝ Գյոգբուլադում խոտ հնձելու: Խրխափորցի մի կին ասում է. «Պա ես էգուց հաց պետք է քիսեմ, հազիվ մի ազատ օր ունեմ»: Նիկիտը ոգևորված ասում է. «Դու որ չգաս, ոչինչ, բայց ես քոնրի հաց շատ եմ սիրում, մի հաց կբերե՞ս»: Կինն ասում է՝ հա: Հաջորդ առավոտյան կոլեկտիվը հավաքվում է գրասենյակի բակում, բոլորը բարձրանում են մեքենա, Նիկիտը նստում է «կաբինկայում», բայց փոխանակ Գյոգբուլադ գնալու, մեքենան շարժվում է դեպի Խրխափոր: Աշխատողները հասկանում են, որ Նիկիտը քոնրի հացի համար է գնում: Մեքենան կանգնում է այն կնոջ տան մոտ: Կինը նրանց տեսնելով, զարմացած ինքն իրեն ասում է. «Վո՛ւյ, աղջի՛, հացի համար հասել եմ էստեղ»: Մեկի փոխարեն երեք հատ հաց է բերում, տալիս Նիկիտին: Նա ասում է. «Ա՛լ քիբ, կարող ա՞մի կտոր պանիր էլ բերես»: Կինը գնում է, մի գունդ պանիր բերում: Նիկիտը սկսում է իր «գործը»: Մի քիչ հետո վարորդը նկատում է, որ երկու հացն արդեն չկա, մեկն է մնացել, մի գունդ պանիրն էլ մի փոքրիկ կտոր է դարձել: Ասում է. «Ընկե՛ր Նիկիտ, համը հո՞ւնց ա»: Նիկիտը սթափվում է, ասում. «Պա՛յ, ա, հինչ խուրդա հացեր էին. էս մինն էլ պանրի հետ վերցրո՞ւ, դու էլ կե՛ր, կոլեկտիվին էլ բաժանի՛ր»...

478. Ներքին Շենի սովխոզի աշխատողները հաճախ էին շաբաթօրյակ գնում: Որպես կանոն ամեն մեկն իրենց տնից մի «ծուլիկ»

^{*} Զեռքերը ծափ տալ՝ դատարկ ձեռքերով: Գյոդերում բավարար չափով ու անհրաժեշտ տեսակի մթերք չէր ճարվում, ուստի երբ որևէ դեպք էր պատահում, հիմնական մթերքը բաղաքից էին բերում (ծ.կ.):

օղի էր տանում: Մի-մի ռուբլի տալիս էին, մի-մի շիշ «Հաղորդ» գինի առնում: ՄԻ անգամ մի լավ խոզ են առնում ու որոշում են առանց ընդմիջման աշխատել մինչև ժամը չորսը, որպեսզի հանգիստ երկար նստեն, քեֆ անեն: Այդպես էլ անում են: Լավ ուտում-խմում են, բուլբուլի տրամադրությունը լավ բարձրանում է: Հանկարծ գալիս է տնօրենը: Նիկիտան իսկույն տեղից վեր է կենում, ընդառաջ գնում, երկու ձեռքով բարևում, ոգևորված ինչ-որ բաներ պատմում: Բայց տնօրենը կատակի տրամադրություն չունեի, ասում է. «Արագ վերջացրե՛ք, կարգի բերե՛ք ձեզ, սկսե՛ք գործը, շրջանի ղեկավարը հենց հիմա գալիս է»: Հրահանգ օրորվելով մոտենում է, ասում. «Ընկե՛ր Վադո, քեզ գործ չունես, ռայկոմը որ գա, ես ջողուրը կտամ»: Նիկիտը հասկանում է, որ վիճակը լուրջ է, տնօրենին դուր գալու համար Հրահանգի վրա ջղայնանում է և ասում. «Ա՛, դու սասող կտրիի, սպասի՛ր, մի տեսնենք՝ հինչ ենք անում»: Տնօրենն ուզում է ինքն էլ դիտողություն անել Հրահանգին, Նիկիտը, խմած ու ոգևորված, անկախ իրենից, նրան էլ է ասում. «Ա՛, մի դու էլ սասող կտրիի»...

479. Երշովում Ագոյենց տանը հավաքված են ընկերներով: Ագոյի կինը մի «գրաֆինկա» գինի է բերում, դնում սեղանին, ասում՝ խմեցե՛ք, տնական լավ գինի է: Ժորան ասում է. «Ես խմում չեմ»: Ագոյի կինը զարմացած հարցնում է. «Խե՞ղ չես խմում, ճնշում ունե՞ս»: Ժորան ասում է. «Չէ՛, խրե՛կ ա»...

480. «Փակի քոլում» խոտ էին հարում Ագոն, Արեստը, Սանթրին Ժորիկը, Առստամանց Կոլին, Դյովունց Զարմիկը, Վաբուկանց Զարմիկը, Գյորգունց Վալոդը, Զիլին Էդիկը, Անանյան Դորիկը, Տրունանց Յուրիկը, Դյովունց Արկադյան, Ղահրմանանց Սյոման... Ամբողջ օրը խոտ էին հնձել, հոգնած էին: Արդեն օրվա վերջն էր, բայց չէին ուզում հեռու դառնալ: Սպասում էին, որ տնօրենը գա, տեսնի: Վերջապես եկավ սովխոզի տնօրենը՝ Ղահրմանանց Վադոն, քեֆը լավ: Բարձր տրամադրությամբ մոտեցավ Սանթրին Ժորիկին, գերանդին ձեռքից վերցրեց, սրոցն էլ վերցրեց, «ղլավ տվեց»: Գերանդին թափով քաշեց, մի լայն «վլար» կտրեց (դե, նա ուժեղ մարդ էր): Ժորիկին ասաց. «Արա՛, սենց կհարեն, է»: Ժորիկն ասաց. «Ընկե՛ր Վադո, պա ես առավոտից մինչև հիմա մի պամիդոր են կերել, մեկ էլ մի կտոր պանիր: Եթե ես քեզ մնան կերած-խմած լիմեի, դրանից լավ կհարեի»...

481. Պրոշնոռկոպսկում Հրաչիկի դարպասի մոտ մի օր մի մեքենա կանգնեց, մի քանի հոգի միջից դուրս եկան: Մեր լեզվով էին խոսում: Հրաչիկը հարցրեց՝ էդ որտեղացի՞ եք: Մեկը հանեց անձնագիրը, բացեց՝ ներսում մի չորացած խլոպոզ էր: Հրաչիկի ծիծաղը եկավ, ասաց՝ հասկանալի է: Նա հարցրեց. «Բա դու՞ որտեղից ես»: Հրաչիկը նրա ձեռքից բռնեց, ներս տաքավ: Սրահի տակ փռած էր նոր հանած կարտոշկան: Պրսեցին նայեց, ծիծաղելով ասաց. «Ես էլ քեզ հասկացա»...

482. Վերինշենցի Ազնիվն իր հինգ երեխաներին վերցրած մոտենում է ուղղաթիռին, որ նստեն, գնան Ականաբերդ: Սկսում է հերթով երեխաներին ներս մտցնել: Միշիկը կողքից ծիծաղելով ասում է. «Մտնում ե՞ն, մտնում ե՞ն, պրծնում չի»: Ազնիվն ասում է. «Դու էլ ես խոսո՞ւմ՝ երկու երեխայի համար կնիկ ես զանիտ արել»: Այդ դիտողությունն ազդե՞ց, թե՞ ինչ, դրանից հետո Միշիկենք 3 -րդ երեխան ունեցան:

483. 3 -րդ գյուղում ապաստան գտած շահումյանցիների մեծ մասը զոհված ազատամարտիկների ընտանիքներ են: Հաճախ հավաքվում են, դարդ-դարդի տալիս: Բայց... նույնիսկ այդպիսի իրադրության մեջ կատակներ են անում: Մի անգամ հավաքված էին մի խումբ երիտասարդ այրիներ, զրուցում էին: Մոտենում է Նունիկ «տոտան», որն ամուսնու հետ այդտեղ էր ապրում: «Ռոսիմ» Յուրայի այրին՝ Մարոն, ասում է. «Ա՛յ Նունիկ տոտա, հի՞նչ ես էդ մարդին պահում, էստեղ հո՞ւր մարդ օնի, վար դու դրան պահում ես»...

484. Գ-ն շատ չաղ մարդ էր, ինքն էլ տարիքն առել էր: Մի օր հիվանդանում է: Դե, ամառվա օր էր, բոլորը համարյա բակերում էին մնում: Կինը տնքալով մի կերպ բարձրացնում է, տեղը նստեցնում ու կատակով ասում. «Է՛, լավ չէր լինի՞, որ մի կուճուր մարդու գնայի»: Հարևանուհին, որի ամուսինը «կուճուր մարդ» էր, լսում է, ու ասում. «Մարդ կա, որ մեծացել ա, բայց մինչև հիմա աչքը հալա իմ կուճուր մարդին ա»...

485. Գոհար այան տարիքն առած, մի քիչ էլ միամիտ կին էր: Մի անգամ իր հարևանուհի Համարիկի հետ նստած զրուցում էին: Լուր է գալիս, որ համագյուղացի «այսինչի» մարդը մեռել ա: Գոհարը տրտմջալով Համարիկին ասում է. «Աղջի՛, լոխճին մարդիկը մեռան, ինքը հալա սաղ ա, պա սենցի բան կլինի՞, մեկս վեր ա թափում»...

486. Ասյան հիվանդացել էր, բոլոր բարեկամները գնում էին տեսնելու: Մի օր էլ Մոսին է գնում: Նստում է հիվանդի մոտ, ասում. «Ասյա՛, ախր դու լավ կնիկ ես, են փխս հիվանդությունը խե՞ ա քեզ պատահել»... Մինչև այդ Ասյային ոչ որ չէր ասել, որ նրա հիվանդությունը «փխսն» ա: Նա միանգամից անհանգստանում է ու ասում. «Ա՛յ Մոսի, ինձ ասած չեն եղել, որ հիվանդությունս «փխսն» ա, լավ հույս ես տալիս, էլ ինձ դիտտուր հարկավոր չի»...

487. Բուժքույր էլոն մի հինդի կոնատակին, մի մեծ «սումկա» էլ ձեռքին, ոտքով գնում էր Ներքին քաղից Աղուջուր քաղը: Հանրահայտ զվարճախոս Բեղը էշն առաջն արած, ցորենն էլ բարձած գնում է նույն ճանապարհով: Նկատելով, որ Էլոյի բեռը ծանր է, հինդին Էլոյի ձեռքից վերցնում է, դնում էշի վրա: Դ-ե, նա արագ էր գնում, իսկ Էլոն քիչ- քիչ հետ է ընկնում: Երբ հասնում են Կլապաներ քաղը, դիմացից եկողներից մեկն ասում է. «Ա՛յ Բեղ, հինդին ստակել ա»: Այդ լսելով՝ Էլոն անհանգստացած վազում է, մոտենում ու հարցնում Բեղին. «Հրանտիկ, ճիշտ են ասո՞ւմ, մի տես հո ստակել չի՞»: Բեղը (Հրանտիկը) ասում է. «Էլո՛, դու հանգիստ մնա, էս քաղում ես բոլորի գլխին էնքան են օյին խաղացել, շատ բան կարող ա ասեն, վախես վե՛ջ»...

488. Ընկեր Նունիկն իր բոռան՝ Գայանեի հետ գնում են Բաբու՝ Լիլիկենց տուն: Հաջորդ օրը Լիլիկը Գայանեի հետ գնում է խանութ, որ նրա համար կոշիկ գնի: Գայանեն 4 -րդ դասարանում էր սովորում, բայց շատ խոշոր երեխա էր: Լիլիկը վաճառողին ասում է. «41 ռազմերի մի զույգ դետսկի կոշիկ տվեք»: Վաճառողը ծիծաղում է: Հետո Լիլիկը բացատրում է. «Ուզում եմ ասել, բարձրակյումնկ չլինի, դպրոցական երեխա ա»... Լիլիկի ծիծաղն իր ասածի վրա գալիս է, բայց մի կերպ իրեն զսպում է, որ չծիծաղի, Գայանեն չնեղանա: Իսկ Գայանեն նկատում է, որ նա մի կերպ է ծիծաղը պահում, ասում է. «Հի՛նչ ես ծիծաղում, քո աղջկա նման մողես պիտի լինե՞մ»... Լիլիկն արդեն ազատ է ծիծաղում՝ «շտըփրհան իլած» և ասում. «Ախճի՛, գոնե առնետ չես ասում, մողե՞ս»...

489. Վորոնեժում Ռազմիկն ու իր տղա Ռոբերտը գնում են իրենց հին հարևանի քաղմանը: Հանգուցյալը շատ մեծ բարեկամություն ու ընկերական շրջապատ ուներ: Շատ մարդիկ էին հավաքվել: Սակայն ամբողջ արարողության ժամանակ ոչ մի լացի ձայն չէր

լսվում: Հետ դառնալու ճանապարհին Ռ-ազմիկն ասում է. «Ա՛յ Ռոբերտ, պա սհենցի քաղում կլինե՞ք. էղբան ժողովուրդ էր հավաքվել, ոչ մեկը չէր լացում»: Մի քիչ լռում է, հետո ծիծաղելով ասում. «Եթե իմանամ՝ ինձ էլ են սհենց սուսուփուս քաղելու, մեռնիլ չեմ»: Տղան իսկույն համոզում է հորը. «Չէ՛, ա՛յ պապ, պա մենք տհենցի՞ ենք, կարգին լաց ենք լինելու»...

490. Դպրոցական կյանքի հետաքրքիր օրերից էին ձմեռային արձակուրդները: Ուսուցիչները հերքով հավաքվում էին իրենցից մեկի տանը, ժամանակ անցկացնում: Այդ օրը հերքն Աշոտինն էր: Բոլորը տեղավորվում են սեղանի շուրջը: Լյովան սկսում է բաժակները լցնել: Միմասը ձեռքը դնում է իր բաժակի վրա, ասում՝ ինձ համար չլցնես, խանութի օղին չեմ սիրում: Լյովան ասում է. «Ուզում ե՞ս՝ գինի լցնեմ, սեղանի վրա ուրիշ բան չկա»: Աշոտը լսում է և ասում. «Ա՛յ ընկեր, ամեն տեսակ օղի ունեմ, որից ուզում է, նրանից լցրու»: Եվ շրջվելով Էդիկի կողմը, ասում է. «Էդի՛կ ջան, պահաբանը քո մեջքի կողմում է, դուրը բացիր, ինչ որ ուզում եք, հանեցեք, խմեք»: Էդիկն իր աթոռը մի կողմ է քաշում, պահաբանի դուռը բացում: Տեսնում են՝ մեջքը լիքը շշեր են, ամեն մեկի վրա մի թուղթ կացրած՝ «10-րդ ա դասարան, թթի օղի», «9-րդ բ» դասարան, հոնի օղի», «9-ի ա, ջեջ»...

491. Դարաչինարցի Իսակ դային մսավաճառ էր: Մորթված անասունների կաշին ու աղիքները նախնական մշակման էր ենթարկում և հանձնում, որի համար որոշ չափով վարձատրում էին: Նույն սրահի տակ երկու առանձին սենյակներ էր պատրաստել երկու տղաների համար և երկու տեղն էլ առանձին համարներով հեռախոսներ էր դրել: Տղաները Երևանում էին բնակվում, իսկ թոռը՝ Վովան, պապի մոտ էր ապրում: Մի անգամ Վովան աննկատ մտնում է տուն, զանգում կողքի սենյակում նստած պապին: Իսակ դային հեռախոսը վերցնում է: Վովան ձայնը փոխած բարևում է և ասում է. «Իսա՛կ դայի, Դանիլովն ա, գիդացի՞ր»: Իսակն ասում է՝ հա, ինկեր Դանիլով՝, հի՞՞նչ ա պատահել: Վովան ձայնը փոխած ասում է. «Բաքվից են շան տղոցան եկել են, Վերին Շեն էլ են զանգ տվել, դու էլ մի բան մտածիր: Մի չորս կիլո միս վերցրու, մի լիտր արաղ, մի քիչ էլ դես-դեն, տուր երեխային, թող բերի: Հասկանում ես, էլի, սհանց ռեխը պահիլ պի-

* Դանիլովը շրջանի դատավորն էր (ծ.կ.):

տենք»։ Իսական ասում է. «Աշկիս իրա, ինկէ՛ր Դանիլով»։ Վովան պապի հետ այդպէս խոսելուց հետո արագ ու աննկատ տնից դուրս է գալիս բակ։ Իսական ինքն իրեն տրտնջում է, քե՛ իբր իմ աշխատածն ի՞նչ ա, որ եղբան էլ ուղարկեմ նրանց համար։ Մտնում է «պաղվալը», ինչ որ պետք է, լցնում է մի «կաշիլյոկի» մեջ, բոռանը կանչում, ասում. «Վովա, քեզ մատաղ, կկարա՞ս էս կաշիլյոկը տանես Ներքին Շեն, տաս Դանիլովին»։ Վովան վերցնում է, գնում իր ընկերների հետ մախօրոք պայմանավորված տեղը։ Ընկերներն էլ ամեն մեկն իր հերթին մի բան վերցրել էր, այդպէս հավաքվում են, գնում Պրմբատի աղբյուրի մոտ, մի լավ քեֆ անում...

492. Արգամը գնացել էր Սոչի՝ բարեկամների տուն։ Հավաքված էին շատերը։ Նոր տարվա օրերն էին։ Ամեն մեկը պատմում էր, քե կնոջ համար ինչ նվեր է առել։ Արգամը ձայն չի հանում։ Հարցնում են. «Արգամ, դու՞ ինչ ես առել կնոջդ համար»։ Նա ժպտալով ասում է՝ Մ.Պ. : Բոլորը միանգամից լռում են, չեն ուզում անտեղյակ երևալ, ընկնում են մտածմունքի մեջ, քե այդ ինչ նվեր կլինի, որովհետև օրական հազարումի տեսակ ապրանք է դուրս գալիս հազարումի երկրից։ Ի վերջո մեկը չի կարողանում հետաքրքրությունը զսպել, հարցնում է՝ արա, Մ.Պ. -ն հի՞նչն ա։ Արգամն ասում է՝ մի պյան էլ ա...

493. Մեր երիտասարդ հայրենակիցներից մեկը Մոսկվայում որոշում է բնակարանի հատակին «պարկետ» խփել տալ։ Վստահության համար ու նաև մատչելի գնով կատարելու նպատակով խոսում է համագյուղացիներից մեկի հետ։ Նա ոգևորված ասում է. «Հարց չկա, ընկերոջս հետ կգանք, կկատարենք, ուրիշի չասես»։ Մի քանի օր հետո հայրը գնում է, որ տեսնի՝ ինչպէս են գնում գործերը։ Տեսնում է՝ ի՞նչ. պարկետներն իրար հետ «չեն խոսում», ձյութն արանքներից դուրս պրծած, կեղտոտված... Չայրացած ասում է. «Արա՛, էս հի՞նչ եք արել, էն քախսան մի փեշկը փող ա տվել, պա ձեզ սովիստ չօնե՞ք, սենց գործ կանե՞ն»... «Վարպետները» մի կերպ հանգստացնում են. «Վալերիկ ձածա, խանգարես վէշ, արդեն քիչ-քիչ ձեք սովորում ենք»...

494. Անյան Ներքին Շենից հարս էր գնացել Ղարաչինար։ Կեսուրի և մյուս տնեցիների հետ լեզու գտած, համերաշխ ապրում էին։ Մի օր կեսուրը հաց էր քխում բոնրում, Անյան էլ կողքը կանգնած

օգնում էր: Կեսուրն ասում է. «Ա կտրվա՞ծ ներքինչենցի, մինչև ե՞րբ պիտի կողքից նայես, նստիր, հացը նիստա տուր, որ սովորես»: Անյան անհանգստացած ասում է. «Վո՛ւ, այա՛, պա ես կկարա՞մ հաց թխեմ՝ բոյս կարճ, ձեռքերս կարճ: Գլխիս վրա կընկնեմ թոնրի մեջ»: Ամուսինը՝ Հարությունը, կողքից ասում է. «Ախճի՛, արխային նստի, վախես վե՛չ, մի ստրախավոյ պոյես կկապենք, որ ընկնես վե՛չ թոնրը»...

495. Անյան մոր էր հարս գնացել հարևան գյուղ, ինքն էլ մոր էր կար անելը սովորել: Մի օր կեսուրն ասում է. «Ա՛ ներքինչենցի, դու որ կար անելը գյուղում ես, խե՞ չես իմ շորերը կարում, ես տանում եմ ուրիշին կոշտը: Նստիր, ինձ հետի մի լեիին կարիր»: Դե, կեսուրն էլ շատ նիհար ու բոյով կին էր, Անյան անհանգստանում է, թե նրա վրա ինչպես պիտի շորը հարմարեցնի: Ասում է. «Այա՛, պա ես կկարա՞մ»: Կեսուրն ասում է. «Զեզ մատաղ, հինչը կարես, ռազի եմ ինական»: Այն տարիներին մոդա էր այսպես կոչված «պրիտալեննի»՝ ձևը: Անյան հենց այդպես էլ կարում է: Դե, ինքն սկսնակ կար անող, նա էլ նիհար ու բոյով կին, պատկերացրեք, թե ինչ կլինի ստացված: Տնեցիները նայեցին ու մի լավ զվարճացան: Տղան կողքից ասաց. «Այա՛, եթե մազերդ էլ մի քիչ փիճիճես, տոչնի Ձեյմաբը՝ կդառնաս»: Չնայած բոլոր կատակներին, կեսուրը հաճույքով հագավ, ասելով. «Շատ լավ ա, պա իմ հարսին կարածն ա»...

496. 1992 թ. գարնանն էր, շրջանի ինքնապաշտպանության ամենաձանր օրերին: Նորան ու Անյան երկու քույրերով ապահովության համար փոքր երեխաներին վերցրել էին, Ղարաչինարից գնացել Գյուլիստան, որտեղ համեմատաբար անվտանգ էր: Նույն ձևով շատերը՝ տարբեր գյուղերից: Տեղացիներն ամեն առավոտ վեր էին կենում, գնում ձեռքով կարտոֆիլ տնկելու: Մի օր Նորան քրոջն ասում է. «Էս ժողովուրդը մեզ թողել է իրենց տներում, իրենք գնացել են, դաշտում չարչարվում են, գնանք, մենք էլ օգնենք»: Գնում են: Դե, երկուսն էլ փոքրամարմին, երկուսն էլ դանդաղաշարժ ուսուցչուհիներ: Բոլորը միասին մտնում են դաշտ, ամեն մեկը մի «ծեր» է վերցնում, կարտոֆիլը տնկելով առաջ շարժվում: Երկու քույրերով իրար հետ

* Մարմնին կիպ կպած (ծ.կ.):

* Այն տարիներին «մոդայիկ» երգչուհի էր (ծ.կ.):

հանգիստ գրուցելով ու տնկելով առաջ են գնում, մեկ էլ նկատում են, որ ընկերուհիներն արդեն հասնում են «ծէրի» վերջը: Այնտեղից նրանք ձայն են տալիս ու կատակով ասում. «Վռագեք վէշ, էս ա կրուզ ենք ենք տալիս, գանք ձեզ նորից հավասարվենք»: Աշխատողներից մեկը նրան ղիտողություն է անում, թե՛ խխճի, վարժուհի են, սովոր չեն ֆիզիկական գործի: Կողքինը թերահավատորեն ասում է՝ ըմ-մ, նրանա վարժուհի կլինի՞, մի պատառ կա: Նա բացատրում է. «Դրան յաշիլ մի, գյուղում ե՞ս հինչ մաթեմատիկա ա սովորացնում, նրա պարապած երեխեքը բոլորն ինստիտուտ են ընդունվում»: Դիմացինն էլի չի հավատում, ասում է. «Էս ա փորձելական են»: Երբ շարքերը նորից հավասարվում են, նա Նորային ասում է. «Ա՛ վարժուհի, մի հարց տամ, կգիտա՞ս»: Եվ մի հարց է տալիս իր իմացած թվաբանությանից՝ շարքային կոլխոզնիկի մակարդակով: Նորան համեստորեն հարցին պատասխանում է: Նա համոզված կերպով ասում է. «Հա՛ա, հենց ա իսկապես կիտխը գործ ա անում»...

497. Երեք տարեկան Արմենն ամռանը ծնողների հետ Երևանից գնացել է գյուղ՝ տատի ու պապի մոտ: Մի օր նկատում է, թե ինչպես գոմշակովը սրահի տակ նստած դանդաղ որոճում է՝ սալիտակ փրփուրը բերանի ծայրից կախված: Մոր փեշից քաշում է, ասում. «Մա՛ն, այ էն ծամոնից են ուզում»...

498. Վորոնեժում Ֆրիդայի փոքրիկ Լիլիթը մորաքույր Ֆլորայի անունը չի տալիս, «քույրիկ» է ասում: Բայց երեխայի լեզուն արդեն ռուսերենին է վարժվել, «քույրիկի» փոխարեն «կուրիկ» է ասում: Նոր տարվա օրերից մեկի ժամանակ Ֆլորան Լիլիթին տանում է տոնածառի հանդեսի: Բոլորը մուտքի մոտ հավաքված սպասում են: Ֆլորան Լիլիթին թողնում է մի ռուս կնոջ մոտ, ասում՝ էս գնամ, իմանամ, թե երբ են սկսելու: Երբ մի քիչ ուշանում է, երեխան անհանգստությունից սկսում է լացել: Ռուս կինը երեխային հանգստացնելու համար ասում է. «Նե՛ պլաշ, մամա սեյչաս պրիդյոտ»: Երեխան դժգոհ ուղղում է կնոջ սխալը, ասում է. «Էտո՛ նե՛ մամա, անա Կուրիկ»... Իսկ կինը նրան սխալ է հասկանում, ասում է. «Նիշեվո, պակուրիտ, պրիդյոտ»: Երեխան նեղացած լացում է, թե. «Նե՛տ, Կուրիկ նե՛ կուրիտ»... Իսկ ռուսն իր հերթին զարմանում է, թե դա ինչ է նշանակում՝ «կուրիտ-նե՛ կուրիտ»...

499. Երևանի ցուրտ ու մութ տարիներին էր, արցախյան պա-

տերազմի ժամանակ: Տներում մոմ էին վառում: Պայմաններն այնքան ծանր էին, որ շատերը նույնիսկ մոմի վրա լարերով հարմարանք էին պատրաստել, վրան ջուր էին տաքացնում, քեյ պատրաստում: Մի անգամ տատը բռնանն ասում է. «Նարո՛, քեզ մատաղ, մի ստաքան չայ տուր»: Երեխան մոմի վրայից տաք ջուրը վերցնում է, լցնում տատի բաժակը: Տատը խմում է ու ասում. «Էս չայը մի հանգի լավ չէր եփած»: Երեխան անկեղծորեն ասում է. «Ա՛՛ նան, մաքամ ե՞րբ ա եփած եղել»...

500. Արգիկի աղջիկը փոքր ժամանակ շատ չարաճճի էր: Հաճախ էր անկարգություն անում՝ կամ մի բան էր ջարդում, կամ շորն էր կեղտոտում և այլն: Եվ ամեն առիթով մայրն ասում էր՝ աղջի՛, էշ ե՞ս, էշ: Երեխան արդեն վարժվել էր, որ այդպես են նկատողություն անում: Մի անգամ Երևանից գնում էին գյուղ: Ճանապարհի եզրին մի էշ է երևում: Մայրը մատով ցույց է տալիս ու երեխային բացատրում. «Նարո՛, էշը մա ա, է, տեսնում ե՞ս»: Երեխան զարմացած հարցնում է. «Մա՛մ, բա ինչի՞ ա էշ»...

501. Դանիելյան Սեդրակին գյուղում պարզապես դարաբաղցի Սեդրակ էին ասում: Շատ բարեկիրք մարդ էր: Բոլորի հետ աշխատանքի վայրում, քե բաղամասում, շատ հարգալից ու կուլտուրական էր վերաբերվում: Բռնի տեղահանությունից հետո հաստատվել էր Կրասնոդարում: Դե, տարիքն առած մարդ էր, անգործ: Տրամվայն էլ իրենց տան մոտով էր անցնում: Պարապությունից մի օր բարձրանում է տրամվայ, որ քաղաքում մի քիչ պտտվի, ժամանակն անց կացնի: Ներս է մտնում, տեսնում՝ երկու շարքով՝ նստաբաններ են, ժողովուրդը նստոտած, շատերը հենց իր տարիքին: Գյուղի սովորությամբ ժպտալով աջուձախ նայելով առաջ է գնում ու ասում՝ բարև ձեզ, բարև ձեզ: Ոչ ոք չի պատասխանում, շատերն էլ խեթ-խեթ նայում են: Սեդրակը դժգոհ հետ է դառնում, իջնում տրամվայից՝ ինքն իրեն ասելով. «Թո՛ւ, պա մարդ սենց տեղ կապրի»...

502. Ասում են՝ շրջանի դեկավար Միրզոևը չնայած շահում-յանցի չէր, բայց տարիների ընթացքում լրիվ ծանոթացել էր մարդկանց և գյուղերի սովորություններին: Մի անգամ գնում է Գյուլիստան, ծանոթանում տնտեսությանը: Ամեն ինչից գոհ է մնում: Վերջում էլ լավ հյուրասիրում են: Լավ տրամադրությամբ նստում է մեքենան, շարժվում դեպի շրջկենտրոն: Գյուղի ծայրին մի խումբ երեխաներ

խաղում էին: Նա մեքենան կանգնեցնում է, ասում. «Ա՛յ երեխեք, լսել եմ, որ գլուխատանցիներն ուշուցնատու են, կկարա՞ք մի ուշուց տաք»: Երեխեքը լուռ իրար երեսի են նայում, չիմանալով, թե ով է այդ մարդը: Իսկ նա հետաքրքրության համար մի քանի անգամ հարց է տալիս: Երեխաներից մեկը զարմացած ասում. «Ա՛, քո ուշուցու հասարաք մերը..., հի՞՞նչ ես օգում մըզանա»...

503. Վերին Շենում Արմենի հարսանիքն էր, քամադան էլ Խաչան դային էր: Հարսանիքի թեժ պահին ներս է մտնում ճանաչված վարպետ Խորենը: Ընդունված կարգի համաձայն քամադան ասում է՝ ուշացել ես, քեզ «շտրաֆ» է հասնում: Խորենը հաղթանդամ մարդ էր, ինքն էլ լավ ուտող-խմող, հանգիստ ասում է՝ պատրաստ եմ: Խաչան դային ասում է՝ չիմանաս, թե քո տեսած շտրաֆներից ա: Եվ «կարգադրում» է՝ պետք է մեկ-մեկ մոտենաս բոլոր հարսանքավորներին, ամեն մեկի լիքը բաժակը խմես, վրայից էլ մի հատ տոլմա ուտես, վերջում էլ տուշ նվագեն, դու պարես:

Սեղանակիցները ծիծաղում են ուրախ, իսկ Խորենն անցնում է իր «գործին»: Հերթով մոտենում է, յուրաքանչյուրի մոտ մի բաժակ զինի խմում, մի հատ տոլմա գցում բերանը, անցնում առաջ: Այդքան ուտել-խմելուց հետո էլ նվագում են, ու նա սկսում է պարել: Բայց... Գլուխակն նորակառույց տուն էր, հատակի տախտակներն էլ դեռ չկային, ինչպես ասում են՝ միայն «չեռնապոլ» էր: Դե, Խորենը 130 կգ քաշ ուներ, քեֆն էլ լավ, այնպես ուժգին վեր-վեր է թռչում, հանկարծ հատակը ծակվում է, ընկնում է «պաղվալի» մեջ: Իջնում են, տեսնում՝ այնտեղ բռչկայի կողքը նստած, ռեզինե շլանգը դրած բերանը, զինի է խմում...

504. «Սնիկերս» կոնֆետը նոր էր երևացել խանութներում, բայց... արցախյան պատերազմի ծանր ժամանակներն էին, ամեն մեկը չէր կարող վայելել այդ հաճույքը: Արմենը նոր էր ավարտել բուհը, դեռ ոչ մի տեղ չէր աշխատում: Տուն գնալու ժամանակ ձեռքի փողը մի քանի անգամ հաշվում է ու որոշում է ավտոբուսի փոխարեն ոտքով գնալ, տատի համար մի հատ «Սնիկերս» առնել: Հոգնած, մրսած տուն է մտնում, կոնֆետը տալիս տատին: Մարգո բաբոն առաջին անգամ էր տեսնում այդպիսի կոնֆետ: Հաճույքով ուտում է ու ասում. «Պահ-պահ-պահ, ես հի՞՞նչ լավն էր: Մատաղ ինձն քեզ, պա մի հատով կոնֆետ կառնե՞մ, խե՞ չես գոնե մի կիլո առել»: Արմենն

ասում է. «Բարո՛ւ, էդ էլ մի հանգով եմ առել, հատը 200 դրամ ա, է՛»:
Բարոն զարմացած ասում է. «Ա՛ տղա, իսկ ե՞ս դու, սա հինգ քաք ա, որ
200 դրամ ես տվել»...

505. Մինասի մահվան տարին լրանում էր: Տղան գերեզմանը
լավ կարգի էր բերել, քարը զցել: Մորն ասում է. «Ա՛յ մամ, արդեն
վերջացրել ենք, արի գմանք, տես ինչպես է ստացվել»: Գնում են,
տեսնում: Մայրը շատ հավանում է: Լավ քար էր զցված, վրան էլ
ամբողջ հասակով կանգնած Մինասի նկարն էր պատկերված՝ գյու-
ղական հայտնի կարտուզավոր գլխարկը գլխին: Մայրը երկար մա-
յուն է ու ասում. «Մաման քեզ մատաղ լինի, լոխ լավ ա, ամա կար-
տոզը մխրեկ կուճուր ա ստացվել»: Տղան ասում է. «Ա՛յ մամ, հո՛ւնց
անենք, արևն աչքերը ծակոտելու ա՞»...

506. Արուսը մոր մոտ տրտնջալով սլատմում է. «Այ մամ, գիշեր-
ները գլուխս յաման ցավում ա»: Մայրն ասում է. «Մատաղ լինեմ քեզ,
մրսելուց ա, գիշերը փոքր մի տաք շալ կապիր, հետո քնիր»: Աղջիկը
ծիծաղելով ասում է. «Ա՛յ մամ, գլուխս ա ցավում, դու ասում ես՝ փոքր
կապի՞ր: Մայրն արդարանում է. «Վռ՛ւյ, ջանիդ մատաղ լինեմ, ուզում
էի ասել՝ ոտքերդ փաթաթիր»...

507. Լենայի եղբայրը 90 -ամյա հասակում մահացել էր Մոսկ-
վայում: Բարեկամուհի Նունիկն ուշացումով գնում է, երբ արդեն
սկսված էր քաղման արարողությունը: Հարազատները շրջապատել
էին դագաղը: Նունիկը դեռ հեռվից սկսում է գյուղում ընդունված ձևով
ողբալի ձայնով երգել: Երաժիշտները ակամայից լռում են: Նունիկն
ավելի ցավագին է երգում: Հանկարծ նկատում է, որ Լենան սուսու-
փուս կույ է եկել դագաղի մոտ: Բարձրաձայն երգելով ասում է. «Ախ-
ճի՛, ա՛յ Լենա, հի՞նչ ես սուս արել, ֆիզմաթի քննություն ա՞, կարում
չե՞ս մի բան ասես»...

508. Բենիկը նկատել էր, որ մանը սրահում կախած չունչլուխը
ոչ քե լրիվ հաշվում է, այլ սլարգապես «ճոխտ-ճոխտ» է անում,
այսինքն՝ ստուգում է, որ զույգ լինեն, Բենիկն էլ սկսում է զույգով գո-
ղանալ: Վերջապես մի օր մանը զարմացած ասում է. «Ախճի՛, էս
չունչլուխը ճոխտ ա, ամա տակին բան չի մնացել»...

509. Արշակ վարժապետը հայտնի մանկավարժ էր, մույնիսկ
ամենաթույլ երեխաներին շատ բան է սովորեցրել: Երբ տարիքն առել
էր, դասերն ավելի զվարճալի էր անցկացնում, աշակերտներն էլ

երբեմն չարաշահում էին, աղմկում: Մի անգամ 8-րդ դասարանում շատ են աղմկում, ուսուցչի դիտողությունն էլ չի ազդում: Տղաներից մեկը տեղից վեր է կենում, ընկերների վրա գոռում, ասում. «Ա՛լ լակուտներ, խե՞ղ չեք սուս անում, վարժապետը ձեր մերը...»: Բոլորը ծիծաղում են, իսկ վարժապետը ժպտալով ասում է. «Աբրահամյան, լավ ես ասում, բայց չի կարելի, համոք ա»...

510. Ղարաչինարցի Ա-ի հայրը մահանում է: Նա խոսպանից վերադառնում է, հորը քաղում են, նորից հետ է գնում: Չմեռնամուտին գյուղ է գալիս: Գերեզմանաքար է պատրաստել տալիս, վրան գրում հոր անունը և հիշատակ՝ որդի Ա-ի կողմից: Տանում են, որ քարը գցեն շիրիմի վրա: Դե, քաղումը ամռանն էր եղել, իսկ հիմա արդեն ծառերը տերևաթափված էին, խոտերն էլ չորացած, գերեզմանի տեղը հաստատ չէին իմանում, հետո տղան հիշում է, որ ամենածայրի գերեզմանն է եղել: Քարը գցում են, վերադառնում տուն, մի լավ նշում: Անցնում է մի քանի օր: Համագյուղացիներից մեկը գերեզմանաքար է տանում, որ գցի իր մոր շիրիմի վրա, տեսնում է՝ վրան արդեն քար է գցած, ուրիշ մարդու անուն գրած: Գնում է նրանց տուն, հայեղում, ասում. «Ա՛ շան կաթը կերած, խե՞ղ ես քո ապան քարը քիցել իմ այան իրա»...

511. Արտոն բարեխիղճ աշխատող մարդ էր, բայց... խմիչքի հետ շատ էր մոտիկ ու տեղին-անտեղին ծեծում էր կնոջը: Խեղճ կինն այնքան էր վարժվել, որ չէր էլ հարցնում՝ արա, խե՞ղ քակում ես... Բարեկամը Ղարաչինարում տուն էր սարքում: Արտոն կնոջ հետ միասին գնում են օգնելու: Կինը տնային գործերին էր օգնում, Արտոն՝ պատշարողներին: Կեսօրին նստում են հանգստանալու: Ճաշում են և մի լավ խմում: Հավաքվածներից մեկը գիտեր Արտոնի բնավորությունը և գոռով ուզում է «խոսեցնել» նրան, ասում է. «Ա՛, մի տեսակ լավ չեմ, գնում եմ մեր տուն»: Արտոն հարցնում է. «Ի՞նչ է պատահել, կարող ա՞ շատ ես հոգնել»: Նա ասում է. «Զե՛, չե՛, ջանս դուդի-դուդի ա ընկել, վատ եմ»: Արտոն նորից է հարցնում. «Արա՛, յանի հի՞նչ ա պատահել, կարող ա՞ մրսել ես»: Նա ասում է. «Ա չե՛, պրոստո, ես որ մի քիչ խմում եմ, ձեռքերս քոր են գալիս, պետք ա կնկանս քակեմ, գնում եմ տուն»: Արտոն ծիծաղելով ասում է. «Պա՛, քո տունը շինվի, դրա համար գնում ես ձեր տո՞ւն, հրեն, մեր կնեկը ծառին տակին ամաններն ա վիանում, գնա, ինչքան ուզում ես, քակիր, նա սովոր ա»...

512. Լյովիկի տղայի հարսանիքն էր: Տարբեր քաղաքներից ու շրջաններից մի քանի հարյուր մարդ էր հավաքվել, համարյա բոլորը՝ մեկը մյուսից չաղ: Խաչոն վաղուց չէր տեսել Վահրամին, հանդիպում է ու սրտացավ տոնով ասում. «Ա քե՛զ մատաղ, խե՞ղքան լղար ես»... Նստում են կողք-կողքի, Խաչոն անընդհատ հյուրասիրում է նրան: Հետո նկատում է, որ քարն քարխտն քերեցին, մի քն վերցնում է, տալիս Վահրամին: Հայկազը կողքից նկատում է ու ասում. «Ա՛յ տնաշեն, քո ամանը լիքը չալաղաջ ա, իսկ Վահրամին քարխտն ես տալիս, հետո էլ զարմանում ես, քե խե ա լղար»...

513. Դավիթը Երևանից գնում է Ռուսաստան, տղայի տուն: Ցրտերը նոր էին սկսվել, տնեցիներից մի քանիսն արդեն գրիպ էին ընկել, և զրույցի հիմնական քեման դա էր: Հարսը ճոխ սեղան է բացում, լավ հյուրասիրում: Վերջում Դավիթի ախորժակը սուրճ է տալիս, բայց անհարմար է զգում, որ նեղություն տա: Ասում է. «Մարինե՛, քեզ մատաղ, Երևանում միշտ հաց ուտելուց հետո կոֆե են խմում, որ գրիպ չընկնեն»...

514. Դարաչինարում մի հանգուցյալի հոգեհացն էր: Մեծ սեղան էր գցված, մի քանի հարյուր մարդ հավաքված: Հանգուցյալը տարիքն առած մարդ էր, դե, դարաչինարացիներն էլ հայտնի ուտող-խմողներ էին: Որոշ ժամանակ հետո շատերի քեֆը լավանում է, տրամադրությունը բարձրանում, տեսակ-տեսակ ողորմաբասեր են բարձրացնում: Մ -ն վեր է կենում, ասում՝ Աստված ողորմի ընկեր Ստալինին... Կինը քնից քաշում է, կամաց հուշում՝ առաջ ինկեր Լենինին ասա... Ամուսինը կնոջ ձեռքին խփում է աննկատ ու իր խոսքը շարունակում, Աստված ողորմի Ստեփան Շահումյանին: Կինը նորից հիշեցնում է. «Լենինին մտաղ քիցես վե՛չ»: Ամուսինը քանի տեղ չի դնում և շարունակում է. «Աստված ողորմի ինկեր Բրեժնեֆին»: Կինը նորից է հիշեցնում. «Լենինին մտաղ քիցես վե՛չ»: Ամուսինը ջղայնացած բարձրաձայն ասում է. «Ա՛, Լենինի մերն էլ, քո մերն էլ ..., խե՞ղք ես թողում կենացներս ասեն»...

515. Աբելը շրջկոմի քարտուղարի վարորդն էր: Շատ քիսամաշկ էր, ինքն էր հաճախ բեմզինոտ, որովհետև անընդհատ մեքենան կարգավորում էր: Քարտուղարն ուզում էր ուրիշ վարորդ ընդունել, այսպես ասած, բարետես արտաքինով, բայց որովհետև Աբելը շատ լավ մարդ էր, լավ էլ մասնագետ ու բարեխիղճ աշխատող, անհար-

մար էր զգում մտադրությունը պարզ ասել: Մի անգամ ասում է. «Աբե՛լ, մեծ ընտանիքի տեր ես, մեզ մոտ միայն «սուխոյ» ռոճիկ ես ստանում, ուզում եմ քեզ ուղարկեմ սպառկոտայ, այնտեղ կողմնակի օգուտ շատ է լինում, ամեն օր շոկոլադ կուտես»: Աբելը նրա միտքը հասկանալով ասում է. «Ընկե՛ր Պետրոսյան, ես որ շոկոլադ եմ ուտում, մոլորքոր եմ ընկնում»...

516. Շրջանի ինքնապաշտպանությունը նոր էր սկսվել: Առաջին անգամ տարբեր շրջաններից երիտասարդներ էին սկսել գալ՝ շահունյանցիներին օգնելու: Այդ օրերին էր: Ժողովուրդը Գյուլիստանի դաշտերում կարտոֆիլ էր հավաքում: Մի անձանոք տղա մոտենում է Մարգուշ ալային, հարցնում. «Ըստեղ ֆիդայի չե՞ք տեսել»: Մարգուշ ալան այդ բառը լսած չկար, հարցնում է. «Ըտ հի՞նչն ա, ուտելու կանաչի ա՞»...

517. Ընկեր Հովիկի այգին Բենիկի տան մոտ էր: Այգում ամեն տեսակ մրգեր կային, իսկ Բենիկը Գյուլիստանից էր տեղափոխվել, որը զկռի հայրենիք էր, ժողովրդն էլ՝ զկեռ ուտող: Բենիկի երեխաները նկատում են, որ իրենց ուսուցչի՝ ընկեր Հովիկի այգում զկեռ կա: Հաճախակի քաքուն մտնում էին նրանց այգին, զկեռը քաղում, տանում, ուտում: Մի օր ընկեր Հովիկն աշխարհագրության դասին խոսում է զկեռի մասին և, օրինակ բերելով իրենց ծառը, զարմացած ասում է. «Ա՛, մեր զկեռը հալա հասել չի, բայց իրեն-իրեն պրծնում ա, մինչև հիմա տհենցի բան չի եղել »...

518. Ներքին Շենի դայրոցի աշակերտներին հանձնարարել էին մասուր հավաքել, բերել՝ ով ինչքան կարող է: Արմինեն հոր հետ միասին գնում է դաշտ, որ մասուր բերի: Նկատում է, որ հեռվում մի էշ արածում է, կողքին էլ տերը պառկած, քնած: Բահն էլ հողի մեջ խրած էր, վրան՝ գլխարկը կախած: Արմինեն ծիծաղելով ասում. «Պա՛ս, մի տես՝ հենց ա Քաջ Նազարը լինի»: Հայրը մտքերով տարված չի էլ հիշում Քաջ Նազարի մասին, կարծում է՝ խոսքն իրենց հարևան Առստամանց Նազարի մասին է, ասում է. «Ա՛յ Արմինե, Նազարն էշ չունի, դա Դափկոնն ա»...

519. Գյուլիստանցի Գարսան առաջին անգամ Երևան էր գնացել: Տրոլեյբուսով բարեկամի հետ ինչ-որ տեղ էին գնում: Հանկարծ տրոլեյբուսը կանգնում է, ձողերն անջատվում են ու նորից լարերին

կաշում՝ կրակ ու բոց է երևում: Գարասն իսկույն իջնում է տրոլեյ-բուսից, ասելով. «Պաժառ ա ինգինում, փախչենք»...

520. Կարենն ընտանիքով Մոսկվայում է ապրում: Չմեռ է: Երե-խաներն ամեն օր տեսնում են, թե տաջիկ հավաքարարներն ինչպես են բակի ձյունը մաքրում: Մի օր Կարենն աշխատանքից շուտ է վե-րադառնում, փոքրիկ Էդիկին ասում. «Լապատկադ վերցրո՛ւ, գնանք բակը, խաղանք»: Երեխան զարմացած ասում է. «Վա՛, պա ես տա-ջիկ ե՞մ»...

521. Մարինեի հարսը հյուր է գալիս: Նստում են, սուրճ խմում, գրուցում տարբեր թեմաներով: Հանկարծ հարսն ինչ-որ բան է հիշում ու հարցնում. «Ձեր Մարուսի հեռախոսի համարը չգիտե՞ս, ասա, գրեմ, հետը խոսելու բան ունեմ»: Մարինեն ասում է. «Հեռախոսս մյուս սենյակում է, գնա վերցրու, բացիր, մեջը կա նրա համարը, գրիր»: Հարսը գնում է, հեռախոսը բացում, փնտրում համարը: Հաս-կանալի է, մեջը բազմաթիվ անուններ կային գրված, հերթով կարդա-լով գնում է, հանկարծ տեսնում գրված՝ Լյուբովին: Յնգվում է: Իր փնտրելիքը մոռանում է, հեռախոսն անջատում է, թողնում այնտեղ, հետ դառնում: Մարինեն հարցնում է՝ գրեցի՞ր համարը: Հարսը ձայն չի հանում: Նորից է հարցնում, լռում է: Մարինեն նկատում է, որ հար-սը մռայլված է, անտրամադիր: Հարցնում է՝ մի տեսակ ես, ի՞նչ է պատահել: Հարսն ասում է. «Հալա հարցնում էլ ե՞ս, ուրեմն դու էլ ե՞ս տհենցի, հեռախոսիդ մեջ էլ համարը պահում ես, չէ՞»: «Ախճի՛, հի՞նչ ա պատահել, ի՞նչ համար»... Հարսը խռոված տոնով ասում է. «Լյու-բովինիկդ» համարը»: Մարինան ծիծաղում է ու հանգիստ բացատ-րում. «Ախճի՛, գիժ ե՞ս, ի՞նչ լյուբովինի, դա Լյուբով Նիկոլաևնան ա, երեխայիս բժշկուհին»...

522. Մեր հարևանները գյուղում շատ համերաշխ էին: Իրիկուն-ները դուրս էին գալիս փողոց, Վարսենիկի բիբի քարին նստում, գու-պա գործում և գրուցում: Մենք երեխաներով փողոցում խաղում էինք և հաճախ լսում նրանց զրույցները կամ խառնվում: Մի երեկո բոլորը սովորականի նման հավաքված էին, իսկ Աշխենիկի բիբն ինչ-որ բան էր պատմում: Հարևանի երեխաներից Թոֆիկը մոտեցավ, զարմացած ասաց. «Աշխենիկ՛ բիբ, յուրկադ քարս ես հագեր»: Աշխենիկը հան-գիստ պատասխանեց. «Թարս չի, քեզ մատաղ, սա Բաքվի երեսն ա»... Աշխենիկ բիբի եղբայրը Բաքվում էր ապրում, և նա մեկ-մեկ

գնում էր Բաբու՝ եղբորը տեսնելու: Պակաս տարիներ էին: Բաբու գնալու ժամանակ Աշխենիկ բիբը յուրկան շրջած էր հագնում՝ քարս, որպեսզի գույնը մի քիչ քարմ երևա...

523. ...Սլավիկը Մոսկվայում վարձով էր ապրում: Մի անգամ գործով գնացել էր Ռոստով, հանկարծ եղբայրը զանգում է, հարցնում՝ ինչքա՞ն փող ունես: Նա ասում է՝ այսքան-այսքան, լրիվ մամայի մոտ դրած: Եղբայրը՝ Սամվելը, որն արդեն տուն ուներ, ասում է. «Ինչքան կա, վերցրո՛ւ, շտապ արի այստեղ, հարմար տուն կա, վաճառում են»։ Սլավիկն ասում է. «Ախր ես Ռոստովում եմ, փողս էլ քիչ է: Եղբան էլ եթե պարտք վերցնեմ, ո՞նց եմ տալու»։ Սամվելն ասում է. «Այսպիսի հարմար առիթ միշտ չի լինելու, պիտի անպայման վերցնենք»։

Գնում է մոր մոտ, եղած փողը վերցնում, այդքան էլ ինքն ավելացնում, տունն առնում: Սլավիկը գալիս է, տեսնում՝ տունն առած, ընտանիքը տեղափոխված, ամեն ինչ շատ լավ: Աշխատած փողն իրար է զցում, մի տարի հետո տասը հազար դոլար տանում եղբոր տուն, ասում. «Դե ես տարվա մեջ էսքան եմ կարողացել իրար զցել, վերցրու, մնացածն էլ քիչ-քիչ փակելու եմ»։ Սամվելը ծիծաղելով ասում է. «Փողը դիր գրպանումդ. արդեն գաղավոյ ենք արել, եղ պարտքը սպիսատ արել»...

524. Զոխյան Հրանտը՝ Անտին, քարհանքում բանվոր էր՝ «կուրիկ» էին կտրում: Կեսօրին «Քար» աղբյուրի մոտ ընկերների հետ նստած ճաշում էին: Չվարճախոս Գոսին անցնում է ճանապարհով: Անտին կատակի համար ասում է. «Գեղողներ ենք, ռազվեդկա ենք անում. եկել ենք այս կողմերն ուսումնասիրելու»... Գոսին հանգիստ ասում է. «Դուլդուներիդ թոգան»^{*} ըրևում ա, վար գեղող ես»...

525. Հարաբեղը մոռացկոտ մարդ էր: Կինն ինչ պատվիրեր՝ կմոռանար: Մի օր կինը դժգոհում է. «Ա՛յ մարդ, եղբան դոնգի կլինե՞ն, հինչն ասում եմ, մի ականջովդ մտնում ա, մյուսովը դուրս գալիս»։

* Մեր գյուղերում խորհրդային տարիներին այսպիսի սովորություն կար: Երբ մեկը լուրջ կարիք էր ունենում, դիմում էր գրում, կոլտնտեսությունից փող կամ ապրանք պարտք վերցնում: Տարեկերջին «գաղավոյ»՝ ընդհանուր ժողով էր լինում: Ժողովուրդը կարող էր այդ մարդու բարեխղճությունը, վատակը և պայմանները հաշվի առնելով նրա պարտքը «սպիսատ անել», այսինքն՝ ջնջել (ծ.կ.):

^{**} Ականջներիդ փռնուց (ծ.կ.):

Հարաքեղը պատասխանում է. «Այ կնիկ, դյուզ ես ասում, ամա քեզ էլ հինչ վար ասում եմ, երկու ականջովդ մտնում ա, բերանովդ դուրս գալիս»...

526. Հարևանուհին զարմացած ասում է. «Ախճի՛, լսել ե՞ս, էս Սիմոնը կնգանը մհետ ամեն օր կռիվ ա տալիս, ամա զոքանչին քարիփի ա անում միշտ»: Դիմացինը բացատրում է. «Ախր դու չգիտես, զոքանչը ժամանակին Սիմոնին զգուշացրել է. «Այ Սիմոն, իմ աղջկա մհետ շոնն էլ չի յոլա քինալ, շատ հայասըզ ա»...

527. Պայծառի աղջիկ Սոֆին ամուսնացավ, ութ տարում իրար վրա ութ երեխա բերեց՝ յոթ տղա և մեկ աղջիկ: Ամեն իրիկուն երեխաներին հաշվում էր, հետո հանգիստ պառկում քնելու: Մի օր նրա Վաչո տղան տուն է գալիս՝ լրիվ ցեխի մեջ կոլովված, կեղտոտված: Մայրը դժգոհ ասում է. «Թաղեն քեզ, էդ հի՞նչ օրն ես ընկել. ինձ հետի ավելի լավ ա մի թագա երեխա պիքեն, քանց թա քու եղտուտ շորերը վաճաճ»...

528. Վաղոյի ծննդյան օրն էր: Առավոտյան կինն ասում է. «Էսօր քո ծննդյան օրն ա, հի՞նչ պաղարկա տամ քեզ»: Վաղոն ասում է. «Աբա՛գ, քեզ մատաղ. վէշ մի պաղարկա օգում չեմ, հաց ուտելիս մի 10 թուպե սուս կանես»...

529. Սաքեթը հարևանուհու մոտ զանգատվում է ամուսնուց. «Մեր մարդը խելքը քամուզ կորցրել ա. հինչը որտեղ պետք ա, էնտեղ չի դնում, մտան քիցում ա, օրիշ տեղ ա դնում: Էսօր սաղ օրը ման եմ եկել, փողին պորտմանը քիթել չեմ, հով գիդա՝ որտեղ ա դրել, գնացել գործի»...

530. Փոքրիկ Կարինեն իրենց դարպասի մոտ լացում է: Փողոցով անցնող Վանես դային հարցնում է. «Բա՛լա, քե՛զ մատաղ, խե՞ս ես լաց լինում»: Երեխան մտահոգված ասում է. «Մաման ու պապան կոպում են իրար մհետ, պապան ասում ա՝ ախճի, հալ ես է՛, հալ: Մաման էլ նրան ասում ա՝ դու էլ խոզ ես, խոզ»: Վանես դային ծիծաղելով հանգստացնում է երեխային. «Ոչի՛նչ, քե՛զ մատաղ, կռիվ էլ կանեն, կբարիշեն էլ»: Երեխան ասում է. «Գյուդում եմ, միշտ կռիվ են գցում, հետո բարիշում: Ամա գյուդում չեմ՝ վար մինը խոզ ա, էն մինը հալ, պա ե՞ս հինչ եմ»...

531. Կրոնի դասին դասատուն փոքրիկ Ռուսլանին հարցնում է. «Աղամն ու Եվան դրախտում մինչև ե՞րբ են մնացել»: Երեխան

վատահ պատասխանում է՝ մինչև աշունքը: Դասատուն անսպասելի պատասխանից զարմացած հարցնում է. «Ի՞նչ գիտես»: Երեխան ասում է. «Դե՛ խնձորը աշունքը չի՞ հասնում»...

532. Մուրադը հրացանը գցում է ուտովը, շունն առաջն անում, դուրս գալիս բակից, կնոջն ասելով. «Քինում եմ լքտրակի հորսի»: Երեխան զարմացած հարցնում է. «Ա՛յ մամ, պապան լքտրական վախում ա՞, վար համ հրացանն ա տանում հետը, համ էլ շունը»...

533. Շրջանի հողբաժնի աշխատողներն օրվա վերջում հոգնած հավաքվում են հիմնարկում, քննարկում հաջորդ օրվա անելիքը: Բոլորը հոգնած էին: Մի մեծ դահլիճ էր, բոլոր պատերի երկայնքով սեղաններ դրած: Աշխատողներից մեկը, մի տարեց կին, ձանձրացած գլուխը դնում է ձեռքերի վրա, ննջում: Սահակը, որ ելույթ էր ունենում այդ պահին, նկատելով, որ նա քնում է, ասում է՝ երբ երազում լավ բան եք տեսնում, որպեսզի դա կատարվի, պիտի արթնանալուց հետո վերմակի կարկատանի վրա նստեք: Այդ կինը լսում է, բայց այնքան հոգնած էր, չի կարողանում աչքերը բացել: Առանց գլուխը բարձրացնելու, ասում է. «Պա կարող ա՞ մեր յորդանին իրա կըրկատան չիկա, վերդեղ պետկ ա նստեն»: Սահակն ասում է՝ փեշկումս ...

534. Շեֆեկեցի թուրք Ադիլը աղբբեջաններենի դասեր էր տալիս Դարաչինարում: Մի օր դասին շատ են խանգարում, գնում է տնօրեն ընկեր Ալիշին կանչում: Նա գալիս է, հանգստացնում Ադիլին՝ հենց թուրքերեն լեզվով. «Ոչի՛նչ, ընկեր Ադիլ, մեշա չախկալսըզ օլմագ»: Ադիլն ասում է. «Ախր մանիմ մեշան համը չախկալ դը»: Երկուսն էլ ծիծաղում են, աշակերտներն էլ՝ հետները: Ու հարթվում է ամեն ինչ...

535. Գաղթուքցի Եղյան Գարասն ամուրի մարդ էր, խորհրդային կարգերից դժգոհ: Երկու անգամ արքաբել էին, գյուղ էր վերադարձել 1960-ական թվականներին: Հայտնի էր իր զվարճախոսություններով, և կատակների մյուսը հաճախ համազրյուղացի Մեսրոպն էր: Մեսրոպը շարքային կոլտնտեսական էլ է եղել, ֆերմայի վարիչ էլ, բրիգադավար էլ, վերջում էլ կոլտնտեսության նախագահ դարձավ: Ինչ-որ պատճառով աջ ոտքից կաղում էր: Կիսազրագետ մարդ էր և շատ անգամ ամեն տեսակ սխալներ թույլ էր տալիս գրելիս:

* Անտառն առանց աղվեսի չի լինում (թրգմ. կ.):

** Իմ անտառում լրիվ աղվեսներ են (թրգմ. կ.):

Կարապետյան Տիգրանի աշխատանքային գրքույկի մեջ նրա անուն-ազգանվան տեղը գրել էր՝ «Կաբդի Դական»: Չգիտես ինչ ձևով այդ մասին իմացել էր Եղյան Գարասը և այդ Մեսրոպի մականունը դրել «Կաբդի Դական»: Դա առաջին անգամ արքայազնի հետո էր եղել, դրա համար էլ Մեսրոպը ջղայնացած ասում էր. «Ա՛, հագուր էին վիսիկա արել դրան, էդ որտեղի՞ց եկավ էդ Գարասը»: Իսկ Գարասը Մեսրոպի խոսքերը «ճոխացրել» էր, հորինել, քե նա ում ինչ կասեր: Այսպես էր ասում. «Թու-թու, հարամ շներ, Կաբդի Դական, Փուրդու-գարա (Փիրուգա), Ջուրբնամոր (Ջորաբյան Ամիրխան), Մահավանա (Մարգարիտ Վանյան), Դլարթի (Դլեչյան Հարություն), Եղի-Փետի (Եղյան Փեդր) և այլն:

536. Ֆերմայի վարիչ եղած Ժամանակ Մեսրոպը աշխօրերի մատյանում գրել էր. «Նալբանդյան Ջավադ՝ սարը գնալ՝ 1 աշխօր: Նալբանդյան էշ (Ջավադի էշի մասին)՝ սարը գնալ՝ 2 աշխօր»: Սարից հետ գալն էլ՝ նույն ձևով՝ էշին 2 աշխօր, Ջավադին՝ 1 աշխօր: Պատճառն այն էր, որ Ջավադն իր էշով էր ապրանք տեղափոխում սարը կամ բերում...

537. Գաղթութցի Մեսրոպ դային իր գոթանչ Վարդանուշին ասում է. «Ա՛գի, ա՛գի, մին լավ յաշի, մի մեկ եմ կիրել, հենց ա լիհա կլխեն իրա փաչա տվող Դադստանա լանգառ լինի»...

538. Նախագահ աշխատելու Ժամանակ Մեսրոպը ձիով էր ման գալիս, ձին էլ խոշոր էր և ուժեղ: Կանգնեցնում էր հարևան Խաչոյի բախչի պատի մոտ, բարձրանում պատը, այնտեղից՝ ձիու վրա: Ասում են՝ կեսօրին երբ տուն էր գալիս, հաճախ ձիուց չէր իջնում, հենց ձիու վրայից ձայն էր տալիս կնոջը. «Ախճի՛, Արուսյա՛կ, մի ստաքան չայ պեր, խմեմ, քինամ»...

539. Պատերազմի տարիներին էր՝ սով, ամեն տեսակ պակասություն: Ասում են՝ երբ երեկոյան Լուսիկ բիբը մի կերպ մի բան էր ճարում, դնում սեղանին, ուտում էին, վերջացնում, տղան՝ Աշոտը, հարցնում էր. «Այա՛, պա ռավետը հի՞նչ ենք ուտական»...

540. Գաղթութից մեկը խոպան էր գնացել, ռուսերեն էլ լավ չգիտեր: Մի անգամ խանութ է մտնում, ուզում է ներքնաշոր գնել, չի

*Այն տարիներին Դադստանի կողմերից լարախաղացներ էին գալիս մեր գյուղերը, իսկ լանգառը լարախաղացի ձեռքի ձողն է:

կարողանում բացատրել: Վաճառողը համբերությունը կտրած հարց-
նում է՝ չոս տի խոչեշ: Նա ասում է՝ փոխան: Ընկերները ծիծաղում
են, նրա մականունն այդ օրվանից դառնում է «Փոխան»:

541. Երբ մի տեղ աղմուկ ու ժխոր է լինում, սովորաբար համե-
մատում են հարսանիքի հետ՝ «հենց ա հրսանիք լինի»: Հայկազի
տղա Ռոմիկի հարսանիքի ժամանակ հարազատների ու բարեկամ-
ների մեծ քվով երեխաներ էին հավաքվել տանը, աղմուկ, ժխոր էին
բարձրացնում: Հայկազ ապան ջղայնանում է՝ ասելով. «Ա՛ լակոտ-
ներ, խէ՞ չեք սուս անում, հրսանիք ա՞, հրսանիք»...

542. Հնում խանութում հաց վաճառելու սովորություն չկար մեր
գյուղերում: Բայց խորհրդային կարգերի ժամանակ ծառայողների մի
ստվար խավ առաջացավ, մախ՝ շրջկենտրոնում: Շատերը նույնիսկ
հարևան գյուղերից էին գալիս, շրջկենտրոնում աշխատում՝ կին, քե
տղամարդ: Դրա հետ կապված շատերն այլևս հնարավորություն չու-
նեին տանը հաց քխելու, հացի փուռ և խանութ ստեղծելու պահանջ
առաջացավ: Հետո էլ խոշոր գյուղերում սկսեցին հաց վաճառել և հա-
ցը բերում էին շրջկենտրոնից՝ Ներքին Շենից: Պատերազմի տարի-
ներին սկսեցին հաց վաճառել նաև Գաղթություն: Հացը վաճառում էր
հենց ներքինշենցի Այդինը: Դե, սով տարի էր, մի փշրանքն էլ արժեք
ունեն: Ժողովուրդը «երգ» էր հորինել Այդինի մասին: Ասում էին՝

Այդին դայի,
Դայդին քաշի,
Աչքիդ տակավը
Քյասիբին յաշի ...

Այդինից հետո հացը վաճառում էր Նալբանդյան Անդրոն, բայց
վիճակը դարձյալ նույնն էր, և ժողովուրդը հիմա էլ նրա մասին էր
նույնը «երգում»...

Անդրո՛, յաշի,
Շանդրը քաշի,
Աչքիդ տակավը
Քյասիբին յաշի...

543. Խրիստոփորից Հակոբյան Բուդաղը կոլտնտեսության բրի-
գադավարներից էր: Սի անգամ մոտենում է կոլտնտեսականներից

* Այսինքն՝ ճիշտ կշռիի և աչքի տակով աղքատին մայիր՝ օգնի (ծ.կ.):

մեկի տանը, որ կանչի, հանձնարարություն տա: Չայն է տալիս բարձր՝ հե՛յ... Բայց այդ պահին անունը մոռանում է, սկսում է քիչ-քիչ ձայնը ցածրացնել՝ հե՛յ, հե՛յ...

544. Ազիզյան Գուդանը տարիքն առած մարդ էր, լավ չէր լսում: Մի անգամ գնացել էր անտառ: Փայտ կտրելու ժամանակ, ճանապարհով անցնում է մի ծանոթ թուրք եւ բարևում՝ «Սալամ, Գուդան քիշի»: Գուդանը, սխալ հասկանալով, ասում է. «Սամի եմ կտրում»: Թուրքն էլ մտածում է, քե՛նա հայերեն պատասխանեց, շարունակում է զրուցել՝ «Նեջա՞ սան» (ո՞նց ես): Գուդանը կարծում է, քե՛նա ասաց՝ փայտը գեջ ա (թաց): Ասում է. «Ջհանմանը հինչ գեջ ա»... Թուրքը նորից չի հասկանում, որ նա չի լսում, ասում է. «Նա՞ մանա», Գուդանն էլ «դիմանա» է հասկանում, ասում է. «Հա՛, քե՛զ մատաղ, հաստ եմ կտրում, որ դիմանա»*:

545. Մի խումբ երեխաներ Խրխափորից ոտքով գնում էին Դաբաչինարի դպրոց (միջնակարգն այնտեղ էր): Ճանապարհին վիճում են: Մեկը Սամվելին ասում է՝ «Մոզի»: Սամվելը նեղանում է, բայց ոչինչ չի պատասխանում: Երբ կեսօրից հետո վերադառնում են Խրխափոր, Սամվելը նեղսրտված իր եղբայր Իվանին պատմում է այդ մասին, անհանգստանալով, որ մեծանալուց հետո էլ իրեն կարող է «Մոզի» ասեն, որպես փոք: Իվանը, որ նրանից մեծ էր, հանգստացնում է. «Վեչինչ, էս ա վար մըծանաս, «տյուճի» են ըսական», մոզին հո միշտ մոզի չեն ասում...

546. Հայ Պարիսից մի գյուղացի ինչ-որ քեթև հանցանք էր կատարել: Շրջանի դատավորը գնում է, հրապարակային դատ կազմակերպում: Վերջում կարդում է «պրիգովորը»** այն մասին, որ այդ մարդը պիտի տուգանք վճարի: Եվ զգուշացնում է, որ մեկ շաբաթվա ընթացքում պետք է կատարվի վճիռը: Այդ մարդը, որն իրեն մեղավոր չէր համարում, տեղից վեր է կենում. ասում. «Դու լիհա ռեխդ ցեց կալած որոշիր, հո՞վ ա կըղըրլական»...

547. Հայ Պարիսում մի բռնաբարության գործ է բացվում: «Տուժածը» մի քիչ ծալը պակաս և անտեր աղջիկ էր: Դատ են անում,

*Դժվար է ասել, քե՛նա զրույցը որքանով է համապատասխանում իրականությանը, սակայն մեր գյուղերում մանուկների մոտ էլ էր տարածված այդ գվարճալի հարց ու պատասխանը (ծ.կ.):

Դատավճիռը (ծ.կ.):

բայց դատն ամեն անգամ ձգձգվում է ինչ-որ պատճառով: Մի օր այդ աղջիկը մտնում է դատավորի մոտ, ջղայնացած ասում. «Էդ տուրը խե՞ղ չեք կատարում-պրծնում. ես մինչեւ հե՞փ պետք ա սհենց բռնաբարված մնամ»...

548. Ներքին Շենից Նազարը կոշկակար էր, խմելու նկատմամբ էլ սեր ուներ: Մայրը միշտ կշտամբում էր դրա համար: Մի անգամ մեկի համար չուտ էր կարել, փողի փոխարեն մի բալոն գինի էին բերել, դրել սեղանին: Նազարը մի բաժակ փորձում է, տեսնում է, որ շատ լավն է: Այդ պահին մայրը ներս է մտնում: Նազարը մորը համոզում է, թե՝ «Հունջին կինին ա, մեր շենումը սրա մման կինի չկա, մի բաժակ պետք ա խմես»: Համոզում է, մի բաժակ խմեցնում: Մի հատ էլ ինքն է խմում, նորից մոր համար լցնում: Այս անգամ մայրը հեշտությամբ համոզվում է՝ ասելով. «Ա՛ տղա, իսկապես սա մեր կինան լավն էր»: Այդպես 3 - 4 բաժակ մայրը խմում է, իսկ երբ ուզում է վեր կենալ, զարմացած ասում է. «Պա՛յ, ա՛ տղա, վետներս թուլացել են, կիլոխս էլ հենց ա մխրել շաշված ինի»... Նազարն ասում է. «Ա՛յ իմ մեր, պա իմ օրը միշտ տհենց ա ինում է՝ իմ ջանը քար ա՞, վար տիմանում եմ, հալա երեսիս էլ խոտում եք»...

549. Շրջանի գլխավոր անասնաբույժ Սահակը մահացել էր: Հարգված մարդ էր, շատ ժողովուրդ էր հավաքվել, շատերն էլ տարբեր տեղերից հեռագիր էին ուղարկել: Ընդունված կարգի համաձայն վերջում հեռագրերը կարդում էին: Ընթերցողը Սաշան էր, որպես ռուսերեն լավ իմացող: Երկար կարդում է, կարդում է, բայց եղանակը վատն էր, ժողովուրդն շտապում էր: Մնացած հեռագրերը Սաշան փաթեթով դնում է դագաղի վրա, ասում. «Դե՛, ա՛ Սահակ, մի ազատ վախտ կկարդաս»: Ծիծաղ է առաջանում: Ընդունված էր, որ հանգուցյալի ընտանիքում հեռագրերն էլ պահեին, ինչպես որ պահում էին օգնողների ցուցակը, և նա այդ խոսքը պիտի հարազատներին ասեր, որ ազատ ժամանակ կարդան:

550. Ներքին շենցի Ն-ն անտառապահ էր: Մտերմություն էր անում գյուղի մի այրի կնոջ՝ Պ-ի հետ: Մի անգամ ճանապարհով անցնելիս նկատում է, որ այդ կինն այգում մենակ աշխատում է: Ներս է գնում: Այգում կողքի գցված մի մեծ հնձան կար, մտնում են ներս: Հանկարծ հնձանն սկսում է գորվել: Ոչ կարողանում են դուրս գալ, ոչ էլ համարձակվում են աղմուկ բարձրացնել, սարսափահար են լինում,

որ պիտի ընկնեն գետը: Բարեբախտաբար հնձանը դեմ է ընկնում գետափի կեռասի ծառին...

551. Ներքին Շենի մեծերից մեկը (կարծեմ՝ Տափրունց Առուշանը) մի առիթով ասել էր. «Էս շենը «գյալման»^{*} է ուտելու (վախելելու)»: Եվ այդ խոսքը գյուղում հիշվում էր երկար ժամանակ: Մի անգամ Բաբաջանանց Նազարը փողոցում հանդիպում է շրջանի ղեկավար Ավանեսովին և ասում. «Էս շրջանի ղեկավարն ինչու՞ է միշտ «գյալմա լիում»՝ առանց մտածելու, որ Ավանեսովն ինքն էլ է «գյալմա»...

552. Փ-ին բանակ են տանում: Կինն էլ հավաքաբար էր զինկոմիսարիատում: Մի անգամ նամակ է գրում զինկոմիսար Թամամյանին՝ նշելով. «Ըմանաք, ըմանաք, մեր կնեկը քեզ ըմանաք»...

553. Քրիստափորը մաճկալ Սահակ դայու մոտ հոտաղ էր (եզները նա էր քշում): Մի պահ դիտմամբ արագ է քշում, մաճը կողքի է ընկնում, Սահակ դային վայր է ընկնում ցեղերի մեջ ու տեղից արագ վեր բռնում, նորից մաճը բռնում: Քրիստափորը ծիծաղելով ասում է. «Փիզկուլտ, ուռա՛, փիզկուլտ, ուռա՛»^{**}...

554. Կոլխտզի նախագահ Պ-ն ինչ-որ պատճառով դիտողություն է անում գրասենյակի աշխատող Մ-ին՝ նրա ամուսնու հասցեին ասելով. «Ա՛ մարդիդ խելքը պակաս ա, է՛»: Մ-ն ասում է. «Պա՛հ, մաքամ քո խելքը իլլամ ա՞»:

555. Ներքին Շենում մեկի ոչխարը գողանում են: Ցարական կատարածու Միրզային ուղարկում են Մինասի տուն՝ փնտրելու: Նա գնում է, փնտրում, տանը ոչինչ չի գտնում, դուրս է գալիս բակ, նկատում է, որ գոմաղբի կույտն անսովոր տեսք ունի: Ձեռնափայտով փորում է, տեսնում՝ ոչխարը մորթած, ջվալի մեջ դրած, գոմաղբով ծածկված: Դա տեղի է ունեցել այն ժամանակվա «պիսար» Լեռնի վկայությամբ՝ 1910 - 1912 թվականներին: Մինասն ամոթից գյուղը թողնում է, հեռանում Բաբու: Վերադառնում է շատ տարիներ անց, խորհրդային կարգեր հաստատվելուց հետո:

556. Ցարական իշխանության տարիներին Վերունց Թևոսը մի անգամ հյուր է կանչում հաշտատար դատավորին՝ իր աշխատակիցների հետ: Ներկա են լինում «պիսար» Լեռնը (Գաղբուքից) և կատա-

* Եկվորը (ծ.կ.):

** Գյուղերում նոր էր սպորտը զարգանում, և ընդունված էր այդպիսի կոչեր անել մրցումների ժամանակ (ծ.կ.):

բաժնու Սայամը: Ճոխ սեղան էր, ուտում-խմում էին: Բաժակները լցնողը Սայամն էր: Նա մի քանի անգամ մոռանում է, լցնելն ուշացնում, Թևոսը դիտողութուն է անում: Երբ մի քանի անգամ կրկնում է, Թևոսը ջղայնացած ասում է. «Աբա՛, շուտ-շուտ լցրու, էլի, խե՞՞ ա ջանդ տյուս կյալիս՝ կիճին իմը, սեղանն իմը»...

557. Գարաշինարցի Ա -ն առավոտ ծեղին վեր է կենում, մտնում տան դիմացի այգին, մի երկու ժամ աշխատում, որ հետո գնա կոլխոզի գործին: Երբ հետ է դառնում, ձեռքերը բակում լվանում, որ հաց ուտի, գնա, կինը ջղայնացած հարցնում է. «Էդ ձեռքերդ լվանում ես, վար հի՞նչ»... Ա -ն չի ուզում վիճել, ասում է. «Լվանում եմ, վար քինամ հանդը»... Առանց նախաճաշելու տնից դուրս է գալիս, գնում: Երբ ահագին տեղ հեռանում է, ինքն իրեն բարձրաձայն ասում է. «Ա շանա՛ իլած կնեկ, գյուղում չե՞ս խե եմ ձեռքերս լվանում, լվանում եմ, վար մի կտոր հաց օտեմ, ետնա քինամ հանդը»...

558. Գյուղերում համարյա բոլորը մթերք ունենում էին, բայց փող դժվար էր ճարվում: Գյուղացիներն իրենց ապրանքը մի կերպ հասցնում էին Կիրովաբադ կամ Բաքու, այնտեղ վաճառում: Մարումն Ջումին ու իր բաջանադ Բաբկենը «կորմիտի»^{*} խոզերը մորթոտում են, տանում Բաքու՝ վաճառելու: Շուկայում այդ օրը միս շատ է լինում, դժվար է վաճառվում: Մի օր էլ որ մնում է, սկսում է հոտ գալ մսից, ավելի դժվար էր վաճառվում: Հաճախորդները բողոքում են, քե՛ն ձեք մսից հոտ է գալիս: Բայց Ջումին հույսը չի կտրում, ասում է. «Պըհլական եմ, հոտուցնական եմ, ամա ձեզ ուտուցնական եմ»^{***}: Եվ իրոք, հաջորդ օրը շուկայի միսը պակասում է, նրանց միսն էլ, քեկուզ հոտ էր գալիս, վաճառվում է:

559. Գյուղում լոբու մի տեսակ կար, «ղախայա» էր կոչվում (լիբբ): Դումաշ բիբը մի պարկ լոբի էր տարել Բաքու, շուկայում վաճառում էր: Ոգևորված ձայն էր տալիս. «Այ լա՛վ լոբի, դա՛խայա լոբի»: Ժողովուրդը հետաքրքրությամբ ու ժպտալով հավաքվում է, լավ առնում են: Խրխափորցի Պետրոսյան Կոլյան այդ ժամանակ Բաքվում էր սովորում, շուկա էր գնացել: Ծանոթ ձայն լսելով՝

* Այս գրույցը տարբեր գյուղերում տարբեր մարդկանց հետ է կապվում (ծ.կ.):

... Այսինքն՝ լավ չաղացրածն (ծ.կ.):

*** Պահելու եմ, հոտեցնելու եմ, բայց ձեզ ուտեցնելու եմ (ծ.կ.):

մոտենում է, ճանաչում Ղումաշ բիբին: Իսկ Ղումաշ բիբն ամաչելով երեսը մի բիչ ծածկում է, ասում. «Կո՛ղի, քե՛զ մատաղ, ես հի՞նչ անեմ, էս անտերին անունը տե՛նց ա»...

560. Մեր գյուղերում, չգիտես ինչու, շատ խոսողին «ուղի» էին ասում: Մթերման գրասենյակի աշխատող Ղուլյան Գարեգինը վաքորդ Նալբանդյան Ջումշուդի հետ գնում են ինչ-որ ապրանք մթերելու Նուխիում, որտեղ ուղիներ էին ապրում: Երեկոյան հյուր են մնում մեկի տանը: Ընթրիքի սեղանի շուրջը Գարեգինն սկսում է անվերջ խոսել, ինչ-որ բաներ պատմել: Ի վերջո Ջումշուդը չի համբերում, հարցնում է. «Գարո՛ դայի, սրանք հի՞նչ ազգ են»: Նա ասում է՝ ուղիներ են: Ջումշուդն ասում է. «Ա՛յ քո տունը շինվի, ուղին դու ե՞ս, քե՞ս սրանք, խե՞ չես քող անում, որ մի բան էլ իրենք խոսան»...

561. Հայրենական պատերազմի ժամանակ էր: Վերինշենցի Գյուլումյան Բյացին մտնում է կոլխոզի նախագահ Շախյան Գուրգենի մոտ, խնդրում. «Մի հարյուր կիլո ցորեն դուրս գրիր ավանսով, երեխեքս սոված են»: Նախագահն ասում է. «Դիմում գրի՛ր, տո՛ր հաշվապահին. արդեն մի բանի հոգի խնդրել են: Մի 50 - 60 դիմում կհավաքվի, ընդհանուր ցուցակ կկազմենք, կգնաք, պահեստից կստանաք»: Բյացին ասում է. «Ա՛յ Գուրգեն, քեզ մատաղ, երեխեքս էլ չեն դիմանում. եթե ցորեն չտանեն, իմ տղա Բենոն ասել ա՝ կացինը յեր են ունական, տաշտը ցրել տամ: Օրը կեսօր ա դառել, նրանք հալա կեռքին յեղտավն են»... Գուրգենն ստիպված դիմումին մակագրում է, ասում. «Գնա՛, ստացի՛ր, գոնե տաշտն էլ ա փրկվի»...

562. Բյացին աշխատավետեր մարդ էր, մեծ ընտանիքի տեր ու աղքատ էր ապրում: Մի անգամ տղան՝ Ալբերտը, հարցնում է. «Ա՛յ պապ, էդ խե՞ ուրիշների պաղվալում մոկներ են ինում, ամա մերում մոկոն չկա»: Հայրն ասում է. «Ա՛յ Բեթո, օրիշներին պաղվալներումը ուտիլի պյան է ինում, տիրա իրա էլ մոկներ են հրվաքվում, բազմանում: Մեր պաղվալումը հի՞նչ կա, վար մոկոն հրվաքվի. մոկոնը դռենջ ա՞ ուտլական»...

563. Մաթեմատիկայի ուսուցիչ ընկեր Աշոտն արդեն մի 10 բուպե կլիներ, որ դաս էր պարապում, հանկարծ դուռը բացվում է ու երեք տղա ներս են մտնում: Դե, նրանք սովորաբար դասամիջոցին հավաքվում էին մի անկյունում, «սեկա» խաղում: Ներս են մտնում այդպես ուշացած և առանց քույրտվություն խնդրելու գնում, ամեն մեկն

իք տեղը նստում: Ընկեր Աշոտը երեքին էլ կանչում է գրատախտակի մոտ: Գալիս են, կողք-կողքի կանգնում: Ընկեր Աշոտը ժպտալով մոտենում է ու անսպասելի երեքին էլ մի-մի ուժգին ապտակ հասցնում, դուրս անում դասարանից, ասելով. «Սրանից հետո եթե ուշանաք, դուռը կփակվի, ներս մտնեք, քույրուկներս ստանաք, հետո նստեք ձեր տեղը»: Տղաները զուգահեռաբար դուրս են գալիս, հետո նրա ասած ձևով մտնում, քույրուկներս ստանում, նստում իրենց տեղը...

564. Մի անգամ ընկեր Աշոտին ժամանակավոր ուղարկում են Աղու ջուր քաղամասի յոթնամյա դպրոցը: Մտնում է յոթերորդ դասարան՝ դասի և հայտնում, որ նրանց ուսուցիչը հիվանդ է, մինչև լավանալն ինքն է պարապելու: Դասարանում աղմուկ ու ժխտը է բարձրանում, աշակերտներն անծանոթ ուսուցիչ տեսնելով, ոտքերով գետնին էին խփում, ձեռքերով՝ ցատկահարում: Ոչ ոք չէր լսում: Իրար քաշքշում էին, հարայիքոց անում: Ընկեր Աշոտն ասում է. «Առաջին անգամ եմ այսպիսի ուրախ դասարան տեսնում»: Հաջորդ ժամին ներս է մտնում՝ ձեռքին մի ճիպոտ: Աղջիկներին ասում է. «Դուք դուրս եկեք դասարանից»: Դուրս են գալիս: Մնում են միայն տղաները: Դիպուտը քաշում է՝ սկսում ծեծել: Ծառերը վախից կուչ են գալիս նստարանի տակ: Դրանից հետո նրա դասին ճանձնի տղազոցն էլ էր լսվում...

565. Հայրենական պատերազմի տարիներին Վերին Շենի Կիրովի անվան կոլտնտեսությունն առաջադրանք ստացավ՝ ձեռք բերել սպիտակ մագերով ցեղային այծեր, որոնց մազը շատ արժեքավոր էր ու քանկ գնով էլ վաճառվում էր պետությանը, օգտագործվում էր, ասում են՝ նավաշինության ու ռազմական արդյունաբերության բնագավառում: Դրանք շուտ բազմացան, քանի որ յուրաքանչյուր այծ ծնում էր տարեկան երկու անգամ՝ երեք ուլ: Մի քանի տարում դրանց գլխաքանակը անցավ հազարից: Փարախները կառուցել էին գյուղի Յմբաձոր կոչվող տեղամասում, ու այդ քաղամասը՝ քերծից մինչև Ներքին Շենի սահմանը, հատկացրած էր այդ այծերին որպես արտավայր: Չմոռան մի երեկո լուրը հասնում է կոլտնտեսության նախագահ Շախյան Գուրգենին, որ այդ այծերի մի մասը մատախտուղից մոլորվել են ու մնացել արոտավայրում: Հովիվները իմացել են այն

Մյո տղաները հիմա Կալինինգրադի մարզում են ապրում: Ամեն հանդիպման ժամանակ ինչում են, պատմում ու ծիծաղում:

Ժամանակ, երբ նկատել են, որ փարախներից մեկը դատարկ է մնացել: Նախագահը կիսատ թողնելով երեկոյան նիստը, իր տասներկու բրիգադավարներին ու վարիչներին վերցնում է, որ գնա, «ցեալ» կազմեն ու կորած այծերը գտնեն, որպեսզի գայլերի բաժին չդառնան: Բրիգադավարները խնդրում են նախագահից, որ թույլ տա, գնան, տներից ուտելիք վերցնեն, քանի որ քաղցած են: Նախագահն ասում է. «Ժամանակ չկա, ճանապարհին ուտելու հարցը կլուծեն»: Երբ հասնում են Թռածի գլուխ քաղամասը, ծովում են, մտնում Գրիգորի բակը, որին «Զյուքի» էին անվանում: Նա այդ քաղամասի ունևոր մարդկանցից մեկն էր: Հենց որ կանչում են, Զյուքի դային դուրս է գալիս, նախագահը հայտնում է այծերի մոլորվելու մասին, ասում, որ բրիգադավարներին վերցրած գնում են այծերին փնտրելու, տղաներն էլ ծաբավ են, ուզում են ջուր խմել: Զյուքի դային սլատասխանում է. «Բա գետին կշտավը չե՞ն եկել, կլսե՞ին, էլի: Ասում է. «Գետը սառած էր, հնար չկար խմելու»: Զյուքի դային մի վեղյո ջուր վերցրած, մի բաժակ էլ ձեռքին, բերում, դնում է ձյան մեջ, ասում. «Դե ինչքան ուզում են, թող խմեն»: Դե քաղցած մարդիկ էին, ամենքը մի բաժակ ջուր են վերցնում, բերաններին մոտեցնում, իբրև խմեցին ու մնացածը թափում ձյան մեջ: Երբ բակից դուրս են գալիս, բրիգադավար Զյուխյան Սողոմոնն ասում է. «Ընկե՛ր Շախյան, էդ ինչքան միամիտ մարդ ես, չե՞ս լսել, որ Զյուքի դային իր տան հյուրերին ասել է՝ դուք կերեք, ես ախորժակ չունեմ, որպեսզի նրանք էլ չուտեն»: Նախագահն ասում է. «Գնանք, ես իմ սխալը կուղղեմ»: Բարձրանում են այդ քաղամասի վերևի մասում ապրող Գզիրյան Ներսեսի բակը: Նախագահը մույն ձևով բացատրում է Ներսես դայուն իրենց գալու պատճառը: Ներսես դային ժպտալով ասում է. «Բա ջուրը հայաթում ե՞րբ խմելու, որ սաթիջամ ընկներ, բարձրացեք տուն, տանը կխմեք»: Ու հյուրերին ընդունում է, կնոջն էլ արթնացնում՝ ասելով. «Ա՛յ Զիլֆի, մի տես ինչպիսի հյուրեր են իրենց ոտքով եկել մեր տուն»: Զիլֆին սկսում է սեղան զգել: Ներսես դային էլ իջնում է պաղվալից ապխտած խոզի բուրդ և մի բալոն օղի բերում, դնում սեղանին ու ասում՝ տղաներ, ինչքան ուզում եք, խմեցեք ու «զակուսկի» արեք:

Ուտել-խմելը տղաների տրամադրությունը բարձրացնում է: Երբ այդպես ուզում են դուրս գնալ, տանտերն ասում է՝ սպասեցեք: Եվ մի շիշ օղի ուտելիքների հետ տալիս է նրանց, ասում. «Կտաք էն

խեղճ հովիվներին, մեղք են»։ Գուրս գալուց հետո լուրը հասնում է, որ կորած այծերն արդեն գտնվել են։

...Երբ սովխազի տնօրենն էի, մի առիթով այս դեպքը գրասենյակում պատմեցի։ Ներսեսի մասին մի դեպք էլ պատմեց մեր գանձապահ Սիխայելը։ Ասաց՝ պատերազմից զորակոչվել ու ամուսնացել էի։ Պակաս տարիներ էին, կոլտնտեսությունը յուրաքանչյուր աշխատողի 1 կգ ալյուր էր տալիս, որ փքրոկ եփեմ, ուտեմ ու աշխատեմ։ Ինձ էլ, որպես նորապսակի, 2 կգ էին տալիս։ Առավոտյան մի ափսե փքրոկ էի կերել ու ճանապարհվել դաշտ։ «Կորկոտ աղբյուրի» ջուրը սարալանջից քերում էինք գյուղ։ Ներսես դային որպես վարպետ կավից պատրաստած տյունգերն իրար հագցնում էր ու շարում, իր երկու տղաներն ու ես էլ հողով ծածկում էինք, որ ջուրը զով մնա։

Մի երկու ժամ աշխատելուց հետո նրանք որ նստեցին նախաճաշի, ես գնացի իրենցից հեռու նստեցի։ Ներսես դային կանչեց, ասաց՝ Սիխայել, արի, միասին նախաճաշենք։ Ասացի՝ նախաճաշել եմ, նոր եկել, իշտահ չունեմ։ Նրանք նախաճաշեցին, ու սկսեցինք մեր աշխատանքը շարունակել։ Երբ եկավ կեսօրվա ճաշի ժամանակը, ես նորից գնացի հեռու նստեցի ու մտածեցի, որ եթե նորից հրավիրեն, կասեմ՝ իշտահ չունեմ։ Հենց որ Ներսես դային նորից հրավիրեց՝ շփոթվեցի, փոխանակ ասելու՝ իշտահ չունեմ, ասացի՝ հաց չունեմ։ Ներսես դային ժպտաց ու ասաց՝ առավոտվանից եմ իմացել, որ հաց չունես, արի, մասնակցիր, հաց ուտելուց չեմ ամաչի։ Գնացի, նստեցի, մի ափսե հավի մսից պատրաստած չըխըրթմա լցրեց, տվեց ինձ ու թորնում թխած մի սալիտակ հաց էլ տվեց, ասաց՝ կեր, որ կարողանաս աշխատել։

Սիխայելը շարունակեց պատմել՝ արդեն քառորդ դար է անցել այդ օրվա հյուրասիրությունից, հիմա ամեն ինչ ունեմ, բայց այդ օրհասական հյուրասիրությունը չեմ մոռանում. Ներսես դային հիմա կենդանի չէ, միշտ նրան ողորմի եմ տալիս և մայիսի 2 -ին իմ ծնողների գերեզմաններից հետո անպայման այցելում եմ նրա գերեզմանին, մոմ վառում ու քարմ ծաղիկներ դնելով խոնարհվում այդ բարի մարդու շիրիմի առջև։

566. Վերինշենցի Քաչալ Խաչին ու իր տղա Գուրգենն անտառում փայտի ածուխ էին պատրաստում։ Մի օր Խաչին կնոջն ասում է. «Շարմաղ, հաց ուտելիս Գուրգենն աչքիս մոխիր է փչում, վաղվանից

մեր պայտուսակներն առանձին պատրաստիր»: Կինը յուրաքանչյուրի պայտուսակում երկու թոնրի հաց ու մի բանկա մածուն է դնում և ճանապարհում: Գուրգենը հոր խորամանկությունը հասկանում է, ու այդ օրը միսը կեռիքն է անում, մի հացով ու մի բանկա մածունով մի կերպ յոլա գնում: Երեկոյան տուն վերադառնալիս էն մի սաղ հացը պայտուսակից հանում է, կեսը կտրում, տալիս հորը՝ ասելով, «Ապե՛ր, մեծ մարդ ես, սոված կլինես, կե՛ր»: Երբ վերադառնում են, Խաչին կնոջն ասում է. «Աղջի՛, հացերի մեջքը կոտրողը ես եմ եղել, կասկածել եմ էն խեղճ երեխային. սրանից հետո մեր ուտելիքը միշտ մի տեղ կդնես»...

567. Սովխոզի տնօրեն աշխատելու տարիներին Շախյան Գուրգենին նշանակել էի խոշոր եղջերավոր անասունների ֆերմայի վարիչ: Մի օր մեզ հրավիրեց իրենց տուն, ասաց. «Լավ գինի եմ պատրաստել, քանի չի վերջացել, ընկերներիդ էլ վերցրու, գնանք մեր տուն»: Գնացինք: Իրոք, գովելի գինի էր: Գուրգենի կին Հայկանուշն ասաց. «Ընկե՛ր Ջարգարյան, դուք գովում եք, բայց Գուրգենը որ խմում է, կատարը կծանում է, բալկոնում կանգնում է, գնացող-եկողին հրավիրում է, բա դրան գինի կդիմանա՞»: Գուրգենն ասաց. «Հայկանու՛շ, ա դու չնեռնես, ուզում ե՞ս երկար ապրես»: Հայկանուշն ասաց. «Խե՞ն չեմ ուզում, հազիվ եմ երեխաներիս մեծացրել»: Նա ասաց. «Դե ես քա՛նի ասեմ՝ կինի պեր, դու սուս արած բեր, ումբուրդ երկարելու ա»: Բոլորս ծիծաղեցինք, այդ թվում և Հայկանուշը:

568. Մի տարի երեկոյան առաջադրանքներ տալու ժամանակ Շախյան Գուրգենը մի դիմում տվեց ինձ, որ իրեն ազատեմ ֆերմայի վարիչի պարտականությունից: Հարցրի. «Չհասկացա, սա ի՞նչ անսպասելի դիմում է, ի՞նչ է պատահել»: Ասաց. «Ո՛չ մի բան մի՛ հարցրու, հենց այնպես մակագրիր ու ազատիր»: Բացատրեցի, որ հիմա կոլխոզ չէ, որ ում ուզենամ, առանց պատճառի աշխատանքից ազատեմ, վերևից որ ռևիզոր է գալիս, ստուգում է նաև հրամանի գիրքը: Եթե առանց հարգելի պատճառի աշխատանքից ազատած ենք լինում, մեզ դիտողություն են անում: Դուք երկար տարիներ կոլխոզի նախագահ եք եղել, պարզևատրվել Լենինի շքանշանով և այլն: Շատ ստիպելուց հետո ասաց հետևյալը. «Էս իմ հարևան «չվարում քնող», «ղանդաղ քանդող»՝ Պիպանանց Ծատին տղա իմ բաջանաղ Ռուբենին գիտես, էլի, փոքրիկ քենիս իրեն եմ տվել, օգնել եմ, տուն է կառուցել: Սարին ոչխար գողանալու համար քանի տարի բանտ է

նատել, նրա մեծ ընտանիքի բոլոր հոգսերն իմ ու կնոջս ուսերին է եղել: Բանտից դուրս գալուց հետո էլ իմ բոլոր սեղաններին հրավիրել եմ, որ մարդամեջ ընկնի, հաշվել եմ իմ ընտանիքի ամենահարազատ մարդը, սակայն այսօր գոմշաբուծական բրիգադի անասնագուները շրջելիս նկատեցի, որ մեծ-մեծ ճակնդեղներն առանց մեքենայով մանրացնելու լցրել է գոմշակովերի ախոռները, խեղճ անասունները տանջվում են ուտելիս: Ասացի. «Ռուբեն, ինչո՞ւ չես մանրացնում, հետո ախոռները լցնում»: Ջղայնացավ, կացինը վերցրեց ու հարձակվեց վրաս: Այսքան տարիների լավությունների արդյունքն ստացա, այլևս չեմ ուզում երեսը տեսնել»: Ասացի. «Վաղը կկանչեմ, թուրմուր կտամ, քեզից ներողություն կխնդրի»: Նա ասաց. «Ոչ մի բան չի օգնի, անգամ երեխաներիս պատվիրել եմ, որ երբ մահանամ, նրան բույլ չտան հուղարկավորության մասնակցի»: Մտածեցի՝ գուցե մի երկու օրից ջղայնությունն անցնի, նորից վերադառնա՞նք այդ հարցին, հնար չեղավ: Մի քանի օր ֆերման անտեր մնալուց հետո ստիպված Շախյանին տեղափոխեցի այլ աշխատանքի, որպեսզի երկու բաջանադներն իրար երես չտեսնեն:

569. Շատ տարիներ առաջ էր: Կիրովաբադի հաշվապահական դասընթացներն ավարտեցինք, ստացանք հաշվապահի վկայական: Հրաժեշտի երեկո կազմակերպեցինք մեր դասատուների մասնակցությամբ: Նրանցից մեկը՝ Բալայանը, բաժակ բարձրացրեց, շնորհավորեց բոլորիս, հաջողություններ մաղթեց և ասաց. «Երեք կարևոր խորհուրդ եմ տալիս, որը դասերի ժամանակ հարմար չի եղել ասելը: Նախ՝ երբ վերադառնաք ձեր կոլտնտեսությունները, ցածր պաշտոն առաջարկեն, չհրաժարվեք. հին կադրերը հերթով դուրս են գալու աշխատանքից, իսկ դուք ավելի փորձառու դառնալով, զբաղեցնելու եք նրանց տեղը: Երկրորդ խորհուրդը՝ եթե ձեր տնտեսությունում սակասորդ նկատեք կամ գողություն կատարվի, աշխատեք միլիցիային քիչ դիմել. նրանք կգան, գողից կամ սակասորդ տվողից իրենց բաժինը կվերցնեն, ձեր տնտեսությունը ստուգելով՝ մի քերություն կգտնեն, մի բան էլ ձեզնից կգովեն»: Երրորդ խորհուրդ տալուց առաջ աղջիկներից ներողություն խնդրեց, հետո ասաց. «Դիմում եմ ապագա հաշվապահ տղաներին՝ կաշխատեք, որ ձեր գանձապահը տղամարդ լինի. շատ դեպքեր են հայտնի, որ կին գանձապահը խոշոր գումար է յուրացնում, մեղքը գցում նախագահի կամ հաշվապահի

վրա, ասելով, թե նրանք են պակասորդ առաջացրել և իրենց հետ ինտիմ կապի մեջ են եղել: Իսկ դատավորները հաճախ արդարացնում են նրանց»: Կյանքում անթիվ անգամ ողորմի եմ տվել իմ անցյալի փորձառու դասախոսներին: 40 տարի ղեկավար պաշտոն զբաղացնելով՝ ոչ մի անգամ կիմ զանձապահի հետ չեմ աշխատել. զանձապահներս միշտ տղամարդ են եղել:

570. Նախապատերազմական տարիներին Վերին Շենի ոչխարաբուծական ֆերմայի հոտի ձմեռացումը տափաստանային «Լյանբերան» հեռավոր արտավայրում էին անցկացնում: Մի անգամ ձմեռը շատ դաժան եղավ: Մեքենաներ էլ չկային անասնակերն արագ հասցնելու համար, սալլերով էին տանում: Ոչխարների գլխաքանակի մեծ անկում եղավ: Քրեական գործ հարուցեցին կոլխոզի նախագահ Սամվելյան Սամսոնի և ֆերմայի վարիչ Գյուլումյան Արտակի դեմ: Դատական նիստը տեղի էր ունենում գյուղի ակումբում: Ամբողջ ժողովուրդը հավաքված էր: Դատավորը դիմեց մեղադրյալ Սամսոնին և հարցրեց՝ ազգանուն, անուն, հայրանուն: Նրա հորը գյուղում Քաչալ Բուդի էին ասում: Նա վեր կացավ, ասաց՝ Սամվելյան Սամսոն Բոգդանի: Դատի մասնակիցները բարձրաձայն ծիծաղեցին՝ ասելով. «Պա՛հ, Քաչալ Բուդին Բոգդան ա դառել»... Հերքը հասավ Արշակին: Դատավորը հարցրեց նույն ձևով՝ ազգանուն, անուն, հայրանուն: Նա վեր կացավ, ասաց՝ Գյուլումյան Արշակ ու լռեց: Դատավորը հարցրեց՝ բա հայրանուն: Նա լռեց ու ձեռքով բացասական շարժում արեց: Դատավորը զարմացած հարցրեց. «Ինչո՞ւ չես ասում հայրանունդ»: Նա ասաց. «Անհաջող բան կստացվի»...

571. Նախապատերազմյան տարիներին Էրբեջ գյուղից Դանիելյան Սուրենը Վերին Շենի միջնակարգ դպրոցում հանրահաշիվ էր դասավանդում 7 - 10 - րդ դասարաններում և ամուսնացած էր այդ գյուղից Նունիկ Զարգարյանի հետ: Երեսի մազը շատ կոշտ էր, միայն ինքն էր կարողանում իր երեսը սափրել: Ամեն անգամ վարսավիրանոցի մոտով անցնելիս վարսավիր Վիտին հարցնում էր. «Դային փեսա, խե՞ չես մի հետ կյալիս, իրեսդ վեր անեն»: Եվ

* Նրա հոր անունը Օհան էր, բայց բոլորը Հալլաջ էին ասում: Եթե ասեր Օհանի, դարձյալ պիտի ժողովուրդը ծիծաղեր, թե Հալլաջը Օհան ա դառել (ծ.կ.):

որպեսզի այդ մարդուն համոզի պատճառը, մի անգամ որոշում է մտնել վարսավիրանոց կոչված տեղը:

Վիտին նրան նստեցնում է աթոռին, ինքն էլ ոտքից վնասված մարդ էր, վնասված ոտքը դեմ է տալիս Սուրենի փորին, սկսում օճառի փրփուր քսել երեսին: Փորձում է սափրել, ոչ մի մազ չի կտրվում: Ածելին փոխում է, նորից չի ստացվում: Սուրենի աչքերից արցունքներ էին հոսում, բայց մի կերպ լուր էր: Վիտին անընդհատ երեսը կտրում է, արյուն է գալիս, բամբակ է կայցնում: Այդպես երեսն արնոտված, բամբակով «գարդարած», վարսավիրն ուզում է մի քիչ զրուցել հետը, որ իբր զբաղեցնի, հարցնում է. «Սուրեն, ո՞ր դասաբաններում ես դաս տալիս»: Սուրենն ասում է. «Էստեղից եթե սաղսալամաք պրծնեմ, ամեն դասաբանում էլ կկարամ դաս տալ»...

572. Շախյան Հովսեփը գյուղում հարգված մարդ էր: Պատերազմից վերադարձել էր զինվորական բարձր կոչումով, բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով: Նշանակել էին շրջգործկոմի նախագահ: Մի անգամ մեքենայով գնում էր Գյուրգալար գյուղ՝ կոլտնտեսության հաշվետու-ընտրական ժողովն անցկացնելու: Ճանապարհին անցնում էր Էրքեջ գյուղով: Այնտեղ հանդիպում է իր քեռին, հրավիրում տուն, լավ հյուրասիրում: Երբ ուզում է ճանապարհվել, նկատում է, որ գինին իր «գործն» արել է: Վարորդը փոխանակ ճանապարհին մի տեղ մի քիչ դադար տալու, որ նա հանգստանա, այդ վիճակով տանում, իջեցնում է գյուղի ակումբի մոտ: Բոլորը նկատում են, որ շրջգործկոմի նախագահը խմած է. ժողովի ժամանակ էլ է զգացվում: Վերցնում են, բողբո գրում Բաքու, հայտնում, որ այդպիսի բան է պատահել: Նրան աշխատանքից ազատում են: Դրանից հետո երկար տարիներ այդ վարորդին ոչ մեկը մեքենա չէր վստահում: Տարիներ հետո, երբ շրջանը աղբ տեղափոխող մեքենա ստացավ, նրան տվեցին և մինչև վերջ միայն աղբ էր տեղափոխում:

573. Ֆերմայում հաշվետար էի: «Կոչահմադ» ամառային արտավայրում էինք: Լուր բերեցին, որ բրիգադավար Դավաթյան Ամիրջանը՝ երեկոյան անպայման գնա կուսակցական ժողովի, «Ռայկոմն»՝ էլ է ներկա լինելու: Գնաց: Հաջորդ առավոտյան երբ եկավ աշխատանքի, ինձ հետաքրքիր էր, թե այնտեղ ինչ է կատարվել, սկսեցի

Շրջանի ղեկավարին այդպես էին ասում (ծ.կ.):

հարցովորձ անել: Ասացի. «Ռայկունը եկել է՞ր»: Նա ասաց. «Գյուղում չեմ, քեզ մատաղ»: Հարցրի՝ ի՞նչ հարցեր էին քննարկում, ովքե՞ր էին ներկա: Նորից ասաց. «Գյուղում չեմ, քեզ մատաղ. մենակ էմ եմ գյուղում, վար կուրփի վարիչը զուրթնուցըրավ, ասեց՝ Ամիրջան դայի, ժողովը այրծել ա, յեր կաց, քիմա ձեր տոն, վար տյոռը ծասկեմ, ես էլ մեր տոն քիմամ»: Երկուսով մի լավ ծիծաղեցինք: Պարզվեց, որ հոգնած տեղ է հասել, վերջում մատել ու քնով անցել...

574. Կիրովաբաղի հաշվապահական դպրոցում էի սովորում: Նոր տարվա կապակցությամբ մի շաբաթով արձակուրդ տվեցին և հանձնարարեցին, որ ամեն մեկս գյուղի կոլտնտեսությունում այրակտիկա անցնենք: Ջգուշացրին, որ քերություն նկատելու դեպքում հաշվապահին ղիտողություն չանենք, նրանք կարող են վիրավորվել և հետագայում աշխատանքի անցնելու հարցում խանգարել: Օրական մի քանի ժամ ծանոթանում էի հաշվապահական գրքերին ու փաստաթղթերին: Մի բուր ու բորան օր մրսած ու սառած հաշվապահության սենյակ մտավ խոզաբուծական ֆերմայի վարիչ Գրիսաբունց Եղիշը, որին գյուղում Յապոն էին ասում: Սառած-կապտած, քից բռնած ասաց. «Էսայիսի բուր ու բորան եղանակին մարդ ավելի լավ ա երկու հետույք պահի, քան քե մեկ քիք»: Հաշվապահը ծիծաղելով ասաց. «Յապոն-Եղիշ, որպեսզի քիթդ չմրսի, այսպիսի ցուրտ օրերին ամեն առավոտ կգաս մեր տուն, քիթդ մտցնես հետև»: Ներկաները ծիծաղեցին: Յապոնը հանգիստ հարցրեց. «Բա որ գամ, դու տանը չլինես, քո կինը տանը լինի, կարելի է նույն ձևով քո խորհուրդը կատարեն»... Հաշվապահը տեղից վեր թռավ, սեղանին դրված համրիչը վերցրեց, որ նրան խփի: Մարդիկ մեջ ընկան, հանգստացրին մի կերպ: Դրանից հետո այդ հաշվապահը ոչ ոքի հետ երբեք գոռեկի կատակ չարեց:

575. Խոտհարքի ժամանակ էր: Հաստիքային աշխատողների շաբաթօրյակ էի կազմակերպել, որ խոտհունձը շուտ վերջացնենք: Կոլեկտիվին էլ մի արջառ էի տվել, որ վերջացնելուց հետո մորթեն, քեֆ անեն: Սարին էր, դաշտը՝ սևախոտ, որը հնձելը դժվար էր: Ֆերմայի բրիգադավար Ջանունց Գրիգորը, որ կատակասեր մարդ էր, մտած հերթով գերանդիներն էր «քակում»: Արհեստանոցի վարիչ Հրաչիկը նիհար տղա էր, շուտ հոգնում էր, գերանդին վերցրած գնում, որ Գրիգորը սրի, ինքն էլ առիթից օգտվելով հանգստանա: Գրիգորը

հասկանում էր նրա խորամանկությունը, բան չէր ասում, բայց Հրա-
չիկն ինքն արդարանալու համար ասում է. «Գրիգոր դայի, էս ան-
տերը սևախոտ ա, գերանդին շուտ-շուտ պինջում ա»: Գրիգորը
ժպտալով ասում է. «Հրաչիկ, քեզ մատաղ, սևախոտը մեղավոր չէ,
գերանդու կոթը հոռի ա, դա է պատճառը, բայց դու միհալ մի դնիր,
գերանդին նհետ բեր, որի աջալն եղավ, վեր ա ինգնական»...

576. Հորեղբորս տղա Սերգեյը մեր տանը հյուրասիրվում էր:
Տրամադրությունը մի քիչ բարձրանալուց հետո ինձ հարցրեց.
«Ամօղի՛, Ռայան ինչո՞ւ է եղբան նիհարել»: Ասացի. «Սերգեյ, ուտելը
կա, հագնելը կա. երևի երեխաները փոքր են, շատ է չարչարվում»:
Նա ծիծաղելով ասաց. «Չէ՛, դրանից չէ՛, ձեր փողերը շատ են,
գիշերները նստում է, հաշվում, դրա համար է նիհարում»: Ասացի.
«Երևում ա, ձեր տան փողերն էլ Արուսյակի բուֆետի փողերի հետ դու
ես հաշվում, դրա համար էլ դու այդքան նիհար ես, Արուսյակը՝
չաղ»...

577. Մեր շկոլումն ընտրություններ էին անցկացնում: Երկու
թուրք դեպուտատ պետք ա ընտրեինք՝ Քերիմով ի՛ Դադաշով: Տելե-
ֆոնը կաթինետից հանեցին, դրեցին կալիդորումը և ինձ, Արվինդիկին,
Ռոզային ու Արևհատին ասացին. «Էստեղ կնստեք, որ զանգ տվող
ինի, պատասխանեք»: Էն վախտերքը հիզարանց մինին տանը
տեղեֆոն կար: Սկսեցինք հեքքավ զանգ տալ լոխճին: Ամեն մինին մի
պյան էինք ասում, ծիծաղում: Տները լոխ պրծան, ամա մեր քեֆը հա-
լա լավ էր: Հանկարծ մեռա ինգավ՝ ախճի, Խաչի դային էլ տեղեֆոն
օնի: Զանգ տվի նիհանց տոն, չաշմիշ իլած ասեցի՝ ալո, Խաչի՛ դայի,
խոզերը մտել են ձեր յեթի բախճան, պիցրացել ծառերը, ճուղները
փշրում են... Նա ասաց. «Ախճի՛, պա մեր կնեկը հաց ա քիտում, ես էլ
րախան եմ պահում, հի՞նչ անեն»... Ըսեցի. «Դե տյու ես գյուղում»: Փիս
էլ թոռ էր կյալիս: Մեր օբշի հղեցը գյուլ էր դառել, մենակ
մաշիններն էին կարում անց կենան, ժողովուրդը հայաթներավն էր
կյալիս շկոլը: Մի քիչ հետո տեսա Խաչի դային միակը դրմաջած

*Ռուսերեն՝ «և»: Ռուսերեն գրված նախընտրական պլակատի վրա ինչպես
գրված է եղել, այդպես էլ տպավորվել է: Այս և այլ տեղերում թողել ենք այդ-
պիսի բառերը: Ուշագրավ է, որ պետական հիմնարկներում բանի որ հիմնա-
կան գրագրությունը ռուսերեն է եղել, ուստի այդպիսի կոլեկտիվներում խոս-
քի մեջ առատ են եղել ռուսերեն բառերը (ծ.կ.):

քիմում ա: Վռազ քինացի, հարցրի. «Խաչի՛ դայի, էդ հի՞նչ ա պտահել»: Նա ասեց. «Մաջալ չօնեն, յետնա կասեն, խոզերը մտել են մեր բախճան»: Մի քիչ հետո տեսա՝ Խաչի դային մհակը քարշ տալով հանգիստ կյալիս ա: Մոտեցա, անմեղ ձևով հարցրի. «Խաչի՛ դայի, խոզերը շատ ե՞ն վնաս տվել»: Նա ասեց. «Ա՛յ Լենիչկա, են տելե-ֆոնավ զանգ տվողի կարկաժն էր տարտակ, պա իմ կարկաժն էլ է՞ր տարտակ, վար նրա խելքավն ինգա, քինացի. այ խոզատերն էլ նրա մորը..., բխճատերն էլ նրա մորը..., պա խոզը ծառը հալ կիկյա՞»... Ես աման-աման անելով ասեցի՝ ցեխում կորել ես, էդ հո՞վ կլինի զանգ տված, համութ չի՞, մեծ մարդ ես: Դա Աշխենիկին արածը կլինի... Հետ դառա աղջիկների մոտ, պատմեցի, մի լավ ծիծաղեցինք... Է՛ մեր հողումը ուրախ, երջանիկ ապրում էինք...

578. Գյուլիստանցի մի մարդ կար, Ճիլունց Չորի էին ասում: Նա մի բան էր պատմել, սաղ ուսյոնը գիտեր: Ասում էր. «Մի ռավետ յեր կըցա, կացինս դլավ տվի, կոխեցի շվարիս քամակը, քինացի բոլը: Էս կըծանավը հալ եկա, են կըծանավը հալ յեկա, մեկ էլ մի սյարակ վացքու լատան պտահեց: Կացինս քմակաս հնեցի, նետ ալիքա, բիրդան մի լավում տաշեղ տյուս սյրծավ, բարակս մտավ: Դե՛, դու Չորի, Էսօրի ես եկե՞լ, քա՞ էրեգի... Մեկ էլ աշկս սյաց եմ ըրել, տեսել՝ Ըրեվան եմ: Դոխտուրը հրցնում ա՝ անումդ Չորիկ ա՞: Ըսեցի՝ չէ, դոխտուր, ես արադան-բարադան Չորի եմ, տհենց իլել եմ, տհենց էլ մոնլական եմ: Ասեց՝ հայրիկ, հենց ա կարդացած չես, հա՞... Ըսեցի՝ իմ հոր գարդանը կոտրի, վար ինձ կարթացրած լիներ, մեկ ես կլինեի քո տեղը նստած»...

579. Պրսեցի մի կին ջրադացն էր գնում: Հարևանուհին կանչում է. «Ախճի՛, Դումա՛շ, ճաղացն ես քիմու՞մ. ես էլ եմ օգում կյամ, ամա դյան չօնեն»...

580. Մեր հարևան Խաչի դային ու մալականին Մինաս դային սարին են լինում՝ ֆերմայում: Մածուն են ուտում, վերջացնում, հետո ամեն մեկն իր ցինկի ամանը վերցրած, առվին դրաղին պայգած լվա-նում էր: Իմ դային տղա Բորիկն էլ է էնտեղ լինում: Կողքից նայում է ու ժպտալով ասում. «Խաչի՛ դայի, Մինաս դային քեզանից լավ ա լվա-նում»: Խաչին ասում է. «Ը՛մ-մ, հալա մոխրաջուր չեմ տվել. ես ա որ մոխրաջուրն էլ տամ, կտեսնաս, քա հուր լվացածն ա լավ»...

581. Մի օր հինգերորդացի Թոսխածով կրտսայի էինք քյարքի տալիս: Կողքի տափումն էլ Բեգի դային էր գործ անում, էշն էլ մեր կշտին կապած էր: Քշաչանգ օր էր, պյարակ թոռ էր կյալիս: Ամաքս մի ցեղափան կլխներին քիցած գործ էինք անում: Քեփերներս խարաք կնանիք էինք, Ռայան օգեց մխրեկ ծիծղըցնի: Չեն տվալ, բա. «Հե՛յ, Բեգի՛ դայի, ձեր էշը փախա՞վ»: Բեգի դային ցեխերի միջով հեռուցանա վագ տալալ եկալ, տեսալ՝ էշը մեր կշտին կապած: Յեխակոլո դարձած, ջղայնացած ասաց. «Խե՞ ես ինձ խաբել. էշը էդ ա ըտեղ կապած»: Ռայան ասեց. «Էշը փախած էր, ես եմ մի հանգով փռնել, պիրել, նորից կապել իր տեղը»: Բեգի դային ուրախացած ասաց. «Հա՞, Ռա՛յա, ապրե՛ս, քե՛զ մատաղ»...

582. Մինն էլ ասեմ՝ բոլ ա.

Իմ Գրիշա ամին՝ Ազատը, տուն էր պատում: Չարգարյան Ռազմիկը մաշինալ անց կենալիս ասաց. «Գրիշա, պատը խե՞ ես հղուցումը տիրել»: Ազատը մի քանի տարտակ-մարտակ խոսք ա ասում: Իրիկումը մեկիցան գալիս ա, Ազատին վերցնում, տանում Ռազմիկին կաբինետը: Ազատը գնում ա, տազ ըրած կաղնում: Ռազմիկն ասում ա. «Ազա՛տ, խե՞ չես խոսում»: Ազատն ասում ա. «Ա՛, դե, ինկեր Չարգարյան, Շլապկա-Ղազարը քմակիս կաղնած ա, հո՞ւնց խոսամ»*...

583. Մի օր հիմնարկի պետը նամակներ է տալիս Արեգնազին**, ասում՝ կտանես փոստը, հանձնես Ժորժիկին, որ ուղարկի: Այդ տարիներին կյանքն սկսել էր մի քիչ բարելավվել, հիմնարկները նորմալ կահավորում էին և համարյա ամեն տեղ սկսել էին պատի ժամացույց կախել: Տարբեր տեսակի ժամացույցներ էին լինում՝ երկար սլաքը մեջտեղից կախած, կամ շղթայով, կամ ճոճվող սլաքով

* «Պրոստո, աչքս լավ չի տեսնում, լավ չեմ կիրում: Եթե սենցի կիրածը կընդունեք, էլի կըկիրեմ»:

Արեգնազը երկար տարիներ աշխատել է շրջանի տարբեր հիմնարկներում, հիմնականում որպես հավաքարար: Նա Ծատուրյան Միմարի հետ լավ ընտանիք էր կազմել: Չորս տղա են մեծացրել, լավ դաստիարակություն տվել: Բարեխիղճ կին էր Արեգնազը և շատ պարտաճանաչ, դրա համար էլ որտեղ որ աշխատել է, մեծ հարգանք է վայելել: Նա մի քիչ միամիտ կին էր, բայց հաճախ մտածում եմ, որ գուցե՞ ինքն իրեն միամտի տեղ էր դնում, որպեսզի իր ծանր կյանքը թեթևացնի (ծ.կ.):

և այլն: Երբ Արեգնազը մտնում է փոստը, տեսնում է՝ նրանց պատի ժամացույցն ուրիշ տեսակ է: Ջարմացած հարցնում է. «Վա՛յ, Ժորժիկ, ձեր սեփքը էգ ա՞»: Ժորժիկը ծիծաղելով հարցնում է. «Ախճի՛, իսկապես էգ ա, պա դու հինգա՞վ գիդացիր»: Արեգնազն ամոթխած տեսք ընդունելով ասում է. «Արա՛, դե ես հո դանգլա չե՞մ, տեսնում չե՞մ, վար կախ իլած բան չկա»...

584. ...Բալյան Ժորժիկը բարի և շատ կատակասեր մարդ էր, երկար տարիներ աշխատել է փոստում: Ներքինչենցի հայտնի զվարճախոս Մարունց Գրիգորը մի անգամ ասել է. «Ժորժիկ, քո ծնված օրը ես մեռած պիտի»...

585. Խորհրդային կարգերի առաջին տարիներին շրջանի տարբեր հիմնարկների ղեկավար նշանակում էին երբեմն կիսագրագետ, նույնիսկ անգրագետ մարդկանց: Ներքին Շենում դատավոր են նշանակում (թե՞ ընտրում) Բաղմանյան Սարգիսին (Գուդովիչանց Մուրադի հորը): Մի անգամ Ժմհարանց Սադիխը (Մարգսի ու Հայկազի հայրը) գողանում է Նալբանդյան Յականի (Տիտերանց Նազարի հոր) «քյուրփակերտը»՝ այծը: Լուր են հասցնում Յականին, որ Ժմհարանց Սադիխն է գողացել: Յականը դատավորին հայտնում է այդ մասին: Դատավորն ասում է, որ կստուգի: Հետո էլ առանձին կանչում է այծը գողացողին՝ Սադիխին: Սադիխը այծի մսի կեսը վերցնում, տանում է դատավորի համար և խոստանում, որ մի սալ էլ չոր փայտ կրերի, միայն քե մա այդ գործն «ատկազ անի»:

Դատավորը դրանից հետո կանչում է տուժածին՝ Յականին և ասում. «Էգուց սուդ ենք ընական իրիկվա կողմը. իրեքնակը դեռ մայր չմտած, հենց որ մնա մի չվանի չափ, կգաս սուղը»: Կանչում են նաև այծը գողացողին: Նիստը սկսում են: Դատավորը «կարմիր» սեղանի մոտ կանգնում է, բարձրաձայն կանչում՝ Սանդրոսյան Սադիխ: Սադիխն ասում է՝ ներկա: Հետո կանչում է՝ Նալբանդյան Յական: Դե, Յականն էլ սպասել էր, որ տավարը տեղավորի, հետո գա: Նա չկար: Դատավորը նորից է կանչում՝ Նալբանդյան Յական ու ջղայնացած ասում. «Եկել չի՞, ուրեմն՝ ատկազ, ես դրա մանը..., կարմիր ստոլավը տնազ ա անո՞ւմ, եկել չի սուղը»... Ու այդպես Յականին «ատկազ» է անում ու Սադիխի հետ իր հարցը «լուծում»...

586. Շրջանի բնակչությունը որպես վառելանյութ անտառի փայտն էր օգտագործում: Հիմնարկների աշխատողներն էլ տվյալ

հիմնարկի համար էին ամռանն ու աշնանը փայտ բերում անտառից, կտրտում, դասավորում ձմեռվա համար: Սոցալ բաժնի համար վառելավայրը բերում են հիմնարկի տղամարդիկ, բակում կտրտում: Հավաքարար Արեգնազը, որը կտրտած փայտն էր դասավորում, հաշվապահ Վոլոդյային ասում է. «Վալո՛դ, էս փետին պողը կտրի, վար փիչումը հեշտ տեղավորվի»: Վոլոդյան ծիծաղելով ասում է. «Ա՛, էդ փետին կտորը ազափ ա՞, վար պողը կտրեն»^{*}: Արեգնազը ծիծաղելով նայում է հիմնարկի պետին ու ասում. «Էս Վալոդը յաման շոն ա, հա»... Պետն ասում է. «Արեգնա՛զ, յաման հարգում ես հաշվապահիդ, ասում ես՝ շոն ա»: Արեգնազը լրջացած պատասխանում է. «Ա՛, էս տհեցի շոն չեմ ասում է, օգում եմ ասեմ՝ շոն ա, լի, շոն»...

587. Միլիցիայի բաժնի վարորդի փոքր՝ մականունը, չգիտես ինչու, «Լյուք» էր: Շատ հարգված մարդ էր, բայց դե շրջանում դա ընդունված բան էր, փոքր մնում էր փոք, շատերը չգիտեին էլ, որ այդ մարդու անունը Ռուբեն է: Մի անգամ սոցալի հավաքարար Արեգնազը նրա մասին ինչ-որ գրույց է լսում: Գալիս է հիմնարկ, այնտեղ պատմում. «Ասում են՝ միլիցի շոփեր Նյուքը ավարիա ա արել»: Հավաքվածներն ասում են. «Աղջի՛, էն մարդու փոքը մաքան քիչ ա, մի փոք էլ դու ե՞ս դնում»...

588. Միմունց Սաշիկին գյուղում «Գրագետ» էին ասում, չնայած միջոակարգ կրթություն էլ չունեիր: 3 - 4 խոզի մերում ունեիր: Ամռանն ու աշնանն անտառում էր պահում, ձմռանն ու գարնանը՝ իրենց բակում: Բայց կարգին գոմ կամ խոզաբուն չէր սարքել, հենց այնպես բակում բաց բողած էին մնում: Դե, բաց բողած խոզերը հասկանալի է, քե ինչ կանեն: Հաճախակի մտնում էին հարևանների այգիները, քարոքանդ անում: Հարևանները բողոքում էին, իսկ «Գրագետը» հանգիստ ասում էր՝ ձեր չափարը պնդացրեք, որ խոզերս չմտնեն: Վերջը հարևանների համբերությունը կտրում է, հավաքվում են, զայրացած գնում նրա մոտ, որ բողոքեն այդքան վնաս տալու համար: Սաշիկը դուրս է գալիս, ասում. «Ա՛յ ընկերներ, ձեզ ամեն օր ասում եմ՝ ձեր չափարը պնդացրեք, խոզերը վնաս չտան: Բա որ ես ձեզ չեմ կարողանում հասկացնել, խոզերին ո՞նց հասկացնեմ»...

* Պոզիկ-պոզիկ չի անի (ծ.կ.):

589. Ճատուրանց Սոնա բիբը (Մարուսյայի մայրը) բարեխիղճ, աշխատասեր ու բարեկամասեր կին էր: Նրա այգին Ապրեսի ջրաղացի մոտ էր, ուրիշ գյուղերից ջրաղաց եկողները մեկ-մեկ մտնում էին նրանց այգին, «գողություն» անում: Մի օր Սոնա բիբը գնում է իրենց այգին, տեսնում է՝ ծառի վրա մի թուրք կա: Նա էլ թուրքերեն լավ չգիտեր: Վրան գռռում է. «Ա՛յ գյադա, չըխ յուխարի»: Թուրքը ծառի վրա ավելի է բարձրանում: Սոնա բիբը նորից է ջղայնանում՝ «չըխ յուխարի»: Նա էլի է վեր բարձրանում: Սոնա բիբը գլխի է ընկնում, որ երևի լավ չի հասկանում, հիմա էլ ձեռքով գետինը ցույց է տալիս, ասում. «Ա՛խըռզընհատ, տափա՛ գյալ»...

590. Դավաքյան Սանթրին երկար տարիներ Ներքին Շենում հովիվ էր: Երբ գյուղում կոլխոզ կազմակերպեցին, հովիվն էլ վերացավ, գյուղի ապրանքը հերթով էին պահում: Մի անգամ հերթը հենց Սանթրինին էր: Երեկոյան երբ նա ապրանքը հանդից բերում է, մեկը գալիս է, դժգոհում, քե՛ իր այծը չկա: Սանթրին բանի տեղ չի դնում: Այծի տերը բողոքում է, քե՛ պիտի փողը տաս: Սանթրին ասում է. «Ա՛յ մարդ, էժ ո՞րն ա, մի հովն ա իլել, կգա»: Այծը չի գալիս, վեճը խորանում է, տերը դատի է տալիս: Դատավորն Առստամովն էր: Հարցնում է. «Քաղաքացի՛ Սանթրի, քեզ մեղավոր ճանաչո՞ւմ ես»: Սանթրին ասում է. «Ես հի՞նչ մեղավոր եմ, հոլ ա, էլի, մի ցյաքու տակի նստած կլինի, էս ա կիկյա»: Դատավորը խոսքը տալիս է այծի տիրոջը, հարցնում է՝ այծը քանի՞ տարեկան է եղել: Նա ասում է. «Մուղն ապրած կենա, տարիքը գյուղում չեմ, ամա քիքավ ըրած ա իլել»: Սանթրին դժգոհում է. «Մի կուճուր հողը սարքել ա դըբըռ, ինձանա մի կովի հախ ա օգում»: Դատավորը տիրոջն է հարցնում՝ ճի՞շտ է: Նա ասում է. «Չէ՛, քյուրփակերտ ա իլել: Երկար այդպես քննարկելուց հետո տերը վերջապես ասում է. «Ա՛, դե լավ, Սանթրին մե՛ր բաղի հարևանն ա, կհաշվեմ, քե չափումը մորթել ենք, իրար հետ կերել»...

591. Զվարճախոս Բեդի եղբայր Հրաչիկին տղա բռնիկ է ծնվում, անունը դնում են Լևոն: Բեդը գյուղում բոլորին «փոք» էր դնում, այդ երեխային էլ կոչում է «Բուղդի»: Տանը, քե փողոցում բոլորը նրան Բուղդի էին ասում, չէին էլ հիշում իսկական անունը: Տարիքը գալիս է, դպրոց են ուղարկում: Ուսուցչուհին մատյանով կարդում է

* Վեր բարձրացի (բրզմ. կ.):

աշակերտների անունները, հերթով վեր են կենում, «ներկա» ասում: Երբ կարդում է Լևոնի անունը, նա տեղից չի շարժվում: Ուսուցչուհին նորից է բարձրաձայն ասում՝ Լևոն: Նա էլի է լռում: Կողքի նստած երեխան բրդում է, ասում. «Ա՛լ լակոտ, ինկերը քեզ հետ ա է՛, խե՞ չես ներկա ասում»: Երեխան զարմացած ասում է. «Ա՛լ իշու կաթը կերած, իմ անունը Լևոն ա՞, ես Բուդդի եմ»...

592. Փոքրիկ «Գայուշի» տատի փոքր «Չոբան» էր (շատ անասուններ էր պահում): Ջանունց Մամիկը բռնագաղթից հետո մի օր ասում է. «Գայուշի՛կ, քու չոբան տատն էս քաղաքում հո՞ւնց ա յուր քինում առանց անասունների»: Երեխան լացում է՝ նեղանալով, քե ինչու եմ իր տատին «Չոբան» ասում: Ընկերուհին՝ Արևիկը, հանգստացնում է. «Ախճի՛, հի՞՞նչ ես լաց ինում. լոխ մեզ «Քյաբի» են ասում, ես պետք ա սաղ օրը գռռա՞մ»...

593. Սերոժը երեխա ժամանակ շատ էր ստեր հորինում՝ «փչում»: Մի անգամ պատմում է, քե իբր ինքը տեսել է Կոլումբոսին: Այդ օրվանից նրա մականունը դարձավ Կոլումբոս: Իրենց թաղի հովիվն էր «Կոլումբոսը», և բոլորը նրան այդ անունով էին կոչում: Փոքրիկ Սվետան չգիտեր, որ «Կոլումբոսը» հենց նույն Սերոժն է՝ իրենց թաղի հովիվը: Մի առավոտ իրենց ոչխարները բակից դուրս է հանում, տեսնում է՝ Սերոժն անցնում է փողոցով, ասում է. «Սերոժ ձա՞ձա, դեսլի ներքև ես գնու՞մ, մեր ոչխարները տար, Կոլումբոսի առաջն արա»: Կոլումբոսը ծիծաղելով տանում է, իսկ երեկոյան հանդից վերադառնալով, մտնում է նրանց տուն, ծնողներին ասում. «Ինձ պետք ա մաղարիչ տաք. էսօր ձեր երեխան Կոլումբոսին տեսել ա»...

594. Գավառի խոսվածքի մեջ մի հետաքրքիր բառ կա՝ «բազարգյորդի»: Երբ առաջին անգամ մի գյուղ են տեսնում կամ մի քաղաք, կամ մի ուրիշ կարևոր բան, դա համարվում էր «բազարգյորդի», և պարտավոր էին «մաղարիչ» անել: Մի անգամ Ջանունց Էմման ու Ջարգարյան Արմիկը Վերին Շենում մտնում են խանութ: Նրանցից առաջ մի մարդ էր մտել և ծխախոտ էր ուզում գնել: Խանութպան Բահատուրը հարցնելիս սովորական ձևով նրա փոքն է ասում. «Որի՞ց ես ուզում, ա՛յ Յապոն»: Այդ փոքր լսելով՝ Արմիկը կամաց հարցնում է Էմմային. «Ախճի՛, Յապոնը սրան ե՞ն ասում»: Յապոնը լռում է, առանց նեղանալու ծիծաղելով Արմիկին ասում. «Ա՛յ

բալա, քեզ մատաղ, դե, ինձ ճանաչեցիր, բազարգյոռդիս տուր»^{*}։ Արմիկը վճարում է նրա սիգարետի փողը, և բոլորը ծիծաղում են...

595. Բեռուս կինը Բուզլուխից էր։ Վերին Շենում բոլորը նրան «բուզլուխեցի» էին ասում, որովհետև այդ քաղում երեք հատ Շելունց Շուղի կար՝ Կյուշ, Ալդի, Կիտայ մականուններով։ Փոքրիկ Ժենյան չէր հասկանում «բուզլուխեցի» բառի իմաստը։ Կարծում էր, թե դա ինչ-որ քաղի անուն է. երբ հասակակից երեխաների հետ կովում էր, նրանց ասում էր՝ բուզլուխեցի, բուզլուխեցի... Նույն ձևով Զարգարյան Ասյային, որը ծնունդով Ղարաբաղից էր, «աարաբաղցի» էին ասում Վերին Շենում։ Խանութում էր աշխատում, և մարդիկ նրա անունը տալու փոխարեն ասում էին, օրինակ՝ «ղարաբաղցին ապրանք ա ստացել»...

596. Հարևանուհիները հավաքված գրուցում էին։ Արմիկն ասում է. «Գըղըլին Նորան ինստիտուտ ա ընդունվել»։ Հենց այդ Նորայի մայրը ներկա էր, նեղացած ասում. «Խե՞ տհե՞նց ես ասում»... Պարզվում է, որ նրա հոր անունը Մեխակ է եղել. մի անգամ շատ կարճ՝ գըղըլ շալվար էր հագել։ Դրա համար նրան «Գըղըլ» են ասել, դարձել է փոքր։ Շատերը նույնիսկ չէին հիշում, որ նրա անունը Մեխակ է...

^{*} Երբ առաջին անգամ մի գյուղ են տեսնում կամ մի քաղաք կամ մի ուրիշ կարևոր բան, դա համարվում է բազարգյոռդի, և պարտավոր էին «մաղարիչ» անել (ծ.կ.)։

II. ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

1 (597). – Ալ չաթու, չալ չաթու,

Որտեղի՞ց ես կյալիս.

– Ծովան եմ կյալիս.

– Պա խե՞զ ես թրջված.

– Սիչան եմ կյալիս (Բրինձ):

2 (598). Այն ի՞նչ է՝ մարմին չունի, ձայն ունի, թե փորձես բռնել՝
չի հաջողվի (քամի):

3 (599). Այն ի՞նչ է՝ մի օրորոց, 7 եղբայր. թե ձեռք չտաս, կլռեն,
իսկ օրորես՝ կաղմկեն (քառ):

4 (600). Այն ի՞նչ է. նռան մի ծառ է, վրան 4 ճյուղ է, ճյուղերի
վրա՝ 12 նուռ է (տարին իր 4 եղանակներով ու 12 ամիսներով):

5 (601). Առնում ես՝ մի հատ, տուն ես տանում՝ դառնում է
հազար հատ (նուռ):

6 (602). Երկու տուն՝ մի սյունանի (քիթը):

7 (603). Էն հի՞նչն ա՝ կյումաշը գյուղումը, հյաքին՝ չուղումը՝ (շե-
քեվիլ՝ կաթսայի մեջ):

8 (604). Էստեղ չոքեմ, էնտեղ բլթա (հրացան):

9 (605). Ինքը փայտ է, դուռնը մազ է, ես կքաշեմ, նա կվազե
(իլիկ):

10 (606). Լիքը կզնա, դատարկ կզա (գդալ):

11 (607). Ծնվում է գետնի վրա, գերեզման մտնում երկնքում
(ծուխ):

12 (608). Կարաս ունեմ շատ պուճուր, միջին՝ 2 գույնի ճյուր
(ձու):

13 (609). Հանդին ա, հանդին ա, պոզերը կըռըմանդին ա, տարե-
կան մին կաթն ա տալիս, հալա ինքը հանդին ա (վազը):

14 (610). Հագուստը՝ փայտից, միսը՝ պողպատից (հրացան):

15 (611). Հրացի, վրացի,

մինչև բացա կարդացի՝

ղըփիլիլ չղգիղացի (ընկույզ):

* Գոմեշը ջրափոսի մեջ, պոչը՝ դրսում:

16 (612). Հիլի-հլան, ոսկի քլան (աչքեր):

17 (613). Հիլի-հլան, ոսկե քլան (արև):

18 (614). Ճղացիին կլխին օխտը կյուլ, օխտը կյուլ ա, մի բյուլբյուլ. հասան-հասան, դուռը բաց, մի հավ օնեմ կրկշան, պապը կերավ, զմաց հորս, հետը բերավ մի չալ պղոճ:

19 (615). Մի բան ունեմ՝ բան չէ, ձու է ածում՝ հավ չէ (մրջյուն):

20 (616). Մի թոնիր ունեմ, չորս հաց կտանի (ընկույզ):

21 (617). Մի ծառ կա, ծառին կլխին մի կալ կա, կալին կլխին՝ 5 շմալ (ձեռքը):

22 (618). Մի մարդ կա՝ մի ոտնանի, հենց որ դուրս գա՝ գայլը կտանի (սունկ):

23 (619). Մի սնդուկ ունեմ, ներսը՝ ոսկի, դուրսը՝ արծաթ (ձու):

24 (620). Մի տուն լիքը մանուկներ, բոլորն էլ սուրբիք (սխտեր):

25 (621). Մուր էլ չէ, սուր էլ չէ, բայց կարող է և՛ սևացնել, և՛ մեղցնել (լեզու):

26 (622). Որ ծառն է, որ բերք կտա՝ առանց ծաղկելու (թզենին):

27 (623). Ո՞րն է մարդու խորհրդապահ սուրհանդակը (նամակը):

28 (624). Պել հեր, կոնդակ մեր, շեյթան ախպեր, շեկլիկ քեր (վազը):

29 (625). Պատիկ է, բայց աշխարհն իր մեջ տեղավորում է (աչք):

30 (626). Պատվում է ամեն տեղ, տուն է գալիս ու պառկում՝ քերանը բաց (կոշիկ):

31 (627). Սալիտակ արտ, սև ցորեն, ձեռքով ցանած, աչքով հնձած: (գիրքը):

32 (628). Վարեմ հաճար, դուրս գա պենջար, շոշն ու շմալը դեղին (կարկաժ):

33 (629). Զնում է ցերեկը, հոտն արածացնում գիշերը (լուսինն աստղերի հետ):

34 (630). Միրգաջան դայու հանելուկը

Բալունց Միրգաջանը կեսուրիս եղբայրն էր: Մի օր խաշ էինք եփել: Չանգեցինք նրան, որ իր կնոջ՝ Սուլթանի հետ գա, միասին ուտենք ու գրուցենք: Եկան, շատ լավ օրն անցկացրինք: Վերջում Միրգաջան դային երեխաներին հարցրեց. «Դպրոցում լավ ե՞ք սովո-

րում»: Ասացին՝ հա: Նա ասաց. «Մի հանելուկ կպատմեմ, եթե իմանաք, ուրեմն լավ եք սովորում»: Եվ պատմեց: Մի աղքատ մարդ միշտ գնում էր անտառ, փայտ բերում, վաճառում: Մի օր թփի տակ, հենց իր ոտքերի մոտ մի մեծ դուշ է թալրտում: Այդ մարդը դուշը բռնում է, ինքն իրեն ասում՝ էս ինչ լավ դուշ ա, կտանեմ տուն, տամ կնոջս: Դուշը լեզու է առնում, ասում. «Եթե տաքար տուն, կինդ մեռնելու ա»: Մարդն իսկույն միտքը փոխեց, ասաց. «Որ էդպես ա, բաց եմ քողնում»: Դուշն ասաց. «Որ բաց քողեցիր, դու ես մեռնելու»: Մարդը մնում է շվարած՝ ոչ ուզում է տուն տանել, ոչ էլ ուզում է բաց քողնել: Երբ Միրզաջան դային այդպես պատմեց, երեխաներն էլ մնացին լուռ ու շվարած, թե ինչ ելք կա: Միրզաջան դային ասաց. «Ելքն այն է, որ դուշին սպանի»...

III. ԱՌԱՃ-ԱՍԱՅՎԱԾՔՆԵՐ

- 1 (631). Ա տափ, ճղվի, մեջը ինզնեմ:
- 2 (632). Աշկերս կապու՞մ ես:
- 3 (633). Աշկիս եղը հալվեց:
- 4 (634). Արինս պիտոողվեց:
- 5 (635). Բախտ պիժիմողին կոռը կոտրվի:
- 6 (636). Բախտիս քար ա ինզել:
- 7 (637). Բախտս կտրվե:
- 8 (638). Դարդ ու ցավս տյու չես:
- 9 (639). Դուդատ ցեց կալած թո՞ռն ես քինում:
- 10 (640). Ե՞ս (տղա՞ ես):
- 11 (641). Ջահլաս քինաց:
- 12 (642). Ջիհար տյառնա սիենցի հացը:
- 13 (643). Լյուզիտ քո տոնը քանդում ա:
- 14 (644). Լյուզվիտ հախան կյալ չի ինիլ:
- 15 (645). Լոխճին քո արշինավն ես չափում:
- 16 (646). Խելքդ պակաս ա՞:
- 17 (647). Խելքտ կիլիստ հվաքի:
- 18 (648). Խելքտ քեզ չըքինա:
- 19 (649). Ծերքերս կարճ են:
- 20 (650). Ծերքիտ կրակն եմ ինզել:
- 21 (651). Ծըռնըվետս թուլացել են:
- 22 (652). Կըլխիս խելք ե՞ս տինում:
- 23 (653). Կիլիսս վե՞ր պատավը տամ, վար լավ ինի:
- 24 (654). Կիլիսս վե՞ր քարավը տամ:
- 25 (655). Կիլիսս տարավ:
- 26 (656). Կլխումտ մի փութ արին կա:
- 27 (657). Հալալ ինի էն կաթը, վար տու ես ծծել:
- 28 (658). Հացին կակա եմ ասում:
- 29 (659). Հափռումս աղ չկա:
- 30 (660). Հի՞նչ ես լացդ կիլիսդ քիցել:
- 31 (661). Հի՞նչ ես կոտրած քիթոլու մման մեջ ինզինում:
- 32 (662). Հի՞նչ ես շաշ-շաշ տյուս տալիս:
- 33 (663). Հի՞նչ ես ռեխտ կախ ըրել, կաղնել:
- 34 (664). Հողը վետին տական փախավ:

- 35 (665). Հուշտալ ա ինգել:
- 36 (666). Հուր բոշը վար պաշում եմ, տեղը յարա ա տյուս կյալիս:
- 37 (667). Հուրը փխտոթին եմ ըրել, առաջս ա եկել:
- 38 (668). Հուքիս պիրանալս տյուս ա կյալիս:
- 39 (669). Դակատող բոքի ա՞:
- 40 (670). Դկատիտ կաշին պաղոշ ա՞:
- 41 (671). Մենակ մտած դու-դու ա կանչում:
- 42 (672). Յորիշիդ հարամ խառնի:
- 43 (673). Շառդ ինձանա քաշի:
- 44 (674). Պռուշս ճաքում ա:
- 45 (675). Ջուբումս մոկները վազ են տալիս:
- 46 (676). Ռեխը՝ լակ-լակ, կիլոխը՝ քակ-քակ:
- 47 (677). Ռեխտ քեզ պահի:
- 48 (678). Ռըխետ մի տալ:
- 49 (679). Մերտս ճաքում ա:
- 50 (680). Սրտաս աղուն կաթում ա:
- 51 (681). Սրտաս արին ա կաթում:
- 52 (682). Սրտիս դիմալ տաս, արին չի կաթիլ:
- 53 (683). Սրտիս նիետ քինա:
- 54 (684). Վետս-ծետս կապած ա:
- 55 (685). Տանս փուշին կլխել ա:
- 56 (686). Տեղս փոխ տամ, բա՞խտս հուր փոխ տամ:
- 57 (687). Տնագ, տնագ, քո՞ռն ես քինում, քինում եմ տնագ անիլ:
- 58 (688). Փափախտ կլխիտ հարամ ինի:
- 59 (689). Զեփս քեփատ չի:
- 60 (690). Զքիդ հավան մարդ ա վեր քրցում:
- 61 (691). Զոնը ըշկերաս փախել ա:
- 62 (692). Աման հինչին թյազան ա լյալ, հինգերութինին՝ քյոհման:
- 63 (693). Աման մի գործ ըսկսելն ա տիժար:
- 64 (694). Աման տեղ քեթտ կոխիլ մի:
- 65 (695). Ամենաքախծըր սեփական աշխատանքի արդյունքն ա:
- 66 (696). Առանց վրետներտ թրչելու ծյուկուն չես փռնիլ:
- 67 (697). Ասածս օղ ըրա, ընգունատ կախ տու:
- 68 (698). Ասեմ՝ կնեղանա, ասեմ վեչ՝ կասի էշ ա:
- 69 (699). Ասիլը հեշտ ա, կատարիլն ա տիժար:

- 70 (700). Արա, ընգտունքը ըսկընալու հետի ա, լյուզին՝ խոսալու:
- 71 (701). Արչին պյունումը բասքմա չի ինում:
- 72 (702). Դյուզ պյանը աշկ ա ծակում:
- 73 (703). Դուզ պյանը զարափաթումն են ասում:
- 74 (704). Եթե դյուզը ասեն, մի հրեղան ծի պետք ա նստեն, վախչեն:
- 75 (705). Եթե ես արթյար են, հովը հինչ օգում ա, թո ասի:
- 76 (706). Եթե ըսելի պյան չօնես, սուս անիլը համութի չի:
- 77 (707). Էն լյավ ա աշկտ տյուս կյա, քանց թա անումտ:
- 78 (708). Ընուսունքին չաթվավ են կապում, մարթուն՝ լյուզվավ:
- 79 (709). Ըսողին էլ անգում օնող ա պետք:
- 80 (710). Թող քու ասածը Աստված ըսկանա:
- 81 (711). Թորքն ինքը մի պյան չի, ամա նրանց աթալարը լյավ խոսքեր ունեն:
- 82 (712). Իմ լյուզին իմ դյուշմյանն ա:
- 83 (713). Ինձետի ըրա, քզետի սվերիք:
- 84 (714). Իսկական վեսկին միհետեկա սվանում չի:
- 85 (715). Լյավ ա մի հետ տեսնաս, քանս թա հազար հետ ըսկանաս:
- 86 (716). Լյավ հարսը ըրորոցին տակին են ճնաչում:
- 87 (717). Լյավ չաթուն էրզյան ա, ամա լյավ գրույցը՝ կարճ:
- 88 (718). Լյուզվին տակին վեսկուտ չկա, հինչանգի օգում ա, մեենց էլ խոսում ա:
- 89 (719). Խոսկը խոսկ ա պյաց անում:
- 90 (720). Ծառան ծռատակ հեշտ ա ըրւում:
- 91 (721). Ծերքը ծերք ա լվանում, էրկու ծերքը՝ իրես:
- 92 (722). Ծոռ նստենք, դյուզ խոսանք:
- 93 (723). Կա քաղցր լյուզի, համ էլ կա շատ աղու լյուզի:
- 94 (724). Կաշվատ տյուս եկ, ամա հինչը վզավ ես կալել՝ ըրա:
- 95 (725). Կյուլը եկավ՝ վայ մինատեր:
- 96 (726). Հավվա-հավվա ըսելավ պյարանտ քիծրանում չի:
- 97 (727). Հայը մինչև բիզյարի վեչ, նստում չի:
- 98 (728). Հայը տրուդագոլիկ ա, ռուսը՝ ակլագոլիկ:
- 99 (729). Հենց լյուզի օնի, օցը պյունան կհանի:
- 100 (730). Հինգերության արժեքը տիժվարության վախտն ես գյուդում:

- 101 (731). Հովը վար դյուզ հըղըցալ ա քինում, վետը քարին նի չի կյամ:
- 102 (732). Հովը վար վախ օնի, նա էլ խխղճ օնի:
- 103 (733). Հովը օրիշին քյոմագ ա անում, նրան էլ Աստված ա քյոմագ անում
- 104 (734). Դարիբոթյունում օրը տարի ա տյառնում:
- 105 (735). Դյուրը եղտը յեր չի օնում:
- 106 (736). Մարթը առանց ուրան ծննդավայրի, հինչյանգի բյուլբյուլը՝ առանց երբի:
- 107 (737). Մարթը մարթալ ա մարթ:
- 108 (738). Մեծ-մեծ քոռ ա կյալիս, ուրեմն՝ կյուլա ցնգել:
- 109 (739). Մի ծերքը ծափ չի տալ:
- 110 (740). Մս-մս մի անիլ, մի հետանց ասա Մուստափա:
- 111 (741). Շանը նհետը հինգիրոթին ըրա, ամա փետը ծեռատ վեր մի քիցիլ:
- 112 (742). Շատ քաղցրը չինես, վար լյուզ տան, կլխես, շատ էլ աղու չինես, վար ճկատիտ քբեն:
- 113 (743). Չովը քոռ աշկին ա նի կյալիս:
- 114 (744). Սա հենց տղա ա, վար տափին տական կճարի:
- 115 (745). Սոտ ասիլը տոն ա քանդում:
- 116 (746). Վետները ճիրումն ա, մի պյան էլ ա գյուղում չի:
- 117 (747). Վեր ինգյած մհակին շոն չի հաչում:
- 118 (748). Տինակին կտրածը սղանում է, ամա փիս խոսքին կտրածը՝ չէ:
- 119 (749). Տիրև ա քաղում, մզեխտ կաց:
- 120 (750). Տրա խոսքերը մի փութ մեղրալ օտվիլ չի:
- 121 (751). Տրա խոսքերին հվատալ մի, տրա գործերը տես:
- 122 (752). Փիս խաբարը կանուխ ա տեղ հըսնում:
- 123 (753). Քամալ եկածը քամին էլ տանում ա:
- 124 (754). Քու լյալ օրերին հինգերները շտանում են:
- 125 (755). Օրիշին աշխատանքալը փոր չի կուշտանալ:

IV. ԽԱՂԻԿՆԵՐ

1 (756). Աղջի, անումդ ասա,
Բոյդ Բաղդադի հասավ,
Գնա քո այան ասա՝
Գալիս եմ ձեր տուն փեսա...

* * *

2 (757). Աղջի, էդ հի՞նչ դայդա ա,
Պատին տակին դադա ա.
Սուլի-բուլի անիլ մի,
Չեռքդ ջուքս տանիլ մի,
Ջուքիս փողը հանիլ մի,
Ինձ էլ աշկալ անիլ մի...

* * *

3 (758). Աջը ջուր է ածում կուլակի ջաղցին,
Չախը փախչում է միջակ գյուղացին,
Լենինյան՝ ճամփից շեղված այդ երկուսը
Կրակ են քափում սոցիալիզմին:

* * *

4 (759). Ծառին տակը դալա ա,
Մեջը Չաքաքալա ա,
Ընդեղ մի յար եմ ջոկել,
Սիրուն, թմբիկ բալա ա...

* * *

5 (760). Հարավա, հարավա,
Մեր բաղի ձին ծարավա,
Հով մի քիթոլ ճյուր կտա,
Նա իմ նանին բալան ա:

* * *

6 (761). Հե՛ նանե:
Հի՞նչ ա, ջանե:
Էմ տղին ասա,
Դուդուն ածի,
Ինձ պար ածի:

* * *

7 (762). Պինդ հարված տանք աջի լեզվին,
Չակերտավոր ձախի լեզվին,
Կուսքջիջի կիրառումն է
Հասցնում մեզ սոցիալիզմին:

* * *

8 (763). Տրակտորը ակոս արավ,
Չտեսնված տոկոս արավ,
Կուլակային դասակարգին
Գերեզմանի մի փոս արավ:

* * *

9 (764). Տրակտորի բերքի բախտ է,
Չտեսնված մահու վախտ է,
Ի՞նչ էք նստել, այ ընկերներ,
Կոլեկտիվի վարու վախտ է:

Մանկական խաղեր

1 (765). Մանկական խաղեր կային, որ երգելով էինք խաղում:
Օրինակ, շրջան կազմած երգում էինք՝

- Պապե՛, պապե՛, մի ձու տուր,

- Հավը կածի, քեզ կտամ...

* * *

2 (766). Մի խաղ էլ կար, որ երգելիս այսպիսի բան էինք ասում՝
«Բոլա-բոլա՛, հինգերս կյա՛»... մնացածը չեմ հիշում:

* * *

3 (767). Մանկական այսպիսի խաղ-երգ կար. տատիկ-պա-
պիկները նստում էին թախտին, շալակում փոքրիկ բռնիկին, ձեռքե-
րը դեպի հետ մեկնելով բռռան թաթիկներից բռնում, կռանում դեպի

ցած, ուղղվում, նորից կռանում, նորից ուղղվում և ամեն իջնել-բարձրանալու հետ տակտով այսպես երգում.

Նո՛թա, ծե՛թա,
Նոթը լամպին տա՛մ,
Ծեթը իմ թռռանը՝...

Խոսելը նոր սովորող թռռնիկն էլ նրա հետ սկսում էր երգել նույնը: Երբեմն էլ շփոթեցնելու համար տեղերը փոխում էին՝

Ծեթը լամպին տա՛մ,
Նոթը իմ թռռանը՝...

Եթե թռռնիկը նույն ձևով կրկնում էր, ծիծաղում էին, երեխան հասկանում էր, որ սխալ է ասել, չպետք է նույն ձևով կրկնել, այլ ինքը պետք է ճիշտ ձևով ասել: Դա գրավիչ խաղ էր, որով զարգանում էր երեխայի ուշադրությունը: Շատերը երևի վաղուց մոռացել են այս խաղ-երգը, մտածելով, թե հեռավոր անցյալի հասարակ ու միամիտ բան է, չի համապատասխանում ներկայիս կոմպյուտերային դարի երեխաների պահանջներին: Մոսկվայում մեր ընթերցողներից մեկը պատմեց, որ իր փոքրիկը դեռ խոսելը կարգին չի սովորել, բայց որոշ բաներ հասկանում է կոմպյուտերից ու բջջային հեռախոսից, իսկ երբ փորձել են այս խաղ-երգը, շատ հավանել է և անընդհատ պահանջում է «նոթա-ծեթա» անել...

V. ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՏՈՀՄԱՆՈՒՆՆԵՐ, ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐ

Ղարաչինարի տարածքի մի քանի տեղանուններ

- 1 (768). Աղվեսի յալ
- 2 (769). Աջին ծյորեր
- 3 (770). Բաղաստեղեր
- 4 (771). Բուբոնց Պետին բոլ-իլածը
- 5 (772). Բուշունց առու
- 6 (773). Գյանջու հղեց
- 7 (774). Գյաջխանա
- 8 (775). Գյուրջին ծյոր
- 9 (776). Դիք տափեր
- 10 (777). Զաքին նահատակ
- 11 (778). Թլիշանց տափեր
- 12 (779). Ինջին ծյոր
- 13 (780). Լոշկեն լոք-տված
- 14 (781). Խզազին ծյոր
- 15 (782). Խնձորին ծյոր
- 16 (783). Խտորը հղեց
- 17 (784). Կեծակ տված հոռի
- 18 (785). Կենդու ծառ
- 19 (786). Կիրիզմանուտին յալ
- 20 (787). Կռուտին դյուզ
- 21 (788). Կրակ-տված
- 22 (789). Կուճուր դուզ
- 23 (790). Հացուտ
- 24 (791). Հովուզին դյուզ
- 25 (792). Ճալա
- 26 (793). Միջավար
- 27 (794). Մոշ աղբյուր
- 28 (795). Մրջանանց ծյոր
- 29 (796). Յանըղ
- 30 (797). Շրոշրոշ
- 31 (798). Շինատեղ

- 32 (799). Շլորուտ
- 33 (800). Շոն քար
- 34 (801). Շոր աղբյուր
- 35 (802). Շորին ծյոթ
- 36 (803). Չալունց թախտ
- 37 (804). Չինարին տակ
- 38 (805). Չինարլու
- 39 (806). Չլկաղնուտ
- 40 (807). Պարանբատ
- 41 (808). Պինջիրոտ հարթ
- 42 (809). Սեփունց բյափա
- 43 (810). Սոնտանին դյոշ
- 44 (811). Սուրանին ծյոթ
- 45 (812). Տանին կիրատեղ
- 46 (813). Տանձուտ
- 47 (814). Քար ծյոթ
- 48 (815). Քվթոածյոթ

Մանասին Շենի տոհմային անունները

- | | |
|------------------------|---|
| 1 (816). Ագրունց | Ագարյաններ: |
| 2 (817). Բաբալունց | Եսայանների մի մասը: |
| 3 (818). Բաբուստունց | Հակոբյանների մի մասը: |
| 4 (819). Բոզունց | Հարությունյաններ: |
| 5 (820). Գյուզալանց | Գևորգյանների մի մասը: |
| 6 (821). Եթիմանց | Անտոնյանների մի մասը: |
| 7 (822). Զեռ-Թյունունց | Զաքարյանների մի մասը: |
| 8 (823). Իզգյալդունց | Հովսեփյաններ: |
| 9 (824). Կրկժամանց | Հակոբյանների մի մասը: |
| 10 (825). Ղալյանչունց | Բաղյանների մի մասը: |
| 11 (826). Ղլեչունց | Ղազարյաններ (սրանք Գաղթութի
Ղլեչյանների հետ ոչ մի կապ չունեն): |
| 12 (827). Մյուլվաթանց | Ավագյաններ: |
| 13 (828). Մյաքլազիմանց | Զաքարյանների մի մասը: |
| 14 (829). Մյուլումանց | Եսայանների մի մասը: |

Ղարաչինարի և Գաղթութի տոհմային ածական անունները

1 (830). Աղունց	Գրիգորյանների մի մասը:
2 (831). Բիլոյանց	Ստեփանյանների մի մասը:
3 (832). Բողունց	Պետրոսյաններ:
4 (833). Բոյախչունց	Եսայաններ:
5 (834). Բոստունց	Աբրահամյանների մի մասը:
6 (835). Բուշունց	Գրիգորյանների մի մասը:
7 (836). Գաղունց	Սողոմոնյանների մի մասը:
8 (837). Դալլաբ-դուլունց	Դուլյաններ:
9 (838). Դբաջանց	Գրիգորյանների մի մասը:
10 (839). Դոբրունց	Մարյանյանների մի մասը:
11 (840). Դոքունց	Տոնյանների մի մասը:
12 (841). Դոշունց	Հարությունյաններ,
	Հակոբյաններ:
13 (842). Դուլունց	Ղարիբյաններ:
14 (843). Զյառունց	Նազարյանների մի մասը:
15 (844). Ըբազանց	Աբազյաններ:
16 (845). Թաթունց	Բալաբեկյաններ:
17 (846). Թիփալանց	հետնորդներ չունեն:
18 (847). Թլիշանց	հետնորդներ չունեն:
19 (848). Թուխանանց	Թարխանյաններ:
20 (849). Թուսունց	Ավագյանների մի մասը:
21 (850). Իլիկովանց	Ջոհրաբյանների մի մասը:
22 (851). Իկրունց	Հարությունյաններ:
23 (852). Իսկյարանց	Բաղմանյանների մի մասը:
24 (853). Իրիցանց	Աբրահամյանների մի մասը:
25 (854). Խլափանց	Ապրեսյաններ:
26 (855). Կիզիրանց	Ավանյանների մի մասը:
27 (856). Կյուլունց	(Գալլունց) Հովհաննիսյանների
	մի մասը:
28 (857). Կոհմիզանանց	Խաչատրյանների մի մասը:
29 (858). Հուրունց	Դավթյաններ (Գաղթութ):
30 (859). Ղավալ-եղունց	Եղյաններ (Գաղթութ):
31 (860). Ղարաբաղցունց	Վանյաններ (Գաղթութ):

32 (861). Ղրգյոզանց
 33 (862). Ճեպոունց
 34 (863). Ճոլորանց
 35 (864). Ճյուլիականց
 36 (865). Սալակունց
 37 (866). Սափռաշքայունց
 38 (867). Սիրաբանց
 39 (868). Սրջանանք
 40 (869). Սուրուսանց
 41 (870). Սուքեւանց
 42 (871). Յոլկերանց
 43 (872). Շահնունց
 44 (873). Շիւմանց
 45 (874). Չալունց
 46 (875). Չատունց
 47 (876). Չոբան-եղունց
 48 (877). Չոբան-շահունց
 49 (878). Չվանանց
 50 (879). Չրգյարանց
 51 (880). Չանդուչումանց
 52 (881). Չավունց
 53 (882). Չիանգիրանց
 54 (883). Չունգուլանց
 55 (884). Սաքունց
 56 (885). Սիմունց
 57 (886). Սիրմա-դուլունց
 58 (887). Վանունց
 59 (888). Վետունց
 60 (889). Տափրունք
 61 (890). Տերեփրեմանց
 62 (891). Տերնիկալանց
 63 (892). Ուղունանց
 64 (893). Ուտուխմանց
 65 (894). Քաշավաքանց
 66 (895). Քիչիկ-կէունց

Սայամյաններ:
 Հովհաննիսյանների մի մասը:
 Վարդանյաններ:
 Հակոբյաններ (Գաղթութ):
 Խաչատրյաններ, Գևորգյաններ:
 ազգանունը մոռացել եմ:
 Ավագյանների մի մասը:
 հետնորդներ չունեն:
 Ստեփանյանների մի մասը:
 Շահնազարյաններ (Գաղթութ):
 Խաչատրյանների մի մասը:
 Բաքայանների մի մասը:
 Աբրահամյանների մի մասը:
 Ավանյանների մի մասը:
 Վերքիլյաններ:
 Եղիազարյաններ:
 Խաչատրյանների մի մասը:
 Պետրոսյանների մի մասը:
 Ստեփանյանների մի մասը:
 Գևորգյաններ:
 Ավանեսյանների մի մասը:
 Ստեփանյանների մի մասը:
 Սարգսյաններ:
 հետնորդներ չունեն:
 հետնորդներ չունեն:
 Դուլյաններ:
 Թարխանյանների մի մասը:
 Ավետյաններ:
 Ավագյանների մի մասը:
 Ստեփանյանների մի մասը:
 Սողոմոնյաններ:
 Առստամյաններ:
 Վարդանյաններ:
 Ավագյանների մի մասը:
 Գևորգյանների մի մասը:

67 (896). Զյուրյունց

68 (897). Զչովանց

Գրիգորյանների մի մասը:

Սողոմոնյանների:

Վերին Շենի փոքերը

1 (898). Ալասկյար

2 (899). Ալաքսուրան

3 (900). Ալիհոպ

4 (901). Ակոի

5 (902). Ադվես

6 (903). Անխոս

7 (904). Արզո

8 (905). Բաբալի

9 (906). Բայո

10 (907). Բասմանյուն

11 (908). Բողար

12 (909). Բոյուստես

13 (910). Բորթի

14 (911). Բուլի

15 (912). Գարափիշիկ

16 (913). Գլղըր

17 (914). Դախի

18 (915). Դարչո

19 (916). Դընամեր

20 (917). Դընգըր

21 (918). Դման

22 (919). Դոբրի

23 (920). Դոլչա

24 (921). Դոկո

25 (922). Դոնդիկ

26 (923). Դոսի

27 (924). Դուլի

28 (925). Եվրեյ

29 (926). Զադուր

30 (927). Թաքի

31 (928). Թաքան

32 (929). Թորք

33 (930). Թսըմոլ

34 (931). Թուսի

35 (932). Թևան

36 (933). Իշինգյոր

37 (934). Լենգ

38 (935). Լյոթ

39 (936). Լոբադըր

40 (937). Լոլո

41 (938). Լոմբուգ

42 (939). Լոնդոն

43 (940). Շեղ

44 (941). Շեսո

45 (942). Շյաքո

46 (943). Շյաքտամ

47 (944). Կաքո

48 (945). Կալչակ

49 (946). Կենջո

50 (947). Կծոտող

51 (948). Կոտալ

52 (949). Կուզման

53 (950). Կուլակ

54 (951). Հինչախոսուն

55 (952). Ղաչաղ

56 (953). Ղարա

57 (954). Ղեդո

58 (955). Ղոջի

59 (956). Դիլտիկ
 60 (957). Դոմսուր
 61 (958). Դոտի
 62 (959). Մազանբեզ
 63 (960). Մավդի
 64 (961). Մըռը
 65 (962). Մոզի
 66 (963). Յուբկա
 67 (964). Նիկո
 68 (965). Շափաթ
 69 (966). Շլանգ
 70 (967). Շուլան
 71 (968). Չադո
 72 (969). Չադիկ
 73 (970). Չանթա
 74 (971). Չեվո
 75 (972). Չյանչո
 76 (973). Չորսըշկանի
 77 (974). Չորսշահի
 78 (975). Չունի

79 (976). Պացան
 80 (977). Զանըմ
 81 (978). Զիզո
 82 (979). Զյաբաո
 83 (980). Սեիդ
 84 (981). Սմերտելնի
 85 (982). Վերց
 86 (983). Վերցակ
 87 (984). Տգո
 88 (985). Տոկո
 89 (986). Տուլան
 90 (987). Յուկցուկ
 91 (988). Ուլեյդան
 92 (989). Փաթարիկ
 93 (990). Փալչի
 94 (991). Բիթոլ
 95 (992). Բյանչի
 96 (993). Բյոթոի
 97 (994). Օչիկ
 98 (995). Օփուշ

Փոքերը և կրողները

1 (996). Աբադա
 2 (997). Աբրազ
 3 (998). Ադիլ
 4 (999). Ադուշ
 5 (1000). Ադյո
 6 (1001). Ադվակատ
 7 (1002). Ազմո
 8 (1003). Ազո
 9 (1004). Ալիխան
 10 (1005). Ալտայ

Պետունց Հակոբ
 Դավաբյան Տոնի
 Գզիրյան Մեդրակ
 Բաշրաբյան Զինավոր
 Մաքունց Հրանտիկ
 Մինասյան Սահակ
 Մաթանյան Ռազմիկ Ադ.
 Գզիրյան Ռազմիկ
 Գզիրյան Հրանտիկ
 Պատվականանց

11 (1006). Ակրատայ
 12 (1007). Աղբաշ
 13 (1008). Աղբատ Թյունի
 14 (1009). Անդյո
 15 (1010). Անտի
 16 (1011). Աշաղալի
 17 (1012). Աշրափ
 18 (1013). Աալի
 19 (1014). Բալիկ
 20 (1015). Բախսալի
 21 (1016). Բեդ
 22 (1017). Բենգին
 23 (1018). Բենամուս
 24 (1019). Բոբոլ
 25 (1020). Գաղի
 26 (1021). Գաղա
 27 (1022). Գոդ
 28 (1023). Դախկարի
 29 (1024). Դաշո
 30 (1025). Դոմալ

31 (1026). Դոնդի
 32 (1027). Եղտուտ
 33 (1028). Երջանիկ
 34 (1029). Էվել
 35 (1030). Էտնա
 36 (1031). Թեջան
 37 (1032). Թգուկ
 38 (1033). Թիսան
 39 (1034). Ժատա
 40 (1035). Իսկապես
 41 (1036). Լազգի
 42 (1037). Լառի Ջավադ
 43 (1038). Լիպի

Պատվականանց Արշակ
 Հախյան Կիմիկ Գ.
 Կարախանյան Թյունի
 Գզիբյան Հայկազ Ս.
 Զյոխյան Հրանտիկ Մուշեղի
 Գյուլումյան Նիկալ
 Գզիբյան Վիտի Ս.
 Գյուլումյան Վալոդ Հ.
 Գյուլումյան Հրանտիկ Բ.
 Սաբունց Կոլի
 Ջանունց Հրանտիկ
 Բաբաքյոխյան Աշոտ
 Բաբաքյոխյան Սաշիկ Ալ.
 Սուդյան Ռաֆիկ Սիմ.
 Վերդյան Հակոբ
 Աղաջանյան Ռազմիկ Հ.
 Բաբաքյոխյան Հրանտ
 Մարտիրոսյան Վաղաշ
 Շելլունց Հայկազ
 Գզիբյան Գարեգին
 (Մոխրաթաղ)
 Գզիբյան Սուրեն Ամիրջանի
 Աղաջանյան Լևիկ Արշ.
 Բաբաքյոխյան Ազատ Ն.
 Ջանունց Մակիչ
 Սուդյան Գարեգին Սո.
 Զյոխյան Սերոժ
 Պետունց Լևիկ
 Սուդյան Սիմոն
 Գյուլումյան Պավլի
 Ջարգարյան Սաշա
 Վերդյան Երվանդ Մ.
 Աղաջանյան Ջավադ
 Զյոխյան Ջարմիկ (Նատոն
 Ջամոն)

- 44 (1039). Լոլի
 45 (1040). Լոնդի
 46 (1041). Խալիլ
 47 (1042). Խոջա
 48 (1043). Խուջում

 49 (1044). Ծատա
 50 (1045). Ծիսլի
 51 (1046). Կակարի

 52 (1047). Կակլա
 53 (1048). Կամբար
 54 (1049). Կայտար
 55 (1050). Կանաչ Լոբի
 56 (1051). Կաչան
 57 (1052). Կոմուկուչ
 58 (1053). Կուբուռ
 59 (1054). Կուտուզ
 60 (1055). Կուտուշ
 61 (1056). Հաքամ
 62 (1057). Հալլաջ
 63 (1058). Հապա
 64 (1059). Հաքի
 65 (1060). Հյուրուջ
 66 (1061). Հուտրուտ
 67 (1062). Ղազ
 68 (1063). Ղաշտի
 69 (1064). Ղոբո
 70 (1065). Ղրմզի
 71 (1066). Ճադի
 72 (1067). Ճաճա
 73 (1068). Ճգտլմ
 74 (1069). Ճոպոլ
 75 (1070). Ճրինգ
 76 (1071). Մալական

 Վերդյան Հովսեփի (Մեփի)
 Սամվելյան Սերգի
 Հախյան Գալուստ
 Ջանունց Արշակ
 Ազարյան Կարապետ,
 Վերդյան Հրանտիկ
 Սուրյան Արմենակ
 Ջլալյան Գալուստ
 Բաբաքյոխյան Աշոտ,
 Հակոբյան Սաշա
 Մարյանյան Սուրի
 Աղաջանյան Սաշա
 Գզիբյան Ռազմիկ (Ղ.)
 Վերդյան Հունի
 Մարյանյան Աղաջան
 Վերդյան Մակիչ
 Պռավանց Հայկազ
 Սուրյան Մոսես (Ազատի հայրը)
 Շախյան Հրանտիկ Մ.
 Գյուլումյան Վարդազար
 Գյուլումյան Արշակ
 Մարյանյան Մուխի Սոլոմոնի
 Զյոխյան Հրանտ
 Գզիբյան Ջումի Գ.
 Գզիբյան Մինաս Ս.
 Ջլալյան Հրանտիկ Թյունիի
 Հակոբյան Մեխակ
 Ջլալյան Մեծյուն
 Գյուլումյան Ջումի
 Գզիբյան Սարգիս Գ.
 Ջլալյան Ջհանգիր
 Բաբաքյոխյան Հակոբ
 Չանգլունց Սերգի
 Չիլինգարյան Հարություն
 Ջլալյան Սահակ

77 (1072). Մանաս	Բաբաքյոխյան Հրանտիկ Հանեսի
78 (1073). Մանավի	Զյոխյան Մինաս Ջ.
79 (1074). Մյուրդի	Գզիքյան Մարտիրոս
80 (1075). Մուծիկ	Ազարյան Միշիկ
81 (1076). Յադալ	Սաքունց Բախշի
82 (1077). Յապոն	Գզիքյան Եղիշ Մ.
83 (1078). Նադդալի	Գզիքյան Հանես Սարոյի
84 (1079). Նարնջի	Վերդյան Ժոժի
85 (1080). Շամբուլ	Խաչիկյան Շամիր Վ.
86 (1081). Շերոկ	Ազարյան Միշիկ
87 (1082). Շուդան	Բաբաքյոխյան Հանես
88 (1083). Չանքա	Զյոխյան Սարգիս
89 (1084). Չեխ	Սաքունց Հրանտիկ
90 (1085). Չիլ Մուխի	Սաքունց Մուխի
91 (1086). Չուխկուր	Մաղաթեյան Միխայել
92 (1087). Պավան	Հակոբյան Պավլի
93 (1088). Պիծի Ապրես	Սաքունց Ապրես
94 (1089). Պիծոկ	Առաքեյան Յուրիկ Գ.
95 (1090). Պլեխան	Վերդյան Միշիկ
96 (1091). Պոմբի	Շախյան Սուրի
97 (1092). Սավգալի	Վերդյան Առստամ
98 (1093). Սարդար	Ջլավյան Ռաֆիկ Շ.
99 (1094). Սիբիրյակ	Ջանունց Սլավիկ Գ.
100 (1095). Սուլի	Ամիրյան Գրիշա
101 (1096). Վանկա	Հակոբյան Հանես
102 (1097). Վիրած	Բաշրաթյան Հայկազ
103 (1098). Տատիկ	Ազարյան Հրանտիկ Հ.
104 (1099). Տիտիլ	Շելլունց
105 (1100). Տոկի	Ջարգարյան Արշակ
106 (1101). Տոյո	Մարտիրոսյան Գուրգեն Քաչալի
107 (1102). Տոպրակ	Շախյան Հանես
108 (1103). Տուգի	Գյուլումյան Նովիկ
109 (1104). Տուրճի	Բաբաքյոխյան Պավլի
110 (1105). Տուրք	Մարյանյան Աբրահամ

111 (1106). Ուզբեկ	Ջարգարյան Ջարմիկ
112 (1107). Փաստահի	Բաբաքոյիսյան
113 (1108). Փելսի	Հակոբյան Մելսակ
114 (1109). Փոքրիկ	Եսայան Հակոբ
115 (1110). Փուսի	Վերդյան Սահակ Մ.
116 (1111). Քալիյաթ	Մարյանյան Ջումի (Սուլիի հայրը)
117 (1112). Քաչալ	Մարտիրոսյան Խաչի
118 (1113). Քաջիկ	Խաչիկյան Ջիանգիր Վ.
119 (1114). Քեռի	Մովսիսյան Արտաշ
120 (1115). Քերվիկ	Հակոբյան Բադալ
121 (1116). Քյաբի	Հակոբյան Արթուր, գերդաստանը Քյաբունց
122 (1117). Քյաբի	Հախունց Ռուբիկ Գ., Հակոբյան Գրիգոր
123 (1118). Քյուրան	Աղաջանյան Հայկազ Բ.
124 (1119). Քութի	Շախյան Կառլեն, Սամվելյան Արշակ
125 (1120). Քուլուշ	Ղազարյան Յական
126 (1121). Օժո	Քյոխյան Վալոդ
127 (1122). Օտո	Ազարյան Հանես
128 (1123). Օղի	Մովսեսյան Հրանտ («Քեռիի»)
129 (1124). Օյո	Հակոբյան Ռազմիկ Ռ.
130 (1125). Գալուստ	
131 (1126). Լոմոնոսով (Աշոտ)	
132 (1127). Խոժ (տղան՝ Խոժուկ)	
133 (1128). Կիբի (Յիբի)	
134 (1129). Չանգլի	
135 (1130). Սըբըվեր,	
136 (1131). Քյալիաթ	

Ներքին Շենի փոքերը
(19 -րդ դարի վերջերից մինչև 20 -րդ դարի կեսերը)

- | | |
|---------------------------|---|
| 1 (1132). Աբիհուլ | Աբրահամյան Կարապետ, հետագայում տոհմը կոչվել է Աբիհուլյանց: |
| 2 (1133). Ազնիվ կոլխոզնիկ | Բալյան Բալու |
| 3 (1134). Ազյան | Սաֆարյան Լևոն |
| 4 (1135). Ազոկ | Հայրյան Արտավազդ (Գանձակից) |
| 5 (1136). Ալի դայի | Չիրքինյան Ալեքսան |
| 6 (1137). Ալիհույ | Չիրքինյան Պետրոս |
| 7 (1138). Ախպերջան | Բալյան Էմիր |
| 8 (1139). Ակը Ջումի | Ծատրյան Ջումի |
| 9 (1140). Աղբատ Ղազար | Վելյան Ղազար |
| 10 (1141). Աճանան | Գրիգորյան Մարիամ |
| 11 (1142). Աճի | Վելյան Սինամաք |
| 12 (1143). Անհայտ կորած | Տրունյան Հայրապետ |
| 13 (1144). Անվեռ Սիակ | Հակոբյան Սահակ |
| 14 (1145). Աշուղ Բախշի | Վելյան Բախշի |
| 15 (1146). Աջաբով | Պողոս, Գանձակից, ազգանունը չի հիշվում: |
| 16 (1147). Առավ-թռավ | Օհանջանյան Սուրբի |
| 17 (1148). Ատի (ա՛յ տեր) | Տեր Ակուփ, սերունդներին հաճախ այդ անունով են կոչել, օրինակ՝ Ատին Սուրենը: |
| 18 (1149). Արդար | Մեծլումյան Մաթոս (Մաթևոս) |
| 19 (1150). Արծվիկ | Վելյան Հարություն Լևոնի |
| 20 (1151). Արմենակ բիք | Խաչատրյան Արմենակ (Բալադունց) |
| 21 (1152). Աքեր | Վերդյան Հերիք (վերինշենցի) |
| 22 (1153). Բաբախան | Հայրյան Հարություն |
| 23 (1154). Բաբաճըշտ | Բաբաջանյան Իսախան |
| 24 (1155). Բաղամ | Սանդրոսյան Առաքել: Սանդրոսյանների տոհմի մի ճյուղը կոչվել է Բաղամանց: |
| 25 (1156). Բադաս | Առստամյան Շամիր |

26 (1157). Բաղրամ	Ղահրամանյան Եփրեմ
27 (1158). Բաշմախչի	Բաբայան Կարապետ
28 (1159). Բեդկոմ Մակիչ	Ղաբուլյան Մակիչ
29 (1160). Բեզումնի	Անանյան Սարգիս
30 (1161). Բեդլու Լևոն	Բաբայան Լևոն
31 (1162). Բեյնամուս	Բալաբեգ
32 (1163). Բերիա	Չիբքինյան Արշակ
33 (1164). Բիջրո	Վելյան Ռաֆիկ Հարությունի
34 (1165). Բոբլի	Սաֆարյան Գեորգի
35 (1166). Բոբո	Դանիելյան Բորիս Գալուստի (Գան- ձակից)
36 (1167). Բոյախչի	Սաֆարյան Պետրոս
37 (1168). Բոնդուտ Մակիչ	Բաբայան Մակիչ
38 (1169). Բուբուլ	Խիդիրյան Պետրոս
39 (1170). Բուբուլին Առափ	Խիդիրյան Ռաֆիկ Պետրոսի
40 (1171). Բուբուշ	Վելյան Կարապետ Լևոնի
41 (1172). Գառնիզոն	Աղաջանյան Աղաջան (1918 - 1920 թթ. ինքնապաշտպանության տարիներին Ներքին Շենուոմ ստեղծվել էր զենքի պահեստ, որին «գառնիզոն» էին ա- սում, կազմակերպիչներից մեկն Աղա- ջանն էր):
42 (1173). Գիզոլ	Բաղմանյան Առաքել
43 (1174). Գիպնոզ	Արզումանյան Մինաս
44 (1175). Գյալգյոր	Գրիգորյան Հարություն
45 (1176). Գյալմա Եղիշ	Ծատուրյան Եղիշ (Նովսեցի)
46 (1177). Գյուրգա	Ներսիսյան Խաչատուր (Չատուր)
47 (1178). Գյուրջևան	Դանիելյան Գյուլի
48 (1179). Գոգոս	Հայրյան Գուրգեն
49 (1180). Գուդի	Ավանեսյան Գևորգ: Տոհմի այդ ճյուղը կոչվել է Գուդունց:
50 (1181). Գուդուվիչ	Բաղմանյան Պետրոս, տոհմը կոչվել է Գուդուվիչանց:
51 (1182). Դա	Բալյան Անիշկա
52 (1183). Դալի (խենթ)	Մոսալ Վելյան Մոսալ

- 53 (1184). Դալլաք Թյունի Բաբայան Հարություն
 54 (1185). Դախկաբիդո Կարապետյան Արամ (գաղթական)
 55 (1186). Դադդալան Դաբուլյան Առաքել: Տոհմի մի մասը
 հետագայում գրվել է Առաքելյան:
 56 (1187). Դանա Բալաս Հայրյան Բալաս
 57 (1188). Դանգլա Սաշա Արդուխանյան Սաշա
 58 (1189). Դեմագոգ Նազար Բաբաջանյան Նազար
 59 (1190). Դեմոկրատ Բամալյան Գուրգեն (ղարաչինարցի)
 60 (1191). Դիքնա Նուբար Բաբայան Նուբար
 61 (1192). Դյով Դաբուլյան Սարգիս: Հետագայում
 տոհմը կոչվել է Դյովունց:
 62 (1193). Դովմա կոլ տվող Դահրամանյան Սարգիս
 63 (1194). Դովմա Նուշի Դահրամանյան Անուշ (Սարգսի կինը)
 64 (1195). Դոջի Արշակ Արդուխանյան Արշակ
 65 (1196). Դովիան Արգունման Մովսիսյան Արգունման
 66 (1197). Դուրդուխանց Վովսեփյան Սարգիս
 Սաքի Մովսիսյան Մովսես
 67 (1198). Դուրդուշ Դևոնդյան Ցական
 68 (1199). Եթիմ Առուշանյան Հովսեփ
 69 (1200). Ջարգար Օսեփ Աքայան Թևոս
 70 (1201). Ջարգանդ Բաղմանյան Հայրապետ (Հաբեդ)
 71 (1202). Էշի Հաբեդ Բաղմանյան Մուրադ («Էշը» Բաղ-
 մանյանների տոհմական մականունն
 էր, ինչպես որ Բաբայաններից՝ Փիշի-
 կանց, Վեյյաններից՝ Շոն, Խիդիրյան-
 ներից՝ Արջ և այլն):
 72 (1203). Էշի Մուրադ Բաղմանյան Սարգիս
 Վեյյան Սաշա
 73 (1204). Էշկա Բաբա Մարտիրոսով Արկադյա (Բաքվից)
 74 (1205). Թազի Առուշանյան Պավլի
 75 (1206). Թախտաբիթի Հարությունյան Համբարձում (թախշից)
 76 (1207). Թաք Պավլի
 77 (1208). Թալիշինսկի
 78 (1209). Թափան քարշ
 տվող
 79 (1210). Թյաք Սարգիս
 Չիրքինյան Պողոս
 Վեյյան Սարգիս

80 (1211). Թովալ Խաչի	Արդուխանյան Խաչի
81 (1212). Թովալ Վերդի	Խիդիրյան Վերդի
82 (1213). Թուսուլ	Սիմյան Մարտին Մուղլի
83 (1214). Ժեշտի Պողոս	Տոնյան Պողոս (գետաշենցի)
84 (1215). Ժովուր	Խալափյան Ստեփան (թալիշեցի)
85 (1216). Լալիկ Գուրգեն	Մովսիսյան Գուրգեն
86 (1217). Լենտոշ	Մուրադյան Վլադիմիր Կիրակոսի
87 (1218). Լեայո	Ղարազադյան Արարատ
88 (1219). Լյազգի Չատի	Բաղմանյան Խաչատուր
89 (1220). Խադում Պավլի	Բաբայան Պավլի
90 (1221). Խադում Վալոդ	Վելյան Վալոդ Թևոսի
91 (1222). Խաթրի համար	Արզումանյան Ասատուր
92 (1223). Խալիլ	Խիդիրյան Սարգիս
93 (1224). Խատրատ	Խաչատրյան Բենիկ Գերասիմի
94 (1225). Խիդիրանց Մեծ	Խիդիրյան Ալեքսան
95 (1226). Խինթի Ջումի	Սիմյան Ջումի
96 (1227). Խև	Խաչատրյան Հայկազ
97 (1228). Ծյուկուր	Առստամյան Համբարձում
98 (1229). Ծվծվիկ	Նալբանդյան Ռուբեն Ավագի
99 (1230). Կախիլած	Սիմյան Եղիշ
100 (1231). Կաժավոկ	Սանդրոսյան Ռաֆիկ Պ. (Դոլմա Անուշի եղբայրը)
101 (1232). Կանգառ	Մոսյան Մեխակ
102 (1233). Կապած	Վելյան Աստղիկ (վերինշենցի)
103 (1234). Կըրմուրին ախճիկ	Սանդրոսյան Հռոխ (պրսեցի)
104 (1235). Կիլոգրամ	Դանիելյան Քնարիկ
105 (1236). Կյուլին Ակուփ	Սիմյան Ակուփ
106 (1237). Կոնատ Հայկազ	Բաղմանյան Հայկազ (Գուդովիչանց)
107 (1238). Կոմիսար	Նալբանդյան Վալոդ Ավագի
108 (1239). Կուզիկ Թյունի	Արդուխանյան Հարություն
109 (1240). Կուզիկ Սաքո	Վելյան Սաքո Կարապետի
110 (1241). Կուզիկ Սիմոն	Խիդիրյան Սիմոն
111 (1242). Կուզտի Լևան	Վելյան Լևոն
112 (1243). Կուլախ	Հայրյան Բաղդասար

- 113 (1244). Հալալ Խիդիրյան Հանես (Մյուսակի հայրը)
- 114 (1245). Հախվերմագ Վելյան Զինավոր
- 115 (1246). Հաճյուլ Շատվերյան Մարգո
- 116 (1247). Հինդուշկա Եղիշ Դավաքյան Եղիշ
- 117 (1248). Հուդուլ պառավ Շատվերյան Հոռոմսիմ (Եղիշի մայրը):
Տոհմի այդ ճյուղը կոչվել է Հուդուլանց:
- 118 (1249). Հունջի Բաղդասարյան Օհանջան
- 119 (1250). Հիտլեր Բաբուռյան Հուռի: (Նրանից հետո
ուրիշ երիտասարդ «Հիտլեր» էլ է եղել
գյուղում):
- 120 (1251). Դազախեցի Վելյան Անուշ (Բախշիի կինը)
- 121 (1252). Դազի Ներսիսյան Մելիակ
- 122 (1253). Դաշանգ Ակուփ Նալբանդյան Հակոբ, հետագա սե-
րունդներին ճանաչել են նրա անունով՝
Դշանգին տղան, քոռը, հարսը և այլն:
- 123 (1254). Դաշտար Նալբանդյան Մելիակ
- 124 (1255). Դառի Գյորգյան Մարտիրոս
- 125 (1256). Դարա Թևոս Չիրքինյան Թևոս
- 126 (1257). Դարագյաղա Դարագաղյան Գևորգ
- 127 (1258). Դիսի Դևոնդյան Արզուման
- 128 (1259). Դոչ Արամ Ամիրյան Արամ (ասլորում էր Գան-
ձակում)
- 129 (1260). Դույրուդ Ամիրյան Արզուման: Տոհմը կոչվել է
Դույրուդանց:
- 130 (1261). Դադար Էրեց տեր Հովհաննես Հովհաննիսյան
- 131 (1262). Դիշտի Շամիր Շատվերյան Շամիր
- 132 (1263). Դիսլի Բալյան Գոհարիկ Մովսեսի
- 133 (1264). Դիվիկ Պետրոսյան Ալիք: Սերունդները ճա-
նաչվել են Դիվիկանց:
- 134 (1265). Դիրիպակ Աբրահամյան Ռուբեն
- 135 (1266). Դղասպան Անտոնյան Սինաս
- 136 (1267). Դղասպան Հայկազ Անտոնյան Հայկազ (ջրադացպան)
- 137 (1268). Դղասպան Մռավ Շատվերյան Մռավ (ջրադացպան)

138 (1269). Ճոճի Սիակ	Դավաքյան Սահակ
139 (1270). Ճըպլճըպիկ	Ղաբուլյան Քրիստափոր
140 (1271). Մալենկի (Նալբանդ)	Դանիելյան Առաքել: Տոհմը կոչվել է Մալենկունց:
141 (1272). Մահառլամ	Ներսիսյան Մաշիկ
142 (1273). Մամատուլի	Վելյան Մարիամ (Սողոմոնի մայրը)
143 (1274). Մայրիկ	գաղթական կին, ապրել է Բաքալունց Բախշիի ընտանիքում:
144 (1275). Մաշխական	Նալբանդյան Ավագ
145 (1276). Մասլենկով	Մուրադյան Յուրիկ Կիրակոսի
146 (1277). Մատուշ	Սաֆարյան Վարդանուշ
147 (1278). Մեծ Ապեր	Բալյան Միրզաջան
148 (1279). Մինգլի	Սիմյան Ջումի
149 (1280). Միչուրին	Վելյան Անդրանիկ
150 (1281). Միջրի	Աղաջանյան Սիրանուշ
151 (1282). Մյադո	Առստամյան Մարտիրոս
152 (1283). Մշմշիկ	Մովսիսյան Յական
153 (1284). Մոսիքոխա	Խաչատուր (Չատի) Մովսիսյան: Տոհ- մը կոչվում է Մոսիքոխաանց (ինչյունա- փոխված՝ Մոխքիսանց):
154 (1285). Մոսկա	Բալյան Մովսես
155 (1286). Մուտուռ	Արդուխանյան Թագուհի
156 (1287). Յալի քաշկ	Մակարյան Անիշկա
157 (1288). Յապոն Եղիշ	Չիրքինյան Եղիշ
158 (1289). Նարկունոս	Ավետիսյան Ազատ (գաղթական)
159 (1290). Շամախեցի	Պետրոսյան Սահակ
160 (1291). Շարիֆով	Առստամյան Սահակ
161 (1292). Շատվերյան Գյանջեցի	Շատվերյան Մաքքադ
162 (1293). Շեգ Մոսի	Ամիրյան Մովսես (Մոսի)
163 (1294). Չախմախսագ	Աբրահամյան Գևորգ
164 (1295). Չախկալ Թյունի	Դանիելյան Հարություն
165 (1296). Չանչախ	Ներսիսյան Գրիգոր
166 (1297). Չապան	Խաչատրյան Հայկազ

167 (1298). ՉԷ-ի նախագահ	Տոնյան Հայկազ
168 (1299). Չխարակ	Խիոյիքյան Արարատ Մեխակի
169 (1300). Չոլակ Խաչի	Դանիելյան Խաչի
170 (1301). Չոլի Մուշեղ	Չիրքինյան Մուշեղ
171 (1302). Չովուռ	Դանիելյան Մուխի
172 (1303). Չովուշ Մոսով	Չիրքինյան Մոսով
173 (1304). Չվալումը քոնինող	Գ.գիրյան Տիգրան (վերինշենցի)
174 (1305). Չուխկուր	Սադաքեյան Միքայել (վերինշենցի)
175 (1306). Պապի Դալի	Գրիգորյան Խաչատուր
176 (1307). Պիծոկ	Գյուրգյան Արվենիկ (Գյուլխատանից)
177 (1308). Ջաբառ Մակիչ	Բաղմանյան Մակիչ
178 (1309). Ջաբառ Օսեփ	Դանիելյան Հովսեփ
179 (1310). Ջուջաբեգ	Նալբանդյան Կարապետ: Տոհմը կոչ- վել է Ջուջաբեկանց
180 (1311). Սալամ	Դաբուլյան Գրիգոր Հարությունի
181 (1312). Սաղաթ Մեխակ	Ամիրյան Մեխակ
182 (1313). Սախնախալի	Առուշանյան Միրզա
183 (1314). Սահլիկ-բեգ	Դանիելյան Ռուբեն
184 (1315). Սալիմ	Սարումով Հրաչիկ (Գանձակից)
185 (1316). Սավեսկի Զոքոր	Տոնյան Զոքոր (Գրիգոր)
186 (1317). Սալը գյալին	Առուշանյան Սուրբան
187 (1318). Սարու Էրմանի	Տոնյան Մարտիրոս
188 (1319). Սալու Թևոս	Վելյան Թևոս
189 (1320). Սալխակ Բիլեքավոր	Գրիգորյան Մեխակ
190 (1321). Սոյոդդոգան	Առուշանյան Սկրաիչ (իմաստը՝ մե- տաղը սաղը կովող, մշակող): Տոհմը կոչվել է Սողդիգամանց:
191 (1322). Ստախանով Նազար	Չիրքինյան Նազար
192 (1323). Ստրուկ	Վելյան Կարապետ
193 (1324). Սուտլիկ Նազար	Վելյան Նազար
194 (1325). Սուտլիկ Սիակ	Հայրյան Սահակ
195 (1326). Վանցո	Մուրադյան Ռաֆայել Կիրակոսի

- 196 (1327). Վարժապետ
 197 (1328). Վեզը ծոռ
 198 (1329). Վըշէ-վըշէ.
- 199 (1330). Վըցատու
 200 (1331). Տանա Բեզլար
 201 (1332). Տարգան Արամ
- 202 (1333). Տերգիկ Լաչին
- 203 (1334). Տըկըզ Սաղըխ
 204 (1335). Տիախլ
 205 (1336). Տխուր Եղիշ
 206 (1337). Տուգի
 207 (1338). Տուրալի
 208 (1339). Յերուր Սերգի
 209 (1340). Ուզբէկ
 210 (1341). Ուստա
 Արություն.
- 211 (1342). Փեթխեն
 212 (1343). Փյարի
 213 (1344). Փուծի
 214 (1345). Քաշկը Շամիր
 215 (1346). Քաչալ Զիլփի
 216 (1347). Քաչալ Խարա
 217 (1348). Քաչալ
 Համբարձում
- 218 (1349). Քաչալ Մանաս
 219 (1350). Քաչալ Սուդի
 220 (1351). Քառ Եփրեն
 221 (1352). Քեթը կտրած
 222 (1353). Քեթո Ներսես
 223 (1354). Զյալա Թևոս
 224 (1355). Զյամալ ալջ
- Խաչատրյան Արշակ
 Տրունյան Ալեքսան
 Առաքելյան Խաչատուր (Դադղիլա-
 նանց Չատի)
 Չիրքինյան Անիշկա (վերինշենցի)
 Չիրքինյան Բեզլար
 Ծնունդով Գանձակից, ազգանունը չի
 հիշվում:
 Զարգարյան Լաչին (դերձակ, գետա-
 շենցի)
 Սանդրոսյան Սաղըխ
 Առստամյան Առստամ
 Նալբանդյան Եղիշ
 Աբրահամյան Մուխի
 Ներսիսյան Սարիամ
 Աբալան Սերգի
 Վեյյան Լուսիկ
- Սինասյան Հարություն (գաղութկան)
 Տրունյան Մակիշ
 Չիրքինյան Անահիտ Թևոսի
 Առստամյան Արշալույս
 Ղազարյան Շամիր (Էրքեջեցի)
 Մեծումյան Զիլփի
 Ղահրամանյան Յուրիկ
- Ներսիսյան Համբարձում
 Դանիելյան Մանաս
 Մեծումյան Սուդի:
 Շատվերյան Եփրեն
 Վեյա Մհար
 Անանյան Ներսես
 Նալբանդյան Թևոս
 Խիդիրյան Մելսակ

225 (1356). Բյասի	Աբրահամյան Յական: Հետագա սերունդը ճանաչվել է նրա մականունով:
226 (1357). Բյարամով	Խիդիբյան Աշոտ (Շուդի) Մինասի
227 (1358). Բյոչի	Չիրքինյան Վազգեն
228 (1359). Բոռ Տոնի	Սաֆարյան Դանիել (Տոնի)
229 (1360). Բուր Սիմոն	Առուշանյան Սիմոն
230 (1361). Բոռակ Եղիշ	Արդուխանյան Եղիշ
231 (1362). Դանտոմաս	Բյոխյան Ասքանազ (վերինշենցի)*
1 (1363). Ակուլա	
2 (1364). Ադվես	
3 (1365). Ասլտեկար	
4 (1366). Բխամարկ	
5 (1367). Բուլի	
6 (1368). Դիկոբբազ	
7 (1369). Դուրսուն	
8 (1370). Զվեր	
9 (1371). Լոդուր	
10 (1372). Ծյապի	
11 (1373). Կադան	
12 (1374). Կոլումբոս	
13 (1375). Հիսուր	
14 (1376). Մաշտիբաթ	
15 (1377). Չոռնի	
16 (1378). Ռայկոմ	
17 (1379). Սեռի	
18 (1380). Վիսիլիտ	
19 (1381). Տոռն	
20 (1382). Տուռնի	
21 (1383). Փարսիտ	

* Հրապարակելով Վիկտոր Պետրոսյանի կազմած այս ծավալուն ցուցակը՝ մեր երախտագիտությունն ենք հայտնում նրան: Միաժամանակ նշում ենք, որ 1960-ական թվականներից հետո Ներքին Շենոմ հասակ առած նոր սերունդը նույնպես աչքի ընկավ իր սրամտություններով, զվարճալի պատմություններով ու դիպուկ մականուններով:

Մանաշիդի փոքերը

- 1 (1384). Աշի-ապեր
- 2 (1385). Ավագակ
- 3 (1386). Բալաբեկ (երկերեսանի իմաստով)
- 4 (1387). Բորան
- 5 (1388). Բուխանկա
- 6 (1389). Գալդո
- 7 (1390). Դադաշ
- 8 (1391). Դուլի
- 9 (1392). Զաքիր
- 10 (1393). Ժեշտի փիչ
- 11 (1394). Լդար (Լդարանց)
- 12 (1395). Լյութ
- 13 (1396). Խեչակ
- 14 (1397). Ծաղկած շիրորի
- 15 (1398). Ծեսո
- 16 (1399). Ծուռտիկ
- 17 (1400). Հաճուլ
- 18 (1401). Հաջիլագլագ
- 19 (1402). Հիտլեր
- 20 (1403). Հոպոպ (Հոպոպանց)
- 21 (1404). Դոճի
- 22 (1405). Դուտիկ
- 23 (1406). Մաքսիմկա
- 24 (1407). Մըռե
- 25 (1408). Մոլլա (Մոլլանց)
- 26 (1409). Մուղդուսի (Մուղդուսունց)
- 27 (1410). Շաբան
- 28 (1411). Պեկիկ
- 29 (1412). Պիծի
- 30 (1413). Սալբի
- 31 (1414). Ստարտեր
- 32 (1415). Սուդակ
- 33 (1416). Վիզ
- 34 (1417). Տկլոր
- 35 (1418). Քեթո



Վիկտոր (Յովիկ) Պետրոսյան
(Ներքին Շեն, Մոսկվա)



Սամվել Սարգսյան
(Հայ Պարիս, Մոսկվա)



Արթուր Ղահրամանյան
(Ներքին Շեն, Պյատիգորսկ)



Էնգելս Սալահյան (Հայ
Պարիս, Ցարոսլավի մարզ)



Կոլյա Հովսեփյան
(Բուզլուխ, Չարենցավան)



Մանիկ Խաչատրյան
(Ներքին Շեն, Մոսկվա)



Արուսյակ Դանիելյան
(Ներքին Շեն, Բատայսկ)



Լուսիկ Չիլինգարյան
(Վերին Շեն, Զարվաճառ)



Նախշուն Շելունց (Գյուլիս-
տան-Վ. Շեն, Աստրախան)



Պետրոս Մեղրյան
(Գյուլիստան, Աբովյան)



Զորիկ Ղազարյան
(Վերին Շեն, Ռյազանի մ.)



Իշխան Վերդյան
(Մանաշիդ, Երևան)



Լենա Ազարյան
(Վերին Շեն, Մոսկվա)



Ֆենյա Իվանյան
(Ղարաչինար, Պետրոպոլսկ)



Ալվինա Վերդյան
(Մանաշիդ, Արզնի)



Բորիս Ղլեչյան
(Գաղթուք, Մոսկվա)



Արամ Ղազարյան
(Բրաջուր, Հրազդան)



Գերասիմ Վարդանյան
(Ղարաչինար, Ռոստովի մ.)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

I. Չվարձախոսություններ

Ասացողների ցանկ

№/№	Անուն, ազգանուն	Ծագումը, տարիքը, մասնագիտությունը	Բնակման վայրը
1		2	3
1.	Աբրահամյան Ավորա	Ներքին Շենից, 66 տ., №№ 31, 102, 509	Երևան
2.	Ազարյան Լենա	Վերին Շենից, 73 տ., №№ 577-582, 593-598	Մոսկվա
3.	Ալեքսանյան Լաուրա	Մանաշիդից, 57 տ., երկարամյա բուժաշխատող, № 11	Կրասնոդար
4.	Ալեքսանյան Ռիմա	Մանաշիդից, 82 տ., № 397	Կրասնոդար
5.	Ամիրյան Զիվան	Հայ Պարիսից, № 179	Յարոսլավի մարզ, ավ. Շուրսկոլ
6.	Առստամյան Բորիկ	Ներքին Շենից, 65 տ., սովխոզի տնօրեն, № 478	Կալինինգրադի մարզ
7.	Ավագիմյան Նորա	Վերին Շենից, 71 տ., № 312, 522	Երևան
8.	Ավագյան Ծովինար	Ղարաչինարից, 61 տ., վաստակաշատ մանկավարժ, №№ 44, 48	Օրենբուրգի մարզ

* Ժողովածուում ներկայացված նյութերը կազմողին են ուղարկված վերջին հինգ տարիների ընթացքում (2006-2010թթ.):

Նյութերի մի մասի գրառող-ասացողի վերաբերյալ տեղեկությունները, ցավոք, ճշտել չհաջողվեց:

9.	Ավագյան Ռոբերտ (1941 - 2008)	Գաղթորից, երկարամյա դատախազ, № 129	Երևան
10.	Ավանեսյան Արկադյա	Ներքին Շենից, առևտրի երկարամյա աշխատող, №№ 200, 201, 369	Պյատիգորսկ
11.	Արդուխանյան Յաշա	Ներքին Շենից, 45 տ., № 457	Ստավրոպոլի երկր.
12.	Արզումանյան Սեդա	Ներքին Շենից, պետական պաշտոնյա, № 283	Կրասնոդարի երկր.
13.	Բաբայան Շինչատ	Բուզլուխից, ինժեներ, 67 տ., №№ 135, 146, 259	Դոնի Ռոստով
14.	Բաբաջանյան Լենա	Ներքին Շենից, 75 տ., պետական պաշտոնյա, № 121	Նովոռոսիյսկ
15.	Բաբաջանյան Շմավոն	Ներքին Շենից, շրջանային ղեկավար աշխատող, №№ 72, 78, 583-590	Նովոռոսիյսկ
16.	Բաբաբյոխյան Արամ	Վերին Շենից, №№ 236, 237-239	Կալինինգրադ
17.	Բալայան Լարիսա	Ղարաչինարից, 64 տ., № 20	Մոսկվա
18.	Ժորա Բաղյան	Վերին Շենից, 82 տ., բազմահմուտ արհես- տավոր, №№ 450-452, 503	Դիլիջան, Աղավնավանք
19.	Դանիելյան Բելա	Ներքին Շենից, 60 տ., վաստակաշատ բժշկուհի, № 126	Կրասնոդար
20.	Դանիելյան Էմիրա	Ներքին Շենից, 68 տ., շրջանային ղեկավար աշխատող, №№ 68-71, 79- 82, 88, 114, 130, 152, 153, 211, 400	Կրասնոդար

21.	Դանիելյան Ռ-աժդեն	Ներքին Շենից, երաժիշտ, №№ 76, 158, 160, 161, 163	Կրասնոդար, Արմավիր
22.	Դանիելյան Սլավիկ	Ներքին Շենից, 68 տ., առևտրի աշխատող, № 49	Ռոստովի մարզ, ք.Բատայսկ
23.	Զարգարյան Արմիկ	Վերին Շենից, 77 տ., վաստակաշատ մանկավարժ, №№ 6, 12, 37, 292, 295, 303, 304, 595	Երևան
24.	Զարգարյան Զարմիկ	Վերին Շենից, №№ 561- 576	Կալինինգրադ
25.	Զարգարյան Իրա	Վերին Շենից, 60 տ., երկարամյա տնտեսագետ, № 264	Երևան
26.	Զարգարյան Կիմա	Վերին Շենից, 73 տ., №№ 32, 33 ^ա , 33 ^բ , 33 ^գ , 35, 249, 250, 286	Լյուբերցի
27.	Էդիկ	Վերին Շենից, № 275	Սարատովի մարզ, ք.Մոկրոուս
28.	Իվանյան Ֆենյա	Ղարաչինարից, վաստակաշատ մանկավարժ, № 58	Սարատովի մարզ, ք.Պետրովսկ
29.	Խաչատրյան Մանիկ	Ներքին Շենից, 85 տ., վաստակաշատ մանկավարժ, №№ 14, 140	Մոսկվա
30.	Խիդիրյան Ռութիկ	Ներքին Շենից, 62 տ., փոխգնդապետ, №№ 141-143, 189-195, 340	Կալինինգրադի մարզ, ք.Կրասնոգմամենսկ
31.	Հախունց Արեստ	Վերին Շենից, 76 տ., շինարար, № 432	Հոլանդիա
32.	Հակոբյան Արթուր	Վերին Շենից, 52 տ., ինժեներ-շինարար, №№ 7, 16-18, 30, 53, 59, 62	ԼՂՀ, Քարվաճառ

33.	Հակոբյան Գևորգ	Ներքին Շենից, 55 տ., №№ 75, 98, 150	Պյատիգորսկ
34.	Հայրյան Անդրանիկ	Ներքին Շենից, 74 տ., փականագործ, №№ 15, 63	Երևան
35.	Հակոբյան Ֆելիքս	Ներքին Շենից, 52 տ., №№ 13, 92, 95, 96, 101, 104, 230	Պյատիգորսկ
36.	Հովհաննիսյան Ժենյա	Մանաշիդից, 77 տ., վասատակաշատ մանկավարժ, № 13	Երևան
37.	Ղաբուլյան Ալբերտ	Ներքին Շենից, 71 տ., շրջանային ղեկավար աշխատող, №№ 205, 284, 359, 393	Անապա
38.	Ղաբուլյան Վոլոդյա	Ներքին Շենից, 76 տ., այգեգործ, № 85-87	Կրասնոդարի երկր., Նովոալեքսանդրովկա
39.	Ղահրամանյան Արթուր	Ներքին Շենից, 48 տ., տեղի պետհամալսարանի դոցենտ, №№ 349, 362, 364, 382, 458	Պյատիգորսկ
40.	Ղահրամանյան Արշակ	Ներքին Շենից, 79 տ., № 224	Պյատիգորսկ
41.	Ղեյլան Բորիս (1927 - 2007)	Գաղթորից, շրջանային ղեկավար աշխատող, №№ 3, 212, 213, 215, 217, 217 ^ա , 218, 219, 225, 536-542 Գաղթուր 543-544 խրխափուր 545-547 Հայ Պարիս 548-560 Ներքին Շեն	Մոսկվա
42.	Ղևոնդյան Լյուբա	Ղարաչինարից, 63 տ., մանկավարժ, №№ 9, 21, 128, 210	Երևան

43.	Ղևոնդյան Սարինա	Ղարաչինարից, 52 տ., № 277	Երևան
44.	Սեժլումյան Գարիկ	Ներքին Շենից, 50 տ., գյուղատնտեսության դեկավար աշխատող, № 320	Մոսկվա
45.	Սեդրյան Արտուշ	Գյուլիստանից, №№ 243, 244	Երևան
46.	Սեդրյան Պետրոս	Գյուլիստանից, 56 տ., №№ 1, 8, 23, 221	Աբովյան
47.	Սիրաբյան Սովսես	Հայ Պարիսից, ինժեներ- շինարար, №№ 164-166, 168, 169, 178, 214, 307	Ֆարոսլավի մարզ, ավ. Շուրսկոլ
48.	Մնացականյան Արմինե	Գյուլիստանից, № 516-520	Մոսկվա
49.	Մովսիսյան Գենյա (1938-2008)	Գյուլիստանից, երկարամյա գրադարանավար, №№ 22, 51	Երևան
50.	Նաբաբյան Բորիս	Գյուլիստան-Վերին Շեն, 74 տ., տեխն. գիտ. քեկ., երկարամյա դեկավար աշխատող-շինարար, №№ 313, 314	Մոսկվա
51.	Նալբանդյան Իգոր	Ներքին Շենից, 42 տ., գործարար, №№ 66, 67, 73, 103, 134, 137, 159, 208, 220, 228, 372	Կրասնոդար
52.	Ներսիսյան Ֆլորա	Ներքին Շենից, 75 տ., բանկային աշխատող, №№ 83, 93, 285	Պյատիգորսկ
53.	Շախյան Էդիսոն	Վերին Շենից, № 480	Սարատովի մարզ
54.	Շախյան Էդուարդ	Վերին Շենից, № 157	Կրասնոդարի երկր., ք.Արմավիր

55.	Շաղիլյան Վ.	Շամախիից, 88 տ., երկարամյա մանկավարժ, № 525-533	Բորիսովո (Բելառուս)
56.	Ոսկանյան Շիմշատ	Ղարաչինարից, 89 տ., շրջանային ղեկավար աշխատող, №№ 74, 260	Ստեփանավան
57.	Զիրքինյան Զոյա	Ներքին Շենից, 63 տ., բուժաշխատող, №144	Երևան
58.	Զիրքինյան Ռոմա	Ներքին Շենից, №№ 84, 167	Կրասնոդարի երկր., Նովոտիտրովկա
59.	Պետրոսյան Արկադյա (Հայրյան)	Ներքին Շենից, 74 տ., վարորդ, №№ 206, 223	Անապա
60.	Պետրոսյան Արմիկ	Վերին Շենից, 61 տ., № 41	Ֆրանսիա
61.	Պետրոսյան Ռազմիկ	Մարդակերտ, 69 տ., շրջանային ղեկավար աշխատող, №№ 280, 498	Վորոնեժ
62.	Պետրոսյան Վիկտոր	Ներքին Շենից, 72 տ., վաստակաշատ մանկավարժ, №№ 319, 321, 322, 448, 449	Մոսկվա
63.	Ջանունց Իշխան	Վերին Շենից, № 198	Պյատիգորսկ
64.	Սաղաթելյան Ժորա	Վերին Շենից, № 272	Սարատովի մարզ, ք.Երշով
65.	Սալահյան Էնգելս	Հայ Պարիսից, №№ 55, 170, 171, 173, 174, 176	Յարոսլավի մարզ, ավան Շուրսկոլ
66.	Սահակյան Խաչիկ	Մանաշիդից, 58 տ., ինժեներ-շինարար, №№ 145, 404	ԼՂՀ, գ.Ականաբերդ
67.	Սուրյան Արեգ	Վերին Շենից, 48 տ., գործարար, № 36, 291	Մոսկվա

68.	Սուդան Նելա	Վերին Շեն-Ներքին Շենից, 56 տ., №№ 26, 279	Սարատովի մարզ, ք. Տատիշլնո
69.	Սուդան Շամո	Վերին Շենից, № 235	Երևան
70.	Վարդանյան Գերասիմ	Ղարաչինարից, գ.Չալտիր, 81 տ., դպրոցի երկարամյա տնօրեն, №№4, 36, 39, 40, 46, 52, 56, 64, 65, 138, 139, 231, 316, 317	Ռոստովի մարզ
71.	Վարդանյան Զարմիկ	Բուզլուխից, № 25	Կրասնոդարի երկր.
72.	Վելյան Յուրիկ	Ներքին Շենից, 70 տ., վարորդ, №№ 90, 162, 209	Պյատիգորսկ
73.	Վելյան Նելլի	Ներքին Շենից, գրադարանային աշխատող,	Դոնի Ռոստով
74.	Վերդյան Ալվինա	Մանաշիդից, 56 տ., վաստակաշատ մանկավարժ, №№ 10, 258	Արզնի
75.	Վերդյան Արևիկ	Վերին Շեն Ներքին Շենից, 77 տ., երկարամյա գրադարանային աշխատող, № 24	Կալինինգրադի մարզ, գ.Լուժկի
76.	Վերդյան Զորիկ	Վերին Շենից, 70 տ., ինժեներ, № 5, 288-290, 433	Երևան
77.	Վերդյան Ռայա	Վերին Շենից, № 287	ԱՄՆ
78.	Քյոխյան Գայանե	Վերին Շենից, 49 տ., մանկավարժ, №№ 27-29, 38, 60	Երևան

II. Հանելուկներ

Էջ 185, № 1-34, գրի են առել Լենա Շատվերյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Արուսյակ Դանիելյանը, Ֆենյա Իվանյանը, Ծովինար Ավագյանը:

III. Առած-ասացվածքներ

Էջ 188, № 1-61, բանահավաք Ալվինա Վերդյան:

Էջ 189, № 62-125, բանահավաք Գերասիմ Վարդանյան

IV. Խաղիկներ

Էջ 192, № 1-9, բանահավաք Ծովինար Ավագյան (Ղարաչինար գյուղ), Արուսյակ Դանիելյան (Ներքին Շեն):

V. Մանկական խաղեր

Էջ 193, № 1-3 բանահավաք Ռայա Ստեփանյան:

VI. Տեղանուններ, տոհմանուններ, մականուններ (փոթեր)

1) Ղարաչինար գյուղի տեղանուններ, էջ 195, № 1-48:

2) Մանասին Շենի տոհմային անուններ, էջ 196, № 1-14:

3) Ղարաչինարի և Գաղբուրի տոհմային ածական անուններ, էջ 197, № 1-68, բանահավաք Գերասիմ Վարդանյան:

Վերին Շենի փոթերը, էջ 199, № 1-84, բանահավաք Ռայա Ստեփանյան,

էջ 200, № 1-136, բանահավաք Ջորիկ Վերդյան

Ներքին Շենի փոթերը, էջ 205, № 1-231, բանահավաք Վիկտոր Պետրոսյան (Ներքին Շեն)

էջ 213, № 1-21, տարբեր

Մանաշիղի փոթերը, էջ 214, № 1-35, բանահավաք Ալվինա Վերդյան

**ԲԱՐՔԱՌԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ**

Ա

Աբրա	- ծանրություն, որ դրվում է կշեռքին՝ հավասարակշռության համար:
Աբուռ	- պատիվ. պարկեշտություն:
Ագդուն (կտրել, դառնալ)	- կատաղած (կատաղել):
Ալաբաշ	- կովարար, լեզվանի, չար լեզու ունեցող:
Ալագյաջի	- երկրորդ երես, մաքուր ու գեղեցիկ սվաղելը:
Ալակուշկուշ	- չղջիկ: Այդպես են ասում մահ անշնորհի անձնավորությամբ:
Ալալ	- բոց, կրակի լեզվակ:
Ալուչա	- մանր մահ վնասված, հիվանդ ու խափ սալոր:
Ակը	- անիվ:
Ակմը	- ակունք:
Ադու	- դառը:
Ամագ	- վաստակ:
Այանք	- համեմունք:
Այիք	- քերություն, ամոք (մահ՝ ամոքույք):
Անգյալ	- քոչունների (հավերի) հիվանդություն:
Անգում	- ականջ:
Անքա	- անշնորհք ձևով խոշոր, մեծ:
Անքեղել	- կրակը մոխրով ծածկել, որ լրիվ չհանգչի. վառվող ածուխներ մնան:
Անձուղ	- ածուխ:
Աշ գցել	- կաշին մշակել:
Աշան	- կախելուց առաջ կալի մեջ ցաքուցքիլ արած հասկեր:
Աշկար	- բացահայտ, բացեիքաց:
Աշկը	- աչք:

Աշկը հատ գցել	- վախեցնել (առավելապես՝ հոգեբանորեն):
Աջալ	- մահ, վերջ, վախճան, ճակատագիր, կատարվելիք բան:
Աջըղու	- ի հեճուկս:
Աջի	- կծու:
Առնըել	- խակ (թթու) միրգ շատ ուտելուց հետո ատամների ցավելը հաջորդ, այլ բան ուտելու ժամանակ:
Առվահ	- զարմանք:
Առվահը վախչել	- շատ զարմանալ:
Ասպ	- հաստ թել, գորգի, կարպետի և այլ գործվածքի թելը երկտակ պահելու, միջնաթելը արանքով անցկացնելու համար:
Ավաղ	- շեն, բարեկարգ:
Ավազ	- փոխարեն:
Աքազ	- երազ:
Արխաջ	- ոչխարների գիշերելու տեղը (սովորաբար՝ փայտե ձողերով շրջափակված):
Արխային	- անհոգ, հանգիստ:
Արկանք	- երկանք:
Արշին	- երկարության չափի հին միավոր (մոտ 71 սմ):
Աքռան	- ատամնավոր գործիք՝ այգին մաքրելու և այլ նպատակով:
Բ	
Բարակ	- ակնաքիբ, աչքի կենտրոնը, թերևս՝ ակնախնձորը (վիրավորական):
Բաղա (տալ)	- զոհ (-ել):
Բազի	- որոշ:
Բազիրոտլին	- բարետես:
Բադրիյար (անել)	- դադարգյուն (անել), տարագիր (դարձնել):
Բայդուշ	- 1. գիշերահավ, բու, 2. շատ ու տհաճ բարձրաձայն խոսող, 3. հռետես, վատա-տես, չարագուշակ, 4. շատ լացող (երեխա):

Բանդ (իմի)	- 1. կցան (լինել), սկսել, 2. բակ. բանդուբան ծածկել՝ անցնելու տեղերը, մտնելու տեղերն ու ելքերը փակել:
Բասաբաս	- իրար հետևից, անընդմեջ:
Բարա	- չափարի (տե՛ս) ոտնակոխ արված, անցուղի դարձած մասը:
Բարուք	- վառող:
Բափա	- ձեռքով արտը հնձելու ժամանակ 15 - 20 չանգը (տես) միացնում էին կեմով (տես). դարձնում մեկ խուրձ՝ բափա:
Բաքմազ	- դռշար:
Բոյա	- մածուն մերելու կավե խոր աման:
Բիբոդ (բոբոդ)	- շերամ:
Բիզլիկ	- սրածայր:
Բիշի	- կլոր թխվածք, ներսում՝ քաղցր միջուկ (հես):
Բիրդան	- հանկարծ:
Բլամա	- նոր ծնած կովի առաջին կթից պատրաստած ուտելիք:
Բլմբոցի տալ	- շատ ջղայնանալ, տեղը չգտնել (թեժ կրակի նման):
Բխով	- մետաղե շղթայի նման հարմարանք՝ ձիու առջևի ոտքերն իրար կապելու համար, որպեսզի չփախչի:
Բոզ	- բաց գույնի, մոխրագույն, գունաթափված:
Բողումխեխտի (իմի), նաև՝ բողմիշ	- վշտերից, հոգսերից խեղդվել:
Բրբոդ	- շատախոս:
Բրո-բրո անել	- ուռճանալ, շատ հարստանալ:
Բուդուրմիշ լինել	- սայթաթել:
Բուս	- հետք:
Բուս մտնել	- մրցակցել:
Բուսը պահել	- հետևել (հետապնդել իմաստով)՝ սպասելով հարմար պահի:

Գ

- Գ-իլեջա - զրույց:
Գ-իքզիքյուզուն - շաբաթ օրվա երեկոն:
Գ-իքզյամուտ - շաբաթ օրը (կիրակնամուտ):
Գ-իքզյամուտ անել - լողանալ, հագուստը փոխելով հանդերձ, որը սովորաբար
կատարվում էր շաբաթ օրը:
Գ-յալաջախ - գալիք, կատարվելիք բան, սովորաբար՝
բացասական իմաստով, մասն` եկող տարի:
Գ-յառ - գոռոզ, ինքնահավան:
Գ-յափ - կատակ:
Գ-յողակ - կարճ, կարճահասակ:
Գ-յոզամա - մեծ ջվալ (100 կգ-ից ավել տարողու-
թյամբ):
Գ-յորմամիշ - չտես (հեզմական):
Գ-յուլուլ - գունդ (այլաբանորեն՝ կարկուտ): Կա մաս
գյուլդուր-գյուլդուր՝ խոշոր կաթիլներ,
զնդեր:
Գ-յուման - 1. հույս (գյումունատեղ՝ հույսի տեղ), 2.
բացի (առաջինամը գյուման՝ առաջինից
բացի):
Գ-յունաքար - մեղավոր, փոշմանած:
Գ-ուղի - ուսապարկ՝ գործվածքից:

Դ

- Դ-ալաք անել - խոզերի զուգավորվելը:
Դ-ահնա - ոռոգման ջրի բաշխման սկզբնամասը,
չափը որոշելու տեղը:
Դ-ամար - երակ:
Դ-ամյա - ամջրդի հող:
Դ-անա - մեծացած հորթ (1 տարեկանից մեծ):
Դ-անգասար (անել) - գլուխ ցավացնել, դատարկախոսել:
Դ-արթու տալ - կտրուկ ձգել, քաշել:
Դ-ըղըդարափ - տեղատարափ, քարուքանդ:
Դ-ըմըզլեղ - ցեղ:

Դըմըզլըղացու	- տեսակը պահելու համար ցեղական կենդանի:
Դըռըդուլակ	- խորդուբորդ:
Դըռըհես	- սայլապանի պատանի օգնական (դեռահաս):
Դըռի-դըռի (անել, հըլըցընել)	- շատ անհանգստություն պատճառել, չարչարել:
Դըռլիզ	- բանջարանոց, բանջարեղեն ցանած տարածք (դըռլիզատեղ):
Դիզասկանց	- հանկարծակի, անսպասելի կերպով:
Դիլակը տեղ տալ	- երազանքը կատարվել:
Դիք	- զառիվեր:
Դյան	- հացահատիկ (ադունի համար):
Դյումուզ անել	- սպասել: Դյումուզ տալ՝ ժամանակ հատկացնել:
Դոզմա (դուզմա)	- չհասած կանաչ կեռաս:
Դոլ	- խոզի բուն, երի դոլ - մատելու բարձրադիր, պատվավոր տեղ՝ որոշ հեզնական իմաստով:
Դոլամա	- թեք, շեղ:
Դոլչա	- ջրի կամ գինու կոթավոր մեծ աման:
Դոն	- զգեստ, հագուստ, շոր (դոնը փոխվել՝ զգեստափոխվել, դոն կտրել՝ զգեստը ձևել): Գործածվում է նաև այսպիսի արտահայտության մեջ՝ «մտքի դոնն ընկնել». այսինքն՝ խորասուզվել մտքերի մեջ:
Դոնգի	- անհասկացող, հիմար, շատ հիմարին երբեմն դոնգի-դրոնգի են ասում:
Դոնգուզլուղ	- ջրաղացի այն մասը, որտեղից ջուրը թափվում է պտուտանիվի վրա:
Դոջի	- այդպես են անվանում կարճահասակ ու չաղ մարդուն: Կա նաև «դոջի խիյար» (վարունգ) արտահայտություն: Ծագել է երևի հանրահայտ «Դոջ» մեքենայի անունից,

	որն արտաքուստ աղայիսի տպավորություն է քողնում:
Դովր	- ժամանակ, հին դովրին՝ հին ժամանակ:
Դովրան անել	- բարձրաձայն խոսել, գլուխ ցավացնել:
Դրբազա	- դարպաս:
Դութմա	- զայրության նույն:

Ե

Եղդիմանը կերած	- շատ խորամանկ, ճարպիկ, հնարամիտ:
Եթիմ	- որք:
Եսիր	- գերի:
Երդա տալ	- շատ ուտել (անշնորհք ձևով):
Երիմիշ անել	- գործը գլուխ բերել, առաջ տանել, տեղ հասցնել:

Զ

Ձախկլթուն	- տե՛ս զահիր:
Ձահիր	- բույն, ամեծք:
Ձահիրմար	- ցավ (հանդիմանություն, քթու խոսք, ամեծք), բուռնափոր խոսք (պրսկ.՝ «թույն» և «օձ» բառերից):
Ձաղար	- շեկ, բաց դեղնավուն (մազեր, դեմք):
Ձամբ	- ալրափողի (ջրաղացի):
Ձանգու	- ասպանդակ:
Ձարկը	- չիլինգի խաղի ժամանակ հարվածելու ամենահարմար և ուժգին ձևը:
Ձարկը ինգավ	- գործերը հեշտացան. հեշտ մասը եկավ:
Ձիզի	- մախշուն, պսպղուն (մանկական խոսքի մեջ):
Ձիհար	- տե՛ս զահիր:
Ձինանա	- շատ զգայուն, բույլ ու դյուրագգաց:
Ձկոմածուն	- զկեռից պատրաստած ուտելիք, նաև՝ քթու խոսք:
Ձոխ	- մատղաշ բույսի արտաքին շերտից մաքրված ցողուն:

Չոնգլակ	- փոքրիկ զանգ՝ օրորոցից կամ փոքրիկ կենդանու վզից կախելու համար (հորթի, գառան):
Չուզակ	- ցողունի, ճյուղի ներսի փուչ մասը:
Չումբրուխ	- բռունցք:
Է	
Էլուր	- վաղը չէ մյուս օրը:
Էհտիբար	- վստահություն:
Էհտիբարավ	- վստահելի:
Էրգան	- երկար:
Ը	
Ըխպըհար	- աղբանոց:
Ընգունակալ	- լսող («անգուն օնող»):
Ընգունուփռնոկ	- աչքալուսանք («ականջ» և «բռնել» բառերից):
Ընոթի	- անոթի:
Ըշկըհոփի	- փակած աչքերով խաղ, պահմտոցի:
Ըռզա	- սողնակ, դռան փական (մակ՝ իռզա):
Ըրկուհուքիս	- հղի (միայն կանանց կապակցությամբ՝ «երկու հոգի» բառերից):
Թ	
Թաբուք	- դագաղ:
Թաթարի	- կաշեթելից հյուսած, փայտին ամրացված հարմարանք՝ ձին քշելու համար (տե՛ս մակ «շուլտի»):
Թաթարյախնի	- հանպատրաստից, տեղնուտեղը:
Թալա	- բացատ:
Թալակ	- թակարդ:
Թախտաբիթի	- փայտոջիլ:
Թակ	- բութ թափ տալու փայտ (ինչպես մակ մման ալլ նպատակների համար):
Թակել	- ծեծել:

Թաղ	- 1. բնակավայրի մաս, 2. կամար (թաղ տված՝ կամարակապ, թաղ տված տուն), 3. բույսի տունկ:
Թայար	- կարգին վիճակ:
Թայվա	- կողմնակիցների, տոհմակիցների խումբ (բացասական իմաստով):
Թառ	- 1. երաժշտական գործիք, 2. մուգ կապույտ:
Թառանչ (քաշել)	- հառաչ(-ել):
Թափա	- բլուր:
Թափնակ	- բահի կոթին ուղղահայաց ամրացված փայտ (նաև՝ երկաթ, որին ոտքով սեղմելով՝ բահը ուժգին խրում են հողի մեջ):
Թափուր	- ձիու կամ էշի գոտի (փալանն ամրացնելու համար):
Թափուրդա	- լրիվ դատարկված, ունեզուրկ:
Թեզուճ	- քիկունք:
Թեժ	- 1. բարկ կրակ, 2. օղի թորելու ժամանակ՝ «երկրորդ քաշը», երբ ծուլը (տես) լցնում են կաթսայի մեջ, սկսում թորել, ինչպես նաև այդ թորելուց ստացված թունդ օղին:
Թեժը կյալիս ա	- սկսում է թունդ օղին գալ:
Թելատու	- գորգ, կարպետ գործելու գործիք:
Թելծամ	- տվյալ հարցի մասին որոշ գիտելիքներ ունեցող:
Թեշտ	- լայն, ոչ խոր տաշտ, սովորաբար՝ դռար եփելու համար (նաև՝ լվացքի):
Թեջան	- այծի մեծ մորթի՝ պանիր կուտակելու համար, որպեսզի հետո մորթալ պատրաստվի:
Թեփոին տալ	- 1. ուժգին ցնցումներ ունենալ, ցավ զգալ, 2. շատ ցանկանալ որևէ բան:
Թեփուկ	- խաղողի հատիկի կեղևը:
Թեփուկ անել	- խաղող ուտելու ժամանակ հատիկների կեղևը լեզվով դուրս նետել:
Թեփուռ	- փետուր:

Թըեղ	- հացահատիկի մեծ կույտ (կալում):
Թըկըկորել	- ծեծել (թեթևակի):
Թըռմասկ	- թերմածք:
Թըռվըհակ	- անտեր-անտիրական, անտեսված, արհամարհված, պատվից զրկված, ողորմելի դարձած մարդ:
Թըրըխորո	- մոխիրի մեջ կիսով չափ խորոված ձու (նաև՝ կիսով չափ՝ թերի եփած, ոչ պինդ), կա նաև թերխաշ:
Թըրըշողում	- աղմուկ, սուր վեճ («թուր» և «շողալ» բառերից), երբ միմյանց դեմ «թուր են ճոճում»:
Թիթրև անել	- թռչունների զուգավորվելը:
Թիթթեփ	- շատ բարակ, թեթև շերտ (ձյան):
Թլաշա (թալաշ)	- քարից անկանոն պոկված կտոր, նաև՝ կարտոֆիլի համաչափ կտրված կտոր՝ վառարանի վրա խորովելու համար:
Թյուլքի-աղվես	- խորամանկ, երբեմն էլ ծույլ կամ գլուխ պահող մարդուն «թյուլքի» են ասում: Հայերենը գործածում է սովորական կենդանու կապակցությամբ:
Թյունգի	- կավե կուլա առանց բռնակի:
Թոխր	- հողուրագ:
Թոշ	- այտ:
Թոռ	- անձրև:
Թոփ	- 1. գնդակ, 2. թնդանոթ, 3. փայտե ամուր շինվածք, որի վրա անիվն է հավաքվում («ըրբոթ թոփ»՝ սայլի թոփ):
Թոքսխել	- շատ խոնավանալ, ջրով ներծծվել:
Թրթնջուկ	- թթվաշ տերևներով վայրի բույս:
Թութուզի	- թթի չիր:
Թուլուկանի	- մանկական խաղ, դեմ-դիմաց մատում են երկու երեխա, ոտքերը մեկնած, փոքրիկ գնդակը մեկը դեպի մյուսը գլորում:
Թուռըթափի	- թեթև ծածկ դաշտում կամ այգում՝ անձրևից ու արևից պատսպարվելու համար:

Թուշ	- մոտ, կողմ, ուղղություն (մեր բխճին բուշումը՝ մեր այգու կողմերում):
Թուշ անել	- նշան բռնել:
Թուշին	- ղիպուկ:
Թոռնուխառնի	- թոռնի շեղջը, կրակը խառնելու գործիք:

Ժ	
Ժախաղ	- խիտ, փարթամ մոխիտներ (ժախոտ):
Ժըմահաց	- հոգեհաց:
Ժմածանք	- մթնշաղ, իրիկնաղեն:
Ժուռ	- խակ միրգ:

Ի	
Ինգլիզ	- շատ սուր, բարձրորակ (Անգլիայից ներմուծված գործիքների բարձր որակից):
Ինք կալ	- վերցրու:
Ինք օնել	- գնել:
Իշատանձ	- խոշոր, բայց ոչ այնքան համեղ տանձ:
Իշիտենբուլ	- խոշոր, կտր դամբուլ, սալոր:
Իշխառանջ	- թունավոր խոշոր որդ (բոյ-բոյ):
Իշվետ	- գետնի մեջ ամուր խրված ցից (սյուն), որին դռնակ կամ այլ բան կարող են կապել, ամրացնել:
Իստակել	- մաքրել, կոկել (հստակ դարձնել):
Իստինը ջանը նստել	- հագենալ, հանգստանալ խորապես:
Իրեքնակ	- արեգակ:
Իրիսկըհատ	- ղիմագճեր, դեմքի ընդհանուր տեսքը (տե՛ս նաև քըքըպուշ):
Իրիսարբի	- երեսի սրբիչ:

Լ	
Լալիկ	- լալ, համր:
Լախտի	- գոտիներով խաղ:

Լակ	- խոզի ուտելիք, ջրիկ:
Լադ անել	- արագացնել:
Լայազ անել	- մոտավորապես «բարեհաճել» իմաստն ունի (սլատվից ցած չհամարել):
Լանգառ	- ուղիղ, երկար ձող (սովորաբար՝ լարախաղացի համար):
Լաչ անել, լաչունա	- դիտավորյալ, ինչ-որ մեկին հակառակ (ի հեճուկս):
Լատան	- ոչ շատ հաստ, ուղիղ, երկար անտառափայտ:
Լատուռ-մուտուռ	- նշանակում է անմակարդակ տղաներ, քափթփուկ:
Լափաքա անել	- դատարկ-մատարկ խոսել:
Լափու	- ալիք:
Լափում	- մեծ տաշեղ
Լբաստրակ	- մապաստակ:
Լեթված	- երես առած:
Լեհին	- կանացի շրջագգեստ:
Լեն, լենտիկ	- լայն:
Լիհա	- հենց:
Լինջ	- լանջ (Ներքին Շենում և այլուր հայտնի են Լինջի հղի՝ լանջի ճանապարհ տեղանուններ):
Լդար	- նիհար:
Լյուռնի	- լորենի:
Լոգտիկ	- սրածայր, բրգածև, «կիլոխը լոգտիկ», այսինքն՝ գլուխը լոգտիկ, նշանակում է՝ թուրք:
Լոխ	- բոլոր, լրիվ, ամբողջը: «Լոխճին»՝ բոլորին:
Լոռը	- պանիր պատրաստելուց հետո մնացած հեղուկը:
Լոքել (լոք տալ)	- ցատկել:
Լպգտանալ ընկնել	- ստամոքսի հիվանդություն:
Լպոտել	- լպրծում դառնալ:
Լպրտոկ	- խխունջ:

Խ

Խազալ

- ծառերից թափված չոր տերևների ամբողջություն:

Խազառ

- ձեռքով տախտակ քաշելու տեղը:

Խազնա

- հարստություն, գանձ:

Խալիս

- իսկական հարմար, լրիվ համապատասխան:

Խանձիլ

- գործվածքի, շորի մոխիր, որ դնում են կտրված վերքի վրա՝ արյունահոսությունը դադարեցնելու համար:

Խանչալ

- դաշույն:

Խանչել

- հանկարծակի ուժգին վառել (մարմնի որևէ մասը):

Խալ

- 1. գորգ գործելու տափակ թել, 2. գործվածքի մակերեսի նորր, փափուկ շերտը:

Խեժը

- նոր ծնած կովի կաթից պատրաստած թույլ պանրանման ուտելիք:

Խեչակ

- փայտե հենակ:

Խզուզուն

- խոզի ճարպի հալելուց մնացած մանր, կիսաչոր կտորներ:

Խըրթ անել

- մորթել:

Խըրթիլով

- կոկորդ:

Խիզատակ

- ծոծրակ:

Խլեզնը

- մողես:

Խլեղ

- արխալուղ:

Խլոպոզ

- ձնծաղիկ:

Խմանակ

- ինչ-որ բան հիշեցնող, ինչ-որ բանի նման:

Խնձղակոթ

- խարույկի, թոնրի, օջախի՝ կիսով չափ վառված փայտ:

Խոզան

- ծղոտ:

Խոն

- փայտե աման, հացահատիկի չափման միավոր:

Խոնչա

- 1. նվերների սկուտեղ, 2. փայտե հարմարանք՝ խմորագնդերը կամ թխած հացը տեղափոխելու համար, 3. դռան մաս: Կա

այսպիսի արտահայտություն՝ հացն ուտել, խոնչան կրակին դնել, նշանակում է լինել շատ ապերախտ:

- Խորագ - ճաշ:
Խպճպու - հողամասը վարելու ձև:
Խոզնրիատ - խարազանահատ, անեծք, չար խոսք:
Խոճեպ - ուժգին քրտինք: Խոճեպը վեր ա կոխել՝ ուժգին քրտնել է:
Խոռկ - ցավ, հիվանդություն:
Խոռկը տարած - անիծված:
Խտորու - անպետք, շեղ, խտոր: «Հյաքին խտորը տինիլ»՝ սատկել:
Խրարու - առանց ցանելու աճած բույս:
Խրեկ - քիչ: «Մխրեկ»՝ մի քիչ:
Խուրդա - մանր:

Ծ

Ծալք - դարսված անկողին (ծալքատեղ՝ անկողինը պահելու տեղ):

Ծածառ - մեջտեղը ցցված մարդուն (ծառացած իմաստով) կամ փոքր երեխային՝ երբ սովորեցնում են կանգնել, այդպես են ասում:

Ծանդրը - 1. ծանր, 2. խոժոռ, մռայլ, խստահայաց (բնավորություն, «ծերքը ծանդրն ա»՝ հարվածը ցավագին է, ծանր է), 3. ծանդրը պահել՝ արժանապատվորեն պահել, 4. ծանդրած-հղիացած (սովորաբար՝ կենդանիների կապակցությամբ):

Ծապռի - նիհար ու քնձռոտ: Մորթու կտոր, որով մաքրում են ջրաղացի ալյուրը:

Ծեպ - կայծ:

Ծերք - 1. ձեռք, 2. համալիր (կոմպլեկտ)՝ հագուստ, տեղաշոր («մի ծերք շոր»):

Ծիկյը-ծկյան - ծայրը ծայրին, մի կերպ հասցրած:

Ծիվանգել - շատ նիհարել, ուժասպառ լինել:

Ծիարում	- քեթևաղիկ:
Ծլըպատակ	- ոտքերը խաչածև ծալած, տակը դրած:
Ծկընել	- արագ վազել, փախչել:
Ծխըծոռ	- աջն ու ձախը խառնած:
Ծխըկենի	- ձախիկ:
Ծկակին տալ	- անսպասելի շնչափողը փակվելու պատճառով շնչակտուր ձայներ հանել՝ համապատասխան շարժումներով:
Ծկըթել	- կոտրվել, ջարդվել:
Ծկըտոր	- փոքր վարունգ, դեռ ծաղիկը չընկած:
Ծհան	- հացը թոնրից հանելու՝ երկար կոթով հարմարանք («հացահան» բառից):
Ծմարան	- բերան (կատակով):
Ծյուծյուկնը	- ճկույթ:
Ծոխ	- ծուխ:
Ծողի	- երկար ձող (ընկույզ թափ տալու և այլ նպատակների համար):
Ծպուլի	- 1. աղոտ, թույլ լույս, 2. լույս տալու պարզունակ հարմարանք (ձեթի, նավթի):
Ծուլ	- օղի թորելու ժամանակ առաջին քաշից ստացվող թույլ ըմպելիքը:
Ծուլուլ	- մրսածի, հիվանդի քթից կախվող ջուրը («ծուլուլը կախ», ծույլ, անկարող):
Ծուլըտուլու	- 1. աքլորականչ, 2. մաքրած ընկույզի ամբողջական միջուկը:
Կ	
Կազ	- 1. շերամից ստացվող թել, 2. բույսի տեսակ:
Կակալ	- կանաչ կեղևից նոր մաքրված ընկույզ:
Կաղաղ	- 1. ընկույզի կանաչ կեղև, 2. կանաչ կեղևից դեռևս դուրս չեկած ընկույզ:
Կաղլիկ	- կաղ:
Կան	- բարձր տեղ, սարերի վերին ու երկար ձգվող մասը (Վերին Շենում հայտնի է Ծի-

	րանին կան, Ներքին Շենու՝ Էրզան կան և այլ տեղանուններ):
Կամ	- կալում հասկերը տրորելու պարզ գործիք՝ հատիկներն առանձնացնելու համար մեկ կան երկու իրար միացված ամուր փայտից տախտակներ, ազուցված քարերով:
Կանգլաշ	- հիմար, անհասկացող:
Կարկած	- դդում, մակ՝ գլուխ (արհամարհական):
Կափսը	- կազմվածք. մարմնի կառուցվածք (բնատուր գծեր):
Կեխտակ	- մաքրված ընկույզի միջուկի քառորդ մասը:
Կեղ	- վերքի չորացած մասը:
Կեմ	- հասկերի խուրձը կապելու համար արմատից պոկված երկարավուն բույս (հաճախ՝ հենց հասկ):
Կեռ	- կռացված, ծոված-հարմարանք՝ ինչ-որ բան ձգելու, հանելու համար, թոնրի կեռ՝ թխած հացը թոնրից հանելու հարմարանք:
Կեռ աղիք	- չասված խոսք, ներսում պահած, թաքցրած միտք (ասում են՝ «վորումը կեռ աղիք կա»):
Կեռիք	- 1. ատամ, 2. սխտորի մասնիկ, ինչպես մակ ընկույզի կընխտակի (տե՛ս) կեսը:
Կեսկ	- հագուստ:
Կետ	- գետ:
Կզմվըել	- բարկանալ («կզմվըցընիլ»՝ ջղայնացնել):
Կըետ	- սուր, խայթող իշամեղու:
Կըետել	- 1. կտրուկ և արագ վազել (ինչպես որ «կըետը» կծած), 2. կենդանիների, մանավանդ հորթերի արագ վազել-փախչելը՝ «կըետը» կծելու դեպքում:
Կըռըզանգի	- նիհար, մեջքից կռացած մարդ (վիրավորական):
Կիների	- հասարակ, կոշտ թելի տեսակ:
Կիճախաշ	- ճաշ՝ լոբուց, ձավարից, եգիպտացորենից:

Կլախա	- անբան, անմիտ, որոշ իմաստով՝ բերան- բաց:
Կլապան	- փայտի հեմակներով, հողե շինություն՝ երեք կողմը փակ, մեկը բաց (սրահ, չորա- նոց):
Կլափ	- բերան (անշնորհք, վիրավորական):
Կծըխրել	- զայրանալ, վրդովվել:
Կծոխր	- թքվաշ տերևներով փշոտ թփեր, գարնանը մատղաշ տերևներն ուտում են:
Կճընայ	- 1. կեղև (ձվի), 2. փոքրիկ կտոր:
Կճիպ	- հավի ետնամասի ճարպոտ տեղը:
Կճպել	- ինչ-որ բանից մի քիչ պոկել:
Կյազ	- գազ, կանգուն, երկարության չափի հին միավոր (38 - 46 սմ):
Կյափ	- ազդր:
Կյուշ	- կավե խոր մեծ ափսե: «Կյուշը կախ արած»՝ պոշկած, լացակումած, խեղճա- ցած:
Կոթոռոն	- կերած մրգի վերջում մնացած միջուկը, կոթի ու կորիզների մասը:
Կոլտան	- գութանի մածը խարազանին ամրացնելու կարճ շղթա:
Կոնչոլ	- ճաշատեսակ (տե՛ս մեր «Օջախի գրքի» Ա. հատորի համապատասխան բաժնում):
Կոշտ	- 1. կոշտ, 2. մոտ, մոտիկ (կշտին), 3. կուշտ:
Կռաժմունք	- չար խոսքեր, անեծք:
Կռաճիլ	- ոտքերի ջիլեր:
Կռեչան	- երկար փայտե ձող, ծայրը՝ կեռ, ծառի կամ մոշու և այլ ճյուղեր մոտեցնելու համար («կեռ» բառից):
Կռոճ	- կոշտ գունդ (հողի, շաքարի և այլն):
Կռտել	- ամորձատել:
Կտենի	- թոնրի պատից կրակի մեջ ընկած, ոչ լավ թխված, տեսքը կորցրած հաց:

Կրկնենի	- քիվածքի տեսակ (տե՛ս մեր «Օջախի գրքի» Ա. հատորի համապատասխան բաժնում):
Կրճահարել	- նսեմացնել:
Կրտուպի	- կարտոֆիլ:
Կուխկըհանցի	- մի կողքի վրա:
Կուճուր	- փոքր:
Կուփիչ	- քելատվի բազմատամ ու ծանր տեսակը. որով թակում (ծեծում). հարթեցնում են գորգի թելերը:
Հ	
Հալ	- 1. վիճակ, 2. հալ կյալ՝ բարձրանալ («հալ տալ»՝ բարձրացնել), 3. գնդակ, 4. «հալը տարած»՝ մեռած (անեծք):
Հալավ	- շապիկ:
Հալիքոշի	- փալասից սարքած գնդակով խաղ:
Հաղուղ	- խաղող:
Հանգ	- հնար, եղանակ, ձև: «Հանգուհունգ անել»՝ մի հնար գտնել: «Մինչև մի հանգուհունգը»՝ մինչև որոշ ժամանակ:
Հանգեր (անել)	- նմանակել, ինչ-որ մեկի նման խոսել, ձայներ հանել կամ նրա նման շարժումներ կատարել:
Հաշան	- ձկան տեսակ:
Հասրաթ	- կարոտ:
Հավասկը	- կարագ ստանալու համար կուտակված սերուցքը. մասն մածունը՝ խնոցի հարելու նպատակով (իսկ ամանը՝ «հըվըսկաման»): Կարծում ենք՝ հավաքել բայի կրկնակի հոգնակի ձևն է (հավաքածք):
Հարաքյաթ անել	- շտապել, արագացնել:
Հարզակ	- արձակ, լայնուտ, ազատ (հագուստ և այլն):
Հարիշտա	- արիշտա:
Հարու տալ	- պոզահարել:

Հափուտ	- բուտ:
Հերի	- («հիրաքաք») կենդանու առջևի ոտքի միսը:
Հընդի	- կիսահասուն հասկ, ինչպես նաև այդ հասկը խորովելուց հետո ուտելու համար մաքրված, առանձնացված հատիկները:
Հըդի (հըդեց)	- փողոց, ճանապարհ (ուղի բառից): Հղի կտրել՝ խոսք առնելու (նշանելու) արարողություն: «Հըդըցա իլած» կամ «հըդըցա տյուս եկած»՝ ճանապարհից դուրս եկած (անառակ):
Հըդլակ	- պարանի ծայրին արված օղակ, որի միջով սովորաբար անց են կացնում պարանի մյուս ծայրը:
Հընծըկատար	- աղջիկ (հեզնական), գլուխը անիծով լիքը:
Հընցըլոկ	- չիլինգի խաղալու ժամանակ փայտի կտորի («չիլինգի») դուրս գալը նշված սահմանից կամ սխալ կատարված հարվածը:
Հընցընել	- 1. հանգչել (կրակը), 2. անցնել:
Հըռածած	- սպաս, քանապուր:
Հըրակաշ	- աշխատանքները միասին, կիսովի կատարող:
Հիլորել	- ոլորել:
Հիլորչան	- փայտի կտոր, որով թույլ կապված պարանը պտտում, ամրացնում են:
Հիլվիհալ	- շատ փափուկ, բերանի մեջ հալվող համեղ միրգ:
Հինգեր	- ընկեր:
Հինդի	- հնդկահավ:
Հիրաքաք	- թիակ:
Հդոկ	- թիզ:
Հդոդ	- ուղեղ:
Հյուլուլա	- խախտուտ, մի կերպ հարմարեցված, անկայուն:

Հյուստրուտ	- անհեթեթ, անմիտ բաներ ասող, անտեղի մեջ ընկնող:
Հոբառ	- շատախոս:
Հոռ անել	- ուրբելով ճկել, մակ՝ հաղթել:
Հոռ-հոռ անել	- չարչարվել:
Հոռի	- ուռնի:
Հովուր	- 1. կրակից կամ այլ տեղից եկող տաք օդ («հովուր-հովուր անել»՝ ուժեղ տաքություն արձակել), 2. սլահ, կարճ ժամանակ («մի հովուր»):
Հորտում-հորտում անել	- ուժգին իրար տալ, շատ վարարած գետի ալիքներն իրար
տալը:	
Հպարապ	- սպարապ, անգործ:
Հռածած	- տե՛ս հրռածած:
Հռլա գալ	- երեխաների չարաճճի աշխուժություն (եռ գալ):
Հովըկետ	- բուն նպատակը, որը հստակ չի ասվում (հեռվից կեռումնեռով է ակնարկվում):
Հրետին	- իսկույն:
Հրիշտըրակ	- հոգեառ հրեշտակ, չարի խորհրդանիշ, ատելի անձնավորություն: (Ի հակադրություն հրեշտակ ձևի, որն, ընդհակառակը, բարու և գեղեցկության խորհրդանիշն է):
Հրշտատալ	- հորանջել:
Հրսնընքահար	- հարսանիքի մեջ ներգրավված, զբաղված:
Հրսնընքավոր	- հարսանքին մասնակից, հրավիրված, հարսնաքավոր:
Հունար	- ընդունակություն, հնարավորություն, խելք, ճարտարություն:
Հուրթակապ	- սպարանը կապելու այնպիսի ձև, որով հանգույցը չի շարժվում, չի խեղդի կապված կենդանուն (հորթին) և այլն:
Հուրթատել	- հորթը վիժել:

Հևալ-հևալ

- ծանր շնչել:

Ղ

Ղաբ (բարձի)

- մեծ տոսյրակ բմբուլի համար:

Ղաբա

- դժվարին, խրթին, չհարմարվող:

Ղաբաղ

- անայդ կենդանի (կով, այծ և այլն):

Ղաբլամա

- կաթ, մածուն պահելու աման:

Ղաղը

- հարգ, պատիվ, արժեք:

Ղաղրաղաջի

- փոխաբերական իմաստով ծառ, որն իբր տնկվում է մեկի հանդեպ հարգանք ցույց տալու համար. նրա լավության դիմաց:

Ղաթ

- արանք:

Ղալ

- անասունները պահելու տեղ: Ղալ անել՝ անասունները մի փակ տեղ հավաքել:

Ղալա

- բանտ:

Ղալաթ

- անշնորհքություն, անկարգություն:

Ղալամ

- զրչածայր: Կա նաև կանացի անուն:

Ղամա

- դաշույն:

Ղամիշ

- եղեգն:

Ղամիշ լինել

- հասկանալ:

Ղամշի

- տե՛ս շոլտի:

Ղամշկոտ

- եղեգնուտ:

Ղայա

- ժայռ:

Ղային

- ամուր:

Ղառի

- քրքուխի:

Ղարախան

- կաթով սուրճ եփելու մեծ անոթ:

Ղարդու

- եղեգ:

Ղդդդա

- արգելք:

Ղե տալ

- կանչել:

Ղենգ

- եղունգ:

Ղբեմիշ (անել)

- չափառալ (չխնայելու իմաստով):

Ղբյամաթ

- շատ ցուրտ, սառնամանիք:

Ղբրթ (անել)

- կտրուկ, արագ կտրել:

Ղժեմ

- մանր:

Ղժրբտակել

- շատ արագ վազել:

Դիդի (տալ, ածել)	- խուտուտ (տալ, ածել):
Դլավ տալ	- ծխախոտի ծուխը ներս քաշել: Նաև՝ դանակը, կացինը կամ այլ գործիք սրելու վերջին պահերը, երբ ավելի խնամքով է կատարվում սրելը:
Դղըբողի	- շերեփուկ:
Դղըր	- շատ ճարպիկ:
Դվընեկ	- փոքր կաթսա:
Դնքրդա	- սանձ:
Դոբի	- ձորակ:
Դոթուտ	- քոսոտ: Ասում են՝ «դոթուտ էծը աղբյուրի ակնից է ջուր խմում»:
Դոլ	- կողմ:
Դոչ	- խոյ:
Դուլ	- հեշտ վառվող նյութ (հիմնականում չիբուխի, նաև այլ կրակ վառելու համար):
Դորք	- ճիշտ, ուղիղ:
Դոենջ	- մանր քարեր:
Դոփել	- ուժգին քորել:
Դսրաղ	- չծնած ձի (նաև՝ դըսըր):
Դրալթու	- ուրվական:
Դրար	- չափ, համամասնություն: Գետը երկու մասի բաժանելու, ջուրը որոշ համամասնությամբ բաշխելու տեղը նույնպես կոչվում է «դրար»: «Աշկու դրարավ»՝ աչքաչափով:
Դոտի-դոտի	- ներքին անհանգստություն:
Դոտորմիշ լինել	- կապը կտրել, անամոք, անսանձ դառնալ:
Դույ	- սագի բմբուլ (բարձի համար):
Դոտունթու	- ինչ-որ բանի տակի մանր-մունր մնացորդը:
Դուրդ	- ագահ, շատակեր:
Դուփ	- ձագար:
Դփուլ	- կողպեք:

ճ

Ճաք

- զարուց կամ այլ հացահատիկներից պատրաստած կոշտ, դժվարամարս, ցածրարժեք հաց:

Ճգտի (տալ)

- մանկական խաղ՝ մանր քարերով:

Ճրզող (տյուս կյալ) - ուժասպառ լինել, շատ չարչարվել:

Ճըլլալգտան

- ջուր ցայտելու փոքրիկ մխոց, որ պատրաստում են հատկապես զարնանը ծառի (սովորաբար՝ ուռենու) ճյուղի կտորից՝ կեղևն առանձնացնելով:

Ճըխըայյուրք անել - ուժգին ծեծել («ցախ» և «բուրդ» բառերից՝ նկատի է առնվում

բուրդ չփխելը):

Ճիլ

- 1. ճահճուտում աճող թելանման բույս, 2. ճահճուտ (ճիլկոտ), 3. ճարպիկ:

Ճիրաման

- ջրի աման:

Ճինգոտա

- մաշված, խարխալված իր, գործիք:

Ճինթոըմ

- պատառոտված, հին, քրքրված հագուստներով:

Ճիրիալիալիզ

- աչքի մոտ, կոպի վրա առաջացող հիվանդություն, ուռուցք:

Ճլագտրիկ

- նիհարոտ, փոքրամարմին:

Ճլըվըգտ (տալ)

- ջիջիլ գցել, պարծենալով ցուցադրել:

Ճոդայոր

- ընկույզ:

Ճոք

- 1. կտորեղենի, գործվածքի ամբողջական փաթեթ, 2. թոնրի հացի կեսը: «Ճոք» անել՝ հացը կիսել ձեռքով, «ճոքը» կտրել՝ հարսնացուի համար զգեստի կտոր գնել, «ճոքը ծեղել»՝ հարսնացուի համար գնված կտորը ձևել՝ զգեստի համար: «Ճոքոնել»՝ անշնորհք կտրել: «Ղաթը ճոքոնել»՝ ժամանակ գտնել:

Ճոխտ(-ակ)

- զույգ:

Ճոտու ճիրաման

- շատ փոքրամարմին աղջիկ, հարս, կին (փոխաբերական իմաստով):

Ճպատ

- ճիպոտ:

Ճռեխել (ճռեխած) - պայծառ լույսերով ողողված. լցված (աստղերը «ճռեխած»), մաև՝ պտուղներով ծանրաբեռնված (թերևս՝ «ճառագել» բառից):

Ճուրուպատառ (եղած) - անեծք՝ կիսված, կտոր-կտոր (եղած):

Ճուխտըլափակ - զույգ ոտքերով վազելու և ցատկելու ձև:

Ճուխտոնխտոնտովել - զույգ-զույգ դառնալ, բազմանալ (օրինանք):

Ճուկըմայա - ուրիշների հետ չչվվող, չխառնվող, առանձին գործող («ճուկը», «ջուկ»՝ առանձին, և «մայա»՝ սաղմ, թթխմոր, խմորիչ բառերից):

Ճուտատըել - ճուտը վիժել:

Մ

Մագալ - անասունների, ոչխարների կեսօրվա հանգիստը (մակադելը): Մրանից՝ «միգիլատել»:

Մաքահ - ընտիր, եզակի ապրանք՝ հեզմական իմաստով:

Մալանչ - զգած բրդի մեկ բուռը:

Մալում (անել) - նշան (անել). նշմարել:

Մայա - սաղմ, թթխմոր, խմորիչ, պանիր պատրաստելու նյութ և այլն: Նաև՝ որևէ գործարքի միջնորդը, պատճառը (բացասական իմաստով):

Մայասըզ - հալից ընկած, թուլակազմ:

Մանդուռ - մատուռ:

Մաշա - վառարանի մեջ կրակը կարգավորելու, ածուխները բռնելու մետաղե գործիք:

Մաշալլա - ջահ, որ օգտագործվում էր հարսանիքների ժամանակ գիշերը փողոցը, բակը լուսավորելու նպատակով:

Մաշվել - նիհարել:

Մասանորիա (սարքել) - երկար-բարակ պատմություն (անել):

Մեկալ (օրը) - երեկ չէ անցած օրը: Իսկ դրանից առաջվանը՝ «մեկալ» օրը:

Մեյիլ	- ուշադրություն:
Մզոված	- նզոված:
Մըելավ (կենալ) - վստահ (լինել), հույս ունենալ:	
Մըհրամա	- սրբիչ:
Մքնըծուռել	- ոչ լրիվ մքնել:
Միհաջառ	- ճաղաշարք սրահի, գերեզմանի (ձևավորած տախտակից կամ մետաղից):
Միհատտալ	- սլարապ, անգործ (նաև՝ սպասողական վիճակ):
Միճիճել	- խճճել (թելը, գործերը և այլն):
Միեկ	- հիմա:
Միեխտ կենալ	- զգուշանալ:
Միմոդ	- ցեց:
Մշկածյու	- փափուկ կեղևով ձու, որն ընկնում է՝ հավի մեջքին խփելու պատճառով:
Մոզի	- գոմշի հորթ:
Մոթալ	-այծի մորթուց պատրաստված հարմարանք՝ մեջը պանիր պահելու համար:
Մոլլադուլաղ	- տվյալ գործից (արհեստից) որոշ չափով տեղեկություն, ընդունակություն ունեցող (հեզնական):
Մոքտաջ	- խիստ կարիք, անհրաժեշտություն:
Մոեխ	- մառախուղ, մութ:
Մրկըել	- շորը քեթևակի այրել, ոչ վառել, միայն այրելու հետքի երևալը:
Մրճեղ	- 1. քանձր մութ, 2. ծխի նստվածք: Կա այսպիսի արտահայտություն՝ «մրճեղը կոխել ա»:
Մուկլումանդիք	- սարդոստայն:
Յ	
Յալ	- բլուր, բարձունք:
Յախա	- օձիք:
Յախայեթթըղ	- թափթփված, անփույթ, նաև՝ ունեզուրկ:

Յախնի	- խաշած լոբի (հատիկ), վրան՝ կտրտած սոխ:
Յաղի	- քշնամի, չար արարած, «յաղին տարած»՝ օրինազանց, ասպտամբ (անեծք):
Յան	- գործելու դազգահի կողքի փայտերը, որոնց ծայրերը մտցվում են հողի մեջ: Նաև՝ ինքնաշեն սահնակի կողքի հենափայտերը:
Յարջամի	- ոչ շատ խոր պղնձի աման:
Յափալաղ	- բու:
Յղի	- հղի (միայն կենդանիների վերաբերյալ):
Յոխկոտ	- խարխուլ մարմին ունեցող, խիստ անկարող ու հիվանդոտ (ոչ կուռ, ոչ ծիգ):
Յորդա	- ձիու արագ վազելու ձև, մաս՝ այդպես վազող ձի (եշ):
Յորդան	- վերմակ:
Յորդան-դոշակ	- տեղաշոր:
Յուղունմբոռ	- հացի կտորի մեջ յուղ դրած: Յուղը հացի վրա դրված՝ «յըղըպատառ»:
Յուղունիկ	- աղավնի:
Ն	
Նամ	- խոնավ («նամըշլըղ»՝ խոնավ եղանակ, խոնավ տեղանք): «Նամ տեղ մստող չէ»՝ միամիտ չէ:
Նաշար	- մեղավոր:
Նաչար	- խեղճ:
Նառ	- քարավանի առջևի ուղտը, շատ լավ տեսք ունեցող:
Նասար	- հավատամք, սկզբունք:
Նարա (տալ)	- շատ ցանկանալ, մաս՝ մղկտալ: Նաև՝ արագ, շնչակտուր քայլել:
Նետ	- վեստանի (գործելու դազգահ) վերևի ու ներքևի կտր փայտերը:
Նըհախ	- իգուր (նհախ տեղը):
Նըհետ անել	- ծածկել:

Նըռետ կյալ	- հետ շրջվել, միտքը փոխել:
Նի ածել	- լցնել, անշնորհք ձևով խմել (լակել):
Նի կըենալ	- վառվել:
Նի կյալ	- դիպչել:
Նի կցընել	- վառել:
Նի մտնել	- ներս մտնել:
Նի պրծնել	- ներս խցկվել:
Նի տալ	- 1. ներս տալ, 2. ձեռք տալ:
Նի քաղել	- շարել՝ անցկացնելով ինչ-որ բանի միջով:
Նի քիցիլ	- ներս գցել:
Նիգարան	- անհանգիստ կարոտ՝ տեղեկություն չունենալուց:
Նիսյա	- ապառիկ:
Նիստա տալ	- միացնել, կպցնել:
Նոբաթ	- հերթ (որպես կանոն՝ կապված ջրաղացի հետ):

Շ

Շախ գնալ	- շերամի որդերը բուռն աճի ժամանակ սկսում են անչափ շատ, առանց կշտանալու անվերջ թթենու մատղաշ տերևներ ուտել: Դա համարվում է «շախ գնալ»: Երբ մեկը սեղանից անկուշտ կերպով է օգտվում, ասում են՝ «շախ ա գնում»:
Շաղինք	- սրտին հովություն բերող շաղ (ցող):
Շամ	- սպիտակ, հաստ մոմ՝ եկեղեցում, ուխտավայրում կամ այլ տեղ վառելու համար:
Շավառ	- սաստիկ ծաղր, հեզմանք:
Շըտարար	- շատ խոշոր անցքերով մաղ:
Շիր տալ	- կավե ամանեղենի ջնարակելը (հատկապես ներսից):
Շիրա	- քաղցր հյութ, մաճառ:
Շիրմիշեղ	- փաթաթվող բույս:
Շլապկա	- գլխարկ:
Շխկարա (տալ)	- բուռն ծիծաղ:

Շհադ(տ)	- 1. վկա, 2. ջրադացի վարձը՝ հացահատիկն աղալու դիմաց:
Շմբալոթ	- շագանակ:
Շնթոկել	- անշնորհք ձևով պառկած քնել:
Շոլտի	- կենդանիներին բշեղու հարմարանք՝ կաշեքելից գործած, ամրացված փայտին: Կա մակ դամշի՝ միայն ձիու համար, ավելի խնամքով պատրաստած ու ձևավորված (մտրակ): Իսկ ավելի կարճը կոչվում է քաթարի:
Շոխսկ (շողք)	- ստվեր:
Շոխսո	- քոնրի հացի տեսակ (բարակավուն, մի քիչ մեծ): Հաճախ քիտում են ու բաժանում որպես մատաղ:
Շոռ ածել	- ման տալ:
Շոռ կյալ	- 1. ման գալ, 2. փնտրել:
Շոռ տալ	- շրջել:
Շոռ օնիլ	- ծածկվել:
Շոռունովի	- վերնագգեստ, վրան գցվող հագուստ (վերարկու, պիջակ, քիկնոց և նման բաներ):
Շորվա	- ջրալի ճաշ, «շորվա ա անում»՝ լուծում է, փոխաբերական իմաստով՝ վախենում է: Նշանակում է մակ՝ անհամ, ջրալի:
Շալտել	- նետել:
Շոավանք	- քեթևակի, քույլ լույս:
Շտափիլ	- ուշաքափվել:
Շուվվի	- շվի:
Շուրդուբանի (տալ)	- պարանից սարքած կախովի ճոճանակի վրա պտտվելը:
Շփեփել	- խառնվել, իրեն կորցնել:
Շքեռ	- ոտնաքայլ (չափ):
Շքոամեց	- ոտքերի արանքը:

Չ

Չաբալաշմիշ (կյալ)	- տանջանք, չարչարանք (կրել):
Չաթու	- քելից պատրաստած պարան:
Չաթությասան	- կապը կտրած:
Չալըխ կյալ	- ջանք թափել, չարչարվել («չալըխ»՝ ճարպիկ, համարձակ):
Չախկալմագ	- մանկական խաղ, եթե խաղացողներից մեկը նկատի, որ խաղընկերոջ ձեռքը գրպանի մեջ է ու հասցնի այդ պահին խփել նրա՝ գրպանում դրված ձեռքին, կշահի գրպանի պարունակությունը:
Չախկաչուխկ (անել)	- թեթևակի զբաղմունք, որոշ թեթև գործեր (անել):
Չանաղ	- խոշոր ափսե:
Չանգ	- արտը ձեռքով հնծելու ժամանակ հնծված մեկ բուռ հասկը:
Չանքա	- մեծ բերան, նաև՝ հասարակ տոպրակ, պայուսակ:
Չանթել	- ճանկը գցել, խլել:
Չարգով	- սայլին, գութանին լրացուցիչ լծված գույգ լծկան:
Չարգովչի	- չարգովը քշող (սայլապանի օգնական):
Չարդախ	- խաղողի վազերի թարմա, նաև փայտե թեթև ծածկ (պարսկ.):
Չարխ	- դանակ և այլն սրելու հարմարանք՝ պտտվող մեծ անիվ:
Չարխել	- լցնել մինչև վերջ:
Չարխի դազան	- մեծ կաթսա (նկատի ունենալով՝ լիքը լցված):
Չարչանքա	- չարածնի:
Չափար	- ծառի ճյուղերից հյուսված կամ ցախի կապուկներով պատրաստած ցանկապատ:
Չափում	- մեծ ուլ:
Չղըլհաղի	- մերկանդամ:

Չեթվեռ	- 3 լիտրանոց ապակե անոթ (գինու, օղու և այլնի համար), ռուս. «չետվերտ» բառից՝ 12 լ -ի քառորդը:
Չիգլագին տալ	- քայլելիս ոտքին մի բան է դիպչում, քիչ է մնում ընկնի:
Չիգրիգի (չիբրիբի)	- մագերը շաղ տված (այդպիսի աղջիկ երեխա):
Չիդարել	- պարանով էշի առջևի ոտքերը կապել իրարից, որպեսզի չփախչի:
Չիլինգի	- մանկական խաղ՝ ձեռնափայտով տարբեր ձևերով խփում են փոքրիկ փայտի կտորին, որը չիլինգ է կոչվում:
Չիլփի	- չոփ:
Չիմ	- արտը ձեռքով հնձելու ատամնավոր գործիք՝ մանգաղանման:
Չինգիլ	- քարքարոտ տեղ:
Չինդիլ	- աննպատակ ման գալ:
Չինը քամի ա ընկել	- հոգնել է, ձանձրացել է:
Չլա	- ձկների կուտակում, վտառ:
Չլղբբորիկ	- չալալտորիկ:
Չլմփաղ	- անփույթ, անճարակ, քափքփված:
Չխկըրը կյալ	- քեթև շարժում անել, մի փոքր բան անել, գործածվում է ժխտական ձևով՝ «կարալ չես չխկըրը կյաս»:
Չխկլղանի	- մանկական խաղ՝ խաղում են մեկ ոտքով ցատկոտելով գետնին գծած վանդակների վրայով:
Չխկլղանի (տալ)	- մեկ ոտքով ցատկոտելով գնալ, կա մաս այդպիսի խաղ:
Չխկլի տալ	- կաղալ:
Չխմազ	- անհիմաստ, անմիտ, դատարկամիտ:
Չմբուլ	- մի փունջ, բուռ (խոտ, հասկ, մագ):
Չմքալ	- շների զուգավորվելը:
Չովուշ	- կատարածու, զգիր, մա, ով փողոցներում շրջելով բարձրաձայն հայտարարում,

	բնակչությանը տեղյակ է պահում ինչ-որ լուր:
Չորուկ	- 1. ծառերի վրա չորացած ճյուղեր, 2. քաղի վրա չորացած հասուն լոբի:
Չունչլուխ	- (սուջուխ) պատրաստվում է հետևյալ կերպ, քելի վրա շարված ընկույզի միջուկի մասերը, երբեմն մահ մեկընդմեջ չամիչ, կամ ալյ չիր քելի վրա շարելով, շարանը խաղողի հյութից ու ալյուրից պատրաստված շվոթի մեջ քաթախելով, չորացնելով:
Չուչ	- մանկական հագուստ:
Պ	
Պապ	- 1. հոր կամ մոր հայրը, 2. սրբություն, ուխտավայր: Այս երկրորդ իմաստը դժվարանում ենք ստույգ մեկնաբանել, քերևս պապը գիտակցվում է որպես հզոր և արդար հովանավոր, ասում են՝ գնանք, օրինակ՝ «Տերունց պապին տակը», այսինքն՝ ուխտատեղը, սրբավայրը:
Պաց-պիցիհար	- լրիվ բաց (անուշադրության մատնված իմաստով):
Պենձիկ	- ջարդված կավե ամանի կտոր, որը շարունակում են օգտագործել տնտեսության մեջ. դրվում է բակում, մեջը ջուր լցվում հավերի համար, դրանով մահ կրակ են տեղափոխում:
Պեռը	- 1. իշամեղու, 2. բեռ, մահ՝ չափի միավոր («մի իշաբեռ խոտ»):
Պերքի	- պտղատու (ծառ), հղի (կին):
Պընժ	- կայծ:
Պըլըհովդուտ	- խենթ, տարօրինակ (ոչ շատ բացասական երանգով):
Պիլոր	- կլոր:
Պինակալ	- բնկալ:

Պինջ	- սրությունը կորցրած, բութ գործիք:
Պիրիկիզի (տալ)	- զգվոտոց, իրար քրքրել («բուրդ գգել» բառերից):
Պիրինըսատառ	- բերանի սլատառ, մակ փոքր չափ է նշանակում:
Պծըկրակ	- շատ սուր, եռանդուն, չարածնի («պլենծ» և «կրակ» բառերից):
Պհեզ	- պարտեզ, այգի: Գործածական է հիմնականում Գյուլիստանում ու Վերին Շենում:
Պղոճ	- բլոճ (միջատ):
Պյադարճ	- բադարջ:
Պյութնը	- բութ մատը:
Պյուլ	- խմորագունդ:
Պոզ	- եղջյուր:
Պոժոժ	- բոժոժ, մակ՝ ուղեղ, հասկացողություն:
Պռատ	- քերի, մի մասը պակաս:
Պռըշկել	- տխրել, հոնքերը կախել, սլոշը կախել:
Պռոթոլ	- վայրի հացահատիկային բույս, վարսակ (մշակվում էր ձիերի կերակրման համար):
Պռոկ	- բողբոջ:
Պռտըյեր	- մեջքի վրա սլառված (անհոգ, մակ՝ անշնորհք, պորտը վեր):
Պռուշ-պռուշ անել	- հեկեկալուն մախորդող տխուր վիճակը:
Պտկան ծաղկած	- ինքնագոհ, քմահաճություններ ունեցող, չմահավան:
Պտղունց	- մատներով վերցվող (աղ, ալյուր և այլն), փոքր չափ:
Պտոկ	- ծայր:
Պտրիան	- պատի մեջ թողնված տեղ, որմնախորշ՝ նկուղներում, գոմերում, որոշ առարկաներ դնելու համար:
Պրանըել	- շրջել, պառկեցնել:
Պրիշակ	- ավերակ:

Ջ	
Ջաբառ	- սպի (նաև՝ սպի ունեցող):
Ջալա	- մետաղալարե հարմարանք ոչ մեծ կեն- դանիներ որսալու համար:
Ջաղլաղ	- տնկի:
Ջամ	- պղնձե խոր ավիսե, աման (տե՛ս նաև «յարջամի»):
Ջարմա	- վնաս, գլխին մնացած. բեռ դարձած բան:
Ջեջ	- ճգնած խաղողի գինեխյութը քամելուց հետո մնացած զանգվածը, որից սովորա- բար օղի են թորում (նաև՝ զանազան մրգե- րից հատուկ կուտակած զանգվածը՝ օղի թորելու համար):
Ջեջիլախտի	- լախտի խաղի տեսակ՝ շրջանագծով:
Ջինջիլ	- շոթա:
Ջլավ	- կապ (ծիռ): «Ջլավ տալ»՝ կապել որոշակի տեղում՝ արածացնելու համար: Ասում են՝ «ջլավը փոխել»:
Ջողուր	- սլատասխան, հաճախ՝ հակաճառելու, բացասական իմաստով:
Ջուր	- գրպան:
Ջուրգիր	- գրպանահատ:
Ջուռա	- տեսակ («ջուռա-ջուռա»՝ տեսակ-տեսակ): Սովորաբար վիրավորական իմաստով է գործածվում («ջուռադ մզոված»՝ տեսակդ նզովվի):
Ջուվար	- 1. ոմն. մարդ (անորոշ). 2. ջվար. ջուր բաշխող, ջրի հերթը կանոնավորող՝ ոռոգ- ման համար:
Ռ	
Ռադ իլ	- կորիք:
Ռադ ինիլ	- կորչել (արհամարհական):
Ռազի	- համաձայն:

Ռ-ընշմունք	- բորբոսնել: «Թեգունքդ որնշմի» - անեծք (մահ):
Ռ-ըխընկեր	- շատակեր, մահ՝ անշնորհք խոսող:
Ռ-ընկելք քաշել	- փաստափուսեն քաշել, հեռանալ:
Ռ-ուզի	- ապրուստ, հաջողություն, եկամուտ:
Ս	
Սադանա	- սատանա, մահ՝ կեղծավոր խոսող:
Սազ	- 1. երաժշտական գործիք. 2. լարված, պատրաստ վիճակ:
Սազ անել	- հարմարեցնել:
Սալբա	- կոպիտ մահակ, փայտի կտոր, սովորաբար՝ ինչ-որ բանի հարվածելու (ծեծելու) համար: Սալբա տալ՝ նետել (կոպիտ, անշնորհք ձևով):
Սալբաթակ	- սալբայով ծեծ (հարվածներ):
Սահլիկ	- անմիտ, թեթևտլիկ, դատարկախոս, դատարկամիտ:
Սադուն	- ծամոն:
Սայա	- չգրված, մաքուր (էջ, թուղթ), պարսկերեն՝ սլարգ, անգարդ:
Սանդ	- ընկույզի միջուկ, սխտոր և այլն ծեծելու փայտե խոր աման:
Սանդերք	- բուրդ գգելու գործիք:
Սանդրը	- սանր:
Սասնա	- քաղցրալեզու, հաճոյախոս երեխա (հագվադեպ է գործածվում մեծահասակների վերաբերյալ):
Սատուր	- փայտի հաստ կտոր, կոճղ՝ միս կտրելու համար, միս կտրելու խոշոր դանակ:
Սարի	- ցից, ձող՝ խաղողի վազը, լոբին, պոմիդորը վրան բարձրացնելու համար:
Սարսաղ	- տաքօրինակ, անմիտ:
Սարփա	- ձեռնառու, շահերի համընկնող:
Սարփադար	- իր շահը լավ գիտակցող և պաշտպանող:

Սարփուճ	- օղի թորելու սարքի կափարիչը:
Սեղ	- հորդ անձրև, հեղեղ:
Սըեզը	- 1. պտուղ (ալոճ), 2. ծառերի կեղևի վրա հայտնվող խեժի գնդիկ:
Սիլա (անել)	- լիքը (լցնել)՝ հեղուկի մասին:
Սիլիտարանք	- սելը քշած, տարած, տիղմ և այլ բաներ:
Սիլլա	- ապտակ:
Սիյասերտ	- սիրտը մաքուր. պարզ:
Սլեթա	- անեթես, չարաճճի:
Սլկըհըել	- սալթաթել (սահելով), նաև՝ սահել:
Սլյուկնը	- տզրուկ:
Սխտուրութակի	- սխտոր ծեծելու փայտ:
Սկանալ	- 1. լսել, 2. հասկանալ:
Սհաթ	- ժամ, նաև՝ ժամացույց:
Սղուլիկ	- ողորկ, սալթաթուն մակերես ունեցող:
Սողան	- տխ:
Սոնգ	- ժառանգ, մարդ արարած՝ բացասական երանգով:
Սոնգսուզ	- անժառանգ:
Սոռ-սոռ	- զնդիկներով (յուղ):
Սովդա	- հաշվարկ, սակարկություն, խորհրդակցություն:
Սովդա անել	- խորհրդակցել, սակարկել, քննարկել:
Սովդաքյար	- առևտրական:
Սոր	- 1. սուր (կտրող), 2. աչքաբաց, ճարպիկ, 3. այսօր:
Սվըմիճիճ	- տհաճորեն խճճված. չսիրված բան՝ սևը սովորաբար մահվան իմաստ է պարունակում:
Սրըքյաթա	- գորգագործին տրվող նվերը:
Սրթսրթիլիկ	- չտես, երեսը պինդ (վիրավորական), պնդե-րես:
Սուլդի	- ժիր, չարաճճի, աշխույժ (միայն մանուկ-ների վերաբերյալ):

Սուրը փխս - սուրը սլակաս, փատ նշան ունեցող, այն, ինչից փատ բան է գուշակվում (սուր չունեցող՝ թույլ, անգոր):

Սուրսուզ (սուրսուղ) - խեղճ, անգոր, անընդհատ մի բան խնդրող, մուրող:

Սուփրա - 1. սփռոց, 2. բացված սեղան («սուփրա գցել»):

Վ

Վազնուտ - խաղողի այգի:

Վարավորդ անել - չորս կողմը դիտել, զննել, տնտղել:

Վաքիլ - վկա, փատահված անձ:

Վեստան - գորգ. կարպետ և այլն գործելու դագճահ:

Վերցակ - աքլոր:

Վեք - ճան:

Վեքի-վեքի - մանկական խաղ՝ «վեքով»:

Վզակոթ - ծոծրակի մասը:

Վըտնըլոքի - մանկական խաղ (միմյանց ոտքերի վրայով ցատկելով):

Վռազ - շտապ: (Ասում են՝ «վըռըգողին տղա չի ինիլ»՝ շտապողը տղա չի ունենա):

Վըրսանդի - փոքր երեխայի շարժվելու ձևը (նստած դիրքով, հետույքը գետնին քսելով շարժվելը):

Վըցատու - աղջիկ, որը տղայի վարքագիծ է դրսևորում:

S

Տազ անել - լռել:

Տախ - մի քանի ամսական խոզ:

Տախծը - դաղձ:

Տախտեղ - տաքդեղ:

Տակոիկ - արմատ:

Տանգ - ունկ, բռնակ (ջվալի, փալանի, կախելու գորգի և այլնի վրա):

Տապառն անել	- դարան մտնել, դարանակալել, քաքնվել, անշարժանալ:
Տափ	- 1. գետին, «տյափ»՝ հաց թխելու հարմարանք, 2. դիմի տեսակ (միակողմ):
Տելը տալ	- զառանցել:
Տեղբայր	- այնպիսի համով ուտելիք, որի ուտողը դեղի կարիք չի զգա:
Տըրբայիտը	- մահվան տարելից:
Տըբուշի	- գոլ:
Տիղապետ	- ընտիր ուտելիք, որ սլահվում է՝ նկատի ունենալով, որ պետք կգա որևէ հիվանդի համար իբրև դեղ:
Տիմտիմոկ	- լինդ:
Տինգ	- կորկոտ ծեծելու հարմարանք:
Տիշվել	- ապշել:
Տիշտիհար	- շատ հոգնած, քմրած:
Տիտիկ	- անհամ, անիմաստ, ջրիկ զրույցներ անող, քեթևտիկ:
Տխտրկոռը	- եզան լեզու (քույս):
Տկըտիյեր անել	- հայհոյել վարից վեր (հիշելով բոլորին):
Տկուլըհան անել	- արմատախիլ անել:
Տհար	- բարձր տեղ (Վերին Շենում կա «Տինգի տհար», Մանաշիդում՝ «Գիլաբա տհար» և այլն):
Տմբգել	- ծեծել (առավելապես բնորոշ է մանկական խոսվածքի):
Տնըպոժոժ	- տնտեսավար, խնայող, տան մասին հոգ տանող:
Տնծըքաղի	- տանձ քաղելու հարմարանք:
Տշտըքիի	- 1. տաշտը քերելու գործիք, 2. վերջին զավակը բազմազավակ ընտանիքում:
Տոկիկ	- անկարող, անդամալույծ:
Տոքոն	- արմատ, որից կարմրավուն ներկ են ստանում:
Տրեկան	- մեծ խոզ:

Տրխատան - տրեխը ոտքին ամրացնելու (փաթաթելու) երկար հյուսված թել:

Տրքճան - մանկական խաղ, որի ժամանակ ցեխից փոքրիկ թաս են պատրաստում, բերանի վրա ուժեղ հարվածում գետնին, հատակի մասը պայթելով պատռվում է, խաղընկերը պարտավոր է այդ անցքի չափով ցեխ տալ:

Բ

Բաժան - կաթի սեր (մակ մածնի):

Բախա - երեխա:

Բախա-խոխա - երեխաներ՝ ընդհանուր ձևով (երբեմն մակ՝ տնեցիներ իմաստով):

Յ

Յաք անել - ցաք, տափան:

Յաքանել (ցիքանել) - անդալիս անել (վազը):

Յիցանակ ինիլ - գլխիվայր, շատ արագ իջնել, ընկնել, սլանալ (ծիծեռնակի նման):

Յիցեռնակ - ծիծեռնակ:

Յիցիքմաղի - թիթեռ:

Յնզնել - շան և որոշ այլ կենդանիների ծնելը, տհաճ իմաստ ունի: Իսկ պիտանի կենդանիների վերաբերյալ ասվում է ծնել (կով, խոզ, ձի և այլն):

Ու

Ուզուլքյասի ինիլ - կապերը լրիվ կտրել, խզել, վերջ տալ հարաբերություններին:

Ուլամ - ծույլ, ակարկոտ:

Ումբբ - կյանքի տևողություն: «Էրզան ումբբավ ինի»՝ երկար կյանք ունենա (օրհնանք):

Ումիդ - հույս:

Ումուդատեղ - հույսի տեղ:

Ունգնավեր	- (ունկնավոր), կոթավոր, բոնակ ունեցող ոչ մեծ աման, որպես կանոն՝ հեղուկ լցնելու կամ տեղափոխելու համար:
Ունգունակալ	- խող:
Ունգունութոնոկ	- ուրախ լուր, մահ՝ այդպիսի լուր հայտնողին տրված նվերը:
Ունգունութոնոկ անել	- ուրախ լուր հայտնել:
Ուսախաչ	- ուս:
Ուրխուտեղեր	- (ուրախանալու տեղերը) քթանցքի դիմացի մասը: Երբ այդ մասը քոր է գալիս, ասում են՝ «ուրխուտեղերս» քոր են գալիս: Դա համարվում է ուրախանալու նշան:

Փ

Փալանդուզի	- էշի փալան կարող վարպետ:
Փախլ	- նախանձ:
Փահլևան	- լարախաղաց, շատ ուժեղ, ճարպիկ:
Փանառկա	- ֆաներա:
Փասամիշ անել	- հաշվի առնել, նկատի ունենալ, պատկառանք զգալ, հարգել (ասում են՝ այսինչը ոչ մեկին «փասամիշ չի անում»):
Փար (փառ)	- երեսի բարակ շերտը, թաղանթը:
Փարա	- 1. փող, 2. որոշ («մի փարա մարդիկ»՝ որոշ մարդիկ):
Փարդա	- վարագույր:
Փարդի	- ուղիղ, երկարավուն անտառափայտ (ձող):
Փարել	- ճախարակի թևերն իրար միացնել:
Փարու-փարու անել	- պտտվող անիվի անկանոն շարժվելը՝ կողքին-կողքին անելով:
Փարու տալ	- երբ իլիկի ծայրը ծռվում է. «փարու» է տալիս, թելը կտրում:
Փափում	- մանկական կոշիկ:
Փենջակ	- ձեռքով արտը հնձելու ժամանակ հասկերի մեծ կույտը՝ 15 - 20 բափա (տե՛ս): Սովորա-

	բար դրանով է հաշվվում հնձվորի օրվա աշխատանքի արդյունքը:
Փըրսըվեր	- բերանքսիվայր, քարս, փորի վրա:
Փքռակ	- փտած:
Փքրոկ	- ճաշատեսակ (տե՛ս մեր «Օջախի գրքի» Ա հատորի համապատասխան բաժինը):
Փիյադա	- ոտքով գնացող (հետիոտն):
Փիշտած (հաց)	- ոչ լավ թխված. դժգույն:
Փիչ	- վառարան:
Փիրդիվերան	- անպատկառ, հայհոյախոս (դեմքի քողը, վարագույրը պատռված):
Փլստրատին տալ	- փայլվիել:
Փլուքամի	- փլավքամիչ:
Փոխինձ	- աղացած ձավար, նաև՝ դրանով պատրաստած ուտելիք: Կա նաև փոխնձակյուղակ՝ փոխինձը շաղախած դոշաքի ջրով (կամ շաքարաջրով), գնդի ձև տված, որը պարզապես ձեռքով են բռնում, ուտում:
Փռեշնը	- երկաթածառի պտտաղը՝ մանր, կլոր գնդիկներ: Կորիզի վրա համարյա միայն կեղև է, բայց՝ համեղ: Այդ ծառը՝ «փռշնի», աճում է քարերի, ժայռի մեջ: Մեր կողմերում համարվում էր սուրբ ծառ և, որպես կանոն, աճում էր սրբավայրում, ճյուղը կոտրելը կամ վառելը մեղք էր համարվում:
Փսպդին տալ	- պսպղալ:
Փտուս	- լուսավորման պարզունակ հարմարանք՝ ձեռքով կամ նավթով վառվող:
Փուկ	- կաշվից պատրաստած թել, որով տրեխ են գործում:
Փունփուխ	- հարսանիքին տարվող մրգերի, քաղցրավենիքի «ծառ»:
Փուշի	- փռշի:

Փութացավ	- 1. փորի ցավ, 2. ինչ-որ հոգս, անհանգստություն պատճառող ասելիք, որ բացահայտ չի ասվում:
Ք	
Քալամ	- կաղամբ:
Քաղ գալ	- կովերի գուգավորման ձգտում:
Քանքան	- (քանքանչի) քարուքանդ անող, խառնշտորող (երեխա):
Քաշ	- ցածր, նաև՝ կշիռ: Կա նաև՝ քաշ տալ՝ քարշ տալ:
Քաշի (քյաշի)	- փոքրիկ խոր ափսե:
Քաշիկ	- ցածրիկ:
Քաշկը	- սատանա, անշնորհք արարած (քաջք):
Քառ	- խուլ:
Քափ	- դռնաքի, խաշի, որոշ այլ ճաշերի երեսի փրփուրը:
Քենդիր	- երկար պարան, սովորաբար մազից գործած կամ կաշվից պատրաստած:
Քերինջ	- թոնրի պատից պոկված հացի վառված մնացորդ (բարակ շերտով):
Քըթըպուռ	- դեմք, դիմագծեր՝ նեղ իմաստով (ի տարբերություն «իրիսկիատ» բառի):
Քըթըվել	- ստուգել (մազերը), նաև՝ «քթել» անել:
Քըռքանքուռ	- քարադողոշ:
Քըռվառա	- դժվար հասկացող:
Քըռըպրանուկ անել	- քարեր նետել իրար կամ մեկի կամ ինչ-որ բանի վրա:
Քթել	- կովը կթելու խոր աման, դույլի ձևով:
Քթոց	- կողով:
Քիթոլ	- գլխով:
Քիթոլագլեռ	- խոշոր գլեռի տեսակ:
Քիթոլափոխի տալ	- նույն գլխով նույն ամանից հերթով ուտել:
Քիլինգոշ	- քանապուր, սպասի տեսակ (յուղալի):
Քիրթ (գիրթ)	- կտրուկ:

Քիրվա	- թուրք, որի հետ ընկերությունը, մտերիմ, վատահեղի, տեղական և ամուր քնույթ է կրում:
Քիռահ լինել	- շատ կշտանալ, հագնեալ գոռիկ ձևով:
Քյալա	- ցուլ:
Քյալագ	- փորձանք:
Քյալագյոզ	- կռվարար, տաքգլուխ:
Քյանդիրբագ	- լարախաղաց (սովորաբար՝ ոչ շատ ճարպիկ):
Քյառա	- ականջի մեկը կտրած:
Քյասար	- կարճուղի:
Քյասիբ	- աղքատ:
Քյավգիր	- դռնաբի, որոշ ճաշերի երեսի փրփուրը քաշելու շերեփանման գործիք:
Քյոբառ	- մարզի, առվի եզրը:
Քյոմբա	- հաստ, տռուզ, կոպիտ:
Քյոնդալան	- անիմաստ, աննպատակ ասված (խոսք):
Քյոսա (քյոսագալդի)	- լարախաղացի ծաղրածու:
Քյոք	- 1. չաղ, 2. արմատ (ասում են՝ «նրա քյոքը կտրվի»):
Քյուլբա	- ձեռքով գործած գուլպա:
Քյուլթա-քյուլթա	- առատորեն:
Քյուռ տալ	- քն տալ, դիտավորյալ ոգևորել (հրահրելու իմաստով):
Քնենք անել	- խորհել, քննել:
Քնթեռ	- այգեկության ժամանակ չնկատված, մնացած խաղող, միրգ:
Քնթռահորս անել	- այգում քնթեռ (մնացորդ) որոնել:
Քնունքու տակ ինգնել	- մտածմունքի մեջ ընկնել:
Քշաթոխայ	- մառախուղ:
Քշաչանգ	- ամպամած, մառախլապատ:
Քշկոռ	- հանգույց:
Քշկոնել	- հանգույց կապել:
Քոլ	- անտառ:
Քոլամանի	- վայրիվերո, անկազմակերպ, անկարգ:

Քոծ	- ստորուկ, ծառա:
Քոնքալ	- տե՛ս չնքալ:
Քոչ	- 1. արտավայր մեկնող (կամ վերադարձող) ոչխարի հոտ, 2. անվույթ, անկազմակերպ, փնթի վիճակ («հենց ա քոչ ինի»):
Քոչարոչ ինիլ	- անընդհատ տեղից տեղ տեղափոխվել:
Քոչա վեր ինգած	- տգեղ, անշնորհք երեխա, «հենց ա քորքու քոչա վեր ինգած ինի»՝
կարծես քորքի քոչից ընկած լինի:	
Քոսակ	- գոսակ, նոսր:
Քոցի	- կավե մեծ պուլիկ, անոթ՝ բքու դնելու, յուղ կամ պանիր պահելու համար:
Քչև	- կեղև:
Քռալ անել	- խոզերի զուգավորումը:
Քսակ	- փոքրիկ տոսյրակ (մետաղադրամ, ծխախոտ, սերմեր և այլ բան պահելու համար:
Քրեհ	- վարձ:
Քուլատանձ	- վայրի տանձ:
Քուլուխինձոր	- վայրի խնձոր:
Քունջ	- անկյուն:
Օ	
Օբբուջ	- քիթեյա օղ (տակառ ամրացնելու): Կահակ աղալիսի մանկական խաղ, կեռ մետաղալարով աղալիսի «օբբուջ» քշելը:
Օզող	- մուրացկան /ուզել՝ օգել բառից/:
Օթ	- 1. ութ, 2. օդ: «Օթ, օթը տալ»՝ հանգուցյալի յոթերորդ օրվա արարողությունը:
Օթի	- մախտոդ օրվա (ջուր, ճաշ):
Օխլավ	- խմորը բարակեցնելու, հարթեցնելու երկարավուն, զլանաձև փայտե գործիք:
Օխտը	- յոթ:
Օճորք	- տան ծածկի գերանների արանք, պատի վրա տեղ, որը հնում պահարանի դեր էր կատարում:

Օնգատն ընկնել	- հաջողվել: («Ունգատին»՝ բարեբախտաբար):
Օնգը	- ունկ, բռնակ:
Օնջ	- ժանգ («ընջոտել»՝ ժանգոտել):
Օջախ	- 1. կրակ վառելու տեղ, 2. գերդաստան, 3. սրբավայր, ուխտատեղ:
Օջաղորբա	- ամբողջ տոհմը, գերդաստանը, ընտանիքի բոլոր անդամները միասին:
Օրաղ	- մանգաղ:
Օրան (անել)	- կարտոֆիլի բերքահավաքից հետո դաշտում գտնվածը (հավաքել):
Օրուգ (տալ)	- կապել կենդանուն՝ կարճ տարածության վրա արածացնելու համար:

Վերջում արժե նշել, որ մեր խոսվածքի մեջ «Ֆ» տառով բառեր չկան: Պատճառն այն է, որ հին հայերենում «Ֆ» չի եղել, այդպես էլ շարունակվել է մեր խոսվածքի մեջ: «Ֆաբրիկա, ֆայտոն, ֆիզիկա, ֆիզկուլտուրա» և այլ բառեր, որոնք հայերենի մեջ հայտնվել են ուշ ժամանակներում (հնագույն ժամանակներում չեն եղել), մեր խոսվածքի մեջ հնչում են այսպես՝ «փաբրիկա, փայտոն, փիզիկա, փիզկուլտուրա» և այլն:

ԱՍՓՈՓՈՒՄ

Վարդուտը (Գյուլիստան) նոր ժամանակներում՝ ԼՂՀ Շահումյանի շրջան, Արցախ աշխարհի խորքային և ամուր պաշտպանված գավառներից է եղել, որտեղ հայ ժողովրդի կյանքը հողովվել է դարեր շարունակ անխառն կերպով: Թշնամին երբեք չի կարողացել ոտք դնել այս հողի վրա, օտար էթնիկական տարրեր համարյա չեն թափանցել: Այդ պատճառով հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի, աշխատանքի և այլ ամենաբնորոշ կողմեր, հայոց լեզվի հնագույն շրջանին բնորոշ երևույթներ պահպանվել են այստեղ: Այդ ամենն այս կամ այն ձևով արտացոլված են ժողովրդական բանահյուսության՝ բառ ու բանի մեջ: Հավաքելով ու հրապարակելով այդ ամենը՝ նպատակ ենք ունեցել կորստից փրկել մեր ժողովրդի անցյալին վերաբերող շատ փաստեր ու արժեքներ, որոնք գտնվում են կորստյան վտանգի տակ: Այդ վտանգն օրըստօրե մեծանում է հետևյալ պատճառով:

Ուշ միջնադարում գտնվելով Պարսկաստանի կազմի մեջ՝ Արցախն սկսել է կոչվել նաև Ղարաբաղ, իսկ Վարդուտը թարգմանաբար պարսկերեն կոչվել է Գյուլիստան: Այստեղ ձևավորված մեծությունը պետական մի փոքր կազմավորում է եղել, որն էական դեր է կատարել 18-րդ դարի հայ ազատագրական շարժման մեջ: Ռուս-պարսկական պատերազմի արդյունքում 1805 թ. Ղարաբաղի մի մասը՝ Վարդուտը, միացվել է Ռուսական կայսրությանը: Այն ենթարկվել է Ռուսաստանին բնորոշ վարչական բաժանումների, սակայն շարունակել է պահպանել ազգային ուրույն նկարագիրը: Կայսրության փլուզումից հետո 1918-1920 թթ. Հարավային Կովկասում ձևավորվել են ազգային երեք հանրապետություններ: Ղարաբաղը, ներառյալ Գյուլիստանի գավառը, մտնում էր Հայաստանի Հանրապետության կազմի մեջ: Այդ իրողությունն ամրագրվել է Հանրապետության 1920 թ. Մայիսի 25-ի օրենքով:

Ռուսաստանում հաստատված բոլշևիկյան իշխանությունները 1920-1921 թթ. նորից հաստատվում են Հարավային Կով-

կատում, վերացնում այնտեղ ձևավորված ազգային հանրապետությունները, նրանցում հաստատում բոլշևիկյան խորհրդային կարգեր: Իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով ռուսական խորհրդային իշխանությունները գործարք են կնքում Թուրքիայի հետ, նրան զիջում Հայաստանի տարածքի հիմնական մասը, իսկ Ղարաբաղը ինքնավարության իրավունքով /նաև Նախիջևանը/ բռնակցում Թուրքիայի ջանքերով ստեղծված Ադրբեջան անունով հանրապետությանը:

Ղարաբաղի միասնական ուժը թուլացնելու, հետագայում այն աստիճանաբար ձուլելու նպատակով Ադրբեջանն այն մասնատեց: Ինքնավարության սահմանները գծվեցին միայն կենտրոնական տարածքով, Հայաստանից անջրպետված, իսկ մյուս տարածքները կտրտվեցին, վերածվեցին Ադրբեջանին ենթակա առանձին շրջանների: Այդպես Ղարաբաղի ինքնավար մարզից /ԼՂԻՄ/ անջատվեց նրա թերևս ամենաամուր գավառը՝ Գյուլիստանը:

Խորհրդային տարիներին գավառը կոչվեց բոլշևիկյան գործիչ Շահումյանի անունով: Ադրբեջանն ամեն կերպ արգելում էր կապը ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև բուն ԼՂԻՄ-ի հետ. հարկային, կադրային, կրթամշակութային և այլ ոլորտներում խտրական քաղաքականություն էր վարում թե՛ ԼՂԻՄ-ի, թե՛ նրանից դուրս թողնված արցախյան շրջանների նկատմամբ: Նույնիսկ այդպիսի ծանր պայմաններում Շահումյանի շրջանը կարողացավ պահպանել իր ազգային նկարագիրը՝ շուրջ քսան հազար համարյա բնիկ հայ բնակչությամբ, կրթամշակութային ակտիվ կյանքով, բարեկարգ բնակավայրերով և այլն:

1980-ական թվականների երկրորդ կեսից Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը բացահայտ բռնի բնույթ ստացավ: 1987 թ. միլիցիայի զինված ջոկատներով հայաթափվեց հզոր արմատներ ունեցող Չարդախլու հայկական խոշոր գյուղը, որին հաջորդեց տազնապալից իրավիճակի խորացումը հայկական մյուս գյուղերում: Ակնհայտ դարձավ, որ սեփական հողի վրա արցախահայության գոյությունն Ադրբեջանում այլևս հնարավոր չէ: 1988 թ. փետրվարին ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդը որոշում ընդունեց Ադրբեջանի կազմից դուրս գալու և Հայաս-

տանի կազմի մեջ մտնելու մասին: Աղբբեջանը ոչ միայն մերժեց, այլև սկսեց հայերի ջարդեր Մումգայիթում, Բաքվում և այլուր: Այդ բռնությունների դեմ ոչինչ չձեռնարկեցին մոսկովյան իշխանությունները:

Աղբբեջանում մնացին միայն ԼՂԻՄ-ի ու Շահումյանի շրջանի հայերը, որոնք միավորվելով 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Օգտվելով ԽՍՀՄ փլուզումից՝ Աղբբեջանն սկսեց բացահայտ պատերազմ ԼՂՀ-ի դեմ՝ ռազմական ժամանակակից բոլոր միջոցներով: Ցավոք, անհավասար ուժերի պատերազմում ԼՂՀ-ի Շահումյանի շրջանը դաժանորեն հայաթափվեց: Խաղաղ բնակչության տասնյակ գոհեր եղան, հարյուրավոր մարդիկ անհայտ կորան կամ ի վիճակի չեղան դուրս գալու գյուղերից, և նրանց ճակատագիրն Աղբբեջանում մինչև հիմա անհայտ է: Հազարավոր մարդիկ սփռվեցին ամբողջ աշխարհում՝ Ռուսաստանից մինչև Ամերիկա, Ֆրանսիայից մինչև Ղազախստան, Ուկրաինա, Գերմանիա և այլ երկրներ: Տարագիր բնակչության մի փոքրիկ մասը միայն ապաստան է գտել ՀՀ-ում և ԼՂՀ-ում:

Լեզվամշակութային նոր միջավայրում իսպառ կորստյան վտանգի տակ են դարեր շարունակ Վարդուտ գավառում ստեղծված էթնիկ լեզվամշակութային արժեքները: Հավաքելով այդ նյութերը՝ զվարճախոսություններ, հանելուկներ, ժողովրդական երգեր, տարբեր գյուղերի մականուններ ու տեղանուններ, խրատական մտքեր և այլն ու հրապարակելով՝ հույս ունենք կորստից փրկելու դրանք՝ որպես հայ ժողովրդի հոգևոր մշակույթի մի կարևոր մաս: Ժողովածուի մեջ ամփոփված նյութերի բովանդակությունն ավելի հասկանալի դարձնելու նպատակով կազմել ենք տեղական խոսվածքի բառարան, որն իր հերթին լեզվամշակութային որոշակի արժեք է ներկայացնում:

ФОЛЬКЛОР ОБЛАСТИ ВАРДУТ

КАГРАМАНЯН КИМ АРУТЮНОВИЧ

Резюме

Вардут (Гюлистан) являлся одним из глубинных и крепко защищенных провинций Арцахского края, где жизнь веками продолжалась в этнически чистом русле. Врагу никогда не удавалось захватить этот горный район. Этнический состав населения так и до конца не претерпел существенных изменений. Именно поэтому самые характерные черты армянского народа, древние пласты армянского языка, специфика национального мышления, быта, труда и т. д. наиболее неизменно сохранились на этой земле. Все это получило свое отражение в фольклоре.

В содержании народных поговорок, пословиц, шуток, прозвищ, песен, топонимов, да и в самом словарном фонде есть богатый материал о прошлом нашего народа. Однако, в создавшемся положении весь этот материал подвержен опасности полного исчезновения.

В позднем средневековье, находясь в составе Персии, Арцах стал называться также Карабахом, а имя провинции Вардут / по – армянски – долина роз/ под воздействием персидского языка стал звучать в переведенной форме – Гюлистан. Потомки древне-армянского местного княжеского рода здесь, как и во всем Арцах-Карабахе, создали отдельные меликства-подвластные Персии малые государственные образования, с основными признаками государства /войско, налоги, преемственная власть и т. д./.

Гюлистанское меликство сыграло важную роль в освободительной борьбе армянского народа 18-го века. В результате русско-персидской войны Карабах, население которого было на стороне единой России, в 1805 г. вошел в состав Российской империи. После крушения империи в 1918 году, на Южном Кавказе образовались три республики с неопределенными границами, которые стали причиной войн между ними. Гюлистанский район, как и весь

Карабах с горными армянскими районами бывшей Елизаветпольской губернии, был в составе Республики Армении. Этот факт был закреплён законом республики от 25 мая 1920 года.

Взявшие в России власть в свои руки большевики в 1920-1921 гг. продвигали войска на Южный Кавказ, ликвидировали образованные там национальные республики и учредили свою советскую власть. Чтобы укрепить свои международные позиции, новые российские власти пошли на сговор с Турцией, „уступили“ ей Карсскую область Армении, а Карабах /также Нахиджевань/ оторвали и включили в состав созданной при поддержке Турции республики Азербайджан – на правах автономии. Следующий коварный удар был нанесен Карабаху уже при определении границ автономии. Автономная область /НКАО/ была создана в 1923 г. в малой, центральной части Карабаха, оторванной от Армении. Остальные же территории были раздроблены на отдельные районы в составе Азербайджана, в их числе - самый крепкий – Гюлистан. В советские годы район был назван именем большевистского деятеля Ст. Шаумяна.

Оторванный не только от Советской Армении, но и от НКАО, Шаумянский район, как и весь Карабах, подвергался жестокой дискриминационной налоговой, кадровой, культурно-просветительной политике. Однако все это сплотило армян района еще сильнее как никогда. Упорный труд и национальный несгибаемый дух дали свои плоды. Благоустроились деревни, успешно развивалась школьная жизнь, культура, спорт, здравоохранение. Это беспокоило бакинские власти, они всячески старались вытеснить армян из Азербайджана. Дороги армянских районов были в плачевном состоянии, нельзя было ремонтировать, запретили связи между ними, тем более с Арменией.

Со второй половины 1980-х годов дискриминационная политика Азербайджана стала неприкрытой. В 1987 г. вооруженный отряд азербайджанской милиции опустошил древнеармянское село Чардахлу, давшего СССР трех маршалов, десятки генералов, многих героев. И это осталось безнаказанным. Москва молча поддержала Азербайджан. В такой ситуации власти НКАО приняли решение о

выходе из состава Азербайджана. Московские власти отказали, а азербайджанские начали массовые погромы и изгнание армян сначала в Сумгаите, потом в Баку и во всем Азербайджане. Армяне упорно сопротивлялись только в НКАО и Шаумянском районе. Они и объединились в сентябре 1991 г. и провозгласили Нагорно-Карабахскую Республику - НКР.

Против НКР Азербайджан развязал открытую войну, с применением всей современной военной техники, в том числе запрещенные средства массового уничтожения. В результате этой войны (13-14 -го июня 1992 г.) был опустошен весь Шаумянский район. Были десятки жертв мирных жителей. Сотни людей пропали без вести, не смогли /или не хотели/ покинуть родные очаги. Многие из них до сих пор находятся в азербайджанском плену. А тысячи людей, которым удалось спастись, рассеялись по всему свету, от глубин России до США, от Франции до Казахстана, от Германии до Украины и т. д. Лишь малая часть шаумянцев смогла найти приют в НКР и РА. Вместе с разбросанным по всему свету населением разбросан также веками созданный на родной земле богатый фольклорный материал. В новой культурно-языковой среде этот материал обречен на полное исчезновение.

THE SPEECH AND TALK OF VARDUT REGION

Ghahramanyan Kim Harutyun

Summary

Vardut (Gyulistan, the region of Shahumyan of NKR) used to be one of the deeply remote and well-protected provinces in the land of Artsakh. Population here had always been ethnically homogenous Armenians. The enemy never succeeded in occupying this mountainous region. The population in the region never underwent any essential ethnic changes. It is due to this factor that typical features of Armenian nation, ancient features of the language, the specifics of national thinking, mode of everyday life and work never changed in this land. All this found its reflection in folklore.

Folk proverbs, sayings, jokes, nicknames, songs, names of places and the vocabulary contain a huge material about the past of the nation. In the current situation, however, all this material faces the danger of total disappearance. And the reason is this. In late middle ages, Artsakh, then a part of Persia, was also called Karabakh, and the name "Vardut" (lit. "the valley of roses"), influenced by Persian, got translated as "Gyulistan". Like all over Artsakh (Karabagh), the ancestors of the local old Armenian dukes formed separate melik kingdoms (i.e. Persian duke kingdoms) – small states under the rule of Persia, with all the main features of the state (hereditary power, army, taxes).

Melik kingdom of Gyulistan played a significant role in the war for independence of Armenians in the 18th century. During the Russian-Persian War, the population of Karabagh fought on the side of religiously homogenous Russia. As a result, in 1805 Karabagh formed a part of the territory of Russian Empire. After the fall of the empire in 1918, there were formed three republics, with no precise boundaries among them. This circumstance was the cause for the war among the republics. The region of Gyulistan, like Karabagh with its mountainous Armenian

regions of the former province of Elizabetpole, made a part of Republic of Armenia. This fact was legalized on May 25th 1920. In 1920-1921, Russian Bolsheviks advanced their troops towards the South Caucasus and abolished the national republics, thus establishing the Soviet power. In order to consolidate their international positions, the newly-formed Russian authorities signed a treaty with Turkey, in accordance to which the region of Kars formed a part of Turkey. Also, based on this treaty, Karabagh, as well as Nakhidjevan, became an autonomous part of Azerbadjan, which was formed with the support of Turkey. What happened during the fixing of the boundaries in Karabagh was still worse.

In 1923, an autonomous region (Nagorno (mountainous)-Karabagh Autonomous Region (NKAR)) was formed in the central part of Karabagh, isolated from Armenia at that time. The remaining part was distributed to different regions in Azerbadjan, Gyulistan being the strongest of them. In the soviet times, the region was named after the Bolshevik statesman Shahumyan. The region was isolated not only from the Soviet Armenia, but also from NKAR. Like in Karabagh, here, too, Azeri authorities implemented severe discriminative policies in the fields of taxes, human resources and education. However, this factor united Armenians even stronger than ever. Hard work and strong national spirit had their results. There was prosperity in villages, schools, arts, sports, medicine. This caused concern among the authorities in Baku, who were doing their best to displace Armenian population out of Azerbadjan. The transport communication was in the worst conditions. The Azeri authorities banned any repair activities, there was no connection with them and especially with Armenia.

From the second half of 1980-s, this kind of policy became even more obvious. In 1987, a group of Azeri policemen invaded old Armenian village Chardakhlou. No punishment followed. That was a sign that Moscow authorities supported Azeries. In that situation, the authorities of NKAR adopted a resolution on secession from Azerbadjan. Moscow authorities rejected this resolution, and the Azeri authorities started massacres and expatriation of Armenians in Sumgait, followed by massacres in Baku and all over Azerbadjan. Armenians held strong resistance only in NKAR and the region of Shahumyan. It was in 1991

that these regions united and announced about Nagorno-Karabagh Republic (NKR). As a response, Azerbaijan declared war, using all kinds of modern military equipment, as well as prohibited means of mass destruction. As a result, the whole Shahumyan region was totally devastated. There were tens of victims among the population. Hundreds of people got missing, those who couldn't or didn't want to leave their homes. Many of them are still kept prisoners. Thousands of people, who chanced to escape, dispersed all over the world, as far as remote villages in Russia, Kazakhstan, Germany, the Ukraine and the USA. Only a small part of them had a chance to settle in NKAR and Armenia. The rich centuries-old folklore that was created in the motherland has been dispersed all over the world there. In the new cultural and linguistic environment, this material is bound to disappear.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան.....	5
I . Ձվարճախոսություն, հուշապատում-գրույցներ	9
II . Հանելուկներ	185
III. Առած-ասացվածքներ	188
IV. Խաղիկներ	192
V. Մանկական խաղեր	193
VI . Տեղանուններ, տոհմանուններ, մականուններ	195
VII. Ծանոթագրություններ	217
VIII. Բառարան	225
Ամփոփում	268
Фольклор области Вардут (Резюме)	271
The Speech and Talk of Vardut Region (Summary)	274

ՎԱՐԴՈՒՏ ԳԱՎԱՌԻ ԲԱՌ ՈՒ ԲԱՆԸ

Կազմող՝ Կիմ Հարությունի Ղահրամանյան

Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյան
Համակարգչային շարվածքը՝
Գ. Ղազիյանի, Բ. Այվազյանի
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր N 319
Ստորագրված է տպագրության՝ 02.05.2011թ.
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, թուղթ N 1, օֆսեթ տպագրություն,
17.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

[2500 p.]

ԳԱՄ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0187479

A ^{II} 96856

